

1838

9(42)
F-82

30 MAY 2006
18 AUG 2006

1286

9(42) Cap
1.82 Mag. pump 11800
Lugger pump
Aug 2006 N.W.

MM-150 1-1/2" 73
P-22227 18X73

1838

30 MAY 2011

10 AUG 2006

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՈՑԵԱՆԻ №34,

9(42)

F-82

Ար.

Հ. Թ. Պ Ա Ը Ն Դ



ԱՆԳԼԻԱՅԻ

ՔԸՂԱ-ՔԸԿՐԹՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1004
606
401
1

ՆՈՏՈՎԻԵՒԻ ՀԱՄԱՓՈՏԱՁ

Թարգմանեց

ՎԱՐԴԻԿԵՍ ԱԴԱՆԵԱՆՑ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵՅՏՐ ԱՆԱՐԴ ՏԱՄԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՏ. 7.
1909

06.03.2013



Հ. Թ. Բ Ո Կ Լ

XIX դարի նշանաւոր մտածողներից մինը՝ անգլիացի Հենրի Թոմաս Բոկլը ծնուել է կենտ կոմսութեան լի աւանում: Հայրը—Թոմաս Հենրի Բոկլը—Լոնդոնի ունեուր վաճառականներից էր. մայրը—միստրիս Ջեմը—երիտասարդ հասակում էր ամուսնացել և քացի Հենրիից ունէր և երկու դուստր: Հենրին միակ որդին լինելով, օգտառում էր տան մէջ կատարեալ ազատութեամբ. նրան թոյլ չէր տրուած առանց իրաւունքի մտնել միմիայն ծնողների ննջարանը. իսկ ամբողջ բնակարանը գրուած էր նրա տրամադրութեան տակ: Երկար ժամանակ գրքի առաջ նատելուց յետոյ նա վեր էր կենում բացազանչելով՝ «Իմա կարելի է և գժութիւն անել» և ամբողջ տունը դառնում էր նրա գժութիւնների ասպարէզ:

Դեռ տաս տարեկան չլրացած Թոմասը իւր որդուն տուեց գլուխ նախապէս համոզելով տեսչին, որ իւր որդու դէմ գործ չղրուեն այն ժամանակ Անգլիայում գործածուող ծեծը և խստութիւնը: Պայման էր գրուած նաև սովորեցնել միմիայն այն՝ ինչ կցանկանայ ինքը Հենրին:

Այս հասակից արդէն արտայայտուեց Բոկլի դարմանալի լնդունակութիւնը և մանաւանդ հըսկայական յիշողութիւնը: Բայց գլուխը անտանելի էր փոքրիկ Բոկլի ժամար և մի օր, երբ նա ստացաւ մա-

տեմաթիկայի համար առաջին կարգի պարզեց և, ըստ սովորութեան, տուն վերադարձաւ դափնեայ պսակը զլխին—հօր հարցին թէ ինչ է ցանկանում որ նա կատարէ՝ պատասխանեց, որ կուղենար մի բան՝ այլիս դպրոց չգնալ: Եւ հայրը այդ ցանկութիւնը կատարեց: Այս ժամանակ փոքրիկ Բոկլը 13 տարեկան էր. մինչև 16—17 տարեկան հասակը նա շարունակում էր պարապել ինքն իրեն և այդ հասակում, երբ պարլամենտում և մամուլի մէջ տաք վիճաբանութիւններ էին լինում վաճառականութեան ազատութեան մասին, Բոկլը սկսեց հետաքրքրուել հասարակական կեանքով և լրագիրներ կարդալ: Այս ժամանակամիջոցին հօր ազգեցութեան տակ Հենրի Բոկլը դեռ ազատ վաճառականութեան դէմ էր և բարձր դասակարգի կողմանակից: Որդու կեանքը դուր էր գալիս թումասին և նա նրան գործ տուեց գրասենեակում, ուր երիտասարդը ստիպուած էր չոր ու ցամաք թուերի հետ գործ ունենալ: Ծանր էր այդ աշխատանքը մի աշխոյժ և հարցասէր երիտասարդի համար, բայց, ինչպէս ապագայում ինքը խոստովանում էր, այդ աշխատանքը «սովորեցրեց այն անպայման ճշտութեան ու կարգապահութեան» որ անհրաժեշտ է ամին մի գործում:

1840 թուի յունուարին վախճանուեց թումաս Բոկլը: Հենրին այժմ բոլորովին ազատ էր իւր գործողութիւնների մէջ և նա չդանդաղեց թողնել իրեն չիւտաքրքրող պաշտօնը ու դիմեց իրեն գրաւող ու զրադեցնող աշխատանքի: Այս ժամանակամիջոցին Բոկլը մօր և քոյրերի ուղեկցութեամբ գնաց ճանապարհորդելու Եւրոպա, յաճախեց Հոլանդիան, Գերմանիան, Ալպերով անցաւ Իտալիա, բաւական երկար մնաց Հռոմում, Ֆլորէնցիայում և ապա Փարիզում: Այս ճանապարհորդութիւնը, որ տեսեց մէկ ու կէս տարի, մեծ

նշանակութիւն ունեցաւ Բոկլի համար. 19 լեզուի տիրապետեց այդ ճանապարհորդութեան ժամանակ և այդ բոլորը նա անում էր իւր զլխաւոր նպատակի համար: Նա մտադիր էր գրել «քաղաքակրթութեան պատմութիւն», մի պատմութիւն, որ պիտի բովանդակէր իւր մէջ ամբողջ տիեզերքը իւր բազմազան ցեղերով ու երևոյթներով, բայց որ հակառակ Բոկլի ցանկութեան սահմանափակուեց միմիայն Անգլիայով: Ճանապարհորդութիւնից Բոկլը—Գեղի վկայութեամբ—վերագրածաւ բոլորովին փոխուած: Նա դառել էր բարիկալ և ազատ մռածող:

«Եթէ ուզում էր գտնել նոր և ինքնուրոյն բան, ուսումնասիրեցնէք մանրամասնութիւնները» ասաւ գեռ Բէկոնը և Բոկլի համար այդ դառաւ նշանաբան, ճանապարհորդութիւնից վերագառնալով, Բոկլը տասնեհինգ տարի շարունակ փոքրիկ ընդմիջումով, երբ նոր ճանապարհորդութիւն կատարեց, փակուեց գրադարանում և ինչպէս խսկական անխոնջ մշակ աշխատեց իւր վաղեմի ցանկութիւնը իրագործելու նպատակով: Այս 15 տարուայ ընթացքում Բոկլը կարդաց աւելի քան 20,000 գիրք գիտութեան ամեն ճիւղի վերաբերեալ:

Բոկլի վրայ իրենց ազգեցութիւնը ունեցան Մաքիավելին, Վիկոն, Մօնտեսքիօն և Կօնտը, որոնց ազգեցութիւնը կարելի է նկատել Բոկլի պատմութեան մէջ, օր. ինչպէս Մօնտեսքիօն նոյնպէս և Բոկլը աշխատում են պատմութիւնը դարձնել բնական պատմութիւն, պատմական փաստերի հիման վրայ ստեղծել կեանքը և պատմական երևոյթները զեկավարող փիլիսոփայական տրակտատ:

1857 թուին հրապարակ եկաւ Բոկլը իւր աշխատութեան և ատորով—«History of civilisation in England».

Այս աշխատութիւնը առիթ եղաւ մեծ աղմուկի և վիճաբանութիւնների։ Հեղինակը «նիւթի մշակութեան մէջ ցոյց է տալիս մեծ յամառութիւն, թափանցող սրամտութիւն, փիլիսոփայական տաղանդ—որոնց օգնութեամբ Բոկլը ամեն տեղ աշխատում է գտնել և որոշել ընդհանուր պատմական օրէնքներ»։

Այս աշխատութեամբ Բոկլը պատմական հետազոտութեան մէջ մտցրեց վիճակագրութիւն և քաղաքական տնտեսութեան փաստերը և իւր օրինակով ցոյց տուեց, թէ որչափ կարող է ընդարձակուել պատմաբանի աշխարհահայեացքը այդ զիտութիւններով։ Ինչպէտ ասինք Բոկլի նպատակն էր բնական գիտութեան և մարդկային պատմութեան մէջ եղած անդունդը ոչընչացնել և հերքել այն միտքը թէ մարդու գործողութիւնները զեկավարում են խորհրդաւոր և նախորդած ոյժերը։ Նա փաստերի վրայ հիմնուած պնդում է, որ «մարդկանց բարոյական» գործողութիւնները կամքի արդիւնք չեն, այլ արդիւնք են նախընթաց պայմանների։

1860 թուին վախճանուեց Բոկլի մայրը, որը նրա միակ ընկերն էր և Բոկլը մնաց միայնակ։ Մօր մահից յետոյ նա շարունակեց աշխատել և շատ շուտով հրատարակեց իւր «պատմութեան» լլ հատորը, որը աւելի մեծ ժողովրդականութիւն ստեղծեց նրա հեղինակին, իսկ երրորդ հատորը նա չկարողացաւ աւարտել։

1861 թուականի օգոստոսին Բոկլը, բժշկի յամառ պահանջով ստիպուած էր դադարել աշխատելուց և կազդուրուելու նպատակով նորից ճանապարհորդելու։ Այս անգամ նա գնում էր եղիպտոս և Պաղեստինէ, բայց նրա օրգանիզմը խիստ յոցնել էր և 1862 թուի մայիսի 29-ին նա վախճանուեց Դամասկոս քաղաքում տեհութից, ուր և ամփոփուեց նրա մարմինը։

Բոկլը ամուսնացած չէ հղել։

ՀԱՏՈՐ I

ՄԱՍ I

ԱՆԳԼԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ա.

Երկոյթների պատահականութեան և նըանց մէջ անհրաժեշտ կապակցութեան, ազատ կամքի և նախորոշման վերաբերող ռւսման ծագումը.—Մարդու գործունեութիւնը բնորոշւում է նախընթաց երկոյթներով.—Թուական ապացոյցներ մարդու գործողութեան ճշտութեան:

Նախնական անկիրթ դրութեան մէջ մարդը ոչ մի գաղափար չունի ոչ իւր գործողութեան որևէ օրէնքների հետ ունեցած կապակցութեան մասին և ոչ փոխադարձ կապի և յաջորդութեան՝ արտաքին աշխարհի երկոյթների հետ։ Ընդհակառակը, ամեն մի երկոյթ պատահական և անջատ է պատկերանում նըա երկակայութեան մէջ։ Նման հայեացը արտաքին աշխարհի վրայ յատուկ էր օրինակ թափառաշրջիկ ցեղերին, որոնք ապրում էին որսորդութեամբ և ձկնորսութեամբ և որոնց յաջողութիւնը արտայայտում էր պատահական հետևանքով, այն է՝ քիչ թէ շատ առատ բերքով։ Հողագործութեան շրջանն անցնելով, մարդը սկսում է աստիճանաբար ընդհանրացնել որոշ հասկացողութիւն երկոյթների յարատելութեան մասին։ Այս ընդհանրացման նպաստում է ինչպէս հողագործական աշխատան-

քի իրագործման, նոյնպէս և հողագործութեան արդիւնքի աճման ընթացքի ակներև միակերպ հետևողութիւնը:

Հետագայ զարգացման շրջանին մարդը ձեռք է բերում աւելի մեծ հակում դէպի վերացական մտածողութիւն և աստիճանաբար հասնում է շրջապատող աշխարհի երեսոյթների մէջ կատարուող անհրաժեշտ փոխադարձ կապակցութեան մտքի: Երբ հասարակութեան մէջ հարստութեան կուտակումը հասնում է այն աստիճանի, որ կազմում են զգալի դասակարգեր, որոնց արամազըութեան տակ է բաւական ազատ միջոց, այն ժամանակ վերացականացման ձգտումն ու կարողութիւնը աւելի են ուժեղանում և աւելի ուժեղ մտքերի ազգեցութեան տակ առաջ են գալիս նոր աշխարհայեցողութիւններ ազատ կամքի և նախորշման վերաբերմամբ, իրեւ հետևանք նախընթաց վարդապետութիւնների—երեսոյթների պատահականութեան և նրանց մէջ եղող անհրաժեշտ կապակցութեան: Նախորշման ուսուցումը կրօնական հիմք ունի և, բղխելով անհրաժեշտ կապակցութեան հասկացողութիւնից, պարունակում է նրանում, որ աշխարհի Արարիչը գեռ ստեղծագործութեան սկզբնական շրջանում նախորշեց և նախագրեց իրերի ապագայ ընթացքը բոլոր մանրամասնութիւններով: Բայց այս ուսուցումը մեր գիտութեան շրջանից դուրս գտնուելով, չի կարող ենթարկուել ոչ մի տարրալուծութեան: Կամքի ազատութեան մասին միւս ուսուցումը հիմնուած է այն վերացական գրութեան վրայ, որ մարդը իրեն զգում է և գիտակցում իրեւ ազատ արարած և որ նա ունի ինքնուրոյն գիտակցութիւն, որի ներշնչումները անսխալական են, Այս ուսուցումը ջախջախում է հետևեալ հիմունքներով. առաջին՝ եթէ մարդու ներքին դրութիւնը լինէր ան-

սխալական, ուրիմն չէր լինի այդ ակներև տարածայնութիւնը և յաճախ հակասութիւնները զանազան դարերի աշխարհայեցողութիւնների և ազգերի մտածելակերպի մէջ, գոյութիւն չէր ունենայ զանազան դարերում ճշմարտութեան տարրեր չափ. երկրորդ՝ մարդը չէր իւրացնի զանազան նախապաշարումներ, ինչպէս օրինակ հաւատը խարուսիկ երեսոյթների և ուրուականների գոյութեան վերաբերութեամբ: Երրորդ՝ մարդուն ոչինչ չի ապահովում, որ գիտակցութիւնը չի խարում նրան, իսկ եթէ կայ նման ապահովութիւն, պարզ է, որ գիտակցութիւնը կախում ունի որևէ մասնաւոր ուժից և, ուրիմն, նա աղատ չէ:

Մի կողմ թողնելով բոլոր այս ուսուցումները, մենք կարող ենք միայն համաձայնուել հետևեալ զըրութիւնների հետ: Մեր ամեն մի գործողութիւն հիմնուած է մի կամ մի քանի շարժառիթների վրայ: Այդ շարժառիթները միշտ պայմանաւորուած են որևէ նախընթաց փաստերով. գիտակցելով այդ միշտ հետևողութիւնը, մենք կարող ենք, հիմնուելով անցեալի վրայ, գատել ապագայի մասին ինչպէս նրա հետևանք, նոյնպէս, ինչպէս որոշ մարդու գործողութեան և ընոյթիյատկանիշների միաւորութիւնով մենք կարող ենք նախագուշակել, թէ ինչպէս կը գործի այդ մարդը որոշ հանգամանքներում:

Այսպիսով մենք գալիս ենք այն ընդհանուր ըսկզբունքին, որ նոյնանման պատճառներ միշտ հասցնում են բոլորովին միատեսակ հետևանքների, որ մարդու գործողութիւնը բնորոշում է միմիայն անցեալով և այդ պատճառով նրանք կրում են միակերպութեան տիպարը: Իսկ որովհետեւ բոլոր նախընթաց փաստերը արտայատւուած են կամ մարդու հոգու և կամ արտաքին բնութեան մէջ, որանից բղխում.

է, որ մարդկային պատմութեան մէջ կատարուող ամեն ինչ երկու տեսակ գործունէութեան հետևանք է՝ արտաքին երևոյթների ազդեցութեան մեր հոգու վրայ և մեր հոգու ազդեցութեան արտաքին երևոյթների վրայ:

Մարդու բոլոր գործողութիւնները համախմբւում են երկու դասակարգութիւնների (կատեգորիա), առաքինի և արատաւոր, որոնց մէջ գոյութիւն ունի խիստ մաթեմաթիրական յարաբերութիւն: Մի դասակարգութեան քանակի գերակշռութիւնը համեմատական կերպով թուլացնում է միւս դասակարգութիւնը: Ամեն տեսակ փոփոխութիւն մարդու, ինչպէս վատ, նոյնպէս և լաւ գործողութիւնների մէջ կախում ունի հասարակութեան դրութեան փոփոխութիւնից, և ոչ թէ առանձին անհատների կամքից, որոնք կազմում են հասարակութիւնը:

Մարդու գործողութիւնների ճշտութիւնը մեզ շօշափելի կերպով ապացուցեց սպանութիւնների և ինքնասպանութիւնների վիճակագրութիւնը: Կարելի է ասել, որ ոչ մի ոճագործութիւն չի կատարում այնպիսի ներքին դրդուժների և արտաքին պայմանների բարդ և խճճուած կոմբինացիաներ առաջ բերելով, ինչպէս սպանութիւնը, մինչդեռ վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ սպանութիւնները կատարում են նոյն ճշտութեամբ և գտնուում են նոյնպիսի ձիշտ և միատեսակ յարաբերութիւնների մէջ դէպի յայտնի փաստերը, ինչպէս ալիքների մակընթացութիւնը կամ տարուայ եղանակների փոփոխութիւնը: «Ոճագործութիւնների վերաբերմամբ», ասում է կէտէ, «պէտք է ընդունել, որ նոյն թուերը կրկնում են անկասկած մնայունութեամբ մինչև անդամ այն ոճագործութիւնների մէջ, որոնք, ըստ երևութիւն, խուսափում

են մարդու նախատեսութիւնից, ինչպէս օրինակ՝ սպանութիւններ, որոնք առհասարակ կատարուում են վէճի պատճառով, և որոնք սկսւում են բոլորովին պատահական հանգամանքներում: Բայց մենք փորձով գիտենք, որ ոչ թէ սպանութիւնների թիւը ամեն տարի համարեանոյնն է, բայց և այն զէնքերը, որոնք ծառայում են սպանութիւնը իրագործելու, գործածւում են նոյն համեմատութեամբ (պրոպօրիա):—Կատարուող երևոյթների մնայունութեան և միակերպութեան աւելի զարմանալի ապացուցներ նիրկոյացնում են ինքնասպանութիւնները: Ոճագործութիւնների այս դասակարգութիւնը այնչափ անջատած է կողմնակի ազդեցութիւնից և իրագործում է այնպիսի բացասական պարագաներում, որ թւում էր թէ անհնար է այդ երևոյթը ամփոփել մի ընդհանուր սկզբունքում, մանաւանդ որ շատ յաճախ գծուար է լինում զատել ինքնասպանութիւնը սպանութիւնից, իսկ ինքնասպանութեան շատ դէպքեր մնում են անյայտ: Այնուամենայնիւ չնայելով այդ հանգամանքին, վիճակագրութիւնը անհերքելի թըւերով ապացուցանում է, որ ինքնասպանութիւնները արդիւնք են հասարակութեան ներկայ դրութեան և որ միմիայն հասարակական ներկայ դրութեան պատճառով մարդկանց որոշ քանակութիւնը պիտի անդայման ինքնասպանութիւն գործէ: Այս օրէնքի ճշտութիւնն ու մնայուն լինելը ապացուցած է զանազան երկրների վերաբերմամբ:

Մեր առաջ բերած օրինակները ոճագործութեան աշխարհից՝ հասցնում են մեզ այն եղբակացութիւնների, որ 1, ներկայ անհատի ոճագործութիւնը հետևանք է ոչ այնքան իւր անձնական արատաւորութեան, որքան հասարակական այն գրութեան, որի մէջ նա ապրում է, և 2, մարդկանց բարոյական գործողութիւն-

ները նրանց կամքի հետևանք չեն, այլ արդիւնք նաև խընթաց հանգամանքների:

Նոյնպիսի միակերպութիւն, որպիսին տեղի ունի ոճաբործութիւնների մէջ, վիճակագրութիւնը ցոյց է տալիս և ուրիշ հասարակական երևոյթներում: Օրինակ՝ այժմ յայտնի է, որ ամունութիւնների քանակը գտնւում է մշտական համեմատական յարաբերութեան մէջ հացի զների և աշխատանքի վարձի աստիճանի հետ, որ առանց հասցէի ուղարկուող նամակների քանակը տատանւում է ամեն տարի համարեա միատեսակ թուերի մէջ և այլն և այլն:

Բ.

Բնութեան ազդեցութիւնը հասարակութեան կազմակերպութեան և մարդու վրայ:—Կլիմայի, սննդի, հողի և բնութեան ընդհանուր տեսարանի ազդեցութիւնը: Հարստութեան կուտակում և մտակարարում: Իրանդիայի, Հնդկաստանի, Եգիպտոսի, միջին Ամերիկայի, Մեքսիկայի և Պերուի օրինակները: Բնական օրէնքների ազդեցութիւնը Բրազիլիայում: Բնութեան ընդհանուր տեսարանի ազդեցութիւնը երևակայութեան և մտքի վրայ: Երևակայութիւնը գրգռող բնական երևոյթներ: Ոչ-երրոգական քաղաքակրթութեան ազդուելը երևակայութիւնից և երրոգական քաղաքակրթութիւնից:—մտքի ազդեցութիւնը: Հնդկաստանի, Յունաստանի և միջին Ամերիկայի օրինակները:

Ուսումնասիրելով բնութեան ամենազօրեղ ազդեցութիւնները մարդկութեան վրայ, մենք կգտնենք, որ նրանք կազմում են չորս գասակարգութիւններ: Կլի-

մայ, սնունդ, հող և բնութեան ամբողջական արտայայտութիւն կամ այն երեսյթների միաւորումը, որոնք մեր հինգ զգայարանների միջոցով և գլխաւորապէս տեսութեան ազդում են մեր երևակայութեան վրայ և ծառայում են իրեւ ցեղերի զանազան մտածելակերպի պատճառ:—Մինչեւ անգամ թեթև դիտելով հեշտ է նկատել, որ կլիման, սնունդը և հողը գտնւում են անհրաժեշտ և անընդհատ յարաբերութեան մէջ:

Մարդկութեան վրայ այդ նախնական բնական ազդեցութեան հետևանքն է հարստութեան կուտակումը և պատճութիւնը ցոյց է տալիս, որ հարստութեան կուտակումը բոլորովին անկիրթ ցեղերի մէջ պայմանաւորում էր միմիայն երկրի բնական յատկութիւններով: Մինչև ֆիզիքական աշխատանքը չէր թեթևանում մտարո ոյժերով, հարստութեան զարգացումը կախում ունէր մի կողմից աշխատանքի կանոնաւորութիւնից և եռանդից, միւս կողմից բնութեան առատութիւնից: Այս երկու պատճառներն էլ իւր հերթին ենթակայ են ֆիզիքական օրէնքների: Աշխատանքով ստացուող արդիւնքները քանակով և որակով կախումն ունին երկրի բերրիութիւնից: Եռանդը և աշխատանքի կանոնաւորութիւնը ենթակայ են կլիմայի ազդեցութեան: Ապացոյցն այն է, որ շատ տաք օդը մարդու կազմուածքի վրայ ազդում է թուլացնող կերպով, իսկ շատ սառը կլիմայում, ինչպէս օրինակ բարձր հիւսիսում, եռանդի և աշխատանքի կանոնաւորութեան արգելք է լինում կլիմայի սուդինելը և լոյսի անբաւարութիւնը, ինչու և բանուոր դասակարգերը զանազանուում են անկանոնութեամբ և բնոյթի փոփոխականութեամբ:

Այդ առթիւ խրատական օրինակներ են ներկա-

յացնում չորս երկիր, մինչև հակադրութիւն, զանազան կառավարչական եղանակներով, օրէնքներով, հաւատով և սովորոյթներով. Շւեցիան և Նորվէգիան մի կողմից և Սպանիան ու Փորթուգալիան միւս կողմից: Կլիմայի ազդեցութիւնը այդ երկրներում արտայայտում է համարեա նոյն չափով և բոլորովին նման արդիւնքով: Երկրագործական աշխատանքը այդ երկրներում համարեա բոլորովին անկարելի է՝ հիւսիսային երկրներում խստանում է ձմեռուայ սառնութիւնից և օրուայ կարճատեռութիւնից, իսկ հարաւային երկրներում խիստ կիզիչ տաքութիւնից և օդի երաշտութիւնից: Այս ընդհանուր ազդեցութեան հետևանքն է այդ չորս երկրների բնակչութեան յատուկ բնոյթի անհաստատութիւնը և յամառութիւնը: Առհասսարակ, ինչպէս վերը ասինք, հարստութեան կուտակումը հասարակական զարգացման առաջին աստիճանին կախումն ունի բացառապէս հողից և կլիմայից: Ահա մի քանի պատմական ապացոյցներ:

Ասիայում քաղաքակրթութիւնը ծագեց և զարգանում էր այն շերտում, որը տարբերւում էր առանձին բերրիութեամբ: Այդ մեծ շերտը տարածում է փոքր ընդմիջումներով հարաւային Զինաստանի տրեւելեան մասից մինչև Փոքր Ասիայի արևմտեան եղերը, Փիւնիկէն, Պաղեստինէն: Իսկ այդ շըջանից դուրս, դէպի հիւսիս, միշտ թափառում էին անկիրթ և վայրենի ցեղեր: Յայտնի է նաև, որ մօնպոլական և թաթարական հրոսակները, թողնելով անբերբի անապատները, զանազան ժամանակներում հիմնեցին միծ միապետութիւններ Զինաստանում, Հնդկաստանում և Պարսկաստանում: միապետութիւններ, որոնք տարբերում էին որոշ քաղաքակրթութիւնով:

Հարաւային Ասիայի պաղաքեր հովիտները նոյն-

պէս մշակուած էին բարբարոս ցեղերով, որոնք ստեղծեցին իրենց համար որոշ քաղաքական նիստ ու կաց և մինչև անգամ ազգային գրականութիւն:

Արաբները թողնելով իրենց անբերբի հայրենիքը, ուր նրանք երկար ժամանակ ապրում էին անկիրթ թափառական վիճակի մէջ, նուաճեցին Պարսկաստանը, Սպանիայի լաւագոյն մասը, համարեա ամբողջ Հնդկաստանը և հզօր պետութիւնների հիմնադիրները դառնալով, քաղաքներ էին շինում, դպրոցներ և գրադարաններ բաց անում, Նեղոս ջրերով ոռոգուող նեղ հովիտը եգիպտական քաղաքակրթութեան որբանը գարձաւ, մինչդեռ դբացի ընդարձակ և աւազուտ անապատում միշտ թափառում էին վայրենի ցեղեր: Այսպիսով հողի ազդեցութիւնը առանձին կերպով արտայայտում էր հին աշխարհի քաղաքակրթութեան ծագման և զարգացման մէջ: Եւրոպական քաղաքակրթութեան մէջ, ընդհակառակը, ամենաուժեղ դերը պատկանում է կլիմային: Երկու զանազան քաղաքակրթութեան պատճառների տարբերութիւնը ակներկ է: Ասիայում և Աֆրիկէում քաղաքակրթութիւնը զարգանում էր հարստութիւնների ազդեցութեամբ, որոնք կուտակում էին առատ հունձից: Իսկ Եւրոպայում քաղաքակրթութեան զարգացման նպաստում էր եռանդ և աշխատանքի կանոնաւորութիւն պահպանող միջակ կլիման:

Բայց որովհետեւ փորձը և նմանութիւնը ապացուցանում են, որ եռանդը կամ մարդու ոյժերի միաւորումը ընդունակ է մշտական զարգացման և մինոյն ժամանակ անսպառ է, մինչդեռ բնութեան ոյժերը սահմանափակ են և սպառուող, բնական է, որ Եւրոպական քաղաքակրթութիւնը արտայայտեց աւելի մեծ ընդունակութիւն դէպի յառաջադիմութիւն քան հինը:—

Յոյց տալով՝ զանազան միջոցներ, որոնցով հողը և կլիման ազդում են հարստութեան կուտակման վըրայ, մենք պիտի անցնենք այն հարցին, թէ այդ հարստութիւնները ինչպէս են մատակարարւում զանազան դասակարգերի մէջ։ Հարստութեան կուտակման համաձայն հասարակութեան մէջ առաջ է գալիս երեք դասակարգ։ Մինը աշխատող և այն թուով գերագոյն և ղարգացմամբ յառաջադիմող։ Միւսը՝ չաշխատող, ունեցած նիւթական առատութեան շնորհիւ։ Օգտուելով ըւնեցած հարստութիւնից, մատառը զարգացման առաւելութիւնով, այս դասակարգի մարդիկ հանդիսանում են գործի ձեռնարկողները, որը կատարում են առաջին դասակարգի մարդիկ։ Գործի ձեռնարկողները ստանում են վարձատրութիւն, որը կոչում է օգուտ, իսկ գործաւորները — աշխատավարձ։ Վերջապէս երրորդ դասակարգը փող է մատակարարում գործի ձեռնարկողներին, որի համար ստանում են օգուտի մի մասը։ Այսպիսով ստացւում է տնտեսական շրջադարձութեան երեք տարր՝ աշխատավարձ, օգուտ և տոկոս։ Որովհետև աշխատավարձը աշխատանքի գինն է, պարզ է որ նրա քանակը՝ որոշում է՝ աշխատանքի առաջարկի քանակով—այն է՝ եթէ աշխատանքի առաջարկը աւելի է պահանջից, աշխատանքի գինը ընկնում է և ընդհակառակը եթէ պահանջը աւելի է, աշխատանքի գինը բարձրանում է։ Ուրիշ խօսքով, աշխատավարձի հարցը բնակչութեան հարց է և այդ պատճառով մենք պէտք է քննենք այն բնական պատճառները, որոնք բնակչութեան խիստ աճելուն նպաստելով, առաջ են բերում աշխատանքի մեծ առաջարկ և դրանով աշխատավարձի ընկած գինը յարատև դարձնում։ Ամեն տեղ աշխատաւոր բնակչութեան աճելու վրայ ամենամեծ ազդեցութիւն ունի երրորդ բնական

գործօն—անունդը։ Որքան առաջ է էժան է մնունդը ֆրկում, այնքան աւելի են, աճում բնակիչները, այնքան աւելի պակաս է աշխատավարձի միջին սակագինը, որը ինչպէս ասինք, կախում ունի աշխատանքի առաջարկութեան քանակից։

Սնունդը մարդու կազմուածքի մէջ երկու դեր է կատարում։ Նա մատակարարում է կենսական տաքութիւն և լրացնում է հիւսուածքների անընդհատ կորուստը։ Առաջին նպատակի համար պահանջում են այսպէս կոչուած առանց բորակածնի նիւթեր, որ պարունակում են առաւելապէս կենսական յօրինուածի, իսկ երկրորդ նպատակի համար, ընդհակառակը, գործ են ածւում բորակածին պարունակող նիւթեր, որ գտնուում են բուսական արտադրութիւնների մէջ։

Տաք կիմայում կենսական տաքութիւնը աւելի հեշտ է պահպաննում։ այդ պատճառով մարդը այնտեղ գործ է ածում աւելի պակաս բորակածին չպարունակող մնունդ քան սառը կիմայում։ Նոյնպէս միջակ երկրներում մարդը պահանջում է աւելի պակաս բորակածին պարունակող մնունդ, որովհետև մարմնական շարժողութիւնների պակասութեան պատճառով հիւսուածքների նիւթի կորուստը կատարում է ոչ այնքան արագ։ Պարզ է, որ տաք երկրներում, ուր պակաս մնունդ է գործածում, բնակչութեան աճելը պիտի աւելի արագ կատարուի քան սառը երկրներում, որովհետև տաք երկրում կերակուր աւելի մեծ քանակութեամբ է գտնուում, քան սառը երկրում։ Իսկ ընդհակառակը, որքան երկիրը սառն է, այնքան մնունդի մէջ, որ գործ է ածում բնակչութիւնը, աւելի ածխածին պիտի պարունակուի և, իրօք, փորձը ցոյց է տալիս որ քենուի երկրների բնակիչները մեծ քանակութեամբ ձկան ճարպ և իւղ են գործածում, մինչդեռ արևա-

դարձային տաք երկրներում... մարդիկ բացառապէս մննդում են պտուղներով, բրնձով և ուրիշ բուսական մթելքներով։ Մեծ քանակութեամբ ածխածին պարունակող մնունդը աւելի քիչ է քան բուսական մնունդը և այդպիսի մնունդ ձեռք բերելն էլ շատ դժուար է և մինչև անգամ վտանգաւոր։ Այս պատճառով սառը երկրների բնակիչները, որոնք ստիպուած են շատ մնունդ ստանալ, և տաք երկրներից աւելի թանկ արժողութեամբ, արդէն իրենց զարգացման առաջին աստիճանի վրայ աւելի համարձակ և ձեռնարկող են քան ուրիշ ազգեր, որոնք մնունդը ձեռք են բերում աւելի հեշտ և առանց կոռուի։ Վերը ասածների ընդհանուր եզրակացութիւնը հետևեալն է՝ աշխատավարձի քանակը որոշում է բնակչութեան քանակով։ Բնակչութեան քանակը կապ ունի մնունդի քանակից։ Կեանք պահպանելու անհրաժեշտ մնունդը սառը երկրներում աւելի պակաս է քան տաք երկրներում, իսկ այդ պահանջը սառը երկրում շատ աւելի է։ պարզ կերպով շօշափած եզրակացութիւնները ամփոփում են հետևեալ կերպով՝ տաք երկրներում աշխատավարձը ձգտում է դէպինուազելը։ սառը երկրներում—բարձրանալը։

Այս մեծ սկզբունքը ճշտում է պատմութեան ընդհանուր ընթացքով։ Հին աշխարհի բոլոր քաղաքակրթութիւնները Ասիայի, Աֆրիկէի, Ամերիկայի, ծագեցին տաք երկրներում և պայմանաւորում էին աշխատավարձի ցածր սակագինը և բանուոր դասակարգի չքաւոր դրութիւնը։ Եւրոպական քաղաքակրթութիւնը, ընդհանական, ծագեց սառը կլիմայում և այդ պատճառով Եւրոպայում աշխատավարձը աւելի բարձր էր և հարստութեան մատակարարումը կատարւում էր աւելի կանոնաւոր կերպով, քան այն երկրներում, ուր մնունդի առատութիւնը օժանդակում էր բնակչութեան խիտ-

աճելուն։ Թւում է թէ միակ այդ օրէնքից բացառութիւն կազմում է իսլանդիան, բայց նա, ընդհակառակը, ծառայում է իբրև զարմանալի ապացոյց այդ օրէնքի ճշտութեան։ Յայտնի է որ իսլանդիայում բանուր դասակարգը մննդում է գետնախնձորով, որ այնտեղ բանում է շատ առաջ։

Հողի մի ակրը տնկած գետնախնձորով կարող է մննդել երկու անգամ աւելի ժողովուրդ քան նոյն չափ հողը ցանած ցորենով։ Այդ պատճառով իսլանդիայի բնակչութէնը երկու անգամ աւելի պիտի աճէր քան այն ժողովուրդը, որ մննդում է ցորենով։ Եւ իսկապէս նկատած էր, որ մինչև այն ժամանակ գետնախնձորի հիւանդութիւնների և արտաքսուելու պատճառով, երբ հանգամանքները փոխուեցին, իսլանդիայի բնակչութիւնը աճում էր միջին թուով տարեկան 3% , ինչպէս Անգլիայում աճում էր $1\frac{1}{2}\%$ ։ Բնակչութեան շատանալը առաջ բերեց մեծ աշխատանքի առաջարկ և այդ հանգամանքը իջեցրեց աշխատավարձի չափը մինչև չնչին գին, օրինակ, մինչև չորս պենս օրական։ — Հետևող դատողութիւնները ցոյց կ'տան, որ աշխատավարձի մշտական նուազութեամբ հարստութեան մատակարարումը անհաւասար է, որ հարստութեան մատակարարութեան անհաւասարութիւնից առաջ է գալիս քաղաքական և հասարակական տիրապետութեան անհաւասարութիւն և որ ինչպէս ֆիզիքական նոյնպէս և բարոյական աշխարհը գտնուելով փոխադարձ յարաբերութեան մէջ, ենթակայ են որոշ օրէնքների։ Հին աշխարհից բերենք մի քանի օրինակներ։ Վերը ասուած պատճառների հիման վրայ տաք կլիմայով յայտնի Հնդկաստանի բնակչութիւնը պէտք է բուսական մնունդը գերադասէր կենդանական աշխարհի արտադրութիւններից։ Տաքութեան բարձր աստիճանը

թուլացնում էր մարդու մէջ ժիր աշխատանքի եռանդք և նրա համար անհրաժեշտ մնունդ էր դարձնում այն, ինչ առատ էր ստացում և որը աւելի փոքր քանակի մէջ պարունակում էր առատ մնունդ: Ամենահին ժամանակներից Հնդկաստանի սովորական մնունդն էր բրինձը, ամենասննդարարը ցորեններից և միջին թուռի մէկին՝ 60-անող Ներկայումս բրինձը այնտեղ փոխարինուած է ուրիշ հացային բերքով, որ կոչում է բաջի; բայց ոչ մսի մնունդով, որը, ինչպէս վերը ասինք, չի համապատասխանում այն կլիմային:

Կլիմայի և մնունդի մատնացոյց արած առանձնայատկութիւնները բնականաբար առաջ բերին բընակչութեան արագ աճում և պատրաստակամութեան խիստ մեծ առաջարկ, որպիսի պատճառով և առաջ եկաւ հարստութեան մատակարարութեան անկանոնութիւնը. Դեռ ամենահին ժամանակները, 2000—3000 տարի առաջ, պատմութիւնը Հնդկաստանում յիշատակում է. հրէշային-հարուստ դասակարգերի շարքում ժողովրդի ահազին քաղմութիւն ընկղմած սոսկալի աղքատութեան մէջ: Բացի դրանից դրամագլխի ներկայացուցիչները միևնոյն ժամանակ հասարակական և քաղաքական իրաւունքի ներկայացուցիչ էին, երբ բնակչութեան ամենամեծ մասը մնում էր նախատելի ռամկական վիճակի մէջ:

Մի որոշ երկրում աշխատավարձի քանակը որոշում է հետևեալ կերպով. որովհետև հարստութիւնը բարկացած է հետևեալ տարրերից՝ աշխատավարձից, տարեկան եկամուտից, օգուտից և շահից, և որովհետև տոկոսը, առհասարակ, լաւագոյն չափն է օգուտի, պարգև, որ տոկոսի և տարեկան եկամուտի բարձր չափի ժամանակ աշխատավարձը պիտի ցածր լինի: Հնդկաստանում տարեկան եկամուտը և տոկոսը միշտ շատ

բարձր են եղել: «Մենուի օլէնք»-ների մէջ, որ կազմած է 900 տարի Քրիստոսից առաջ, տոկոսի տուտամ-ը որոշած է 150/0, իսկ տախտամ-ը՝ 600/0. դեռ 1860 թուին տոկոսի չափը Հնդկաստանում տատանւում էր 36-ից մինչև 600/0: Ինչ վերաբերում է տարեկան եկամտի, որոնդագործք վճարում է հողից օգտակարութամար, Հնդկաստանում օրինական ամենաքիչ գինը հաւասար է տարեկան եկամտի կէսին, երբ Անգլիայում և Շոտլանդիայում նոյն եկամուտը հաւասար է տարեկան եկամտի մի քառորդին. Ֆրանսիայում մօտ 1/8, իսկ Ամերիկայում նա աւելի պակաս է և մինչև անգամ միշտ քանի շրջաններում գոյութիւն ունեն միայն որոշ չափով: Ուրիշ խօսքով՝ աշխատաւորի վարձատրութիւնը Հնդկաստանում համեմատելով բարձր դասակարգերի վարձատրութեան հետ՝ համարեա ոչինչ բան է: Աշխատավարձի քչութեամբ պայմանաւորվում է մասնայի աղքատութիւնը և երերի ներկայ գրութիւնը մի կողմից և բարձր դասակարգերի հարստութիւնն ու իրաւունքը միւս կողմից: Դասակարգային կարգերի հետեւանք ռամկութիւնը բնական էր Հնդկաստանի բնակչութեան, մեծագոյն մասի համար: Այս երեւոյթը ընդհանուր է բոլոր արեադարձային երկրներում: Ամեն տեղ ատք կլիման արտադրում է առատ մնունդ, որի հետեւանքն է նախ հարստութիւնների և ապագարգական և հասարակական իրաւունքի անկանոն մատակարարում:

Այս երկրների բնակչութեան մէջ մի դասակարգի պատկանում էին իշխանութեան ու տիրապետութեան բոլոր իրաւունքներն ու առաւելութիւնները, իսկ միւս մեծամասնութեան վիճակում էր հլու հպատակութեան պարտականութիւնները: Բոլոր պետական բարեփոխութիւնները և յեղաշրջումները պայմա-

Նաւորւում էին միմիայն քարձը դասակարգերի շահերով։ Բայց անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ այս ցեղերի տառապանքները կազ ունէին աւելի շատ բրութեան քան մարդկանց կամքից։—Եգիպտոսի բնակչութիւնը նոյնպէս որոշ քաղաքակրթութեան հասաւ, շնորհիւ երկրի բարեյաջող բնական հանգամանքների, որոնք նպաստում էին հարստութեան կուտակման և մտաւոր աշխատանքի կարգացման, ինչպէս Եգիպտոսում, նոյնպէս և Հնդկաստանում երկրի պահաքերութիւնը և տաք կլիման առաջ բերին նոյն օրէնքները և նոյն հետեանքների հասցրին՝ արժանութեան և մթեղքի առատութեան, աշխատանքի մեծ առաջարկի, հարստութեան և իշխանութեան անհաւասար մատակարարութեան և այլն։ Ասիական սովորական սնունդ՝ բրնձին Աֆրիկէում համապատասխանում է արմաւը։ Արմաւնին, որը պատահում է ամենուրէք Տիգրիս գետից մինչև Աստղանդեան ովկիանոսը, Արարիայում և համարեա ամբողջ Աֆրիկէում հասարակածից հիւսիս խիստ պահաքեր է և մատակարարում է ամենօրեայ հարուստ սնունդ միլիոնաւոր մարդկանց և կենադանիներին։ Բնական երկու գործոնների՝ ազգեցութիւնը կլիմայի և հողի, առանձին կերպով նկատելի է Եգիպտոսի ամենապահաքեր մասում։ Սահիդ կամ Ֆիվակիդ, ուր մնացել են արուեստի և գիտութեան նշանաւոր կոթողներ՝ Թէրէի աւերակներ, Կարնակէս, Լիւկսոր Դիենդեր և Եղփու։ Սահիդում իբրև սնունդ գործ են ածում մի բոյս, որ կոչւում է գգութա. այս բոյսը այնքան արագ է ածում, որ մի հատիկը տալիս է 240։ Եթէ Աֆրիկէում առհասարակ տաք կլիման նպաստում էր բնակչութեան աճելուն, հողի աղքատութիւնը արգելում էր այդ աճմանը, իսկ Եգիպտոսում և կլիման և

հողը ամենանպաստաւոր դերն էին խաղում նախարը նակիչներին առատ և էժան ապրելու միջոց տալով և, նրկրիրդ՝ պակասեցնելով նրա պահանջը։ օրինակ, Եգիպտոսիք կարող էին կրել ամենաէժան թեթև ջոր, իսկ չունեողների որդիք մասն էին գալիս բոլորովին մերկ։

Դիոդորոս Միջիլիացին, որ 1900 տարի առաջ էր ապրում Եգիպտոսում, ասում է՝ որ մանկան դաստիարակութիւնը մինչև դեռահասութիւն արժէր այս տեղ ոչ աւելի քան 20 դանեկան (69 սանթիմ)։ Նոյն պատճառներով Եգիպտոսը ուրիշ երկրներից աւելի խիստ էր ինակուած։ Հերոդոտոսի վկայութեամբ Ամազիսի թագաւորութեան ժամանակ Եգիպտոսում կար 20,000 քաղաք. իսկ մինչև այդ դոյլութիւն ունէր 18,000 քաղաք։ Հասկանալի է, որ Փիգիքական ազգեցութիւնների քաղաքական հետեանքները Եգիպտոսում նոյնն էին ինչպիսին որ նկատեցինք Հընդկաստանում։ Փողովուրդը բաժանուած էր փակակեաց դասակարգութիւնը չարքաշ կեանք էր վարում ուամկական գրութեան մէջ։ Կուտակալները նրանց աշխատանքով կառուցանում էին վիթխարի և անօգուտ շինութիւններ. բարձր կասակարգերի վատնելուն և հաճոյքներին վերջ չկար։ Իրեւ օրինակ ոյժի և դրամի անասելի վատնելուն ծառայում են հետեալ վաստերը՝ էլէփանդինէից Սահս 2000 մարդ երեք տարուայ լնթացքում քար էին կրում. Սև ծովի նեղուցը 120,000 մարդու կեանք արժեցաւ. մի բուրդ կառուցանելու համար 20 տարուայ ընթացքում աշխատում էին 360,000 մարդ։ Նոր երկրի էին քաղաքակրթութեան ներկայացուցիչների շարքում առաջնութիւնը պատկանում է Մեք-

սիկախն, և Պերուխն, որոնց մասին կան բաւական ճիշտ պատմական տեղեկութիւններ:

Ամերիկայում, ինչպէս Ասիայում և Աֆրիկում, բոլոր քաղաքակրթութիւններն ասկիզբ առան տաքերկրներում: Բայց Ամերիկայի մասին անհրաժեշտ է պարզել և մի ֆիզիքական ազդեցութիւն, որի մասին այստեղ գեռ չի յիշում: Յայտնի է, որ բացի այլ հանգամանքներից հողի պտղաբերութիւնը բնորոշում են՝ տաքութիւնն ու խոնաւութիւնը: Ինչ վերաբերում է երկրորդ տարրի՝ խոնաւութեանը, բոլոր մեծ գետերը գտնուում են ցամաքի արևելեան կողմը, իսկ ձախ կողմը ոչ մինը չկայ: Գեթ յայտնի է, որ ոչ երւս սիսային, ոչ հարաւային: Ամերիկայում ոչ մի գետ չի թափում մեծ ովկիանոսը: Ապա, տաքութեան վերաբերմաբը, հիւսիսային: Ամերիկայում, նկատուած է հետեւալ երկոյթը: Երբ խոնաւութիւնը յատուկ է միայն արևելեան կողմին, տաքութիւնը գերակշռում է արևմտեան կողմը: Այս անհասկանալի երկոյթը տարօրինակ ազդեցութիւն էր անում: Ամերիկայի հին քաղաքակրթութեան վրայ, որովհետև Մեքսիկայց, հիւսիս գտնուուղ երկրներին մի կողմը պակասում էր տաքութիւնը, իսկ միւս կողմը ոռոգումը և այս պատճառով նրանք չէին միաւորում իրենց մէջ պտղաբերութեան առաջնակարգ պայմանները, ուրեմն հարըստութեան կուտակումը այնտեղ գանդաղում էր, և միենոյն ժամանակ բնակիչների զարգացումը չէր: Կարող հասնել մինչեւ անգամ այն աստիճանի, որպիսի աստիճանի վրայ մենք նկատում ենք Հնդկաստանը և Եգիպտոսը: Մեքսիկայում, ընդհակառակը, երկու հանգամանքներ միանում էին՝ և ոռոգումը և ջերմութիւնը, այն պատճառով, որ նկատնում է երկրի նեղ շերտի վրայ, որ վերջանում է Պանամայի պարանոցով և մօտ-

է հասարակածին: Իսկ որովհետև Ամերիկայի այս մենամի երկրին պակասում էր մի որևէ հանգամանք, այդ պատճառով, բնակն է, որ հիւսիսային Ամերիկային քաղաքակրթութիւնը պիտի կենդրոնանար Մեքսիկայում: Ինչ վերաբերում է հարաւային Ամերիկային, այնտեղ տիրապետում է նկարագրածի հակառակ օրէնքը: Այն է հասարակածից դէպի հիւսիս արևելեան եզերքը արևմտեանից սառն է, դէպի հարաւարքներում արևելեան եզրը արևմը տեանից տաք է: Ապա հարաւային Ամերիկային վերաբերելով ցեմերի համակարգութեան մասին վերը ասածը, մենք տեսնում ենք, որ այնտեղ տիրապետում է ջերմութեան և խոնաւութեան այն փոխադարձ յարաբերութիւնը, որպիսին չկայ հիւսիսային: Ամերիկայում, և այդ պատճառով, հարաւային Ամերիկայի արևելեան մասը և մանաւանդ հարաւային բրազիլիան տարբերում է այնպիսի շօշափելի պաղաբերութեամբ, որպիսին մենք չենք գտնում: մինչեւ անգամ Հիւսիսային: Ամերիկայի երկրներում, որոնք գտնուում են համապատասխան լայնութեան շրջանում:

Հարաւային Ամերիկայում գործում է և երրորդ գործօնը, այսպէս կոչուած՝ յարաշունչ հողմերը, որոնք փչում են անընդհատ մերթ հիւսիս-արևելքից, մերթ հարաւարևելքից: Այս երկոյթը բացատրւում է հետեւալ կերպով սառը օդը, միջտ ձգում է բնեններից դէպի հասարակած և առաջ է բերում հիւսիսային և հարաւային քամիներ համապատասխան կիսագներում: Երկրի շարժուելով, որ կատարւում է արևմուտքից արևելք, այդ քամիները շեղուում են իրենց բնակն առանքից, և այդ պատճառով հասարակածի մօտ, ուր երկրի շարժուելով արագութիւնը ամենաբարձր է, բնեններից եկող օդի հոսանքը արտաքին ազդեցու-

թիւնների գրդմամբ ուրիշ ուղղութիւն է ստանում և կազմում է այն արևելեան հոսանքները, որոնք յարաշունչ հողմեր են կոչում: Յարաշունչ հողմերը; անցնելով Ատլանտեան ովկիանոսը և դիմելով դէպի հարաւային Ամերիկայի արևելեան ափերը, ժողովում և բերում են ջրային՝ գոլորշիներ, որոնք, պարբերաբար խտանալով անձրեային ամպերի, իրենց ամբողջ հեղանիւթը թողում են Բրազիլիայի հողի վրայ, որովհետեւ նրանց ընթացքը արգելում են հսկայական Անդերը: Իրեւ հետևանք այդ առատ ոռոգութեան միշտ եղել է խիստ բազմազան, գեղեցիկ և վեհ բուսականութիւն, որը ծառայում էր իրեւ ապաստան ամեն տեսակ կենդանիներին և Բրազիլիան դարձնում էր մի տեսակ դիւթական աշխարհ: Իսկ միւս կողմից այս խիստ առատ ընութիւնը արգելառիթ էր հանդիսանում մարդկային գործունէութեան: Բրազիլիայի լեռներն ու գետերը իրենց անմերձենալիութեամբ ու մեծութեամբ արգելում են ուղիղ հաղորդակցութեան ճանապարհներ շինել: Հողագործութիւնը համարեա անկարելի է անանցանելի անտառների և մեծաքանակ միջատների պատճառով, որոնցից վերջինները ոչնչացնում են ցանքը և հունձը: Մի խօսքով որչափ առատ և մեծ են երկրի բնական առատութիւնները, նոյնչափ նրանք իրենց անմատչելիութեամբ չեն համապատասխանում հասարակութեան նպատակների: Այս պատճառով պատմութիւնը չգիտէ ոչ մի հետք Բրազիլիայի քաղաքակրթութեան և մինչև անգամ եւրոպական քաղաքակրթութիւնը, որ տեղափոխուած էր Բրազիլիայի ափերը, մինչև օրս չի թափանցել բուն երկիր: Այս հրաշագեղ երկրի հետ համեմատած Մեքսիկան և Պերուն, որոնք աւելի պական ծաւալով բնական հարստութիւն ունէին, գտնւում էին աւելի բարեյաժող հանգամանք:

ներում: Այս երկրներում, ինչպէս Ասիայում, ամենագործածական սնունդն է մայծը (մանչ), որը ինչպէս ասում են, ամերիկական ծագում ունի: Մեքսիկայում նա տալիս է անասելի բերք՝ 400 և մինչև անգամ 800, Մայծից յետոյ գալիս է գետնախնձորը, ինչպէս տեսանք այնչափ նպաստող իրանդիայի բնակչութեան աճելուն:

Մեքսիկայում և Պերուում, վերջապէս, անասելի առատութեամբ տարածուած է բանանը. բաւական է ասել որ բանանը գետնախնձորից 44 անգամ և ցորենից 133. անգամ աւելի պաղաքեր է: Հենց այստեղից էլ սկսում է զանազան աշխարհամասերի քաղաքակրթութեան նմանութիւնը՝ Մեքսիկայի ու Պերուի մի կողմից և հնդկաստանի ու Եգիպտոսի միւս կողմից: Այս բոլոր երկրներում մենք տեսնում ենք բնակչութեան դասակարգային (կաստային) բաժանումը՝ բարձր և ստորին դասեր, ուժեղի բռնապետութիւնը՝ թոյլի վրայ, հարուստների շքեղութիւնն ու վատնումը, աղքատների ընկճուած վիճակը և ստրկութիւնը և հարստութեան ու իշխանութեան այլանդակ ու անկանոն մատակարարութեան ուրիշնման հետևանքները: Պերուում, օրինակ, բոլոր առւրբերը ընկնում էին ցածր դասակարգերի վրայ, ժողովուրդը զրկուած էր ոչ թէ միայն տեղափոխուելու ազատութիւնից, այլ մինչև անգամ զգեստը փոխելու իրաւունքից: Մեքսիկայի սովորոյթների համաձայն որդին պիտի պարապէր նոյն արուեստով, ինչով պարապում էր նրա հայրը: Մտաւոր յետամնացութիւնը նկատում էր ամեն ինչում, սկսած հնամոլութիւնից և մինչև կրօնական պաշտամունք: բարձր դասակարգերի շառայցները գուայլութեան և ոյժի անօգուտ գործադրութեան մասին կարելի է դատել նորանով, որ Մեքսիկայի պալատի շենութիւնը կլանեց 200, 000 մարդու ոյժ, իսկ Պերուինը՝ 20,000 մարդու: Բոլոր հին քաղաքա-

կըթութիւնների ընդհանուր եղբափակումն այն է, որ նրանք չէին բովանդակում իրենց մէջ ոչ մի բարեյացող հանգամանք ժողովրդի մեծամասնութեան համար և այդ պատճառով անդառնալի կերպով պիտի խորտակուէին որևէ արտաքին ոյժի խառնուելով.—մանրամասնօրէն քննելով երեք ֆիզիքական գործոնների ազդեցութիւնը՝ կլիմայի, հողի և սննդի, եւրոպայից պուրագանուող երկրների վրայ, մենք այժմ կանդ պիտի առնենք մի չորրորդ գործոնի վրայ, որը վերը կոչուած է «բնութեան ամբողջական արտայայտութիւն» կամ բնութեան ընդհանուր տեսք: Ճիշտ նոյնպէս, ինչպէս կլիման, հողը և սննդը պայմանաւորում են հարստութեան կուտակումն ու մատակարարումը, բնութեան ընդհանուր տեսքը ազդում է մտքի կուտակման ու մատակարարութեան վրայ: Գործոնների միառութիւնը, որ մենք ընդհանրացնում ենք բնութեան ընդհանուր տեսք անուան տակ, բաժանւում է երկու խմբի, որոնցից մինը ազդում է բացառապէս երեակայութեան իսկ միւսը մտքի պարզ տրամաբանական գործունէութեան վրայ: Այստեղ, ուր բնութիւնը վեհ է և անմերձենալի, մարդու մէջ առաջ է գալի հպատակութեան և անհատական կամքի անգորութեան ըմբռնուութիւնը: Խսկ այնտեղ, ուր բնութեան ոյժերը թոյլ են և սահմանափակ, մարդը ընդհակառակն ըմբռնում է իւր անհատական գերադասութիւնը արտաքին աշխարհի վերաբերմամբ և իրապէս ստորագրում է այդ ոյժերը իւր անհատական կամքի, մինեոյն ժամանակ հետախուզելով բնական երեսյթները և ընդհանրացնելով նրանց կառավարող օրէնքները: Արտաքին գործողութիւնների ազդեցութիւնը երեակայութեան վրայ նկատելի է միմիայն սկզբնական քաղաքակրթութեան մէջ. յայտնի է օրինակ: որ բոլոր բնական երեսյթներից ամե-

նաահուելին երկրաշարժն է, որը սպառնում է ոչնչացնել ինչպէս մարդու աշխատանքի արդիւնքը, նոյնպէս և նրա անձը: Եւ մենք իրօք տեսնում ենք, որ այդ երկույթը ազդում է ամենաքայլայող կերպով մարդու հոգու դրութեան վրայ: Պերուում, օրինակ, ուշը երկրաշարժներ լինում են բաւական յաճախ, բնակչութիւնը տարբերում է երկիրածութեամբ և անհանգիստ ոգով ու կոպիտ սնապաշտութեամբ: Հրաբուխային բնոյթունեցող իտալիայում և Պիրենէյի թիրակղզու վրայ, խիստ տարածուած սնապաշտութիւնը ստեղծեց ուժեղ հոգերականութիւն և մինչև անգամ այլանդակեց քրիստոնէութեան էութիւնը: Բացի դրանից գրգոռուած երեակայութիւնը ուժեղ կերպով ազդում է արուեստների վրայ, իսկ միտքը ազդում է միմիայն գիտութեան զարգացման վրայ:

Այս տարբերութիւնը ապացուցանւում է բազմաթիւ փաստերով: Խտալիան և Սպանիան նշանաւորագոյն քանդակործների հայրենիքն են, գրականութիւնը Սպանիայում և Խտալիայում վերին աստիճանի բանաստեղծական է այլն և այլն: Վերջապէս, զանազան բարբարոս ցեղերի պատմական կենցաղավարութիւնը ցոյց է տալիս, որ գրգոռուած երեակայութեան և սնապաշտութեան ճնշման տակ նրանք հասան մինչև բնական երեսյթների աստուածացնելուն: Բայց երկրաշարժների, բուքերի, կատաղի վայրենիների և ուրիշ նման արտաքին երեսյթների հետ միասին մարդու երեակայութեան վրայ նոյնպէս ուժեղ կերպով է ազդում և հակառակ պայմանական կլիմայի ազդեցութիւնը: Համարեա բոլոր եղանակներին նկատուած է, որ վտանգաւոր համաճարակ հիւանդութիւնների երեալը քաջալերում էր սնապաշտութիւնը և մարդկանց ներշնչում էր աստուածային զայրոյթի

կամ պատժի միտքը: Որպէս զի աւելի պարզ երևակայնք երկու զանազան ազգեցութիւնների հետևանքութիւնը երևակայութեան և մտքի վրայ էին և եւրոպական քաղաքակրթութիւնների մէջ, մենք առաջ կրերենք զանազան ազգերի գրականութեան, կրօնի և արուեստի համառոտագրութիւնը: Հնդկաստանի գրականութիւնը միմիայն երևակայութեան տիրապետութեան արդիւնք էր: Այս գրականութեան բոլոր ճիշդերը բովանդակուում էին մի ընդհանուր բանաստեղծական ձևի մէջ: մինչև անգամ քերականութիւնը, մաթեմաթիկան, աշխարհագրութիւնը, բժշկականութիւնը, օրէնքները, պատմութիւնը և բնագանցութիւնը կազմում էին մի տեսակ պոէմ: Արձակ ձևը բոլորովին չէր գործածուում: Մտածողութեան ամբողջ շրջանը առաջ էր գալի անցեալի աստուածացումից, նախնական առաջինութիւնից և զանազան երևակայական (գերբնական) փաստերից, ինչպէս օրինակ՝ մարդկանց չափազանց երկարակեցութիւնից (միլիոնաւոր տարիներ ապրող) «Մենուի օրէնք»-ի զիւտից շ,000,000,000 տարի առաջ և ուրիշներից: Մինչդեռ Հնդկաստանում ընութիւնը ըմբռնուում է հսկայ և ահոելի չափով ու ձևով եւրոպական աշխարհ: Յունաստանում նրա ոյժերը սահմանափակ են և թոյլ: Այդ պատճառով այս երկրներում ընութիւնը զանազան կերպով է ազդում ցեղերի ընոյթի վրայ: Եթէ Հնդկաստանի ընութիւնը առաջ է բերում մարդու մէջ երկիւղ—Յունաստանում ընդհակառակը, ընութիւնը հաւատ է ներշնչում: Ահա թէ ինչու հնդկական աստուածները ներկայացրած են զարհուրելի ձևերով, երբ յունական աստուածները այլակերպում են մարդկային ոգու և իրականութեան զանազան արտայայտութիւնները: Ուրիշ խօսքով, եթէ հնդկացիք իրենց աստուածներին յատկացնում

էին ամեն տեսակ երևակայական յատկութիւններ, որոնք երկիւղ էին ներշնչում մարդու և հեռացնում նրան մինչև անսահման հեռաւորութիւն, յոյնիրը ընդհակառակ իրենց աստուածներին մօտեցնում էին մարդուն և դրանով բարձրացնում էին նրանց յատկութիւնները արտաքին աշխարհից: Վերջին օրինակ: Հնախուզական դիւտերը միջին Ամերիկայում ցոյց տուին, որ այնտեղ հաւատը հիմնած էր անսահման սարսափի վրայ: Աստուածները զուրկ էին ամեն տեսակ մարդկային յատկութիւններից, տաճարները աչքի էին ընկնում հոյակապութեամբ, որոնք ներշնչում էին ահ և պատկառանք: Այսպիսով այստեղ նոյնպէս արտայայտուում էր նոյն սկզբունքների իրագործումը: Տաք երկրի վտանգները զարգացնում էին աւելի անսահմանութեան, իսկ եւրոպական քաղաքակրթութեան ապահովութիւնը —սահմանականի խտացումը:

Գ.

Հոգու օրէնքները իմանալու համար գործածուող ընազանցաւթեան եղանակի գնահատութիւնը:

Նախ քան հետախուզութեան շարունակելը, անհրաժեշտ է որոշել բնազանցութեան եղանակի էութիւնն ու նշանակութիւնը, որ երկար ժամանակ ուրիշ եղանակներից գերադասուելով գործ էր ածուում մարդկային մտքի պատմութեան մէջ:

Նախընթաց գլուխներում բաւական պարզուած էր էին և նոր աշխարհի քաղաքակրթութիւնների մէջ եղած էական զանազանութիւնը, որ բովանդակուում էր նրա մէջ, թէ եւրոպայից դուրս երկրներում ըընութիւնը հպատակեցնում է մարդու, իսկ եւրոպա-

յում, ընդհակառակը, մարդը հպատակեցնում է բնութիւնը: Այս մեծ օրէնքը անհրաժեշտ է ի նկատի ունենալ ամեն մի քաղաքակրթութիւն ուսումնասիրելիս: Միայն այն քաղաքակրթութիւնն է ընդունակ զարգանալու, որը արդիւնք է մարդկային մտքի տիրապետութեան բնական ոյժերի վրայ: Եւրոպական ցեղերի զարգացումը պայմանաւորում էր հէնց այդ հիմնական պատճառով: Մարդկային եռանդի հսկայական յաջողութիւնները եւրոպայում արտայայտում է անթիւ փաստերով: անբեր հողերը դարձրած են պըտղաբեր, ծովային ոսոգութիւններին վերջ է դրուած, գիշատիչ թռչունները ոչնչացրած են, միջնադարեան սոսկալի հիւանդութիւնները՝ ժանտախտն ու բորոտութիւնը անհետացան և այլն: Բայց դրանից, մենք տեսնում ենք, որ բնական ոյժերը մնում են անշարժ, իսկ մարդկային ոգին շարունակում է անընդհատ յառաջադիմել և ազատուել արտաքին երևոյթների ձնումից: Այսպիսի մեծ նշանակութիւն տալով մարդկային ոգու տիրապետութեան արտաքին աշխարհի վրայ, մենք, բնականաբար, պիտի ուսումնասիրենք այդ ոգու օրէնքները: Բնազանցութեան հղանակը համարում է իրեւ մի միջոց այդ օրէնքները գտնելու և այդ պատճառով այդ օրէնքը մենք պէտք է ենթարկենք քընական գնահատութեան: Բնազանցների հիմնական սկզբունքը պարունակում է նրա մէջ, որ մի մարդու ներքին գործունէութիւնը դիտելով կարելի է ուսումնասիրել մարդկային ոգու դրութիւնը, առհասարակ: Այդ գիտողութիւնը կատարում է երկու ուղղութեամբ: ոմանք սկսում են զաղափարներից, իսկ ոմանք զգացողութիւնից: Առաջինները կոչւում են իդէալականներ, իսկ միւսները զգայապաշտներ: Այս պատճառով բնազանց ութիւնը զարգանում է երկու զանազան ու

զիով, որոնք բերում են զանազան եղբակացութեան: Օրինակ՝ իդէալականների կարծիքով տարածութեան գաղափարը պարզ արդիւնք է մտքի և ոչ զգացողութեան, որովհետև զգայարանների միջոցով մենք իմանում ենք միմիայն սահմանականը և պատահականը, իսկ տարածութիւնը՝ անսահման է և անհրաժեշտ: Մարդը չի կարող երևակայել տարածութեան սահմանը և նոյն ժամանակ չի կարող երևակայել այն իրեւ գոյութիւն չունեցող: Զգայապաշտներն, ընդհակառակը, պնդում են, որ տարածութեան գաղափարը զգայողութիւնների արդիւնք է, որոնք առաջ են բերում իրերը, միմեանցյարաբերութեան մէջ որոշ դրութեամբ դասաւորուած: Երկու դպրոցների եղբակացութիւններին ման տարածայնութիւններ կարելի է առաջ բերել մեծ թուով: Մինչդեռ իդէալականները գտնում են, որ անհրաժեշտ և պատճական ճշմարտութիւնները բղխում են զանազան աղբիւրներից, զգայապաշտները վերագրում են նրանց մի աղբիւրի: Իդէալականները պնդում են, որ բոլոր մարդկանց յատուկ են բարօրութեան, ճշմարտութեան և գեղեցկի նոյն զաղափարները. զգայապաշտներն ասում են, որ այս գաղափարները տարբեր են, որովհետև նրանք բղխում են զգացողութիւններից, որոնք ամեն մի անհատի համար տարբեր են: Այսպիսով բնազանցական հղանակը գործադրում է երկու հակառակ բանակներում, որոնք տարրախուզութեան շատ սահմանափակ—պարզ վերացական—միջոցներ ունին: Այդ պատճառով բնազանցականները, չնայելով իրենց եռանդուն և դարաւոր աշխատութեան, ոչ մի շօշափելի արդիւնք չտուին: Պարզ է, որ բնազանցութիւնը առաջ էր ընթանում սխալ ուղիով, որը պարզում է գիտութեան ժամանակակից հետախուզութեան եղանակով, որ պարունակում է նրա մէջ թէ՝ ամեն մի

օրէնք ստացում է արտաքին երկոյթների դիտողութեան միաւորութեան շնորհիւ, որից վասնում են բոլոր պատահական տատանումները:

Դ.

Ոգու օրէնքներ՝ բարոյական և մտաւոր.—Նրանց զանազան ազգեցութիւնը հասարակութեան վրայ.—Բարոյական ճշմարտութիւնը ների անշարժութիւնը և մտաւորի յառաջադիմութիւնը.—Գիտութեան զարգացումը նպաստում է կրօնական հալածանքների և ռազմական ոգու նուազելուն։—Երեք միջոց, որոնցով գիտութեան զարգացումը թուլացրեց ռազմական ոգին վահովի գիւտ, քաղաքական տնտեսութեան գիւտեր և շոգիի գործադրութիւնը հաղորդակցութեան մէջ։

Այս ուսումնասիրութեան համար անհրաժեշտ է ղեկավարուել պատմական եղանակով, որը, հակառակ բնազանցականի, հնարաւորութիւն է տալիս ուսումնասիրել հոգեկան օրէնքները ոչ միայն այնպէս, ինչպէս նրանք արտայայտում են անհատի մէջ, այլև և այնպէս, ինչպէս նրանք արտայայտում են ամբողջ մարդկութեան գործունէութեան մէջ։

Այդ երկու եղանակների տարբերութիւնը բաւական պարզում է հետևեալ օրինակով։ Երկար ժամանակ գիտութեան մէջ բաց էր մնում արական ծնունդների թուի դէպի իգականը եղած յարաբերութեան հարցը։ Ենթադրում էր, որ այդ ծնունդների թուերը բաւականաչափ հաւասար են։ բայց պահանջում էր որոշել թէ արական կամ իգական ծնունդների հրապիսի թիւն է ներկայացնում աւելին։ Այս խնդիրը լուծելու շատ էին աշխատում և բնազննողները և բնազանցները։ Առաջիններն ասում էին, որ, ուսումնասիրելով առանձին օրգանիզմները և այն օրէնքները, որոնք ղեկա-

վարում են ծնողների կապակցութիւնը, մենք կորչենք սեռի համեմատութիւնը, որովհետեւ այդ համեմատութիւնը արդիւնք է այդ կապակցութեան։ Բնազանցներն իրանց կողմից պնդում էին, որ ուսումնասիրելով անհատի հոգեկան վիճակը, մենք իմանում ենք այն օրէնքները, որոնք ղեկավարում են նրանց շարժութիւնները, իսկ դա հնարաւորութիւն է տալիս մեզ գուշակել մարդկային ցեղի ընթացքը, որը կազմում է անհատական ընթացքից։ Զնայելով այս բոլոր ենթադրութիւններին, բնազննողները և բնազանցները մշինչում պատմական եղանակը հասցը լուծելու մինչ ծնունդների թուի հասարակ ցուցակութեան։ Ծնունդների թուի հասարակ ցուցակութեանը, որը 20 աղջկայ հանդէպ ծնունդ է 21 տղայ և որ այս արական ծնունդների գերակշռութիւնը օրէնք է բոլոր երկրների համար առանց բացառութեան։ Դնահատելով մեր ընդունած եղանակը, մենք էլի պիտի քննենք, թէ ինչպէս, այն եղանակը գործադրելով, աւելի հեշտ է բանալ հոգու օրէնքները։ Հասարակութեան զարգացումը երկու տեսակ է՝ բարյական և մտաւոր։ Յառաջադիմութիւնը հնարաւոր է միայն այն դէպում, եթէ գիտութեան և բարյականութեան երկու տարրերը հաւասարակցուում են իրենց զարգացումով։ Որքան աւելի սերտ են միաւորուած նրանք, այնքան աւելիներդաշնակութեամբ են գործում։ Այստեղից առաջ է գալիս մի կարևոր հարց՝ այդ տարրերից որին է պատկանում։ առաջնակարգ դերը ցեղերի մտաւոր զարգացման մէջ։ Առհասարակ գիտութեան ներկայ զարգացման աստիճանին, ոգուածը է ասել, թէ մարդու մտաւոր, ու գարույսական կարողութեան մէջ գոյութիւն ունի անընդհատ զարգացում, կամ թէ զարգացած երկրում ծնունած

մանուկը տարբերւում է աւելի մեծ ըսդունակութեամբ, քան բարբարոս, վայրի երկրում ծնուածը: Ընդհակառակը, դրական կերպով յայտնի է, որ հանարակութեան մտաւոր և բարոյական զարգացմամբ է պայմանաւորւում միմիայն այն բարելաւումը, որով արտայայտւում և զարգանում է մարդու ընդունակութիւնը: Ամրող մարդկութեան վերաբերմամբ այստեղից ստացւում է հետեւեալ նեղրակացութիւնը. մարդկանց բարոյական և մտաւոր զարգացումը կախումն ունի այն բարոյական և մտաւոր հասկացողութիւնից, որ տիրապետում է նրանց ժամանակ: Ներկայ հասարակութեան մէջ կարելի է նկատել մտաւոր և բարոյական միջին մակերևոյթ, որի վրայ կանգնած են բազմաթիւ մարդիկ և որ ներկայացնում է մարդկանց զարգացման մէջ արտայացտուող մի քանի բացառիկ շեղումներ, որոնք բարձր են կանգնում նորանից և կամ ստոր մնում: Պատմութիւնը ցոյց է տալիս, որ այդ մակերևոյթը շարունակ փոփոխւում է և երբէք նման չէ լինում ոչ միայն երկու նման երկրներում, այլև և երկու յաջորդող սերնդների մէջ: Ակներե է, որ հանգամանքներն են, որոնք որոշում են այդ մակերևոյթը, չափազանց փոփոխական են: Այժմ, եթէ վերցնենք ցեղերի առանձին բարոյական զարգացումը և նրան վերաբերենք մերստացած սկզբունքը, դիւրութեամբ կհամոզուենք, որոչինչ այնքան անհաստատ և անկայուն չէ, ինչպէս բարոյական սկզբունքը: Ուրիշներին բարիք անել, նըրանց օգտի համար զուել սեպական ցանկութիւնները, սիրել մերձաւորին ինչպէս իւր անձը, ներել թշնամիներին, կրթերը սանձել ծնողներին յարգել պատռել և նրանց, ում իշխանութիւնն է հաւատացած:

սրա մէջ բովանդակուում է բարոյականութեան հիմնական սկզբունքը: Բայց այդ սկզբունքները յայտնի են արդէն հազարաւոր տարիներ առաջ և աստուածաբաններն ու բարոյագէտները ոչինչ չեն աւելացրել դրան: Ինչ վերաբերում է մտաւոր զարգացման, դրա և բարոյական զարգացման մէջ գոյութիւն ունի ահագին տարբերութիւն: Մինչդեռ բարոյական սկզբունքները միշտ անշարժ մնացին, մտաւորները շարունակ յառաջադիմում էին, փոփոխւում, բարպւում և առաջ էին բերում նորերը, որոնք ստեղծում էին ամբողջ գիտութիւններ, իին մտածողներին բոլորովին անյայտ: Այնպիսով հասարակութեան բարոյական զարգացման մակերևոյթը մնալով անշարժ, քաղաքակրթութեան շարժողութեան մէջ չի կարող խաղալ այն գերը, որ պատկանում է մտաւոր տարրին: Մտաւոր սկզբունքը ոչ միայն աւելի յառաջադիմող է քան բարոյականը, այլև տալիս է աւելի զրական արդիւնքներ: Ամեն ինչ, որ ձեռք է բերուում մտքով, ինամբով է պահուում, դիւրահասկանալի ձև է տրուում, բացարուում է մասնագիտորէն և շօշափելի ձև ստանալով՝ գանում է մարդկութեան սեպականութիւն: Բարոյական գործերն, ընդհակառակը, խիստ աշանու են, պատհահական և աւելի անյարմար ուրիշներին հաղորդուելու: Մարդասիրութեան արդիւնքներն, օրինակ, կրում են տեղական բնոյթ, յայտնի են մարդկանց փոքր շրջանին և այդ պատճառով շուտով են անցնում: Մինչև անգամ կազմակերպուած բարեգործական ընկերութիւնները, շեղուելով իրանց ուղղակի նպատակից, իրեւ հետևանք զեղծումների և ուրիշ պատճառների քայլացում են և անհետանում: Ապա մենք տեսնում ենք, որ այնտեղ, ուր բարոյական ձգտումները գերիշխում են մտաւորականին, աւել-

լի մեծ վաս են բերում քան օգուտ։ Որքան տղէտն աւելի ջերմեռանդ է և անկեղծ խոստովանում է բարյական սկզբունքները, այնքան նա աւելի վտանգաւոր է և վասակար հասարակութեան համար, մանաւանդ եթէ նա իշխանութիւն ունի մարդկանց վրայ։ Այս ապացուցւում է պատմական և կրօնական հալածանքներով։ Բոլոր նշանաւոր հալածողներն անկասկած աչքի էին ընկնում իրանց անպայման բարոյականութեամբ՝ և մաքուր ձգտումներով, իսկ ընդհակառակը, հակառակ բնայթի մարդիկ զուրկ էին ամեն տեսակ մոլեռանդ ձգտումներից։ օրինակ քրիստոնէութեան թշնամի հեթանոս Հռովմում մենք տեսնում ենք, որ Կօմմօտի և Հելլիօհարալի նման փչացած կայսրներ ամենեին հոգ չէին տանում նոր կրօնի մասին, ընդհակառակը ջերմեռանդ, ամենաազնիւ և աներկիւդ կայսրները՝ Մարկոս Աւրելիոս և Յուլիանոսը, քրիստոնէութեան ջերմեռանդ հալածողներ էին։ Նոյնը տեսնում ենք մենք քրիստոնեայ Սպանիայում։ Հաւատի կատաղի քարոզիչների և անձնուրաց մարտիրոսների այդ երկում ժողովրդի կրօնական զգացմունքը, հոգեկորականութիւնից խրախուսուած, ծնեց խստագոյն մոլեռանդութիւն և աղանդի պարբերական հալածանք, որ արդէն պարտք համարուեց, իսկ այս ողբալի մարդատեացութեան իրքեւ նեցուկ առաջ հկաւ հզօրագոյն հաւատաքննութիւնը։ Այս ինչ դժուար է կասկածել իսպանական հոգեկորականութեան—բոլոր կրօնական հալածանքների այդ զօրեղ գործիքի—ձգտումների և ցանկութիւնների վեհութեան մասին։ Այսպիսով բարյականութիւնը միացած աղիտութեան և իշխանութեան հետ առաջ էր բերում միայն մի չարիք, որ ժառանգական և պարբերական չդառնաւ միմիայն գիտութեան յառաջանակիմութեան շնորհիւ։ Պատմութիւնը

համոզում է մեզ, որ իսկապէս մտաւոր զարգացումը դպրացնում էր կրօնական հալածանքները, որոնց վասար չափում էր ոչ այնքան անհատական զոհաբերութիւններով, որքան նրանց առաջ բերած՝ մարդկանց բնութեան և հասարակական կարծիքի անբարոյականացումով։ Բարյական սկզբունքի և մտաւոր շարժման ազգեցութեան մէջ եղած տարբերութիւնը առանձին կերպով արտայայտում է ուղմական ոգու և զինուրական դասի բնոյթի փոփոխութեան պատճառներն ուսումնասիրելիս։ Բարյագէտները միշտ քարոզում էին, որ պաշտպանողական պատերազմը արդարացի է, իսկ յարձակողականը անարդար։ Այս երկու սկզբունքը նոյնպէս լաւ էին արտայայտուած, նոյնպէս լաւ հսկացուած և ընդունուած բոլոր միջին գարերում, երբ մի շաբաթ չէր անցնում առանց պատերազմի, ինչպէս և այժմ երբ պատերազմները շատ հազուագիւտ են։ Ակներև է, որ պատերազմների պարբերաբար նուազելը կախում չունէր բարյական սկզբունքի անշարժութիւնից։ Ընդհակառակը, մտաւոր շարժումը աւելի ու աւելի դանդաղեցնում էր և պակասեցնում ուղմական ոգու զարգացումը։ Պատմութիւնը ցոյց է տալիս, որ նախնական ցեղերի զինուրականները և նրանց քաջութիւնները առաջին տեղն էին բռնում։ Ժողովրդների աստիճանական զարգացմամբ մտաւոր աշխատանքը առաջ է բերում հասարակական գործունէութեան նոր ասպարէզ և աւելի ու աւելի յետ է մղում պատերազմական աշխատանքը, այնպէս որ զարգացած ժողովրդները մասնակցում են պատերազմների միմիայն բացառիկ հանգամանքներում։ Իբրև օրինակ կարող է ծառայել Սկաստոպօլի պատերազմը։ Երբ ուրիշ զարգացած պետութիւնների մէջ գոյութիւնը ունէր խաղաղ հաստատուն յարաբերութիւն, այս պատե-

րազմը ծագեց այն ժամանակուայ երկու անզարդացած պետութիւնների մէջ՝ Ռուսաստանի և Տաճկաստանի. իսկ երկու թշնամի պետութիւններ՝ Անգլիան և Ֆրանսիան, միացան ընդհանուր գործում և սուրը պարզեցին ոչ անձնական նպատակների համար, այլ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը պաշտպանելու նպատակով: Ռուսաստանը ի հարկէ չէր կարելի դատապարտել անբարոյականութեան և թերահաւատութեան մէջ. այս կողմից նա թերևս շատ առաւելութիւններ ունէր ուրիշ պետութիւնների հանգէպ. բայց նրա նուաճողական ձգտումները առաջ եկան նրա փառասիրութիւնից և զարգացման թերութիւնից, որոնք գերակշռում էին ռազմական ձգտումներով: Անգլիական ժողովրդի բնոյթը իսկ և իսկ ցոյց է տալիս, որ մտաւոր զարգացումը պարբերաբար ոչնչացնում էր նրա ռազմական հակումները: Ներկայումս ամեն մի անգլիացի իր պարտքն է համարում իր որդոց որեկիցէ մտաւոր, արդիւնաբերական կամ արհեստաւորական պարագմունը տալ, միայն քիչ թէ շատ անընդունակ մարդիկ են մտնում զինուորական ծառայութիւն և կամ հոգնոր կոչման մէջ: Պարզ է, որ մտաւոր զարգացումը պակասեցնում է ոչ միայն պատերազմական հակումները, այլ և զինուորական դասի նշանակութիւնն և ընդունակութիւնները: Այս կարելի է ապացուցնել պատմական տեսակէտով: Հնում զինուորական դասը կազմում էր հասարակութեան ոչ միայն ամենազարգացած դուռը, այլ և իւր մէջ ունէր մեծ մտածողներ՝ Սոլօն, Թեմիստոկլէս, Էպամինոնդաս, Սոկրատ, Պուտոն, Աստիսթէն, Արքիտ, Մէլիս, Պէրիլ, Սոփոկլ, Արքիլօք, Զօրացիոս, Տիրտէոս, Ալքէոս, Թուկիդիտ, Փոլիփոս և Քսենոֆոնը—այս բոլոր մեծ փիլիսոփաները, պատմաբանները, հսկաօրները և բանաստեղծ-

ները միաժամանակ նշանաւոր զինուորականներ էին: Իսկ նորագոյն ժամանակները զինուորական դասը, որ XVI դարից լցնում էր ամբողջ Եւրոպան, չունէր իւր մէջ նոյն իսկ տասը աչքի ընկնող մտածողներ: Մի հատիկ բացառութիւն կազմում է Դէկարտը, ինչպէս զինուոր և նշանաւոր մտածող: Յայտնի մտածող զինուորականները Ռալլէ և Նէպիրը աչքի չէին ընկնում իրանց առանձին խոհուն մտածողութեամբ: Հին նշանաւորագոյն զօրավարները միենոյն ժամանակ և ամենանշանաւոր քաղաքագէտներ էին: Այդ մենք չենք տեսնում զինուորական նորագոյն դասի մէջ: Մինչև անգամ այնպիսի վարիչներ, ինչպէս Դուստաւ Ադոլֆը և Ֆրիդրիխ մեծը, որոնք գերազանցում էին իրանց թափանցող մտքով ռազմական գործերում, վատ քաղաքագէտներ էին: Միմիայն Կրօմվէլի, Վաշինգտոնի և Նապոլէօնի մասին կարելի է ասել, որ նրանք իրանց մէջ միացնում էին այս երկու յատկութիւնները: Անգլիայում մենք տեսնում ենք երկու նշանաւոր զօրավար, Մարլէբօրո և Վէլլինգտոն, որոնցից առաջինը աչքի էր ընկնում իւր խեղճ տգիտութեամբ, անսրտութեամբ և գաւաճանութեամբ, իսկ միւսը օպօղիցիա էր առաջ բերում ամենախելացի և ամենաանհրաժեշտ նորամուծութիւնների դէմ: Միուլ բանիւ մտաւոր աշխատանքի զարգացումը ստեղծեց ասպարէզ, որ կլանում է հասարակութեան բոլոր լաւագոյն տարրերը և զինուորական դասի համար թողնում է միայն անընդունակ մարդկանց: Այժմ անհրաժեշտ է ցոյց տալ և այն ուղին, որով հին մարդկանց պատերազմական հակումներն ու ընդունակութիւնները թուլացան երուպական քաղաքակրթութեան ազգեցութեան տակ: Այդ ուղին երեքի է բաժանում. — առաջինը ստեղծուած է վառողի գիւտով: Մինչև այդ մեծ

գիւտը, երբ զէնքերը և ուազմամիջոցները խիստ պարզ էին, իւրաքանչիւր ֆիզիքապէս առողջ մարդ կարող էր զինուուր լինել: Եւ իրօք, մինչև XV դար գրեթէ ամբողջ եւրոպական բնակչութիւնը կազմում էր մի մեծ բանակ, որի մէջ ապրում էր հոգևորականութիւնը: Հասարակութիւնը իսկապէս երկու դասակարգի էր բաժանուում:—զինուորական և հոգևորական: իսկ մեր ժամանակակից մտաւոր և առևտրական դասակարգերը գոյութիւն ունէին միայն իրենց սաղմի մէջ: Վասովի գիւտի հետ, որ գործածելու համար պէտք եղան սպառազինութեան բարդ և թանկ ձեեր,—համեմատելով հին սուսերի և նետի հետ, —պատերազմական գործիքներն ու ահագին ծախսեր, զինուորական արհեստը պէտք է կենտրոնանար առանձին, այդ նպատակին յարմարեցրած, դասակարգի մէջ: Այս պատճառով սկիզբ առան մշտական և վարձու գօրքեր, —և մարդկանց ահագին բազմութիւն յետ սովորեցին և ազատուեցան զինուորական զբաղմունքներից և յարմարուեցան խաղաղ արուեստներին: Այսպիսով, սկիզբն առաւ երրորդ կամ զարգացած դասը, որի նշանակութիւնը աւելի և աւելի ուժեղանում էր և արտայայտում մեծ քաղաքական յեղաշրջումների ժամանակ: Երկրորդ ուղին ներկայացնում են այն գիւտերը, որոնք եղան քաղաքական անտեսութեան գիտութեան շնորհիւ: Գիտութեան այս մեծ ճիւղը, որ սերտ կապ ունի վարչական արհեստի հետ, երկար ժամանակ արհամարհուած էր մնում: Մինչեւ երկար և հաստատուն էր պատմական այն համոզմունքը, թէ հարստութիւնը դրամի մէջ է, որ ամեն մի պետութիւն պարտաւոր է դէպի ինքը գրաւել որքան կարելի է շատ ոսկի և որքան կարելի է ոլակաս օտարերկրեայ ալլրանք, որ ամեն մի պետութիւն պարտաւոր է աշխատել ամեն տեսակ

ոյժերով թուլացնել իր հարկանի բարեկեցութիւնը և այս վայըրենի համոզմունքը առաջ էր բերում արիւնահեղ սոսկալի պատերազմներ, որոնք ազդում էին ամբողջ նոր աշխարհի բարեկեցութեան վերայ: Միմիայն XVIII դարում երեաց առաջին փորձը քաղաքական տնտեսութիւնը բարձրացնելու գիտութեան աստիճանի և այդ փորձի պատիւը պատկանում է Աղամ Սմիտին, որ 1776 թուին հրատարակեց իւր նշանաւոր աշխատութիւնը «Inquiry into the Wealth of Nations» վերնագրի տակ: Աղամ Սմիտը վերջնականապէս խորտակեց առևտրականութիւնը հովանաւորելու և սրա հետ կապ ունեցող այլ անհեթեթութիւնների պատմական սկզբունքը: Հասարակութիւնը իւր կողմից ընդհանուր մտաւոր զարգացմամբ պատրաստուած էր նոր սկզբունքներ իւրացնելու և Սմիտի ուսմունքը յաղթելով եռանդուն ընդիմութեան՝ հաստատուեց ամուր հիմքերի վրայ: Իսկ այս ուսմունքի ազդեցութիւնը զինուորական դասակարգի վրայ ակներկ է՝ ազատ վաճառականութեան սկսուելը ոչնչացրեց պետութիւնների ընդհարումները վաճառականական հաշիւներից և նըրանց ներշնչեց այն համոզմունքը, թէ ամեն մի երկրի բարօրութիւնը պայմանաւորում է ընդհանուր և խաղաղ տնտեսական շրջադարձութիւնով: Երրորդ ուղին, որով թուլանում է ցեղերի զինուորական ողին, դա շոգիի գործածութիւնն է ցամաքի և ջրերի երթևեկութեան մէջ: յարաբերութեան արագ և էժան միջոցները նպաստում էին ժողովրդների փոխադարձ յաճախ յարաբերութեան և միևնուն ժամանակ այդ անկիրթ թշնամութեան ոչնչացման, որ վերջինները տածում էին միմեանց դէմ: Այս ճշմարտութեան ապացոյցը մենք գտնում ենք ժամանակակից յարաբերութիւնների մէջ,

որ գոյութիւն ունի ֆրանսիայի և Անգլիայի ժողովրդների մէջ։ Նրանք երկար գարերի ընթացքում ատում էին ու նուաստացնում միմեանց ամենաստոր կերպով, իսկ այժմ, ընդհակառակը, տածում են փոխազարձ խորը յարգանք և բարեկամական զգացում։ Բոլոր դատողութիւնները բերում են մեզ այն ընդհանուր եղբակացութեան, որ ամեն մի քաղաքակրթուած ազգի փոփոխութիւնները կախումն ունին երեք պայմաննից։ առաջին՝ գիտութեան քանակից, որը ունին աւելի գարգացած մարդիկ, երկրորդ՝ այդ գիտութիւնների ընդունած ընթացքից և երրորդ՝ այդ գիտառթիւնների տարածուած լինելուց և ազատութիւնից, որով նրանք տարածում են հասարակութեան բոլոր գասակարգերի մէջ։ Մի խօսքով մտաւոր զարգացումը կատարում է այն, ինչոր չեն կարող անել բարոյական սկզբունքները։ Զարը և բարին գործում են ժամանակաւոր ազգեցութիւն, փոխազարձաբար հաւասարակշռում են և շուտ անյայտանում, չթողնելով իրենցից յետոյ ոչ մի հետք։ Մտաւոր գիտերը բովանդակում են իրենց մէջ մշտնջենական ճշմարտութիւններ, որոնք աւելի երկար են ապրում քան պետութիւններ, կրօններ և թշնամական հաւատների կոիւը։



Ե.

Կրօնի, գրականութեան և կառավարութեան ազգեցութեան ուսումնասիրութիւնը։ Անդլական պատմութեան համեմատութիւնը ֆրանսիականի, գերմանականի և ամերիկականի հետ։ Կրօնի աղցեցութիւնը հասարակութեան զարգացման վրայ։ Քարոզական գործունէութիւն, Հրէաները։ Սկզբնական քրիստոնէութիւն։ Շվէդիայի և Շոտլանդիայի օրինակը։ Գրականութեան և կառավարութեան պատմական ազգեցութիւնը։ Կառավարութեան վասակար գործունէութեան օրինակները։

Պատմական և գիտական աստիճանաբար տարրալուծութեամբ մենք եկանք այն համոզման, որ թէպէտ մարդու առանձին գործունէութիւնը պայմանաւորում է նրա անհատական զգացումով ու խանդով, բայց այս մօտիւները նշանակութիւն ունին եթէ ուսումնասիրենք նրանց ազգեցութիւնը տարիներով, ամիսներով կամ առհասարակ կարճատե ժամանակով։ Իսկ մարդու գործողութիւնների ընդհանուր գումարը շատ թէ քիչ աւելական ժամանակամիջոցում բոլորովին ազատ է թւում մարդկային անձնական կամյականութիւնից և կախուած է լինում բացառապէս ամբողջ հասարակութեան մտաւոր գրութիւնից։ Այս բանի իրերեւ լաւագոյն ապացոյցը կարող է լինել յանցանքների պատմութիւնը։ Վիճակազրութիւնը, ինչպէս արդէն նկատուեց, ապացուցել է, որ ոճիրների քանակը մեծ ժամանակամիջոցում կրկնւում է զարմանալի ճշտութեամբ, չնայելով որ ամեն մի ոճրագործութիւն պայմանաւորում է անհատական, անձնական մօտիւներով։ գժբաղդաբար պատմաբանները մինչև վերջին ժամանակները չէին խոստովանում այդ մեծ սկզբունքը և համապատասխան ուղղութեամբ աշխատելու փո-

խարէն իրանց ուսումնասիրութիւնները լցնում էին պարզ փաստերով և չլուսաբանուած դիպուածներով, ինչպէս օրինակ պատերազմների մանրամասնութիւններով, որ միակողմանի և ժամանակաւոր հետաքըրքութիւն ունի ուսումնասիրել միմիայն Անգլիայի քաղաքակըրթութեան պատմութիւնը, միմիայն այդ պետութիւնով սահմանափակուել մեզ ստիպող շարժառիթները հետեւալներն են. —առաջին, ինչպէս հէնց այժմ մատնացոյց էր արուած, պատմաբանները չտուին մեզ պատրաստ նիւթեր տիեզերական քաղաքակըրթութիւնը բազմակողմանի ուսումնասիրելու և մշակելու. երկրորդ, կարելիութեան սահմանում լուսաբանել մարդկութեան պարբերական զարգացման ընթացքը. այդ նպատակի համար մենք պէտք է ընտրենք այնպիսի երկիր, ուր յառաջադիմութիւնը կատարում էր ընական կերպով, հանգիստ, առանց բռնի յեղաշրջումների և առանց թելադրական ազդեցութեան ներսից՝ պետութեան, դրսից՝ օտար ազդեցութեամբ. Այդպիսի երկիր օրինակ իրականութեան մէջ համարեա անհնար է, բայց Անգլիան շատ մօտ է այդ ձևին: Գոնէ վերջին երեք հարիւր տարուայ ընթացքում Անգլիան ներկայացնում էր եւրոպայի պատմութեան մէջ անօրինակ խաղաղ զարգացում բոլոր ճիւղերում՝ մտաւոր, քաղաքական, առևտրական և մասնաւոր կեանքի մէջ և իւր վրայ չէր կրում արտաքին ազդեցութիւն: Այդ բանի մէջ կարելի է համոզուել, եթէ մենք համեմատենք Անգլիան ֆրանսիայի, Գերմանիայի, Ամերիկայի—երեք առաջնակարգ զարգացած պետութիւնների հետ: Օտարերկրացիք երկար ժամանակ չէին յաճախում Անգլիան և այդ պատճառով նրանց ազդեցութեան տակ չէին ընկնում. և եթէ, ինչպէս ասում են, այդ ազդեցու-

թիւնը արտայայտուեց Կարլ երկրորդի վերադարձով, յամենայն դէպս դա աւելի առաջ չէր գնում, քան Բօդեկինհամի, Դօրսէտի, Էտէրէջի, Կիլիգլիւի, Վիլգրէվի, Ռօչէստրի և Սէղլիի ամօթալի գրուածները, որ աչքի էին ընկնում ֆրանսիական բնոյթով: Առհասարակ անգլիացիք ֆրանսիացիներից ոչինչ կարեոր բան չէին փոխ առնում. ընդհակառակը, ֆրանսիացիք շարունակ օտարների ազդեցութեան տակ լինելով, որոնք այցելում էին նրանց, անգլիացիներից փոխ առան գլխաւոր պետական հաստատութիւններ և օգտառում էին նրանց մտաւոր հանձարի արդիւնքներով: Յայտնի է, որ 1789 թուի յեղափոխութիւնը արդիւնք էր անգլիական մտածողների փիլիսոփայական վարդապետութեան: —Գերմանիայում XVIII դարու վերջից երեան են գալիս խորը մաքերի մի շար. բայց իւր մտաւոր զարգացմամբ այս երկիրը նախ և առաջ պարտական է ֆրանսիացիների ազդեցութեան, որ Բերլին տարուեց Ֆրիդրիխ մեծի իշխանութեան օրով: Բայց որովհետեւ այս ազդեցութիւնը սկզբում յայտնուեց միայն բարձր մտածողներին, ուստի և գերմանական գրականութիւնը մուտք գործեց աւելի զարգացած և փոքրաթիւ գասակարգի մէջ, իր համար յատուկ գիտնական լեզու ստեղծեց և այս ճանապարհով հեռացաւ ժողովրդի մեծամասնութիւնից, որ կարիք ունէր նրա լուսաւորող ազդեցութեան, և յետ մնաց գործնական գիտութիւնների ու գործնական շահերի շրջանից: Ամերիկայում նկատում է ուրիշ ծայրահեղութիւն: Ոչ մի տեղ այնքան քիչ չէ գիտնականների, ինչպէս և ծայրահեղ տգէտների թիւը, ինչպէս այդ երկրում: Եթէ Գերմանիայում գիտութեան պաշարը չափազանց մեծ է, բայց քիչ տարածուած, դրա փոխարէն Ամերիկայում այդ պաշարը աննշան է, բայց տարածուած է շատ և բոլոր

գասակարգերի մէջ։ Այս երկու ծայրայեղութիւնները միակերպ վնասակար են և պէտքէ վերանան այդ երկը ների քաղաքակրթութեան զարգացումով։ — Սակայն ուսումնական լուսական վարչութիւնը Անգլիայի քաղաքակրթութեան պատմութիւնը, անհրաժեշտ է նոյնպէս աչքի առաջ ունենալ այդ երկու երկրների պատմութիւնը, որոնցում քիչ թէ շատ կատարեալ կերպով զարգացել են քաղաքակրթութեան այս կամ այն պայմանները։ Այս պատճառով էլ ներկայ հետազոտութեան մէջ գիտութեան կուտակման օբէնքները, օրինակ, հետազոտուած կլինին գերմանական կայսրութեան պատմութեան համեմատ, կառավարչական հովանաւորութեան սկիզբը — Թրանսիայի պատմութեան համեմատ, եկեղեցու զարգացման օբէնքներն ու այս զարգացման ազդեցութիւնը ժողովրդական բարեկեցութեան վրայ՝ խալանական պատմութեան համեմատ, Զեռնակելով կրօնի, գրականութեան և վարչութեան ազդեցութեան հետազոտութեանը, մենք ամենից առաջ պէտք է ասենք, որ նրանք ներկայանում են իրրկ որոշ քաղաքակրթութեան հետևանք, և ոչ թէ նրա պատճառ։ Պատմութիւնը շատ օրինակներ է տալիս, երբ ժողովուրդները փոխել էին ու փոփոխել են կրօնը, բայց ոչ մի օրինակ չէ եղել, երբ զարգացած ժողովուրդը վերադառնայ հնացած, յետ մնացած կրօնին։ Նոյնպէս և ընդհակառակը, տգէտ ժողովուրդը անկարող է բարձրանալ մինչև լուսաւոր կրօնը մրոնելը։ Ահա մի քանի օրինակներ։ Քարողչական գործունէութեան յաջողութիւնները շատ թոյլ են ու խախուտ։ Հեթանոսների քրիստոնէական կրօնին կատարելապէս դառնալու միշտ արգելք է եղել այն, որ նրանք, նոր ծէսերը իւրացնելով, յամառ կերպով պահպանում էին իրանց աւանդական համոզմունքները միշտ հակուած էին վերադառնալ իրանց նախնիքների

կրօնին։ Դէպէրեր եղել են ժողովրդի ամեն կացութեան ժամանակի, որ իրևան են նկել հատ ու կէնտ բարձր մտածողներ, որոնք իրանց դարի քաղաքակրթութեան մակերևոյթից բարձր լինելով, նոր կրօնական աշխարհայեցք են ստեղծել և սրանով մի կերպ ձգտել են առաջ տանել մարդկութեան զարգացումը։ Բայց նոր կրօնը բաւականաչափ հաւատացողներ չի գտել իր համար և չի դառնել ժողովրդի սեպականութիւն, մինչև որ վերջինս չի բարձրացել մինչև նրան համապատասխան զարգացման աստիճանը։ Այսպէս մենք տեսնում ենք, որ միաստուածութեան գաղափարը մեծ դժուարութեամբ է թափանցում հրէական ցեղի գիտակցութեան մէջ։ Հրէաները, դեռ ևս տգէտ լինելով, չկարողացան մի անգամից իւրացնել այս մեծ գաղափարը, որ կանխեց նրանց զարգացման և նրանք շատ երկար ժամանակ հակուած էին վերադառնալ հեթանոսական չաստուածներին, ոսկէ հորթին, պղնձէ օձին ևայլն։ Նոյնքան ճիշտ մենք դիտենք պատմութիւնից, որ քրիստոնէութիւնը, ժաֆանցելով կրոպական ազգաբնակութեան մաքերը, խառնուեց ամենակոպիտ նախապաշարումների և հեթանոսական ծէսերի հետ և անձունի ու տգեղ ձևեր ընդունեց։ Միմիայն XVI դարու մեծ դէպէր մաքրեց այդ կրօնը կողմանակի խառնուրդներից։ Բայց աղաւաղուած կրօնի ազդեցութիւնը ի դէմս կաթոլիկութեան կարողացաւ սարսափելի հետևանքներ առաջացնել։ 150 տարի շարունակ Եւրոպան ցնցուած էր կրօնական զարհուրելի պատերազմներով, կրօնական հալածանքներով և սպանութիւններով։ Միայն XVI դարում բողոքական լուսաւոր կրօնը վերջ դրեց մարդկային այս բարբարոսութեան և Եւրոպան երկու մասի բաժանուեց կաթոլիկ և բողոքական։ Այնուհետև, ժամանակակից

տէրութիւնների մէջ էլ մենք տեսնում ենք այնպիսիները, որոնք իշխում են այնպիսի կրօնների, որոնք չեն համապատասխանում իրանց մտաւոր զարդացման։ Օրինակ, Թրանսիան, որ աչքի է ընկնում իւր կատարեալ աղատամտութեամբ և կրօնական համբերութեամբ, կաթոլիկ կրօն է դաւանում, որ աւելի նախապաշարումներով լի է և անհամբերող։ Ընդհակառակ, ծօւլանդիան և Շվեյցարիան, որոնք գերազանցում են իրանց ժատութեամբ, նախապաշարումով և կրօնական անհամբերութեամբ, դաւանում են բողոքական ազատ և խաղաղասէր կրօնը։ Պարզ է, որ Փրանսիացիք իրանց կրօնից լաւ են, իսկ շոտլանդացիք և շվեյցարիքից ենց կրօնից վատ։ Ինչ որ ասացինք կրօնի մասին, նոյնը ամբոջովին վերաբերում է գրականութեանը։ Գրականութիւնը մի երկրի գիտութեան միաւորութիւնն է, որ արտայայտում է գրաւոր ձևով։ Առանձին անհատները կարող են իրանց զարի զարդացման մակերևոյթից բարձրանալ։ Բայց հասարակութիւնները այդ բանից չեն շահում։ Մարդիկ, որոնք բարձր աշխարհահայեացք են իւրացըել, մնում են ահազին մեծամասնութիւնից անջատուած, և ոչ մի աղդեցութիւն չեն գործում նրա վրայ։ Մրանով է բացատրում յունական և հոռվմէական քաղաքակրթութեան անկումը, որ կարճ ժամանակ գոյութիւն ունեցաւ։ Մրանով էլ բացատրում է, ինչպէս վերել նկատեցինք, որ Գերմանիայում գրականութեան էական մասը աղդեցութիւն չի գործում ազգային քաղաքակրթութեան վրայ։ Բաւական չէ գրականութիւն ստեղծել, անհրաժեշտ է և տարածել այն։ Բայց թնչպէս կարող է գրականութիւնը տարածուել մի ժողովրդի մէջ, որը պատրաստուած չէ նրա սկզբունքները, զաղափարն ու ուղղութիւնը ըմբռնել, և մինչև անդամ ընկղմուած

է մնում իւր աւանդական նախապաշարումների մէջ։ — Վերջապէս անցնելով կառավարութեան հասարակութեան զարդացման վրայ ունեցած աղդեցութեանը՝ անհրաժեշտ է նախ մատնացոյց անել այն աղդեցութիւնները, որոնց ենթակայ է ինքը կառավարութիւնը։ Մի երկրի վարիչները ամենից առաջ այն մարդիկն են, որ անուել են նրա գրականութեամբ, նրա աւանդութիւններով, նրա կրքերով։ Այստեղից հետեւում է, որ նրանց գործունէութիւնն էլ պայմանաւորւում է երկրում տիրող մտաւոր տրամադրութեամբ։ Եւ իսկապէս, պետական կարգերի մէջ ամեն մի փոփոխութիւն, ամեն մի մեծ բարեփոխութիւն իրագործուում է վարիչների կողմից այն սկզբունքներով, որ ընդգծել են նոյն երկրում գոյութիւն ունեցող տաղանդաւոր մտածողներ։ Այս տեսակ բարեփոխութիւնների օրինակներ բաղմաթիւ կարելի է բերել։ Անգլիայի պատմութեան մէջ, օրինակ, կարելի է մատնացոյց անել մի ամենամեծ դէպբ—հացային օրէնքների ոչնչացումը։ Հովանաւորող սիստէմի անհեթեթութիւնն առևտուրի մէջ պարզ ապացուցուած էր քաղաքա-անտեսների կողմից XVIII-րդ դարի 2-րդ կէսի սկզբում։ Այսուհետեւ հացային օրէնքների ոչնչացման անհրաժեշտութիւնը թափանցեց հասարակութեան գիտակցութեան մէջ և, չնայելով եռանդուն գիմադրութեան, իրագործուեց օրէնսդրական եղանակով։ Այս փաստը բաւական ուսանելի է։ Բայց որովհետեւ նման փաստերը ներկայանում են շարունակ և ամեն տեղ մեծ չափով և արտայայտում են իրեն գիտութեան արդինք, հասարակական կարծիքի և կառավարութեան միաժամանակ աղդեցութեան, ուստի և անհրաժեշտ է ընդունել, որ ամեն մի մեծ բարենորոգում պարունակում է թէ որևէ նոր բան ստեղծելու, այլ որևէ

հինը ոչնչացնելու մէջ: Ուրիշ խօսքով, կառավարութեան գործունէութիւնը, որ հաստատում է գիտութեան և հասարակական կարծիքի պահանջները, զուտ բացասական բնոյթ ունի, այսինքն, փոխում է հնացած կարգերը, որոնք թշնամի են բարեկեցութեան նորագոյն պայմաններին: Երկրորդ շօշափելի օրինակը հացային օրէնքը ոչնչացնելուց յետոյ կրօնի համար հալածանքի դադարեցնելն է: Այս փաստը արտայայտում է հին նախապաշարումների ոչնչանալով, և ոչթէ որևէ նոր ճշմարտութիւն յայտնագործելով:—Միւս կողմից, կառավարութիւնների միջամտութիւնը քիչ ֆլաս չպատճառեց մարդկութեան բարեկեցութեանը: Այսպէս, օրինակ, շատ դարերի ընթացքում օրէնսդրական կարգադրութիւնները արգելք էին լինում առևտրական ազատ շրջանառութեան, ծանրաբեռնող հարկեր և մաքսեր էին ստեղծում և ընդարձակ դադանի արտահանութեան պատճառ էին դառնում, որքայքայիչ ազդեցութիւն էր գործում հասարակութեան բարոյականութեան վրայ, ամեն կողմ արբեցութիւն, գողութիւն և անրարոյութիւն էր տարածում և բազմաթիւ ուրիշ յանցանքներ առաջ բերում: Իսկ եկեղեցու վարչական հովանաւորութիւնը առաջ բերեց կեղծաւորութիւն ու երդմնազանցութիւններ: Այն մարդիկ, որոնք ճգտում էին քաղաքական շահ ձեռք բերել, քօղարկում էին իրանց համոզմունքները, իսկ ուստի ու երդումը, որոնք ամեն չնչին դէպքում կրկնըւում էին, դատարկ ձեսկանութեան փոխուեցան: Վերջապէս էլի մի օրինակ, վաշխառութեան դէմեղած օրէնքները առաջ էին բերում զանազան հսարագիտութիւններ, որոնց շնորհիւ վաշխառուները ծածկում էին իրանց վատ արարքները և վարձատրում իրանց պատժի ենթարկուելու վատահու

թեամբ: Առանձնապէս վնասակար կերպով էր արտայայտում կառավարութեան ազդեցութիւնը գրականութեան զարգացման վրայ: Եթէ ոչ յայտնի, գէթ կողմնակի կերպով արգելում էր գիտութեան տարածումը: Թուղթը, գիրքը, պարբերական հրատարակութիւնները և, գիտութեան տարածման գործիները ամենածանր տուրքերով էին ծանրաբեռնուած: Այս եղանակով հասարակութիւնը զրկուած էր հնարաւորութիւնից օգտուելու մտքի արդիւնքներից, որոնք մարդկանց սահմանափակ դասերի սեպհականութիւն էին: Անկասկած կլինին պետութիւններ, որոնցում այս և սրանց նման փաստերը ծաղկում են և մինչեւ այս օրերը և հսկայական ոյժ են կազմում, որ արգելք է լինում մտաւոր յառաջադիմութեան: Իսկ Անգլիան ուրիշ բոլոր տէրութիւններից աւելի պակաս է կրել իւր վրայ պետական այդպիսի միջամտութեան ազդեցութիւնը, և այդ պատճառով նա աւելի յարմար է քաղաքակրթութեան պատմութեան յաջորդական ուսումնասիրութեան համար:

Q.

Պատմական գրականութեան սկիզբը և նրա վիճակը միջին դարերում:—Պատմական ասածին տեղեկութիւնները բալլագաներում:—Գրերի գիւտը և կրօնի փոփոխութիւնը նպաստեցին պատմութեան աղճատման:—Հոգևորականութեան ազդեցութիւնը պատմագրութեան վրայ:—Օրինակներ:—Դիւրահաւատութեան իշխանութիւնը:—Օրինակներ:

Վերջապէս մենք այն եղրակացութեան հասանք, որ երոպական քաղաքակրթութեան չափը պայմանաւորուած է բացառապէս գիտութեան զարգացումով, որը, իր հերթին, կախում ունի յայտնագործուած ճշ-

մարտութիւնների քանակից և նրանց տարածման աստիճանից։ Այս հիմնական սկզբունքը հաստատում է պատմական բազմաթիւ փաստերով։ Բայց նախ քան ընթերցողին կտանենք պատմութեան ընդարձակ աշխարհը, անհրաժեշտ է նրան ընդհանուր հասկացողութիւն տալ պատմական գրականութեան սկզբնաւորութեան մասին և թէ ինչպէս էր պատմութիւնը գրւում զանազան ժամանակներում և զանազան երկրներում։ Սկզբում, երբ մարդկութիւնը դեռ ևս ծանօթ չէր գրութեան արուեստի հետ, պատմական փաստերն ու դէպքերը կազմում էին բանաւոր աւանդութեան առարկան, որ անցնում էր որդէց որդի և սերդից սերունդ այսպէս կոչուած վիպական երգերի ձեռվ առանձին դասակարգի ձեռքով, որոնք կոչւում էին «բարդ»։ «մինէստրէլ»։ Բայց որովհետև երգերը հաղորդում էին տառացի ճշութեամբ և նրանց հեղինակների լիցուով, այս պատճառով էլ նրանց մէջ պատմուած փաստերն ու դէպքերը պահպանում էին իրանց սկզբնական միտքը և աղաւաղման չէին ենթարկւում։ Բայց այն ժամանակից, երբ դպրութիւնը սկսեց ձնշել բանաւոր աւանդութիւնը, վերջինիս պահպանողները, — բարդերը, կորցրին իրանց նշանակութիւնը և հաւատը ժողովրդի մէջ, և պատմութեան մէջ սկսեցին մուտ գործել ամեն տեսակ հնարովի բաներ, աղաւաղումների և փաստերի կեղծումներ։ Այսպէս օրինակ, մի որևէ հանրածանօթ պատմական անուան տակ միանում էին բոլորովին զանազան փաստեր, էպիզօդներ և դէպքեր։ Յայտնի է, որ Հերկուլէսի անունը վերագրում էին զանազան անձերին, որոնք հոչակուած էին իրանց աւազակային արկածներով և որոնք, իրանց հսկայական ուժի շնորհիւ, դառել էին աստուածացման առարկայ։ Ճիշտ այդպէս էլ Եւրոպայի հիւսիսում գոյութիւն

ունէին մի քանի Ռազմարներ, մեծ զօրականներ, որոնց տալիս էին իւալանդիայի իշխողներից մէկի անունը։ Վերջապէս, մի շօշափելի օրինակ ևս, որ ցոյց է տալիս, թէ ինչպէս յայտնի անուն կամ կոչում մոլորութեան մէջ էր գցում պատմաբաններին։ յայտնի է, որ Ռիչարդ I Անգլիացին կոչուած է Առիւծ իւրաներկիւղ և կատաղի բնութեան համար։ Պատմաբանները այս կոչումը մեկնեցին իրանց ցանկութեան համեմատ և բացատրեցին, որ Ռիչարդը իւրեւ թէ մենամարտի մէջ սպանել էր առիւծին։ Դպրութեան ներմուծուելովը յաճախ ներմուծւում էր և քրիստոնէութիւն, և այդ բանը պատճառ էր լինում պատմական աւանդութիւնների նոր աղճատումներին։ Այսինքն, կրօնական նոր հաւատալիքը խառնւում էր հեթանոսական նախապաշտամների հետ և այս բանը կատարեալ շփոթութիւն էր առաջացնում կրօնական աւանդութիւնների մէջ։ Այսպէս օրինակ, XI դարում քրիստոնիայ քահանայ Սէմունդ-Սիդֆուսսէնը կազմեց «Հին էդգա», որի մէջ նա հիւսիսային աւանդութիւնների թւում զետեղեց նաև քրիստոնէական մի հիմն, իսկ հարիւր տարուց յետոյ հրատարակած «Նոր էդգա» կոչուած երկրորդ ժողովածուի մէջ մենք տեսնում ենք յունական, հրէսական և քրիստոնէական աւանդութիւնները լիովին շփոթուած։ Առհասարակ նըկատուած է, որ այնտեղ, ուր որ կրօնը չէ փոխուել, պատմութիւնը աչքի է ընկնում աւելի մեծ արժանահաւատութեամբ և կապսկցութեամբ, քան թէ այնտեղ, ուր որ կրօնը փոփոխութեան է ենթարկուել։ Հնդկաստանում, ուր բրամինականութիւնն իշխել է ամբողջ հազարաւոր տարիներ առանց փոփոխութեան, պատմութիւնը խոյս է տուել աղճատումներից և խորին հնութեան է հասնում։ Ճիշտ այդպէս էլ Զինաստանում, ուր

բուդգայականութիւն է դաւանում 2000 տարի շարունակ, պատմական տեղեկութիւնները տարածում են մինչև Ք. Ծ. մի քանի դար առաջ: Հակառակ օրինակներ են ներկայացնում մեզ Պարսկաստանն ու պօլինէզիական ցեղերը: Առաջինում ազգային տարեդրութիւնը ընդհատուեց մահմեդականութեան մտցնուելով երկրի մէջ: Պոլինէզիական ցեղերում նոյն մահմեդականութեան ազգեցութեան տակ անհետացան բոլոր ազգային աւանդութիւններն ու մինչև անդամ ազգային թագաւորների ցուցակում հանդիպումենք մահմեդական սրբերի անունների: Այս բոլորին պէտքէ աւելացնել, որ պատմական տեղեկութիւնների աղճատման շատ նպաստեց հոգեւորականութիւնը, որ երկար ժամանակ պատմական տարեգրութիւններ էր կազմում, ինչպէս մարդկանց միակ դասակարգը, որ ամենից առաջ ընդունակութիւն էր ցոյց տուել գրական աշխատանքներին: Պահպանելով կրօնական ճշմարտութիւնների տեսականութիւնը, այս դասակարգը աւելի շուտ ընդունակ էր նախապաշտառումները պահպանել, քան հետազոտութեան հոգին: Այս պատմառով նա իւր տարեգրութիւնների մէջ ամենաանհեթեթ հաւատալիքներ ու աւանդութիւններ էր հաղորդում, ինչպէս մարդկային իմաստութեան մարդարիտներ: Պատմական գրականութեան այս աղաւաղուած զարգացման բնական հետեւանքն այն եղաւ, որ նրանում բազմաթիւ սխալ փաստեր ու անհաւատալի կեղծիքներ մտան, նման այն բանի, օրինակ, թէ ամեն մի ազգ իր ծագումն առնում է Տրոյեան պատերազմին մասնակցող հերոսներից, կամ թէ Տրոյա քաղաքը հիմնուած է Տրոյիացիների ձեռքով. թէ գալւերը ծագումեն Յաբեղի որդի Գոմերից. թէ Սիլեզիայի բնակիչները ծագում են Եղիսէմարգարէից, թէ Ցիւրիխ քաղաքը կառուցուած է Ար-

բահամի ժամանակ, թէ Նէտապօլը շինուած է ձուերի վրայ, թէ թաթարները ծագում են տարտարոսից, այսինքն դժողբից, թէ մահմեդականները խոզի միս այն պատճառով չեն ուտում, որ Մահմէդը ուտելով և խմելով այն աստիճան, մինչև որ անզգայանալով՝ ընկաւ աղբի դէզի վրայ և խոզերը մահախեղտարին նրան, թէ Յուդային, ինչպէս պատմում է Իրաթէոս Վէստմինստրացին, երեխայ ժամանակ ծնողները զցեցին Ակարիօս կղզին, որի համար էլ անուանուեց իսկարիսվացի, թէ այդ Յուդան մի ամբողջ շարք չարագործութիւններ կատարելով, ի միջի այլոց, հօրը սպանեց և իւր մօր վրայ պսակուեց, թէ Լէօն պապը իր ձեռքը կտրեց, որովհետև սեղմել էր անառակ կինը և որ այս ձեռքը 500—600 տարի անապական կերպով պահուել էր և այնուհետո նախապաշտումների և դարու մոլորութիւնների՝ տարեգրութիւն կազմողների վրայ ունեցած սպղեցութեան աւելի շօշափելի ապացոյցը պատմական գրականութեան հետեւեալ փաստերն են: Ուկյմի արքեպիսկոպոյայտնի Տուրպինի ժամանակագրութիւնը, 1122-ին կազմուած, որ պապի հաւանութեան է արժանացել և դեռ XII դարում համարւում էր իրբե առաջնակարգ աղքիւր Կարլոս Մեծի պատմութեան համար, մի շարք անհաւատալի կեղծիքներ է պարունակում իւր մէջ: Այդ ժամանակագրութեան համեմատ, օրինակ, Պանպէլօնու քաղաքը նուաճուել է այն ժամանակ միայն, երբ պաշարողները ազօթեցին, որի շնորհիւ քաղաքի պարիսպները անմիջապէս կործանուեցան: Միենոյն ժամանակագրութեան մէջ պատմում է մի երկար պատմութիւն Կարլոս Մեծի զօրականների պատերազմի մասին Գողիաթից սերող Ֆէնկուտի դէմ, որ գերազանցում էր իւր արտասովոր ոյժով և արտակարգ

հասակով: Այնուհետև յայտնի Բրիտանիայի պատմութեան» մէջ, որ 1147-ին կազմուած է Մօնմուտի սարկաւագի ձեռքով, ասուած է, թէ Արտուրը իւր գոյութեան համար պարտական էր Մէրլինի դիւթական օգնութեան և որ նա երկու հսկայ սպանեց, որոնցից մէկը կերաւ նրա յաղթած զօրապետներին, իսկ միւսը իր համար հագուստ շինեց նրա սպանած արքաների մօրուքներից: Միայն XIV և XV դարերում սկսուեց առաւել առողջ ուղղութիւն առաջ գալ պատմական գրականութեան մէջ: Բայց, անկախ սխալ պատմական եղանակներից հրաժարուելու ձգտումներից, որ պատմահական բնոյթ էին կրում, դիւրահաւատութիւնը շարունակում էր տիրել բոլոր դասակարգերի մէջ մինչև անգամ XV և XVI-րդ դարերում: Ահա մի քանի օրինակներ: Տասնեհինգերորդ դարու պատմաբան կոմինը իւր աշխատութեան մէջ ասում է թէ՝ «պատերազմը մեծ սրբութիւն է և Աստուած օգտում է նրանով իբր գենքով իւր կամքը կատարելու համար»: XVI-րդ դարում մի նշանաւոր աստղաբաշխ և մաթեմատիկայի ուսուցչապէտ Տիւբինգենի համալսարանում, ինչ որ անհեթեթ հաշիւների հիման վրայ, գուշակեց, որ 1524 թուին պէտք է լինէր նոր տիեզերական ջրհեղեղ: Այս բանն այնպէս յուղեց Եւրոպայի բնակիչների մտքերը, որ օրինակ կարլոս V-ին խորհուրդ տուին պաշտօնեաներ նշանակել դիտելու երկրի մակերեսոյթի ամենաբարձր մասերը, ուր մարդիկ կարող էին ապաստանարան գտնել. իսկ աստուածաբան Արիօլայի խորհրդով շինուած էր մի մեծ տապան, ուր մարդկութեան մի մասը փրկութիւն պէտք է գտնէր: Վերջապէս XVI դարում Եւրոպայում մտքեր յուղեց մի պատմութիւն, թէ Սիլէզիայում ծնուած մանկան ծնոտի մէջ ոսկէ ատամ է երեացել. այս արտա-

կարգ երեսոյթից առաջ եկած ընդհանուր անհանգստութիւնը գաղարեց միայն այն ժամանակ, երբ միքիշէկ Հոլուս անունով 1595 թուին ոսկէ ատամի երեալը բացատրեց մանկան ծնունդի ժամանակ արեկի և Սատուրնոսի Խոյի նշանի մէջ միանալով: Հորսութեանում էր Դանիէլի մարգարէութեան երկրորդ գլխի վրայ, ուր յիշում է մի արձան ոսկէ գլխով:

Ե.

Անգլիայի մռաւոր զարգացման պատմութեան տեսութիւն XVI-րդ դարու կիսից մինչև XVIII-րդ դարու վերջը՝ Ուսումնակրութիւնը կանխող սկսած կանութեան սկզբը Անգլիայում: Գուօնի տանելիութեան սկզբը Անգլիայում: Գուկերի, Զիւէլի և Զիլլինգվորտի հեղինակութիւններ: Յակով I-ի, Կարլ II-ի և Կարլ III-ի քաղաքականութիւնը: Թագավորութիւնները՝ բնագիտութեան զարգացումը: Կարլոս II-ի ժամանակուայ բարենորդութիւններ: Հոգմանականութեան դաշնագրութիւնը: Յակով 1-ի և Այլագաւանների հետ: 1868 թուին յեղափոխութեան հետևող շրջան: Հոգմանականութեան անկումը: Մտաւոր յառաջադէմ շարժում: Գէորգ III-ի բէակցիան այդ շարժման գէմ և նրա արտաքին քաղաքականութիւնը: Հակարէակցիան և XXI դարու բարենորդութիւնը առաջ բերող հասարակական կարծիքի ուժեղանալը:

Ընդհամենը երեք դար մեր ժամանակից առաջ եւրոպական քաղաքակրթութեան մէջ տիրող խորը տպիտութիւնը և սնոտիապաշտութիւնը բացատրում է գլխաւորապէս նրանով, որ մարդիկ սովորել էին անպայման հաւատալ դարաւոր աւանդութիւնների ճշշմարտութեան և անսխալականութեան և երկար ժամանակ չէին համարձակում նրանց վերաբերմամբ:

արտայայտել որևէ կարծիք. մանաւանդ որ ամեն մի սկեպտիկ արտայայտութիւն խիստ հալածում էր և ճնշում հոգևորականութեան կողմից, որը, ինչպէս օրինակ իսպանիայում, իւրաքանչյուրութեան տակ ունէր մեծ և ուժեղ միջոցներ: Բայց որովհետեւ սկեպտիկականութիւնը մարդու միտքը ուղղում է դէպի նախընթաց դարերից աւանդած գիտութիւնների գնահատութիւնը և էութեան ու ճշտութեան ուսումնասիրութիւնը, իսկ այս հանգամանքից կախումն ունի ապագայ մտաւոր զարգացումը, բնական է, որ սկեպտիկականութիւնը պէտք է յաղթէր լուրոր արգելքները և ամրացնէր իւր հողը: Սկեպտիկ շարժման մեծ հետևանքները շօշափելի կերպով առաջ եկան ֆրանսիայում և Անգլիայում, ուր այդ շարժումը կատարւում էր ամենից ազատ և բացարձակ կերպով: Իբրև օրինակ մենք կընենք այդ արդիւնքներից ամենակարևորը, այն է կրօնի համբերողութեան հաստատուիլը Անգլիայում: Եղիսաբեթ կայսրուհին առաջինը կարողացաւ առանց հոգևորականութեան կառավարուել և զարմանալի կերպով պահպանում էր երկու հակառակ կրօնների մէջ հաւասարակշռութիւնը: Այս քաղաքականութիւնը որոշ չափով հաստատեց կրօնի տանելիութիւնը: Դժբաղդաբար, հանգամանքներից ստիպուած, որոնց մասին խօսք կլինի յետոյ, Եղիսաբէթը ապագայում թոյլ տուեց բողոքականների բարբարոս հալածանքները կաթոլիկների դէմ: Այս դէպում մեզ համար նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ հալածողները իրենց ընթացքը պատճառաբանում էին ոչ այնքան կրօնական, որքան քաղաքական շահերով, ինչպէս օրինակ, ստիպելով կաթոլիկներին հրաժարուել պետական շահերին զնասկար սկզբունքներից: Փողովրդի հայեացքների յե-

դաշրջումի կատարեալ արտայայտութիւնը ներկայացնում են Գուկերի և Զիւէլի երկու աստուածաբանական գրքեր, հրատարակուած Եղիսաբէթի ժամանակ՝ «Ecclesiastical Polity» և «Apologiae Anglicanae», մինչդեռ Զիւէլը քարոզում է խորը և անվրդով հաւատ դէպի ու գիրք և եկեղեցական հեղինակութիւն, Գուկէրը 30 տարուց յետոյ կրօնի շըջանի մէջ մտցնում է մաքի հեղինակութիւնը. բայց երկուսն էլ զանազան հիմունքներով գալիս են նոյն եղրակացութեան: Օրինակ. ինչպէս Զիւէլը նոյնպէս և Գուկէրը հանդիսանում են աշխարհիկ իշխանութեան հոգեոր գործերի մէջ խառնուելու իրաւունքի պաշտպաններ: Առաջինը այդ իրաւունքի անհրաժեշտութիւնը ապացուցանում է նրանով, որ այդ իրաւունքով օգտուել են Մովսէսը, Յեսու Նավեան, Դաւիթը և Սողոմոնը, իսկ միւսը գըտնում է անհրաժեշտ այն պատճառով, որ այդ օգտակար է: Պարզ է, որ այս երկու հեղինակները, որոնց գրուածները բաժանում են 30 տարիներ, իրենց վրայ կըցին երկու զանազան մակերեսոյթի մտաւոր զարգացման շըջաններ: Այս հետաքրքիր համեմատութիւնը մեր առաջ բաց է անում կատարուած յեղաշրջումի ամբողջ նշանակութիւնը: Մինչև մարդը հաստատ համոզուած է իւր կրօնի ճշմարտութեան և իւր հաւատալիքների անվիճելիութեան մէջ, նա պատրաստ է կատարել ամեն տեսակ բարբարոսութիւն այն նպատակով, որ այդ համզմունքը տայ մարդու, որը դաւանում է ուրիշ կրօն և ուրիշ հայեացքներ:

Բայց, ճէնց որ նրա միտքը թափանցում է այն բանի գիտակցութիւնը, որ նա կարող է սխալուել իւր հաւատալիքների մէջ և որ կրօնական հարցերը նոյնպէս լաւ կարող են վճռուել մտքով, ինչպէս և հաւատով ու աւանդութիւնով, նա դառնում է աւելի պա-

կաս հաւատացած ինքն իր վրայ, և աւելի զիջող դէպի-
ուրիշների համոզմունքները: Այդ նկատելի է XVII դա-
րու անգլիական աստուածաբանութեան մէջ: Գուկէրի
գրքի հրատարակուելուց 17 տարի յետոյ անգլիական
եպիսկոպոսները հրկիցեցին էլի երկու մարդ հերետի-
կոսական համոզմունքների համար: Բայց այս արդէն
վերջին առկայժումն էր մարող բարբարոսութեան:
Սկեպտիկականութեան և հետախուզութեան ոգին շա-
րունակում էր մեծ յաջողութիւններ ձեռք բերել:
Յիշեալ առևտողափէից ընդամենը 26 տարի յետոյ
երկեցաւ Զիլինգվօրտի նշանաւոր գրուածքը «բողո-
քականների կրօն»-ը, որ վերջնական հարուած տուեց
աստուածաբանական տիրող ուսման: Զիլինգվօրտը
բացարձակ կերպով յայտարարում է թերահաւատու-
թիւն դէպի կրօնական հեղինակութիւնը, մերժում է
անհատական համոզմունքի ամեն տեսակ ձնշումներ և
պահանջում է եկեղեցական ուսման և մտքի ներշըն-
չումների համամտութիւն: Այս կարևոր ճշմարտու-
թիւնները վաղուց արդէն դառել էին հասարակու-
թեան սեպհականութիւն, այժմ միայն նրանք առաջ
եկան միաւորուած ձեռվ և պէտք է թուլացնէին աս-
տուածաբանական խնդիրներն և վէճերը, որոնց այն
ժամանակ շատ էին նպաստում կենսական և նիւթա-
կան շահերը, որոնք բաւական բարդուել էին և կլա-
նում էին հասարակութեան ամբողջ ուշադրութիւնը:
Հոգեորականութիւնն ի զուր էր աշխատում թուլաց-
նել նոր ուղղութեան զարգացումը: Սկեպտիկականու-
թեան և կրօնի համբերութեան ոգին զարգանում էին
և փոխադա պահպանում իրար ամբողջ XVII
դարու ընթացքում: Հոգեորականութեան նշանակու-
թեան և աղդեցութեան անկման բաւական ապացոյց
կարող է լինել այն, որ արքայի մահապատժից յետոյ

Անգլիան կառավարւում էր «ինդէպէզէնտների» աղան-
դով, որոնք իրանց «անկախ» էին կոչում և հերքում էին
ոչ միայն հոգեորականութեան հեղինակութիւնը, այլ և
դարաւոր աւանդութիւններն ու ծէսերը: Ստիւարտների
վերադարձնելով, ճիշտ է, եկեղեցին նորից ստացաւ իւր
փայլը և բարեկարգութիւնը, բայց նա չկարողացաւ
վերականգնել իւր նախկին իշխանութիւնը: Թեթևա-
միտ Կարլոս II արքան արհամարհանքով էր վերաբեր-
ւում դէպի աստուածաբանական վէճներն ու խնդիրները
և նրան շըջապատող մարդիկ, որոնց թւում կային և հե-
ղինակներ, զեկավարուելով արքայի հայեացքներով,
ընկնում էին աւելի մեծ ծայրայեղութեան մէջ: Զկա-
րողանալով ըմբռնել խոճեմ սկեպտիկականութեան իս-
կական իմաստը, նրանք ամենակեղուոտ կերպով ծաղ-
րում էին կրօնն ու հոգեորականութիւնը. բայց և այն-
պէս այս կոպիտ բացառութեան և անմիտ անկրօնու-
թեան մէջ արտայայտում էր աստիճանական ընդհա-
նուր ձգտում, որ արտացոլուեց Թոմաս Բրովնի յայտ-
նի գրուածքների վրայ: 1633 թուին, երբ մնուիա-
պաշտութիւնը և կրօնի անհամբերողութիւնը Անգլի-
այում գեռ իշխում էին խելացի սկզբունքների վերայ,
սէր Թովմաս Բրովնը հրատարակեց իւր Religio Medici
յայտնի գրուածքը, որ հանդիսանում էր իւրեւ հասա-
րակութեան մէջ տիրող ուղղութեան կատարեալ ար-
տայայտութիւն: Այս գրուածքի մէջ Թովմաս Բրովնը դեռ
ընդունումէ փիլիսոփայական քարի, ոգիների, կախարդ-
ների, խերօմատների և այլ անհեթեթութիւնների գոյու-
թիւնը: Այս հրատարակութիւնից միքանի տարի անց
Թովմաս Բրովնը արմատապէս փոխեց իւր հայեացք-
ները և կարլոսի մահուան պատժից երեք տարի առաջ
հրատարակեց մի նոր աշխատութիւն «Inquiries into Vul-
gar and Common Errors» հասարակութիւնների և ընդ-

հանուր մոլորութիւնների ուսումնասիրութիւն։ Այս երկրի մէջ արդէն ոչ մի նշոյլ չկար նախկին հաւատալիքների, իսկ ընդհակառակ, խօսւում է «ճշմարտութեան երկու մեծ սիւների մասին, այն է՝ փորձի և առողջ դատողութեան»։ մոլորութեան գլխաւոր պատճառների՝ «հեղինակութիւնների անձնութերութեան», «հետախուզութեան արհամարհանքի» և «թեթևամտութեան» մասին։ Մի առաջնակարգ մտածողի այս հսկայական թոփչքը մի համոզմունքից դէպի միւսը ճարտար կերպով ապացուցանում է թէ որպիսի անասելի արագութեամբ էր կատարում մտաւոր շարժումը XVII-րդ դարու անգիտական հասարակութեան մէջ։ Պէտք է նաև աւելցնել, որ այս շարժման նպաստում էր բնական գիտութիւնների անընդհատ զարգացումը։ Ինչպէս առանձին ուշադրութեան արժանի, մենք մատնանիշ կանենք Նիւտոնի ժամանակակից Բոյլի գործունէութեան վրայ։ Բոյլը առաջինը տաքութեան և գոյների յարաբերութեան փորձերն արեց։ Առաջինը նպաստեց զրակայութիւնը (hydrostatique) այն աստիճանի բարձրացնել որպիսի տեղ այս գիտութիւնը գրաւում է այսօր։ Առհասարակ նա առաջինը սկիզբ դրեց այն քիմիական վերլուծութեան, որ իրեւ հիմք ծառայեց Լաւուազիէի և նրա ժամանակակիցների գիտական աշխատութիւնների համար։ Վերջապէս, նա բացարձակապէս ընդունեց սկեպտիկ վերաբերմունքի անհրաժեշտութիւնը դէպի գիտող հասկացողութիւնները, իւր մի հանրամատչելի գրուածքին տալով «Սկեպտիքական քիմիկոս» վերնագիրը։ Պարզ է, որ Բոյլը գտնուում էր նրա ժամանակ տիրող մտաւոր ուղղութեան աղդեցութեան տակ։ բայց այս ուղղութիւնը շօշափելի կերպով արտայայտուեց այն փաստի մէջ, որ Բոյլի ժամանակ հիմնուեց «Արքայական ընկերութիւնը», որը և հաստատուեց Կարլոս II ից։

Այս ընկերութիւնը նպատակ ունէր տարածել բնագիտութիւնը անմիջական փորձերի միջոցով։ Հասկանալի է որ բնական գիտութիւնները գէմ էին հնութեան և հոգեւորակամութեան պաշտպանների ոգուն, որոնք իրենց հաւատալիքները չէին կարող ապացուցանել ուղղակի փորձով։ այս պատճառով Կարլոս II-ի ժամանակ բնագէտների և աստուածաբանների վէճը հասաւ գագաթնակէտին։ Բայց բնագիտական ուղղութիւնը պէտք է գերակշռէր հենց այն պատճառով, որ նա անհրաժեշտ է մարդկութեան մտաւոր զարգացման։ Այս կարելի է ապացուցանել հասարակութեան զանագան դասակարգների վրայ։ Նրանք, որոնք գտնուում են իրանց համար անհասկանալի բնական երկոյթների անմիջական աղդեցութեան տակ, աւելի մնութիապաշտ են և աւելի են հակուած դիմել զերբնականի օգնութեան, քան նրանք, որոնք այդ աղդեցութիւնից դուրս են։ Օրինակ, ծովից զինուորները, որոնք ստիպուած են մաքառել քամիների և ալէկոնծութիւնների դէմ, աւելի մնութիապաշտ են, քան զօրքը, որ ապրում է ցամաքի վրայ և որը ծովից պակաս վտանգի է ենթարկուած։ կամ հողագործը, որը աղօթում է անձրև ուզելիս և ինչոր խորհրդաւոր նախագուշակութիւն է տեսնուում գիսաստղի կամ խաւարումի մէջ, աւելի մնութիապաշտ է քան գործարանի բանուորը, որը գիտակցում է, թէ իւր աշխատանքի հետևանքը կապ չունի բացառապէս նրա ընդունակութիւնների և ոչ թէ որևէ է անքացատրելի փաստերի հետ, ինչպէս օրինակ բնական երկոյթների և այլն։ Առհասարակ Կարլոս II-ի թագաւորութիւնը տալիս է մեզ բաւական պարզ և ամփոփ գաղափար մտքի և բարոյականութեան բոլոր ճիւղերի մէջ կատարուած յեղաշրջումի մասին։ Եթէ մի կողմից այս թագաւորութեան ժամանակ առաջ է գալիս անբարու-

յացած, ստորացած և բարբարոս արքայ, կաշառուող նախարարներ, ծանր հարկեր, պետական գանձարանի թալան և ուրիշ վրդովեցուցիչ փաստեր. այս ցաւալի պատկերի հետ միասին միւս կողմից մենք տեսնում ենք կառավարութեան վերին աստիճանի բարերար գործունէութիւնը. Օրինակ, ոչնչացրած էր հոգևորականութեան իրաւունքները՝ հերետիկոսների վրայ, հրկիզելու, երդում պահանջելու ex officio և ինքնական կերպով տուրք նշանակելու. Խորդերի պալատը զրկուած էր աշխարհական օրէնսդրութեան վրայ ունեցած ազդեցութիւնից. Ժողովրդին իրաւունք էր տըռւած տուրք նշանակել իրենց վրայ միայն իրենց ներկայացուցիչների միջոցով, մտցրած էր «Habeas Corpus Act», որը ապահովում էր անձնական ազատութիւնը. Վերացրած էին գրի ազատութեան սահմանափակումները և այլն: Պարզ է, որ զեկավարների բնոյթը և նրանց անձնական գործունէութիւնը չեն կարող ծառայել իրեւ ժողովրդի ներքին քաղաքական շարժման չափ: Ներկայացրած հակապատկերը, ընդհակառակը, ցոյց է տալիս, որ օրէնսդրական մեծ բարենորոգումները, որոնք իրականացան Կարլոս II-ի ժամանակ, նախընթաց դէպքերի և սկեպտիկ ոգու անխուսափելի հետևանքներն էին, ոգու որը մուտք գործեց բոլոր երեք շրջաններ՝ աստուածաբանութեան, գլուխութեան և քաղաքականութեան: Սրան անհրաժեշտ է աւելացնել, որ Կարլոս II-ի բացասական կողմերը աւելին սպասում քան արգելում էին բարենորոգութիւնների իրականացման: Բայց թէպէտ նա իւր բարօվ թուլացնում էր ժողովրդի յարգանքը դէպի անկիրթ օրինականութիւնը, բայց միենոյն ժամանակ վերաբերուելով ակներև ատելութեամբ վերջնականապէս ոչնչացրեց հոգևորականութեան հեղինակաւորութիւնը: Բաւական է ասել, որ նա բացարձակ կերպով

հովանաւորում էր հոգևորականութեան կատաղի թշնամի Հոբրսին, իսկ եպիսկոպոսութիւն տալով այնպիսի անտաղանդ մարդկանց, ինչպիսի էին Զօկսօն, Շելտօն և ուրիշները, նա համարեա առանց ուշադրութեան էր թողնում այնպիսի մարդկանց, ինչպէս Թայլօր և Իսահակ Բարրօ, որոնք, ինչպէս յայտնի է, չհասան եկեղեցական բարձր աստիճանի: Այս եղանակով հոգևորականութիւնը համում էր կատարեալ անկան և սկսում էր հոգս քաշել միմիայն անձնական բարօրութեան մասին, բոլորովին չմտածելով ժողովրդի մասին: Այսպէս տրամադրուած հոգևորականութիւնը միջոցների խտրութիւն չէր դնում և մենք զարմանքով տեսնում ենք հոգևորականութեան դաշը կաթոլիկ արքայի հետ, որի մօտ և փնտրում է օգնութիւն: Հոգևորականութիւնը դաշն է կապում Յակովը I-ի հետ և աջակցում է նրա զահ բարձրանալուն այնյուսով, որ այս բարեպաշտ, թէպէտ և այլ կրօնի մարդը, կհովանաւորէ կամ գոնէ աւելի կկարեկցէ բողոքական բահանայապետութեան քան նրա նախորդը: Եւ իրօք այս դաշը շարունակւում էր մինչև անգլիական եկեղեցու հակառակորդները խիստ հալածանքների ենթարկուեցին, մինչև կառափանարանու ներկուեց և լաւագոյն մարդիկ աքսորուեցին, մի խօսքով մինչև Յակովը հնարում և իւրագրածում էր ամեն տեսակ միջոցներ ազգային ազատութիւնը ճնշելու համար: Ճենց արքան հրատարակեց «Թողութեան յայտարարութիւնը», որի մէջ արտայայտուեց կրօնական համբերողութեան սկիզբ դնելու ձգումը, հոգևորականութիւնը անմիջապէս նրա հակառակ ընթացք բռնեց և, միանալով այլադաւանների հետ, որոնց ոչ շատ առաջ սոսկալի հալածում էր, առաջացրեց 1688 թուի մեծ յեղափոխութիւնը, երբ Յակովը զրկուեց իւր թագից: Բայց հոգևորականութիւնը շու-

տով փոշմանեց, որովհետև նոր արքայ Վիլհելմ III-ը դրական մտադրութիւն արտայայտեց կրօնական համբերողութիւն հաստատել: Այս մտադրութիւնը արտայայտուեց նրա գործունէութեան առաջին իսկ քայլինայն է երիցականութեան (presbytérianisme) հովանաւորութիւնով և շոտլանդական եպիսկոպոսութեան վերացնելով: Այս ժամանակ հոգևորականութեան կոխը աշխարհիկ իշխանութեան հետ մտնում է նոր շրջան: Մոտ 600 քահանաներ, անգլիացի եպիսկոպոսապետին և ուրիշ եպիսկոպոսներին հետևելով, բացարձակապէտ հրաժարուեցին ճանաչել ժողովրդի ընտրած արքային: Արքան իւր կողմից և իւր իսկ իրաւունքով յանուն օրէնքի համարձակ կերպով հրաժարեցրեց խոռվութեան պաշտպաններին՝ կենտրոնական արքեպիսկոպոսին և նրա հինգ միաբաններին: Այս նոր վիրաւորանքը վերջնականապէս զինեց հոգևորականութիւնը արքայի դէմ, և նա նորից դաշն կապեց արտաքսուած Յակովը արքայի հետ: Այս դաշնի կամ դաւադրութեան հետևանքն այն էր, որ առաջիկայ երկու կարգի եպիսկոպոսներ — իսկական, և կարծեցեալ, կամ ամէն մի եպիսկոպոսական գահ ունէր երկու ներկայացուցիչ, որոնցից մինը նշանակում էր հոգևոր, իսկ միւսը աշխարհիկ իշխանութեան կողմից և ամեն մի եպիսկոպոս ունէր իւր կողմնակիցները: Վերջապէս եկեղեցու այս սոսկալի տարածայնութեան մէջ հոգևորականութեան քայլայուելուն շատ էր նպաստում և այն հանգամանքը, որ շատ քահանաներ պետական սոճկից զրկուելու ահից համոզմամբ ընդունում էին Յակովին, իսկ պաշտօնապէս երդում տալիս Վիլհելմ III-ին և այսպիսով արտայայտում էին իւրեց ամենակոպալիս կեղծաւորութիւնը: XVIII-րդ դարում հոգևորականութեան նշանակութեան անկումը արտայայտուեց հետևեալ փաստերով: Հոչակաւոր հոգևոր

խորհուրդը (պարլամենտի ձեռվ մի ժողով, որ բաղկացած էր երկու պալատներից) 1717 թուին յետաձգուած էր մինչև անորոշ ժամանակ և հոգևորականութիւնը զրկուեց եկեղեցական շրջանի ամեն մի նորամուծութեան դէմ մաքառելու մի կարեւոր զէնքից: բացի այդ այս շրջանի ընդհանուր մասուր ընթացքը հեռացրեց եկեղեցուց բոլոր լաւագոյն ոյժերը: Տաղանդաւոր մարդիկ էլ հոգևոր կոչում չէին ընդունում: Արդէն XVII դարուց հոգևորականութեան անդամները այլևս դադարեցէն բարձր պետական պաշտօններ վարել, ինչպէս օրինակ լորդ Կանցլէրի պաշտօնը: XIIX-րդ դարու կիսին հոգևոր լորդերի թիւը վերին պալատում նուազեց մինչև 1/14 և վերջապէս 1801 թուին համայնական պալատի գոները պաշտօնապէս փակուեցին հոգևոր դասի անձանց համար: Ճիշտ է որ երբ Վիլհելմ III-ի մահից յետոյ, երբ գահ բարձրացաւ անկիրթ և սնոտիպաշտ կին-արքայունի Աննան, հոգևորականութիւնը օգտուեց բարեյաջնող հանգամանքներից, որպէսզի մի փոքր վերականգնի իւր կորցրած ոյժերը: Բայց արհամարհելով հաշտ քաղաքականութիւնը, նա օգտուեց միայն այս ժամանակամիջոցով և աւելի գրգռեց այլադաւաններին: Սրա հետևանքն այն էր, որ Աննա արքայունու մահից յետոյ երկու նշանաւոր գործիչների՝ Վայովիլդի և Վէսլիի ազդեցութեամբ սկիզբ առաւ մեծ կրօնական սիստեմ, որը անգլիական եկեղեցու հետ նոյն յարաբերութեան մէջ էր, որպիսի յարաբերութեան մէջ գտնուում է անգլիական եկեղեցին Հոոմէականի հետ: Այս երկրորդ կրօնական բարենորոգումը Անգլիայում զգալի կերպով պակասեցրեց տիրող եկեղեցու անդամների թիւը և ծառայում էր իրբեկ վտանգաւոր օրինակ: — Մերցոյց տուած ամբողջ ընթացքի ընդհանուր յատկութիւնը աստուածաբանութեան բարոյագիտութիւնից և

քաղաքականութիւնից բաժանելն էր, որ առաջ բերեց
ինքը հոգևորականութիւնը: Թումբերլանդ հալիսկո-
պոսը առաջինը ստեղծեց բարոյագիտութեան սիս-
տեմը առանց աստուածաբանութեան օգնութեան:
Վուրբուտօն եպիսկոպոսը առաջինը ասեց, որ պետու-
թիւնը կրօնի վրայ պիտի նայի գործնական տեսակէտով,
կամ այս կամ այն կրօնի օգտակարութիւնը ի նկատի
առնելով: Այս մտածողների մտքերը ապագայում մշա-
կեցին իւմ, Պալի, Բենտամ և Միլլը:—Բայց սկեպտիկ
շարժման մեծ հետեւանքները սեպհականութիւն դար-
ձան ոչ միայն մտածող դասակարգերի: XVIII-րդ
դարու ամենաաչքի ընկնող յատկութիւններից մինը
հենց հետաքրքրութեան արթնանալն էր այն դասա-
կարգերի մէջ, որոնք մինչև այդ մնում էին բոլորովին
անզարգացած: Այս մեծ շրջանին առաջին անգամ
հիմնուում են կերակնօրեայ գպրոցներ, հրատարակուում
են կերակնօրեայ ժողովրդական լրագիրներ, բացւում
են ընթերցարան—գրադարաններ և տպարաններ, հրա-
տարակուում են հանրամատչելի հանրագիտակ գրուածք-
ներ, հիմնուում են առեւրական ակումբներ և այլն.
1769 թուին տեղի ունէր առաջին միտինդը, ուր
քննուում էին անգլիացիների քաղաքական իրա-
ւունքները: Այս բանից ոչ չատ առաջ հանդէս եկան
քաղաքական լրագիրներ, որոնք սկսեցին ժողովուրդը
ծանօթացնել հասարակական և քաղաքական գոր-
ծերի ընթացքի հետ: Նոյն ժամանակի մօտերքը յայտ-
նուեց անձնական ներկայացուցչութեան տեսութիւնը,
որը արագ կերպով մուտ գործեց հասարակութեան
գիտակցութեան մէջ: Վերջապէս ժողովուրդը սկսեց
մասնակցել կրօնական հարցերի լուծման: Այս փաս-
տերից դրդուած անգլիական գրականութիւնը սկսեց ա-
ւելի ու աւելի հանրամատչելի գառնալ: Հին ժամանակ-

ները երբ հեղինակները սահմանափակ ընթերցողներ ու-
նէին բարձր և հարուստ գասակարգերի մէջ, նրանք
պէտք է յարմարուէին ընթերցողների ճաշակին և ի-
րենց հովանաւորողների առաջ կեղծաւորութիւնների
դիմէին. իսկ այժմ նրանք իրենց մէջ գտնում էին ու-
ժեղ նեցուկ մասսայի մէջ, իրենց զգացին աւելի ինք-
նուրոյն և սկսեցին հանրացնել ոճը ու գրել այնպիսի
հարցերի մասին, որոնք առաջ կըերէին ընդհանուր
հետաքրքրութիւն—մտաւոր ընդհանուր շարժման նը-
պաստում էր և այն հանգամանքը, որ Աննայի մահից
յետոյ անգլիական գահը մօտ 50 տարի գրաւում էին
երկու արքայ, որոնք խիստ անտարբեր էին վերաբեր-
ւում դէպի քաղաքական և հասարակական գործերը:
Գէորգ I-ը և Գէորգ II-ը այլազգի և ծոյլ լինելով,
քիչ էին մտածում ժողովրդի մասին, որի հետ համա-
րեա ծանօթ չէին և անգլիկան եկեղեցուն չէին կա-
րող այնքան համակրել, որպէս զի հոգևորականու-
թեան նշանակութիւնը ուժեղացնէին, — իսկ այս
հանգամանքը ապահովում էր տիրող մտաւոր ուղ-
ղութեան հանգիստ զարգացումը: Գէորգ III-ի թա-
գաւորութիւնը առաջ բերեց կեանքի մշակուած յարա-
բերութիւնների դէմ բաւական զգալի բէակցիա: Այս
բոնակալ և ժլատ արքան իրեննպատակ գրեց ուժեղացնել
թէ իր և թէ եկեղեցու իշխանութիւնը: Ամեն տեսակնո-
րամուծութիւնների ձգտման դէմ ատելութիւն տածե-
լով, չունենալով ոչ մի գաղափար գիտութեան և գե-
ղարուեսարի մասին, նաև ոչ մի գիտութիւն ժողովրդի
և երկրի մասին, նա իրան շրջապատեց մեծ և միմիայն
աւանդութիւններով ապրող կուսակցութեամբ: Մինչև
անգամ հոչակաւոր Պիտտը, միակ ընդունակ մարդը,
որ մտել էր արքայի խորհուրդը, աշխատում էր հա-
մակերպուել Գէորգ III-ի հայեացքներին և վերջնակա-

նապէս դաւաճանելով իւր համոզմունքներին փայփայում էր Գէորգ Ալ-ի ամեն մի քամահաճոյքը: Առասարակ Գէորգ Ալ-ը ոչ մի համակրանք չէր տածում դէպի վսեմն ու աղնիւը: Թէ ինչ ատելութեամբ էր վերաբերում նա դէպի տաղանդաւոր ժամանակակիցները, երեսում է հետևեալ փաստերից: XVI-ը դարու ամենայայտնի գործիչ և ազատութեան պաշտպաններից մէկին—Ֆօկսին—նա չէր տալիս պետական բարձր պաշտօններ և իւր ձեռքով ջնջեց նրա անունը գաղտնի խորհրդի անդամների ցուցակից: Գէպի առանձին անհատներ ունեցած ատելութեամբ չբաւականանալով, նա աշխատում էր պէրների պալատի նշանակութիւնը ոչնչացնել, ուր միշտ գերակռում էր ազատ սկզբունքը և որը աշխատում էր թոյլ չտալ ներքին պալատի կոպիտ և անմիտ արարքները: Գէորգ Ալ-ը միանգամից նշանակեց մեծ քանակութեամբ պէրներ, որոնց մէջ քիչ տաղանդաւորներ կային և շատ նրա կողմնակիցներ: Այս միջոցով նա ստեղծեց բազմերանդ արիստոկրատիա, որոնց մէջ զլիսաւոր տեղը գրաւում էին առետրական մարդիկ և դրամատէրեր: Բայց առանձին ուշադրութեան արժանի է Գէորգ Ալ-ի վերաբերմունքը դէպի Էդմոնդ Բօրկ: Այս նշանաւոր մտածողը մեծ գիտութեան տէր մարդ էր, համարեա հանրագիտական զարգացում ունէր և ամեն տեսակ հասարակական առպարիզում հանդիսանում էր իրու ոչ միայն ամեն մի նոր մտքի համակրող այլ և ազգեցիկ գործիչ էր, ընդունակ նախատեսելու ապագայ դէպքերը: Եւ հենց այս ընդունակութիւնները անտանելի էին արքայի համար և Բօրկը իւր 30 ամեայ գործունէութեան ընթացքում չկարողացաւ մուտք գործել խորհուրդ: Երբ այս մարդու մեծ խելքը խաւարեց Փրանսիական յեղափոխութեան ահուելի պատկերի և իւր միակ որդու ու ուրիշ

ազգականների մահուան ազգեցութեան տակ և երբ այս հանգամանքից դրդուած նա սկսեց գրել ակներև անհեթեթութիւններ և բացարձակ պաշտպանել այն ամենը, ինչ առաջ դրոշմում էր խորը արհամարհանքով,— այն ժամանակ նա ձեռք բերեց Արքայի համակրութիւնը, որը նշանակեց նրան երկու թոշակ և մինչեւ անգամ ուղղում էր տալ նրան պէրի կոչումն ու մտցնել նրան լորդերի պալատը: Գէորգ Ալ-ի թագաւորութեան կատարեալ պատկերը տալու համար անհրաժեշտ է մատնանիշ անել հետևեալ դէպքերի վրայ, որոնք հետևանք էին նրա անմիտ քաղաքակրթութեան: Դեռ Գէորգ Ալ-ի ժամանակ մտադրութիւն կար տուրք դնել յօդուտ երկրի ամերիկան գաղութների վրայ: Այս դէպքում ինկատի չէր առնւում այն հանդամանքը, որ ամերիկացիք պարլամենտում չունէին իրանց ներկայացուցիչները, որոնք պաշտպաննել կարող լինէին իրանց շահերը: Բայց այս միջոցը այն ժամանակ մերժուած էր խելացի քաղաքագէտների կողմից, Գէորգ Ալ-ը ընդհակառակը այս միջոցը գտաւ վերին աստիճանի իմաստալից և որոշեց անպայման իրագործել այդ: Հոգևորականութեան և արիստոկրատիայի մէջ համակրանք գտնելով նա մերժեց բոլոր խելացի նախազգուշացումները և Ամերիկայի հետ վստահ կերպով պատերազմ սկսեց: Այս պատերազմը Անգլիային արժեցաւ 140 միլիոն ֆ. ստերլինգ, զրկեց ամենամեծ գաղութներից, համարեա ոչնչացրեց նրա ընդղարձակ առևտուրը և զինեց նրա դէմ ամբողջ Եւրոպայի հասարակական կարծիքը: Բարեբաղդաբար այս պատերազմը ունէր և այն օգտակար հետևանքը, որ նա, ամերիկացիների յաղթութեան շնորհիւ, վերջ դրեց բռնակալութեան զարգացման վարչական տիրապետութեան: —Միւս ցաւալի դէպքը Ֆրանսիայի հետ պատերազմն էր: Պատմական դէպքերի եր-

կար շարքը, որը պատրաստեց Փրանսիական մեծ յեղափոխութիւնը, բոլորովին անհասկանալի էր Գէորգ Ալ-ի և նրա շրջապատօղների համար, բայց և այնպէս նա իւր համար պարտք համարեց բացարձակ բէակցիա սկսել կառավարութեան տիրող եղանակի դէմ և ետ կանչելով Ֆրանսիայից անգլիական դեսպանին, յարաքերութիւնները ընդհատելու առաջին քայլը արեց, իսկ երբ Ֆրանսիացիք հետեւով անգլիացիների օրինակին, մահուան պատժի ենթարկեցին իրենց արքայ Լիւդովիկոս XV-դին, Գէորգ Ալ-ը այս դէմքը ընդունեց իրեւ անձնական վիրաւորանք և անմիջապէս սկսուեց սոսկալի անդօ-ֆրանսիական պատերազմ, որ միիօնաւոր մարդիկ կանեց, ամբողջ Եւրոպան խառնաշփոթեց և նպաստեց քաղաքակրթութեան զարգացման երկարաւե գաղարման։ Այս պատերազմի հետ անգլիական կառավարութիւնը երկու խնդիր միացրեց՝ ոչնչացնել հասարակապետութիւնը Ֆրանսիայում և թուլացնել նորազանդութեան զարգացումը Անգլիայում։ Առաջին խնդիրը իրագործելու համար անհրաժեշտ եղաւ շատ անգլիական կեանք և անգլիական ոսկի, որպիսով պետութիւնը տառապող վիճակի էր հասցրած։ Միւս ենթիրը իրագործելու համար անհրաժեշտ եղաւ հրատարակել մի շարք օրէնքներ, որոնք պէտք է ճնշէին հետախուզութեան ողու եռանդը և քաղաքական շարժումը։ Այս ուղղութեամբ նախ և առաջ սեղծուեցին համարձակ և վճռական միջոցներ գրի ազատութեան և ամեն տեսակ միտտինդներ, որ հաւաքւում էին քաղաքական և կրօնական հարցերը քննելու նպատակով։ Դրի ազատութիւնը այն աստիճան սահմանափակուած էր, որ լաւագոյն հեղինակներ ենթարկուեցին տուգանքի, բանտարկութեան և աքսորի։ Միտինդները ենթարկուած էին կառավարութեան հըս-

կողութեան, ում նախօրօք պէտք է յայտնուէր ժողովի նպատակի, տեղի և ժամանակի մասին։ Այդ ընդհանուր միջոցների հետ հրատարակուած էին շատ երկրորդական որոշումներ, որոնք արգելում էին ամեն տեսակ ժողովներ, արգելում տարածել տպագրուած գրքեր և այլն։ Այս և նման միջոցները առաջ բերին յայտնի կերպով բողոքներ և հոչակաւոր ֆօկու մինչև անգամ 1795 թուին պարլամենտում բացարձակ կերպով յայտնեց, որ ժողովրդի համբերութիւնը կարող է կտրուել և կառավարութեան դէմ կոիւը կդառնայ հասարակ խոհեմութեան հարց։ Բայց ոչ մի օպօղիցիա չկարողացաւ վերջ դնել իրերի վտանգավաւոր ընթացքին և կառավարութիւնը չդադարեցրեց իւր գործելու եղանակը։ Փոքը առ փոքը դադարեցւում էր Habeac Corpus Actի գոծադրութիւնը և այս բանը պետական իշխանութեան հնարաւորութիւն տուեց աղատ կերպով ոտնակոխ անել անհաստական և ընտանեկան իրաւունքները։ Իսկ XVIII-րդ դարու վերջը, երբ Անգլիան ընկաւ խիստ մեծ պետական պարտքի տակ, առեւտրականութեան բոլոր նիւթերը ենթարկուեցին տուրքերի և այդ տուրքերի ամբողջ ծանրութիւնը ընկնում էր ժողովրդի վրայ։

Բայց թէպէտ արտաքին և պարզ քաղաքական տեսակէտով բոլոր այս փաստերը բռնակալութեան և զեղծումների տիրուր պատկերն են ներկայացնում, պէտք չէ մոռանալ, սակայն, որ իրերի ընդհանուր ընթացքը վերին աստիճանի լաւ էր։ Այս ընթացքը, ինչպէս մենք տեսանք, փոքը առ փոքը և յամառ կերպով տանում էր դէպի հոգեւորականութեան, արիստոկրատիայի և բիւրօկրատիայի նշանակութեան սահմանափակումը և դէպի ժողովրդի ինքնագործունէութեան զարգանալը։ Մտեղծուած հասարակական

կարծիքը չի կարող միանգամից ոչնչանալ զանազան ժամանակաւոր արգելքների շնորհիւ։ Այդ կարծիքը ստեղծւում է ընդարձակ և ընդհանուր պատճառներով, և զարգանում է նուաճողաբար, առանց արգելքներից վախենալու։ Պէտք է ասել, որ անգլիական ժողովուրդը, որ պատիւ է բերում իրանց, սուկալի ճգնաժամից ազատուեց առանց յեղափոխութեան, շնորհիւ դարերի ընթացքում զարգացած բարոյական ոյժերի և վստահ հասարակական կարծիքի։ Այստեղ բաւական է ասել, որ բարենորոգումների, կաթոլիկների իրաւունքների հաւասարեցնելու և հացային օրէնքներ վերացնելու մասին հրովարտակը—երեք ժամանակակից դարերի ամենամեծ գործն է։ Այս կարևոր միջոցներից ամեն մէկը սահմանափակեց քաղաքական կուսակցութիւնների հզօրութիւնը՝ ժառանգական ազդեցիկ մարդկանց, հողատէր արիստոկրատիայի և հոգեկորականութեան։

ՀԱՏՈՐ |

ՄԵՍՆ |

Հ.

Պատմական հայեացք Ֆրանսիայի մտաւոր զարդացման վրայ X V կարու կիսից մինչև Լիւբովիկոս XIV-րդի կառավարութիւն ստանձնելը:—Հոգեորականութեան իշխանութիւնը Ֆրանսիայում և Անգլիայում:—Սկեպտիկականութեան երեալը և կրօնի համբերողութեան սկիզբը Ֆրանսիայում:—Մարլէ, Մօնտէնը և Շարլոն:—Հենրիկոս IV քաջալերում է բաղրաքանների անհամբերողութիւնը և կոպիտ ձգտումները:—Դէկարդի փիլիսոփայութիւնը:—Դէկարդի և Ռիշելիեի մէջ համեմատութիւն:—Մրանց հակասուածհան ուղղութեան հետևողները:—Մազարինիի քաղաքականութիւնը և Ֆրօնդի պատերազմները:

Ռւսումնասիրելով Անգլիայի քաղաքակրթութեան ընական և առողջ զարգացումը, մենք, մեր հետազոտութեան այս մասի մէջ մեր ստացած եղբակացութիւնները կվերադրենք Ֆրանսիայի մտաւոր անընական զարգացման: Ինչպէս Անգլիայում, նոյնպէս և Ֆրանսիայում հոգեորականութիւնը սկզբում օգտում էր քաղաքական առաւելութիւններով՝ ուրիշ դասակարգերի հանդէպ. որա հետ միասին նա հասարակութեան մատուցանում էր ծառայութիւններ՝ սահմանափակիլով բարբարոս ժամանակների կամայականութիւնը և ապաստանարան տալով թոյլերին և ճնշուածներին: Ապագայում հոգեորականութեան գերը փոխուեց: Նա ստիպուած էր իւր իշխանութիւնը պաշապանելու համար կռիւ մղել սկեպտիկականութեան զարգացած ոգու դէմ և ժողովրդի ինքնուրոյնութիւն ձեռք բերելու ձգտումների դէմ: Բայց Ֆրանսիայում հոգեորականութիւնը աւելի երկար ժամանակ էր պահպանում իւր նախկին արտօնութիւնները և հեղինակաւորութիւնը քան Անգլիայում: Նա մինչէ անդամ կարող էր յաջող կերպով դիմադրելնորազանդութեան,

որը անգլիական պետութեան հնարաւորութիւն տուեց եկեղեցին վերջնականապէս թուլացնել։ Այս պատճառով աստուածաբանական ուղղութիւնը Թրանսիայում աւելի ուժեղ էր և շարունակում էր աւելի երկար և յամառ կերպով քան Անգլիայում։ Յայտնի է, որ այս ուղղութիւնը Անգլիայում զգալի չափով թուլացաւ գեռ 16-րդ դարու կիսին։ Մենք գիտենք, օրինակ, որ թոյլ Հենրիկ VIII-ը արքան, որ ոչ լաւ զօրք ունէր և ոչ բաւական պահակ զինուորներ, իւր իրաւունքով հաստատեց ազգային կրօնը և կարգի դրեց եկեղեցական ծէսերը, կամ, որ էգուարդը, Մարիամը և Եղիսաբէթը առաջ բերին ընդարձակ փոփոխութիւններ, երբ ժողովուրդը բոլորովին անտարբեր էր մնում և ոչ մի բողոք չէր յայտնում։ Այս երկոյթը կարող է բացարուել միայն ժամանակի ընդհանուր ոգով, որ ժողովրդի մէջ թուլացրեց աստուածաբանական հետաքրքրութիւնը։ Բացի դրանից, հետաքրքրական է հետեւալ զուգահեռականը. երբ Անգլիայում բոլոր պատերազմները պարզ աշխարհիկ, քաղաքական ընոյթ էին կրում, Թրանսիայում, ընդհակառակը, 16-րդ դարու բոլոր սոսկալի պատերազմները մզւում էին յանուն կրօնի կամ լինում էին կաթոլիկների և բողոքականների մէջ։—Այս տարբերութիւնը բնականաբար ազգեցութիւն ունեցաւ երկու ազգերի քաղաքակրթութեան զարգացման վրայ։ Մինչդեռ 16-րդ դարում Անգլիան ունէր հարուստ դրականութիւն, Թրանսիայում չկար ոչ մի աչքի ընկնող գրուածք, բացի աստուածաբանական ստեղծագործութիւններից, որ այնտեղ շատ բազմացան։ Եկեղեցու շատ երկար տիրապետութեան հետեւանքներն այս էին, բայց աւելի լաւ չէր և բարոյական հետևանքները։ Կաթոլիկ և բողոքական կուսակցութիւնների անընդհատ կրօնա-

կան վէճերը համբերողութեան հարցի հետ էր մղւում և 16-րդ դարու ընթացքում ոչ ոք այդ բանը մինչև անգամ չարծարծեց, բայցի ՝Օպիտալից, որ ստիպուած էր թողնել հասարակական գործունէութիւնը։ Աստուածաբանական ոգու ազգեցութիւնը նկատելի է, օրինակ, Ամբուազի դաւադրութեան, Պուասիի բանակցութեան, Վասսիի սպանութիւնների, Բարգուզիմեան գիշերների, Հիզի և Հենրիխ Ալ-ի սպանութիւնների մէջ։—Բայց յեղաշրջումը, իրերի ընական ընթացքով, պէտք է կատարուէր և այդ յեղաշրջումը ակսուեց 1589 թուին Հենրիկ III-ի Փրանսիական գահ բարձրանալով։ Սրանից առաջ Փրանսիական արքաները, բարեպաշտ լինելով, եկեղեցու և հոգևորականութեան շահերի ջերմեռանդ պաշտպաններն էին։ Օրինակ Ֆրանցիսկոս I, Հենրիխ II, Կարլոս IX և Հենրիխ III. բայց Հենրիխ IV-ը բոլոր կրօններին միասնակ էր վերաբերում և, իւր կրօնը երկու անգամ փոխելով, մի վայրկեան չմտածեց երրորդ անգամ փոխել կրօնը, երկրի խաղաղութիւնը ապահովելու համար։ Բողոքական կրօնից հրաժարուելով, հինգ տարի այս դէպքից յետոյ հրատարակեց հոչակաւոր Նանտի հրովարտակը, որով բողոքականներին տրում էր որոշ քաղաքական և կրօնական իրաւունքներ և սկիզբ էր դրում կրօնական համբերողութեան։ Բայց ի նկատի առնելով նախընթաց պատմական դէպքերը, դժուար չէ հասկանալ, որ այս մեծ քաղաքական ակտի զարգացումը արքայի անձնական կամքի արդիւնքը չէր, այլ ամբողջ մտաւոր շարժման, որին մասնակցում էր ամբողջ ժողովուրդը։

Փրանսիայում զարգացող սկիզբան ոգին արտայայտում էր նրա գրականութեան մէջ։ 16-րդ դարու առաջին կիսի վերջը (1545 թ.) Ռաբլէն բացարձակ և

անպատիթ կերպով յարձակուեց հոգևորականութեան և տիրող սնոտիապաշտութեան վրայ, իսկ 1588 թուականին՝ Մօնտէնը հրատարակեց իր «փորձերը», որ ուղղած էր ամբողջ համակարգութեան դէմ, որը, այսպէս ասած, իւր մէջ մարմնացնում էր հոգեուրականութիւնը: Բարլէի ու Մօնտէնի մէջ, որոնց շատ փոքր ժամանակամիջոց էր բաժանում, նոյնպիսի նմանութիւն կայ, ինչպիսին որ Զիւէլի ու Գուէրի, Գուէրի ու Զիւէնդվօրտի միջն: Վերջապէս Մօնտէնի հեղինակութիւնը հրատարակելուց մի քանի տարի յետոյ երեցաւ Շարրօնի նոր «իմաստութեան մասին» գիրքը, որ ներկայացնում է բարոյականութեան այն սխտէմը, որ առաջինը ստեղծուեց առանց աստուածաբանութեան օդնութեան: Շարրօնի մի յենակէտը այն էր, որ ամեն մի ժողովուրդ դաւանում է որոշ կրօն միմիայն հասարակ պատճականութեան շնորհիւ, որ մոլեռանդ քրիստոնեան նոյնպիսի մոլեռանդ մահմեդական կլինէր եթէ ծնուէր մահմեդական երկրում ևոր այս պատճառով անմտութիւն է հոգս տանել կրօնի տարբերութեան մասին, որ պայմանաւորւում է արտաքին փաստերով և ոչ մարդկանց կամքով: Ապացուցանելով որ ամեն մի կրօն նախընթացի արդիւնք է, նամերժում է աղանդական թշնամութիւնը և մատնացոյց է անում արտաքին դոգմաներից աղատ հանգիստ հոգեկան ինքնախոհութեան անհրաժեշտութիւնը: Սկեպտիկականութեան արագ զարգացած ողու արտայայտութիւնները այսպիսի էին: Հոգեորականութիւնը, ի հարկէ, անբաւական էր դրա յաջողութիւնից և աշխատում էր համոզել արտաքին չարը արմատախիլ անել բայց արքան ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում մինչև անգամ պապի աղերսանքներին: Ինքը կաթոլիկ լինելով, հովանաւորում էր բողոքականներին, իր

թոյլ կողմի, արտաքսեց նրանց թշնամի եզուիտներին և շարունակ մտածում էր նորազանդ եկեղեցու շահերի մասին: Դժբաղդաբար Հենրիի 17-ը վաղ զոհ գրածաւ այն մոլեռանդութեան, որի գէմ ինքը այնպէս մաքառում էր—ոչ մի միջոց այլևս չէր կարող փոխել հաստատուած համոզմունքները: Հենրիի 17-ի բոնի մահից յետոյ Փրանսիական զահ բարձրացած թոյլ և սնոտիապաշտ կին՝ Մարիա Մեդիչին անմիշապէս հաստատեց նանտի հրովարտակը և ցանկութիւն յայտնեց պարլամենտի նախագահ նշանակել բողոքական Դէ-Տուախն, իսկ Լիւդովիկոս Ալեքսանդրի չափահաս դառնալուց յետոյ նպաստում էր նանտի հրովարտակի և բողոքականներին բաշխած իրաւունքների վերահաստատման: Պարզ է, որ այդպիսի քաղաքականութիւնը կաթոլիկ իշխանութեան կողմից կարող էր միայն նոր ոգու արտայայտութիւն լինել—Բայց համերժութեան աւելի ուժեղ ոգի նկատելի է Լիւդովիկոս Ալեքսանդրի թագաւորութեան վերջին 18 տարուայ ընթացքում, երբ կառավարութեան գլուխ անցել էր Ռիշելիեն, քաղաքական աշխարհի մի մեծ և հանձարագոյն մարդը: Հոգեորականութեան անդամ լինելով, նա իւր գործունէութեան մէջ զեկավարուում էր այն սկզբունքով, որ քաղաքական շահը պէտք է բոլորովին անշատուած լինի դասակարգային շահերից: Այս ոգով նա աշխատում էր թուլացնել աղնուականութեան ոյժն ու նշանակութիւնը և ստորացնել հոգեորականութիւնը: Բայց ամբողջութեամբ չիրագործելով առաջին կէտը, միմիայն այն պատճառով, որ հասարակութեան մէջ համակրանք չգտաւ, նա մեծ յաջողութեամբ կատարեց երկրորդը: Մենք նախ տեսնում ենք, որ նա աշխատում է թուլացնել հոգեորականութեան աղքեցութիւնը արբայի խղճի վրայ: Այս նպատակով,

արքայի խոստովանահայր Կոսսէնին քշում է, բացաւը ելով՝ որ «փոքր հայր Կոսսէնը» չպէտք է խառնուի քաղաքական գործերում, իսկ նոր Սիրմօն խոստովանահօրից պահանջում է հրապարակական խոստում չըխառնուել այդպիսի գործերում: Երբ պետութիւնը փողի պէտք ունէր, նա հոգեորականութիւնից պահանջեց և միլիօն ֆրանկ նպաստ, և ստանալով այս գումարը աքսորեց չորս եպիսկոպոս և երկու արքեպիսկոպոս, որոնք այս հարցի վերաբերմամբ յայտնեցին իրանց դժգոհութիւնը: Թըշիլին ոչ մի դժգոհութիւնից չէր վախենում, նրան աջակցում էր տիրող մտաւոր ուղղութիւնը: Դատաւորները չէին քաշում քահանաներին կախել առանց կոչումն առնելու: Արքեպիսկոպոս Սուրդին երկու անգամ ծեծուեց և ոչ թէ բաւարութիւն չստացաւ, այլև Թըշիլիի անբարեցակամութեսն արժանացաւ: Ճիշտ նոյնպէս երբ Լանգեդօկում ապստամբութիւն սկսուեց Թըշիլին եպիսկոպոսներից ոմանց կարգընկեց արեց, ոմանց էլ գոյքը դրաւեց: Այսպէս էր գործում ժամանակի պահանջները հասկացող և պետութեան շահերը իւր դասակարգի շահերից բարձր դասող կարդինալը: Նոյն հետևողութեամբ Թըշիլին իւր լուսաւոր համոզմունքները իրագործում էր արտաքին քաղաքականութեան մէջ: Զընայելով կաթոլիկ եկեղեցու շահերի սերտ կապին աւստրիական տան հետ, նա աշխատում էր ստորացնել այդ եկեղեցին, պաշտպանելով կաթոլիկականութեան թըշնամի բողոքականներին: Նոյն հանգամանքներից զըրդուած նա օգնում էր լիւտերականներին գերմանական կայսեր դէմ, կալվինականներին իսլամական արքայի դէմ, նիդերլանդական բողոքականներին, երբ Փիլիպոսը ճնշում էր նրանց և գերմանական բողոքականներին, երբ կայսրը աշխատում էր նրանց տի-

րող կրօնի հպատակեցնել: Թըշիլին մինչև անգամ կազմակերպեց «Բողոքական դաշնազրութիւն» կաթոլիկանութեան երկու հզօրագոյն թշնամիների հետ: Այսպէս, շնորհիւ պետութեան առաջին մարդու նախաձեռնութեան, որ եկեղեցու շահերը արհամարհում էր, սկիզբ առաւ պարզ աշխարհական քաղաքականութիւնը և կրօնական պատերազմներին վերջ էր տրուած: Հոչակաւոր Վեստֆայլի համագումար ժողովը, որ հաշտեցրեց առաջնակարգ պետութիւնների հակառակ շահերը, բոլորովին արհամարհեց եկեղեցու շահերը, իսկ համաձայնութեան եկած պետութիւնները բացի դրանից իրենց վարձատրեցին ի հաշիւ եկեղեցու: Մի քանի եպիսկոպոսութիւն ոչնչացրած և եկեղեցական գոյքերը գրաւած էին: Բայց ամենից ուշագրածն այն է, որ երեսնամեայ պատերազմը, որ վերջացաւ Վեստֆայլի խաղաղութեամբ, վերջին կրօնական պատերազմն էր: —Վերջապէս հետաքրքրական է նկատել Թըշիլիի վերաբերմունքը դէպի ֆրանսիական բողոքականները: Մենք արդէն տեսանք, թէ նա ինչպէս էր աշխատում պաշտպաննել և զարգացնել ժողովրդի իրաւունքները, չինայիկով եկեղեցու իրաւունքները: Այս բանին պէտք է աւելացնել, որ նա միշտ դիտում էր տաղանդաւոր մարդկանց, ինչ կրօնի և պատկանելիս լինէին նրանք և աշխատում էր օգտուել նրանց պատրաստակամութիւնից: Եկավարուելով հաւասարութեան սկզբունքով, նա շատ զինուորական և աշխարհիկ պաշտօններ յանձնում էր բողոքականներին, ինչպէս օրինակ՝ լեզիգեր, Շատիլեօն, Լա-Փօրս, Ռօգան, Բերնահարդ Վէյմարցուն և ուրիշներին: Առաջին երեքը մինչև անգամ ֆրանսիայի մարշաներ էին, իսկ հերցոգ Ռօգանին, չնայելով նրա կաթոլիկ եկեղեցու դէմ յայտնի թշնամութեան, Թըշիլին ետ կանչեց աքսորից

և նախ իրաւասութիւն տուեց բանակցել Շվէյցարիայի հետ, իսկ յետոյ Փրանսիական զօրքի հրամանատարութիւն տուեց:—Այս եղանակով բողոքականների և կաթոլիկների մէջ սերտ կապ էր ստեղծւում: Զանազան կրօնի մարդիկ ծառայում էին մի դրօշակի և հերետիկոսների հրամանատարութեան տակ և ըմբռոնում էին հասարակական ու պետական շահերի ընդհանութիւնը: Բողոքականների ղեկավարները հրաժարում էին իրենց կուսակցութիւնից, անցնում էին կաթոլիկ կառավարութեան կողմը և նրանցից շատերը, ինչպէս օրինակ հերցոգ Լէզիդեր, հերցոգ Լատրեմուլ, հերցոգ Բոյլեն և հերցոգ Լա-Մէյլը մինչև անգամ փոխեցին իրանց կրօնը, այսպէս որ 1621 թուին, երբ բողոքականները կառավարութեան դէմ պատերազմ սկսեցին, կարող էին միայն Ռօգանի և Սուրեփի օգնութեան յուսալ: Միւս կողմից լաւագոյն ղեկավարների դաւաձանութիւնը գրգռում էր թուլացող բողոքական կուսակցութիւնը, այս բանից օգնուեց հոգեորականութիւնը, որը իւր եկեղեցու գործերի ղեկը վերցրեց իւր ձեւըք: Զնայելով անհատական կարծիքի ազատութեան և անհամբերողութեան ոգու ակնհրեկ անհամաձայնութեան, XVII-րդ դարու բողոքականները կաթոլիկներից աւելի անտանելի դառնան: Այս հանգամանքը ցոյց է տալիս, որ բնազանցների բողոքական ազատամտութեան մասին ունեցած հասկացողութիւնը այնքան էլ ճիշտ չէ: Պատմութեան փաստերը ապացուցանում են, որ բողոքականների համբերողութիւնը տատանւում էր արտաքին դէպքերի ազդեցութեան տակ: Այսպէս օրինակ XVI և XVII-րդ դարերում կալվինականները նոյնպէս եռանդուն կերպով աշխատում էին հալածել իրենց հակառակորդներին, ինչպէս կաթոլիկները պապի տիրապետութեան

ամենախաւար շրջաններին: Դեռ այժմ էլ Շօտլանդական բողոքականների ստորին դասակարգերում սնութիապաշտութիւնը և հոգեմոլութիւնը խիստ տիրապետում են քրիստոնէական հեղութեան վրայ, քան Փրանսիական կաթոլիկների ստորին դասակարգերում: Բայց հետաքրքրական է այն փաստը, որ բողոքականութիւնը որ թողել էին ղեկավարները և կառավարում էր միայն հոգեորականութիւնը, սկսեց ցոյց տալ հակում դէպի ոէակցիա և եռանդի որոշ աստիճան: Այս փաստով թւում է կարելի է բացատրել թէ ինչու միայն համբերուղ կամ կառավարութեան կողմից չուվանաւուղ կրօնը ցոյց է տալիս տւելի մեծ եռանդ և կենդանութիւն քան հովանաւորուղ կրօնը: Մինչև եկեղեցին գտնւում է պետութեան հովանաւորութեան ներքոյ, նրա շահերի զարգացումը ենթարկուած է աշխարհիկ քաղաքականութեան շահերին և բնականաբար թուլանում է նրանցով: Իսկ երբ եկեղեցին մնում է իւր խնամատարութեան տակ, նա իւր գործունէութեան մէջ զանում է աւելի ինքնուրոյն և իւր հոգեորականութեան շնորհիւ աւելի է մօտենում ժողովրդին: Իրեւ օրինակ ծառայում է այլաղաւանների և անզիկանների համեմատութիւնը, որնցցից առաջինը աւելի մեծ ազգեցութիւն ունի իւր համայնքի վրայ քան երկրորդը: Նոյնը պէտք է ասել և Քրանսիական բողոքականների մասին: Միանալով հոգեորականութեան կառավարութեան ներքոյ, նրանք թշնամութեամբ էին վերաբերում կաթոլիկ աղանդին և մինչև անզամ տանել չէին կարողանում իրենց համար բարեացակամ նանահի հրովարտակը, որը տուեց նրանց խղճի ապատութիւն, բայց ոչ մի արտօնութիւն: Նրանց բաւական չէր խղճի ապատութիւնը, նրանք ձգտում էին սահմանափակել ուրիշ կրօնների

գաւանութեան ազատութիւնը: Ներքին ատելութիւնը շուտով փոխուեց բացարձակ գործունէութեան: Բողոքականները պահանջում էին կաթոլիկ ծէսերի արգելում և կաթոլիկ հոգերականութեան դէմ սարքում ստորացնող ցոյցեր, արգելում էին ժամերգութիւն կատարել, մինչև անգամ կաթոլիկներին արգելում էին կաթուզելում եկեղեցի ունենալ, հալածում էին կաթոլիկների և բողոքականների ամսւանութիւնը և իրենց ճնշումները հասցըին այն աստիճանի, որ երբ կիւղովիկոս ԽIII-րդ արքան 1620 թուին դնաց Պօ, նա այնտեղ ոչ մի եկեղեցի չգտաւ, ուր կարողանար ազօթել իւր կրօնի ծէսերով: Անուշադիր թողնելով համբերողութեան և անհատական մտածելակերպի ազատութեան սկզբունքը, նրանք խիստ կոպիտ էին վերաբերում իրենցից հեռացածների հետ և նրանց հայեցքները չընդունողներին եկեղեցուց բաժանում էին, ինչպէս օրինակ Ֆէրրին, որը մեղանչեց, եկեղեցական ժողովների վերաբերմամբ վատ կարծիք էր յայտնի: Եկեղեցուց հեռացնելը սոտիպեց նրան փախուստով ազատուել ամբոխի կատաղութիւնից, որը յարձակուել էր նրա ընտանիքի վրայ և աւերել ամբողջ գոյքը: Բայց նրանք չբաւականացան նման արարքներով. աւելի ու աւելի յանդուգն դառնալով, նրանք սկսեցին մուտ գործել քաղաքականութեան շրջանը: Երկու ժողովում նրանք որոշեցին պահանջել, որ իշխանութիւնը Տրիդէնտի ժողովը չճանաչի, իսկ բողոքականներին հրամայեցին արգելք հանդիսանալ արքային իսպանական ոլրինցեսունու ամուսնութեան: Նրանք նոյնպէս պահանջում էին Սիւլլիին վերաբերնել նրանից իրը անօրինութեամբ խլուած պաշտօնները և լէկտուրի գաւառապետ Թօնտրայլի փոխումը նրա համար, որ սա կաթոլիկութիւն ընդունեց: Վերջապէս բողոքականները հրատարակեցին մի

շարք զրուածքներ, ուր կաթոլիկութեան դէմ նըրանց զայրոյթը համարում էր վերջին կէտի: Բայց աւելի լաւ է բնորոշլում բողոքականների դէպի կաթոլիկներն ունեցած վերաբերմունքը հետեւալ զուտ բաղաքական դէպի բուլ: 1615 թուին կօնդէի ղեկավարութեամբ եղած ապստամբութեան միացել էին շատ բողոքականներ, թէպէտ և նրանք առիթ չունէին կառավարութիւնից անբաւական լինելու: Դեռ Հենրիխ IV-ի ժամանակ նրանք գրաւեցին կաթոլիկ հոգերականութեան կալուածքները իրենց եկեղեցները պահպանելու: Նպատակով. իսկ կառավարութիւնը սոփառուած էր 1618 թուին պահանջել ամբողջ խլուած կալուածքները և կաթոլիկներին ընակեցնել իրենց հին տեղերը: Այս հանգամանքը առաջ բերեց Բէարնի նշանաւոր ապստամբութիւնը, որից յետոյ բողոքականները հաւաքուեցին լա Ռոշէլ և կայացըին այնպիսի յանդուգն որոշումներ, որպիսին առաջ պէտք է բերէր փոխադարձ խոռվութիւն: Նրանք հրովարտակ հրատարակեցին կաթոլիկ եկեղեցիների բոլոր կալուածները զրաւելու մասին, ժողովրդի վրայ տուրք գրին կրօնը պաշտպանելու նպատակով, հիմնեցին Ֆրանսիայի և Բէարնի «նորազանդների եկեղեցի», ամբողջ ֆրանսիան բաժանեցին ութը շրջանի, նրանցից ամեն մէկում նշանակուած էր մի ժեներալ և մի հոգեոր անձ:—Այսպիսի անասելի յանդունութեան հասան մի խումբ քահանաներ, որոնք հնարաւորութիւն ունէին անվրդով օգտուել իրենց նախկին հալածողների խաղաղ քաղաքականութեան և համբերողութեան արգիւնքներով: Ի յարգանս կաթոլիկ հոգեորականութեան, պէտք է ասել, որ նրանք դեկավառելով պարզ աշխարհիկ շահերով, Փանատիկոսների յարձակումներին չէին պատասխանուու յարձակու-

մով և ոչ էլ փորձ էին անում սահմանափակել նրանց արտօնութիւնները: Բարեբաղդաբար կաթոլիկների և բողոքականների կոիւը, որ շարունակում էր եօթը տարի, վերջացաւ յօգուտ առաջինների: Եթէ հակառակը պատահէր, Ֆրանսիան նորից կներկայացնէր մոլեանդ գործունէութեան և կրօնական հալածանքների տխուր պատկերը: Բողոքականների եկեղեցական բոնապետութիւնը վերանորոգելու հակումը արտայայտում էր նրանց ստեղծած բարոյական կանոնադրութիւնը, որ պարունակում էր իւր մէջ մինչև անգամ անհատի մասնաւոր գործունէութիւնը և չնչին մասնակիութիւնը: Արգելում էր, օրինակ, յաճախելթատրոն և պարահանդէս, լարախաղացութեան ներկայ լինել, պարել, գունաւոր շոր հագնել, մազը անպատշաճ սանրել, երեսը սնգուրել և այլն: Արգելում էր յունարէն լեզուն և քիմիան աւանդել, սահմանուած էր հոգեոր գրաքնչութիւնը և այլն: Պատերազմի ամենակատաղի ժամանակ, սկզբից երեք տարի անց կառավարութեան զլուխ անցաւ Ռըշիլին, որը չէր ուզում բողոքականների վրայ յարձակումներով կոիւը ուժեղացնել, այլ բաւականացնում էր միմիայն խառնակիչներին պատժելով: Մինչև անգամ լա՛՛ոշելի նշանաւոր պաշարումից ու բողոքականների մի քանի ընդհարումներից յետոյ, երբ վերջինները ցոյց տուին անասելի յամառութիւն, Ռըշիլին կրօնական հալածանքներ չսկսեց և, ընդհակառակը, պնդում էր համբերողութեան սկզբունքի վրայ և բողոքականներին չէր զրկում նրանց բաշխած արտօնութիւններից. բացի դրանից, ինչպէս վերը ասուած էր, նա օգնում էր բողոքականներին ուրիշ երկրներում նրանց ձնշողների դէմ:— Բայց այս երևոյթների ամբողջ շարքը միմիայն սկեպտիկ ոգու ընդհանուր շարժման արդիւնք էր, այս շըր-

ջանի զրականութեան մէջ ստացաւ առանձին արտայայտութիւն: Ռըշելինեի հետ միաժամանակ քաղաքական ասպարէզի վրայ և մտաւոր աշխարհում գործում էր աւելի հանճարեղ մի մարդ: Դա Ռընէ-Դեկարտն էր: Մի կողմը թողնելով նրա ընդարձակ աշխատութիւնները բնագիտութեան, մաթեմաթիկայի, երկրաչափութեան, եռանկիւնաչափութեան, Փիղիքայի և մինչև անգամ կազմախօսութեան մասին, որոնք ոչնչացրին նրա ժամանակ տիրող շատ նախապաշարումներ, ինչպէս օրինակ, ծիածանի ծագումի, արենադարձութեան մասին և այլն: Անհրաժեշտ է մատնանշել և նրա գործունէութեան գլուխ գործոցի վրայ՝ նրա ստեղծած, «նոր փիլիսոփայութեան» վրայ: Դէկարտի մասին պէտք է ասել, որ նա Լիւթերի յաջորդն էր և լրացրեց այն, ինչ որ Լիւթերը համարձակութիւն չունէր կատարել: Մեծ ստեղծագործութիւնը, որ կոչուած էր «Մեթոդ», ֆրանսիական խելքի տենդենցիաների առաջին բացարձակ յայտնութեան էր: Դէկարտի փիլիսոփայութեան իմաստը բնորոշում է արդէն նրանով, որ նա աղատում է մարդուն անցհալի հետ ունեցած ամեն տեսակ կապից և սովորցնում է նրան հրաժարուել ին հասկացողութիւններից, որպէսզի նորը ստեղծել անկախ աւանդութիւններից և նախապաշարումներից: Եթէ մենք ցանկանում ենք իմանալ բոլոր ճշմարտութիւնները, որոնք մատչելի ին մեզ, ասում է Դէկարտը, մենք նախ պէտք է աղատուենք նախապաշարումներից և նպատակ դնենք մերժել մինչև նորից փորձելը այն ամենը, ինչ որ մենք առաջ ընդունում էինք: Այս սկզբունքի հիման վրայ Դէկարտը մտրակում է կեղծ բարեպաշտութիւնը և նախապաշարումը: Անգլիայում նոյն միտքն է արտայայտում Զիլինգփօրտը: Բայց Անգլիայի և Ֆրանսիայի մտաւոր զարգացման

մէջ գոյութիւն ունի համարեա ամբողջական նմանութիւն։ Մօնտէնը Թրանսիայում և Հուկերը Անդլիայում սկեպտիկ լինելով, այնուամենայնիւ բոլովին չաղատուեցին եկեղեցական հեղինակաւորութիւնից, բայց Դէկարտն ու Զիլինգվորտը բացարձակապէս և անկախ սկիպտիկներ էին և սահմանեցին մտքի տիրապետութիւնը աւանդութիւնների վրայ։ Դէկարտի փիլիսոփայութեամբ մարդը իւր կրօնը չը պէտք է փոխ առնի աւանդութիւններից և ուրիշ մարդկանց ուսուցումից, որովհետեւ Աստծու մասին հասկացողութիւնը բղխում է նոյնիսկ մտքից։ Այս ուսուցումը, որ մանրամասնաբար ուսումնասիրած էր, վերջնական հարուածը տուեց տիրող աստուածաբանական ուսուցումներին։ Ճիշտ նոյնպէս գիտութեան շրջանում Դէկարտի մեթոդը կործանեց ընդունուած հին հեղինակութիւնները, ինչպէս օրինակ Արիստոտէլի, հին երկրաշափների և այլն։ Դեկարտի և Ռշելիի մէջ եղած նմանութիւնը զարմանալի է։ Թէ մէկի և թէ միւսի գործունէութիւնը ներկայացնում է կատարեալ արտայայտութիւն նորագոյն ձգտումների և մարդկային մտքի պահանջների, որը անցեալի հետ բոլորովին կարել էր իւր կապը։ Նրանց գործունէութեան յաջողութիւնն իսկ բնորոշում է ժամանակակից հասարակութեան տրամադրութիւնը։ Աւելի սնութիապաշտ շրջանում նրանց հայեացքները աննկատելի կմնային կամ կհամարուէին ամբարիշտ։ Մինչև մենք կատարեալ հնարաւորութիւն ունինք համոզուելու որ Դէկարտի փիլիսոփայութիւնը արագ կերպով մուտքուեց գիտութեան բոլոր ճիւղերը, իսկ Ռշելիի բաղաքական համակարգութիւնը պաշտպանում և զարգացնում էր նրա յաջորդների կողմից։

Երբ Փրանսիական գահը անցաւ Լիւդովիկոս XIV-ին,

կ սռավարութեան գլուխ էր անցած կարդինալ մազարինի, որը լաւ էր ըմբռնել իւր նախորդի բաղաքականութիւնը։ Նա նոյնպէս նախ վերահաստատեց Նանտի հրովարտակը և շարունակում էր բողոքականներին բարձր պաշտօններ տալ։ Օրինակ, Մարշալի գաւաղանը դանուում էր Տիւրէննի և Հասսիօնի ձեռքը։ Մազարինին դաշն կապեց կրօմէյլի հետ, որը եկեղեցու օրէնքի համաձայն դատապարտուած էր մշտական նըղովքի՝ խառնակչութեան, հերետիկոսութեան և արքայասպանութեան համար։ Նոյն Մազարինին նշանաւոր Պիրինէյեան գաշնազըութիւնը կնքեց, որը վիրաւորեց պապին և թուլացրեց եկեղեցու շահերը։ Վերջապէս, անմիաբան ներքին պատերազմը, որ կոչւում է Փրօնդա, քաղաքականութեան մէջ այն անհանգիստ ոգին մացնելու ձգտման արտայայտութիւնն էր, որ տիրում էր զրականութեան և կրօնի մէջ։

Մինչև այժմ մենք համառօտ կերպով պարզեցինք այն պատմական վայրկեանները, ուր արտայայտուում էր Անգլիայի և Թրանսիայի մէջ եղած ամբողջական նմանութիւնը։ Երկու երկլների մէջ էլ մենք տեսնուում ենք սկիպտիկականութեան գրականութեան և համբերողութեան սկզբունքի միատեսակ հետևողաբար զարգացման ընթացքը։ Երկու երկիրներն էլ անմիաբան ներքին պատերազմի հետևանքները միատեսակ են զգում իրենց վրայ, մի պատերազմի, որ սկսուեց համարեա նոյն պատճառից և վերջացաւ միաժամանակ Կարլ II-ի իշխանութեան վերանորոգութով և Լիւդովիկոս XI-ով։ Այս վայրկենից երկու պետութիւնների նմանութիւնը վերջանում է։ Յաջորդ քաղաքական գէպքերը Անդլիան հացնում են ժողովրդի կատարեալ բարելաւման, իսկ Թրանսիան—ամենաարիւնու և կործանիչ յեղափոխութեան։ Այս ապշեցուցիչ զանազանութեան գլխա-

ւոր տարբերութիւնը պէտք է փնտրել խնամակալութեան պատմական համակարգութեան մէջ, որը ֆրանսիայում գործում էր աւելի ուժեղ կերպով քան Անգլիայում։ Այս հետաքրքիր հարցին նուիրուում է հետևեալ գլուխը։

թ.

Խնամակալութեան համակարգութեան պատմութիւնները, և Ֆրանսիայի Անգլիայի հետ համեմատութիւնը այս կէտում։ Մօտ XI-րդ դար հետախուզութիւն ողին սկսում է թուլացնել եկեղեցիների իշխանութիւնը։ Աւատական համակարգութեան և ժառանգական արիստոկրատիայի երեան դալը։ Կենդրոնացման համակարգութիւն։ Ասպետականութիւն։ Ազնուականութեան և հոգևորականութեան դաշնագրութիւնը։ Եղիսաբէթի, Յակովի 1-ի և Կարլոս I-ի թագաւորութիւնը։

Հոռվմէական կայսրութեան համարեա ամբողջ հինգ դար յետոյ, եւրոպական հասարակութիւնը ընկղմուած էր խորը տղիտութեան մէջ, շնորհիւ հոգեորականութեան սիստեմատիկ խնամակալութեան, որը ամեն միջոց գործ էր դնում ոչնչացնելու մտաւոր զարգացման ամեն մի չնչին ձգտում։ Միմիայն X և XI-դարերում զանազան երկրներում սկսեցին արտայայտուել սկեպտիկականութեան առաջին արտայատութիւնները և միենոյն ժամանակ եկեղեցական արգելող տարրի աշխարհիկ առաջադիմողի հետ։ Այս շրջանի սկզբնաւորութեամբ եւրոպայում սկսում է կազմակերպուել ընդարձակ քաղաքական համակարգութիւն, որը հանդէս է գալի իր բողոք իրերի հնացած դրութեան դէմ, բայց այս համակարգութիւնը իսկապէս փոխարինում է նախկին եկեղեցական խնամակալութեանը նոր՝ արիստոկրատիայի խնամակալութեան ձևով։ Դա—աւատական համակարգութիւնն է։

Այն հիմունքների հետախուզութիւնը, որոնց վրայ Անգլիայում և Ֆրանսիայում կազմակերպուած էր այս համակարգութիւնը, մեզ հնարաւորութիւն կտայ բացատրել այն տարբերութեան մօտակայ պատճառները, որը նկատուում է այս երկու պետութիւնների ապագայ քաղաքական վիճակի մէջ։

Անգլիայի նորմանացի տիրապետողը բնականաբար չէր կարող մերժել իւր երկրի քաղաքական համակրութիւնը։ Այս պատճառով նա իւր պաշտօնեաներին բռնանում էր, նուիրելով նրանց կալուածներ և արտօնութիւններ այն պայմանով, որպէս զի և նրանք և նրանց վասսալներն ու տուրք վճարողները, այսինքն առանց բացառութեան բոլոր հողատէրերը, երգուէին նրան հաւատարմութեան մէջ։ Այս ձևով վերացնելով աւատականութեան արմատական սկզբունքը—վասսալների անկախութիւնը բարձրագոյն իշխանութիւնից—նա զրկեց արիստոկրատիան նոյնպէս և ուրիշ արտօնութիւններից, որոնք պահպանում էին նրանց հեղինակաւորութիւնը ֆրանսիայում, օրինակ փող կարելու և որևէ պատերազմ վարելու աւատականների իրաւունքը։

Արիստոկրատիայի ձնշուած վիճակի բնական հետեանքն այն էր, որ նա աւելի սերտ կապ ստեղծեց ժողովրդի հետ և նրա հետ միասին մի ուժեղ և հետեղական օպազիցիա կազմակերպեց արքայի դէմ, մի օպազիցիա, որը ժամանակի ընթացքում ստեղծեց մունիցիալ արտօնութիւններն ու ազատութիւնները, որոնք սովորցրին անգլիացիներին ինքնավարութեան և նրանց մէջ ամրապնդեցին անկախութեան հասկացողութիւնը։ Ֆրանսիայում, ընդհակառակը, աւատական համակարգութիւնը կազմակերպուեց այնպէս, որ մի կող

մից արքան ժողովրդից անջատուած էր մհծաքանակ, վուխաղարձ բացառիկ յարաբերութիւնների մէջ գտնուող վասսալների և ճորտերի աւատական երկար շարքով,—ժողովուրդը իւր վրայ կրում էր աւատականութեան ամբողջ բոնութիւնը։ Այս պատճառով էլ բարձրագոյն իշխանութիւնը միացաւ ժողովրդի հետ արխուոկրատիայի դէմ։ Իրերի այս դրութիւնը ժողովրդի շահերին չէր նպաստում, և եթէ ֆրանսիացիք ձեռք բերին քաղաքային արտօնութիւններ, այս արտօնութիւնները ունէին փոքր նշանակութիւն և արտայայտում էին միայն թղթի, զանազան հրովարտակների վրայ և այս պատճառով խախտում էին հենց առաջին անյաջող հանգամանքից։ Արիստոկրատիայի թուլանալը, ընդհակառակը, հասցրեց միմիայն արքայական իշխանութեան ուժեղանալուն, այսինքն խնամակալութեան մի ձեւի միւսի փոխուելուն և սկիզբ դրեց կենտրոնացման այն սիստեմի, որը, ժողովրդի մէջ պահելով աւատականութեան գաղափարը ցածր դասակարգի հնագանդութեան և բարձրի գերադասութեան վերաբերմամբ, երկար ժամանակ յետ էր պահում նրա զարգացումը։ Կառավարչական նոր խնամակալութեան կամ կենտրոնացման սիստեմի ընդհանուր բնորոշութեան համար բաւական է ասել, որ ամբողջ կայսրութիւնը լցրած էր չինովնիկներով, որոնք հսկում էին քաղաքական հասարակական և մասնաւոր կեանքի ամեն տեսակ արտայայտութիւնների վրայ։ Այս չինովնիկները ստեղծեցին անվերջ պաշտօնավարութիւն, ուր ցածր պաշտօնեաների՝ բարձրից ունեցած կախումը զարմանալի կերպով համապատասխանում էր աւատական յարաբերութիւնների հին շարքին։ Պէտք է աւելացնել, որ բարձրագոյն իշխանութեան հեղինակաւորութեան մեծանալը և ա-

րիստոկրատիայի անկախութեան թուլանալը երկար ժամանակ չէին դադարեցնում վերջինների ձնչումը ժողովրդի վրայ։
Երբ Անգլիայում ճորտութիւնն անյայտացաւ, արդէն XV-րդ դարում ֆրանսիայում այդ իրաւունքը պահպանուեց էլի երկու դար և վերջնականապէս ոչչացրած էր յեղափոխութիւնով։ Ճորտութեան հետ միասին ֆրանսիայում երկար և յամառ կերպով պահպանում էին իրենց գոյութիւնը բոլոր հին դասակարգային տարբերութիւնները և նախապաշարումները։ Բոլոր քիչ թէ շատ արդիւնաւոր պաշտօնները պատկանում էին ազնուականութեան, որը ազատ էր տուրք վճարելուց, իսկ տուրքի ամբողջ ծանրութիւնը ընկնում էր ցածր դասակարգերի վրայ։ Ազնուականութեան արտօնուած էին զանազան առաւելութիւններ զինուորական ծառայութեան վերաբերմամբ, և մինչև անգամ այնպիսի անմիտ արտօնութիւններ, ինչպէս օրինակ՝ թունոց պահել և այն։ Վերջապէս խնամակալութեան ոգու պարբերաբար զարգանալու արտայայտութիւնը ասպետականութեան հաստատուելը եղաւ։ Առասարակ ենթագրում են, որ այս հաստատութիւնը ազդում էր բարքերի մեղմութեան վրայ և ուժեղացնում էր կանաց ազդեցութիւնը։ Ասպիտականութիւնը, իսկապէս, երկու տարրերի—եկեղեցական և արիստոկրատիական—մարմնացումն էր. երկու այնպիսի տարրերի, որոնք միշտ յետ էին պահում հասարակութեան զարգացումը։ Ֆրանսիայում ասպետականութիւնը ստեղծեց կիսահոգեոր և կիսարիստոկրատիական միարանութիւնների մի շարք, և փայլում էր իւր զինախաղութիւններով, որոնք դադարեցին միմիայն 1560 թուին։ Իսկ Անգլիայում ասպետականութեան զարգացումը յետ էր մղուած շատ

վաղուց: XIII-րդ դարում օրէնք էր յայտարարուած, որի հիման վրայ մի քանի անձնաւորութիւններ պարտաւորում էին ընդունել մի ժամանակ այնքան պատուաւոր ասպետական կոչումը տուգանքի ենթարկուած լինելու երկիւղով: XVI-րդ դարում ասպետական կոչում շնորհւում էր դատաւորներին, քաղաքացիական ծառայութիւնների համար, վերջապէս դեռ մինչև XV-րդ դար ասպետական ողին վերջնականապէս անհետացաւ և մինչև անգամ ծաղրի առարկայ դարձաւ Անգլիայում:

Առհասարակ Անգլիայի պատմութիւնը իբրև հակադրութիւն Թրանսիայի ներկայացնում է բարձրութոյն իշխանութեան պարբերական միջոցների մի երկար շարք ճնշելու արիստոկրատիայի անկախութիւնը և ազդեցութիւնը: Կարծիր եւ սպիտակ ծաղրիների պատերազմից յետոյ, որը արիստոկրատիան երկու հակառակ բանակի բաժանեց, նուազեցրեց նրանց նիւթական միջոցները և վերջ դրեց ներքին պառակման ու պատերազմի: Հենրիկոս VII և Հենրիկոս VIII-րդ արքաները շարունակում էին բռնանալ բարձր դասակարգերի վրայ և ստեղծեցին վերանորոգութեան համար շատ կարևոր հանգամանքներ, մի վերանորոգութեան, որը XVII-րդ դարում առաջ բերեց ամբողջ Եւրոպայում քաղաքական մեծ յեղաշրջումներ: Արիստոկրատիայի և հոգևորականութեան ճնշուած զորութեան բնական հետևանքն այն էր, որ այս երկու դասակարգերը միացան սերտ կապով իրենց ճընշողների դէմ: Մրանք երկուան էլ իրենց նեցուկ էին վինտրում աւանդութեան և հին սովորութիւնների մէջ, երկուան էլ տանել չէին կարողանում բողոքական կրօնը և, առհասարակ, երբ արիստոկրատիան կուր էր մղում բարենորոգութեան կողմանիցների դէմ, հոգևո-

դականութիւնը հալածում էր հերետիկուներին: Իմաստուն թագուհի Եղիսաբէթը հասկանալով արիստոկրատիայի պահպանողական բնոյթը և ըմբռնելով, որ պետութեան հզօրութիւնը պայմանաւորում է ոչ թէ արտաքին փայլով և տոհմական նշաններով, այլ մտքի ոյժով ու եռանդով, որ դասակարգի մէջ և արտայայտուի այս ոյժը, իւր կառավարութեան մասնակից արեց լաւագոյն մարդկանց, ինչպէս օրինակ՝ երկու Բեկոններին, երկու Սըմիլէյներին, Նոլլիսին, Սագլէրին, Սմիտին, Տրօնմօրտոնին և Վայլսինամին, իսկ երբ բոլոր հերցոգները մեռան, նա այլևս ոչոքի հերցոգի կոչում չէր տալի: Յակոբ Լ-ը և Կարլոս Լ-ը նորից մի քանի փորձեր արին հոգեորականութեան և արիստոկրատիայի նախկին նշանակութիւնը վերականգնելու, բայց Կարլոս Լ-ի բէակցիան աղատութեան զարգացած և արմատացած ոգու դէմ վերջացաւ անգլիական մեծ ապստամբութեամբ, որը անհրաժեշտ է քննել միաժամանակ Թրանսիայում առաջ եկած Փրօնդի պատերազմների հետ:

Ժ.

Խնամակալութեան ոգու ուժեղ զարգացումը Թրանսիայում բացարում է ֆրօնդայի անկումը: Ֆրօնդայի և նրան ժամանակակից Անգլիայի ապստամբութեան համեմատութիւնը: Թրանսիական արիստոկրատիայի փառասիրութիւնն ու տգիտութիւնը: Անգլիական ապստամբութիւնը յոջողութիւն ունեցաւ, որպէսն ուսմական շարժում էր:

Անգլիական մեծ ապստամբութիւնը և ֆրօնդան պարզ ժողովրդական շարժում էր արքայական բռնակալութեան դէմ: Բայց սրանք դանաղան պատճառներ և զանազան դասակարգերի ներկայացուցիչներ ունէին.

այս պատճառով էլ նրանք առւին տարբեր արդիւնքներ: Անգլիայում գործը սկսուեց ներքեից և սկզբում ուղղած էր արքայի դէմ, իսկ յետոյ և արիստոկրատիայի դէմ, որը միացաւ արքայի հետ: Այս պատճառով կիւը դասակարգային բնոյթ ընդունեց: Պարլամենտի շուրջը ժողովուցին եօմենները և վաճառական դասակարգերը—կամ կլօրագլուխները, իսկ արքայի շուրջը—հոգեորականութիւնն ու ազնուականութիւնը կամ «ասպետները»: Երբ հակառակ դասակարգային յարաբերութիւնները դեռ բոլորովին պարզուած չէին, պարլամենտը իւր զօրքերի հրամանատարութիւնը յանձնեց բարձր ազնուական անձնաց էսսէկին, Բէդֆորդին և Մանչէստրին. բայց վերջինները իրենց կասկածելի գործունէութեամբ և համարեա բացարձակ ձգտումով դէպի արքան շուտով պարլամենտը մոլորութիւնից հանեցին—այս վարկեանից ժողովուրդը գործը շարունակում է իւր սեպհական ոյժերով, ցածր դասակարգի մարդկանց ղեկավարութեամբ: Բաւական է մատնանշել հետեւալ օրինակների վրայ: Զօյսը, որը արքային տարաւ, դերձակ էր. Պրայդը, որը համայնսական խորհրդականը ցրուեց, կառապան էր. գործունեայ և մեծ ազդեցութիւն ունեցող կուսակցութեան—որին տրուած է «Հինգերորդ միապետութեան մարդիկ» կոչումը—գլխաւոր անդամների թւում կային մի գինեվաճառ, մի հիւն և մի նախկին խարոյկավառ: Ինքը կրօմվէյլը գարեջրագործ էր. գնդապետ Զօնսը, նրա փեսան—սպասաւոր էր. Դինը նոյնպէս սպասաւոր էր. Ժեներալ Վոլին՝ մահուդգործի աշակերտ էր: Պետական խորհրդի մէջ, պարլամենտի որոշմամբ ներկայ էին ի միջի այլոց՝ Սէլվէյ, որը նպարավաճառի մօտ աշակերտ էր,

Կորենլիոս Հօլանզը, որը լապտերակիր էր և այլն: Ֆրանսիայում մենք տեսնում ենք ընդհակառակը: Այնանդ ժողովրդական շարժման զլուխ էին անցել բարձր ազնուականութեան ներկայացուցիչները—պրինցներ՝ կոնդէ, կոնտի և Մարսիլեակ, ներցոգներ՝ Բոյլեօն, Բօֆօր, Լոնգվիլլ, Շեվրէզ, Նեմուր, Լիւին, Բրիսսակ, էլ'բեօֆ, Կանդայլ, Դէ-լա-Տրէյմուլ. Մարկիզներ՝ Լաբուլէ, Լէգ, Նուարմուզին, Վիտրի, Ֆօսսէզ, Սիլերի, Էստիսսակ և Հօկենուր. կոմսեր՝ Ռանցառ և Մօնտրեզօր: Ժոդովիրդի և ազնուականութեան այս տարօրինակ մերձեցումը ազատութիւնը պաշտպանելու համար բացատրում է նրանով, որ երկար դարերի ճնշումները ֆրանսիացիներին սովորցրին նայել բարձր դասակարգերի վրայ միշտ շողովորթութեամբ և յարգանքով և նրանից սպասել ամեն խնդրում առաջին խօսքի և առաջին գործողութեան: Ամեն ճգնաժամին ժողովուրդը փրկութեան չէր սպասում արիստոկրատիայից, իսկ վերջինը մոլորովին չէր մտածում ժողովրդի գործի առաջնադաշտան մասին, այլ ձգտում էր միմիայն մեծարանքի. իբրև ապացոյց կարելի է առաջ բերել մի շարք բնորոշող փաստեր: Ֆրանսիական արիստոկրատիան շատ երկար ժամանակ վրդովւմ էր թագունու ներկայութեամբ նստելու իրաւունքի խնդրի մասին: Ֆրանսիական տան հին սովորութեան համաձայն թագունու ներկայութեամբ նստել կարող էին միմիայն այն ազնուականների կանայք, որոնք ներցոգութիւնից ոչ պակաս կոչում ունէին: Երբ Լիւլովիկոս XIII-րդի ժամանակ այս սովորութիւնից փոքր ինչ շեղուեցին, ազնուականութեան յուզմունքը այնքան մեծ էր, որ սպասնում էր ապատամբութեամբ և արքայական տունը ստիպուած էր արտօնութիւն տալ և ցածր ազնուականութեան, նոյնը

տեղի ունեցաւ 1648 և 1649 թուերին, երբ թագուհին իւր ներկայութեամբ նստելու էրաւունք տուեց կոմսուհի Ֆլէին, տիկին Դը-Պօնին և պրինցիսուհի Մարսիլիակին։ Ազնուականութիւնը այնպէս յուղուեց սորանով, որ թագուհին ստիպուած էր բացարձակ յայտնել, որ նա ոչնչացնում է կանանց տուած այս իրաւունքները։ Աւելի կուրիօղ փաստեր ենք գտնուում XVII-րդ դարու Փրանսիական ժամանակագիրների մէջ, ուր կան վէճեր և մեղադրանքներ, որոնք սէիզը են՝ առել օրինակ, այն հարցի վերաբերմամբ, թէ ով կարող է հրաւիրուած լինել արքայական սեղանի, ումն էր պատկանում արքային ճաշի ժամանակ անձեռոց մատուցանելու պատիւը, ումն էր պատկանում թագուհուն սպիտակեղէն փոխելու ժամանակ օգնելու արտօնութիւնը և այլն։ Նման անմիտ հարցերով ու նախապաշարումներով զրադուած մարդկանցից գժուար էր սպասել խելացի օգնութիւն լուրջ գործում, և այս պատճառով Փրօնդան Փրանսիական ժողովրդի համար ոչ մի բարերար հետևանքների չըհասցրեց։ Իսկ Անգլիայում, ընդհակառակը, ժողովրդի ղեկավարները, ազատ կոպիտ ինքնաշահասիրութիւնից, հուանդուն կերպով առաջ էին տանում իրենց յանձնած գործը և հանգստացան միայն այն ժամանակ, երբ կուրի նպատակը—բռնակալութեան խորտակումը—իրագործուած էր։

ԺԱ.

Լիւդովիկոս XIX-րդը մտցնում է զրականութեան խնամակալութեան սիստեմը—մտածող և կառավարող զասակարգերի գաշնակութեան հետևանքները—յիտամնացութիւն և մտաւոր անուագրութեան հետևանքները—յիտամնացութիւն և մտաւոր անուագրութեան բոլոր ձիւղերում։

Բացատրելով խնամակալութեան աւելի ուժեղ զարգացումը Թրանսիայում քան Անգլիայում, մենք այժմ կքննենք այս սիստեմի ազդեցութեան հետևանքները Փրանսիայի մտաւոր, սօցիալական և քաղաքական պատմութեան վրայ։ Մինչև Գրօնդայի սկզբնաւորութիւնը հասարակութեան մէջ տիրապետող հպատակութեան ողին մնաց նոյնպիսի նշանակութեամբ նաև նրա ոչնչացնելուց յետոյ։ Այս բանի շնորհիւ Լիւդովիկոս XIX-ին գժուար չէր իւր խնամակալական համակարգութիւնը հասցնել վերին աստիճանի։ Սանձարձակ, անազնիւ և անսիրտ արքան ոչնչի առաջ կանգ չէր առնում, որպէսզի բռնակալէր և իւր քմահաճ կամայականութեան ենթարկէր իւր հպատակների բարոյական և ֆիզիքական ոյժերը։ Հոգևորականութեան հետ սերտ դաշն կապելով, նա վերացրեց նանտի հրովարտակը, բողոքականներին յանձնեց կատաղի զինուորների ձեռքը և վերսկսեց կրօնական բարբարոս հալածանքները, որոնք Փրանսիայի սահմաններից գուրս մղեցին կէս միլիօն աշխատասէր ժողովուրդ։ Սա ծանրաբեռնեց ժողովուրդը սոսկալի հարկերով, իսկում էր նրանցից տասնեակ հազարաւոր երիտասարդներ իւր դօքքի համար և ամենաանմիտ ձեռվ

էր վատնում պետական դրամները: Ինչ վերաբերում է գրականութեան՝ պէտք է ասել, որ իւր հոգանաւորութեամբ նա ձնշում էր այս: Գրագէտներին իրու վարձատրութիւն սահմանելով թոշակներ, նպաստներ, պաշտօններ և տիտղոսներ, նա նպաստում էր գրականութիւնը արհեստի հաւասարեցնելուն կամ դարձնում էր գործիք շահախնդիր նպատակներն իրազործելու: Հեղինակները դաշն էին կալում պետական գանձարանի հետ և հասարակութիւնը սովորում էր յարգանքով նայել միմիայն այն գրուածքներին, որոնք կառավարութեան կողմից վկայագրուած էին: Դըժբաղաբար այս կործանիչ սիստեմը ֆրանսիայում տիրապետում էր կէս դարու ընթացքում և թուլացրեց մինչև անգամ գիտութեան բարձր ճիւղերի նախկին յաջողութիւնը, որոնք սկսեցին զարգանալ Ռըշելի և Մազարինիի ժամանակներից սկսած: 1661 թուրի Լիւդովիկոս ԽIV-րդի իշխանութեան սկզբից և մինչև նրա մահը, 1715 թուրին, ֆրանսիական գրականութիւնը գիտութեան ոչ մի ճիւղի մէջ չէր ներկայացնում ոչինչ ինքնուրոյն, նոր, բացի գեղարուեստի ճիւղից՝ նկարչութիւնից, ճարտարապետութիւնից և պօէզիայից: Նշանաւոր մտածողներ՝ Դէկարտը, Պասկալը, Ֆերմանտը, Հասսէնդի և Մէրսէնը, որոնց հեղինակութիւններով են բնորոշում յաճախ այս շըջանը, աշխատում էին այն ժամանակ, երբ ալքան դեռ փոքր էր որող աղդեցութիւն ունենալ: Միւս մտածողներն ու հնարագէտները, ինչպէս օրինակ, աստղաբաշխ կառավինի, Ռեմեր և ուրիշները, օտարերկրացի էին: Բնախօսութեան, մարմնակագմութեան և բժշկականութեան մէջ ֆրանսիան մինչև Լիւդովիկոս ԽIV-րդը ստեղծեց յայտնի գիտնականների երկար շարք՝ Պեկկէ, որը

գտաւ կաթնաբեր վտառները (lactifére), Ֆերնել, Ժուբեր, Ամբրուազ Պարէ և Բայյիւ: Իսկ Լիւդովիկոսի իշխանութեան ժամանակ այս գիտնականները չունէին ոչ մի արժանի յետնորդ, մինչդեռ նոյն ժամանակ Անգլիայում Սիդէնհամը բարեփոխեց ախտաբարուժութիւնը, իսկ Գլիսոնը՝ բնախօսութիւնը, Նոյնը պէտք է ասել կենդանաբանութեան, քիմիայի և բուսաբանութեան մասին, որոնք ֆրանսիայի կատարեալ անկման ժամանակ առանձին ուժեղ կերպով զարգանում էին Անգլիայում: — Այս են խնամակալութեան սիստեմի հետևանքները, որի գործադրութիւնը կը կնուեց երեք անգամ! Օգոստոսի, Լեոն Հ-րդի և Լիւդովիկոս ԽIV-րդի շրջաններում: Վերջինի մահուան ըոպէին հազիւ թէ կարելի լինէր մատնանշել ֆրանսիայում գէթ մի յայտնի հեղինակ կամ նկարիչ: Եւրօպական հոչակ ունեցող մարդկանց մեծամասնութիւնը մեռաւ գեռ մինչև Լիւդովիկոսի իշխանութեան երկրորդ կէսը, և կարելի է ասել, որ այս արքան իւր ժողովրդի մտաւոր զարգացումից աւելի ասլեց: Խնամակալութեան այս սիստեմի քաղաքական և սօցիալական հետևանքներն էին տաղանդաւոր մարդկանց կատարեալ այլասերում և կառավարութեան բոլոր ճիւղերում բարձրագոչ զեղծուժներ, բարոյական անկում, ձորտութիւն և ժողովրդի աղքատութիւն, արտաքին վտանգներ ու արտաքին յաղթութիւնները և իշխանութեան կատարեալ քայլայում:

Ժ.Բ.

Խնամակալական ռէստեմի դէմ ըէտակցիան և ֆրանսիական յեղափոխութեան նախապատրաստութիւնը—Անգլիական գրականութեան ազդեցութիւնը Ֆրանսիայի մտաւոր զարդացման վրայ—Հեղինակների հալածանքը Փրանսիական կառավարութեան կողմց—Պատճառներ՝ թէ ինչու հեղինակները առաջ յարձակում էին հոգեռականութեան և ոչ թէ իշխանութեան վրայ—Յարձակում քրիստոնէութեան վրայ:

Լիւդովիկոս XIX-րդի մահը վերջ դրեց կառավարական բռնակալութեան և այս վայրկեանից Ֆրանսիան մտաւոր զարդացման նոր շրջան մտաւ: Սկզբում, ճշմարիտ է, Փրանսիացիների մեծամասնութիւնը, կեղծաւորութեան դիմակը վայր ձգելով, անձնատուր եղաւ կոպիտ բարքերի ապականութեան, մեծաքանակ ընկած ամբոխից աչքի էին ընկնում մի քանի երիտասարդ մարդիկ, որոնք բարձրանում էին զարդացման ընդհանուր մակերեսոյթից և ձգտում էին դէպի ազատութեան իսկական գաղափարի իրագործումը: Այս մարդիկ առաջին անգամ ուշադրութիւն դարձրին անգլիական քաղաքակրթութեան մեծ յառաջադիմութեան վրայ, որը կատարուել էր Փրանսիական ժողովրդի 54 տարուայ լետարգիայի ժամանակ: Այդ ժամանակից երկու սերնդի շրջանում չկար ոչ մի փոքրի շատէ յայտնի Փրանսիացի, որ չըյաճախէր Անգլիան կամ չսովորէր անգլիական լեզուն: իսկ շատ Փրանսիացի մտածողներ լուրջ ուսումնասիրեցին անգլիական գրականութիւնը և այնտեղից վերցրին իրենց գործունէութեան համար ղեկավարող սկզբունքներ: Վօլտէրը,

Մօնտըսկիօն, Բիւֆֆօնը, Դիզրօն, Հելվեցիոսը, Քօյէն, Լը-բլանը, Հօլըախը՝ և ուրիշները ծանօթացրին Գրանսիացիներին անգլիական նշանաւոր հեղինակութիւնների հետ, որոնք ապագայում նրանց ինքնուրոյն գործերի հիմք ծառայեցին: Ճիշտ նոյնպէս Գրանսիական յեղափոխութեան առաջնակարգ գործիչները, ինչպէս օրինակ՝ Կարրան, Դիլմուրըն, Լանտէնը, Կամիլ Դէմուլէնը, Մարատը, Միքարօն, Մունիեն, Լը-Բրէնը, Բրիսոօն, Կօնդօրուէն, տիկին Ռոլանը և ուրիշները լաւ իւրացըրին անգլիական լեզուն և ուսումնասիրեցին Անգլիայի գրականութիւնը, հասարակական կեանքը և պետական կազմը, մինչև անգամ Օրլէանի հեցողը, երբ յաճախնց Անգլիան, մեղմացըրեց իւր արխտոկրատիական հպարտութիւնը և իւր վերաբերմունքը դէպի ժողովուրդ և դէպի իրանից ցածր անձերը: Այսպիսի Անգլիան տուեց քաղաքական ազատութեան առողջին դասերը նախ Ֆրանսիային և ապա նրա միջոցով և ուրիշ եւրոպական պետութիւններին: Ֆրանսիական քաղաքակրթութեան վերածնութեան բնական հիտեանքը էր ազատամիտ և պահպանողական սկզբունքների ընդհարումը կամ պետական անձանց և գրականութեան ներկայացուցիչների մէջ կոիւր: Նախընթաց իշխանութեան ողով տոգորուած կառավարութիւնը ի հարկէ չէր կարող հաշտուել անգլիական ազատ վարդապետութիւնների հետ և ամեն միջոց գործէր զնում Ֆրանսիայում նրանց զարդացումը ոչնչացնելու համար: Այս պատճառով Լիւդովիկոս XIX-րդի մահից յետոյ 70 տարուայ ընթացքում Փրանսիական բոլոր հեղինակների գէթ իննը տասերորդ մասը կառավարութեան կողմից անպատուած էին և նրանցից միհամասնութիւնը ենթարկուեց բանտարկութեան:

Վօլտէրը երեք անգամ բանտարկուած էր Բաստիլիայի մէջ, երկու անգամ անպատճառ և հրապարակով ծեծուած մեծաքանակ բարձրաստիճան անդործներից մէկի՝ ասպետ դր-Ռոգան Շարօի ձեռքով և արտաքսուած էր Ֆրանսուիայից, Նրա հեղինակութիւնները ենթարկում էին ոչ պակաս ցաւալի վիճակի, Նրա առաջին պատմական երկը Կարլոս Խլ-րդի մասին և այն գիրքը, որով նա ուզում էր ծանօթացնել Փրանսիացիներին նիւտօնի գիւտերի հետ, արգելուած էին, իսկ նրա «Փիլիսոփայական նամակները» հրկիզուած դահճի ձեռքով: Ռուսան արտաքսուած էր Ֆրանսիայից, իսկ նրա հեղինակութիւնները այրուած, Հելվեցիոսը ստիպուած էր պաշտօնապէս հրաժարուել իւր «De l'Esprit» տրակտատից, որը հրապարակով այրուած էր, Բիւֆֆօնը նոյնպէս ստիպուած էր հրաժարուել մի քանի աստուածաբանական հայեցքներից. Դը-Ֆօրժը, որը մեղանչել էր միմիայն նորանով, որ զրել էր անզլիական գահի թեկնածուի ձերբակալութեան դէմ, երեք տարով բանտարկուած էր զդեսկի բանտում, որը ունէր միմիայն 8 խորանարդ ոտնաշափ: «Mercure»-ի հրատարակիչ Մարմոնտէլը բանտարկուած էր Բաստիլիայում և զրկուած էր այդ թերթը շարունակելու իրաւունքից միմիայն նրա համար, որ չհամաձայնուեց յայտնել Հերցոգ դ'Էսմոնի մասին հնարած երգիծաբանութեան հեղինակի անունը: Դիզրօն նոյնպէս ենթարկուեց վրդովեցուցիչ հալածանքների: Նրա առաջին զրուածքը այրուած էր գահճի ձեռքով, իսկ միւս զրուածքի համար, ուր նա ապացուցանում էր բաւական հիմնաւոր ճշշմարտութիւն թէ՝ ի ծնէ կոյրերը ունին ուրիշ մտաւոր կաղմուածք, քան մարդիկ, որոնք տեսողութիւն ունին, նա ենթարկուեց բանտարկութեան վենսէնի բանտում:

Վերջապէս խիստ բնորոշ են այն փաստերը, որոնք ցոյց են տալիս, որ կառավարութիւնը չէր քաշւում ունակոխ անել մասնաւոր անձանց իրաւունքները յօդուտ ազգեցիկ մարդկանց: Ահա մի վրդովեցուցիչ օրինակ. Սականեան Մօրիցը սիրահարուած էր Շանտիլիը գերասանուում վրայ, իսկ վերջինս արհամարհում էր նրա սէրը և ամուսնացաւ Թավար գրագէտի հետ: Այս բանը խիստ յուզեց Մօրիցին և նա կարողացաւ ստանալ lettore de cachet, որով Թավարը ստիպւում էր տալ նրան իւր օրինական կնոջը... Դեռ 9 տարի յեղափոխութիւնից առաջ կառավարութիւնը շարունակում էր զարգացնել իւր սոսկալի սիստեմը մինչև աղաղակող կամայականութեան արտայայտութիւնը:

1767 թուին արգելուած էր հրատարակել ամեն տեսակ գրուածքներ կառավարչական հարցերի վերաբերմամբ. Երեք տարի յետոյ յայտարարուած էր, որ հակակառավարչական գրուածքների հեղինակները մահուան պատժի կենթարկուեն: Վերջապէս մի վարիչ մինչև անգամ առաջարկում էր բոլորովին ոչընչացնել բոլոր հրատարակիչներին և արգելել կառավարութեան կողմից չարտօնագրած գրուածքների տպագրութիւնը: Ժողովրդի մտքերն ու կրքերը հասցըին յուզման վերին աստիճանի հասցնող՝ բոլոր մատնանշած այլանդակ բոնաւոր իրերի գրութեան. որա մէջ էին բովանդակում ֆրանսիական մեծ յեղափոխութեան առաջին պատճառները: Բայց անհրաժեշտ է առանձին քնննալ էլի մի կարեոր հանգամանք, որը պատրաստեց այս հսկայական դէպքը—դա քրիստոնէութեան դէմ խաչակիր պատերազմն էր, որը սկսուեց շատ աւելի վաղ, քան քաղաքական բռնակալութեան դէմ շարժումը: Վերը արդէն լուսաբանած էին այն

մեծաքանակ պատմական փաստերից աւելի աչքի ընկնողները, որոնց ազգեցութեամբ ֆրանսիացիք վաղուց հաւատարձական զգացում և պատկառանք էին տածում դէպի իրենց արքաները, որոնք զարդարուում էին բարձրահնչիւն վեհապանծ և գովասանական անուններով «հեղ», «սուրբ», «արդարադատ», «մեծ», «առատ» և այլն. այս խորը արմատացած զգացումը չէր կարող շատ հեշտ փոխուել: Ֆրանսիացիք սովորեն տեսնելածերտ կապ ժողովրդի փառքի և արքայի հըռչակի մէջ և այս սովորութիւնը դժուար էր միանգամից արմատախիլ անել, մանաւանդ ազատ սկզբունքների վրայ վերեկից շարունակուող պարբերական ձնշումի ժամանակ. փոխարէնը սանձարձակ և երես առած հոգեորականութեան համար, որը կորցրել էր իւր նախկին քաղաքական ազգեցութիւնը, վերջապէս հասաւ ժամանակը, երբ նա պէտք է պատժուէր իւր երկար դարերի բանակալութեան համար, որի մասին ժողովուրդը շարունակում էր ունենալ թարմ և ծանր իշխողութիւններ: Այս թէ ինչու յեղափոխական գրականութիւնը գերադասում էր սկզբում պայքար մղել հոգեոր և ոչ աշխարհիկ իշխանութեան դէմ: Իսկ հասարակութեան այն տրամադրութեան ժամանակ հոգեորականութեան դէմ պայքարից մինչև կրօնի դէմ պայքարը միմիայն մի քայլ էր: Ժողովուրդը դեռ չէր հասել կրօնի և եկեղեցական իշխանութեան տարբերութեան խորը գիտակցութեան, ընդհակառակը նա սովորել էր այս երկու հասկացողութիւնները նմանեցնել, խառնել հոգեորականութեան և կրօնի շահերը և այս պատճառով, հարուածելով ձևը—հոգեորականութիւնը—նա աշխատում էր խախտել և նրա բովանդակութիւնը—քրիստոնէական սկզբունքները: Կառավարութիւնը, որ նախատեսում էր վտանգը, ի զուր էր աշխատում փո-

խել իւր քաղաքականութիւնը, ինքն էր աշխատում թուլացնել հոգեորականութեան ազգեցութիւնը և ոչնչացնել եղուիթների ոյժը, իրեն էր մօտեցնում բարենորոգումների կողմակիցներին, ինչպէս օրինակ՝ Տիւրքօխն և Սեկկերին, խոստանում էր հաւասարեցնել տուրքերը և վերացնել մի քանի ստորացնող օրէնքներ, հրավիրեց պետական պաշտօնհաներին, որ չէին ժողովուել 170 տարուայ ընթացքում և այլն: Փոխադարձ համաձայնութեան հնարաւորութիւնը ոչնչացաւ և վրայ հանող փոթորիկը պէտք է անխուսափելի կերպով պայթէր:

ԺԳ.

Պատմական գրականութիւնը Ֆրանսիայում XVII-րդ դարու վերջը մինչև XVIII-րդ դարու վերջը:—Պատմագրութեան սիստեմի պարբերական բարելաւումը:—Հակառակ շարժում և փոփովիկոս XIV-ի ժամանակ:—Օդիժը, Բօսսիէտի, Վոլտերի, Մօնտեսքիօի և Տիւրքօի հեղինակութիւնները:

Ֆրանսիայի մտաւոր շարժման վերածնութեան հետ միասին անհրաժեշտ է քննել և այն փոփոխութիւնները, որոնց ենթարկուեցին պատմագրական հղանակները այդ շարժման ազգեցութեան տակ: Համարեամինչև XVII-րդ դարու վերջը կամ մինչև Դիւ-Գայլլանի «Փրանսիական թագաւորների պատմութեան» հրատարակուելը, Ֆրանսիան ոչ մի հեղինակ չունէր, որը քննական կերպով վերաբերուէր կուտակուած ըն-

դարձակ և բազմազան պատմական նիւթերին: Մինչև
անգամ Դիւ-Գայլանը, որը իւր գրուածքը հրատա-
րակեց 1576 թուին և նշանաւոր պատմաբանի հոչակ
ստացաւ, շատ քիչ ինքնուրոյնութիւն ցոյց տուեց: Նա
օգտում էր այնպիսի գրուածքներով, ինչպէս օրինակ
իտալացի Պողոս Էմիլիի չնչին կօմպիլեացիաից, որը 60
տարի նրանից առաջ յայտարարում էր աշխարհին ա-
մենաաներեակայելի անհեթեթութիւններ և ինը մին-
չև անգամ սկսում է իւր պատմութիւնը չեղած ֆա-
րամօնի խորհրդի մասին անմիտ պատմուածքով: Մի-
միայն 1588 թուին լոյս տեսաւ Միշէլ Մօնտէնի հըո-
չակաւոր գրուածքը, որը սկեպտիկ ուղղութեան առա-
ջին արտայայտութիւնն էր: Մօնտէնից անմիջապէս
յետոյ հրապարակ եկան իրենց պատմական գործերով
Դը-Տու և Սիւլլին և սկեպտիկ ողին սկսեց արմատա-
կան կերպով ագդել պատմական հայեցակէտերի
վրայ: Դեռ 1597 թուին Սերը առաջինը մտցրեց
գէպքերի ժամանակագրական ձեռվ արձանագրելու
հղանակի գործածութիւնը: 1621 թուին Սցիպիօ
Դիւպլօն հրատարակեց իւր ֆրանսիայի պատմու-
թիւնը, ուր նա առաջինը պատմական փաստերը
հաստատում է աղբիւրներ մատնանշելով: 1599 թուից
սկսած լա-Պօպելիներ, Դը-Միւրի, Թօմբերվիլ և Բերո
պատմաբանները բացարձակ կերպով մերժում են հին
ժամանակներից կրկնուող ֆրանսիական ազգի ֆրանկ
անունով մէկից ծագելու մասին առասպելները, որը իրը
եկել է Գալիա Տրօյի անկումից յետոյ: Վերջապէս Մե-
գերէի «Փրանսիական պատմութեան» մէջ, որ լոյս աե-
սաւ 1643 և 1651 թուականներին, արտայայտում
է, մի կողմից, հեղինակի կատարեալ թերահաւատու-
թիւնը գէպի անբնական գէպքեր և ձգտում պատուել
արքայական իշխանութեան սնութիապաշտ ստրկահո-

գութիւնից և միւս կողմից ժողովրդների և ոչ իշխող-
ների պատմութիւնը հետաքննելու ցանկութիւնը: Ինչ-
պէս մենք արդէն գիտենք, Լիւլովիկոս ԽՆ-րդի իշ-
խանութեան ժամանակ, դժբաղդաբար, ֆրանսիական
քաղաքակարթութեան զարգացումը յանկարծակի յետ
էր մղուած: Այս իշխողի հովանաւորող սիստեմը տա-
րածուեց նաև պատմագրութեան վրայ և այստեղ ևս
առաջ բերեց նոյն ցաւալի արդիւնքները, որը մենք
նկատեցինք գիտութեան ուրիշ ճիւղերում: Ահա մի
քանի աչքի ընկնող փաստեր: Մեզերին իւր կեանքի
վերջը պետական գանձարանից ստանում էր 4,000
ֆրանք թոշակ: Բայց երբ նա արտայայտեց անկաշառ
աղնութիւն և կառավարութեան ցանկութեան նպաս-
տել չցանկացաւ, նա նախ զբկուած էր թոշակի կէս
և ապա ամբողջ գումարից: Ֆենելօնը, որ Լիւլովիկոս
ԽՆ-րդի թուան գաստիարակի պաշտօնն էր վարում,
պալատից հեռացրած էր այն պատճառով, որ նա զբեց
յայտնի «Թելեմակ» վէտը, ուր արքան տեսնում
էր ինչ որ ակնարկ կառավարութեան գործունէ-
ութեան վրայ: Լիւլովիկոս ԽՆ-րդը մեծ պարգև
ու թոշակ նշանակեց երեք հեղինակներին և յանձ-
նեց նրանց զրել մի պատմութիւն, որը պէտք է
յաւերժացնէր իւր փառքը, բայց զբանցից առաջինը՝
աբբահայր Պրիմին չհաճոյացաւ արքային և Բաստիլիա
ընկաւ, իսկ միւս երկուսը՝ Ռասինն ու Բուլայօն թոշակ
ստացան, բայց ոչինչ չգրեցին: Մի ուրիշը՝ անգլիացի
հեղինակ Բօրնէտը հրաժարուեց զրաւիչ առաջարկից
խօսակցել արքայի հետ և նրա գործունէութեան պատ-
մութիւնը զրել—Հովանաւորող կամ խնամակալական
սիստեմի անխուսափելի հետևանքն էր մի շարք ան-
հանձար և սարկամիտ պատմաբանների երեան զալը,
ինչպէս օրինակ Բուլէն Վիլդէն, Դանիէլը, Մէմբուրը,

Վարիլին, Վերտօն և այլն: Մեզերէից մինչև XVIII-րդ դարու սկիզբը ֆրանսիայի պատմական գրականութեան անկման կատարեալ պատկերը տալու համար բաւական է քննել այդ շրջանի երկու ամենից աչքի ընկնող պատմաբանների՝ հնախոյզ Օդիժը և աստուածարան Բոսիւէտի հեղինակութիւնները: Օդիժը ի գրուածքը տոգորուած է զարմանալի թեթեամտութեամբ և սարկահոգութեան ոգով դէպի այն ամէնը, ինչ սահմանուած է հոգեորականութիւնից և բարձրագոյն գըռնից: Այս հեղինակութեան մէջ, ի միջի այլօց, պատմում է, որ Զևսը, Պլուտոնը և Նեպտոնը Գալլիայի արքաներ էին, որ Գալլիան սկզբնաւորող Գալլը ինքը նոյն էր, որ սկիթացիք և անգլիացիք ֆրանսիայի գաղութներ էին կազմում, որ անտիքրիստը (նեռը) կզայ հէնց այն ժամանակ, երբ ֆրանսիական պետութիւնը կործանուած կլինի և այլն: Բոսիւէտը անկասկած մեծ հանճար էր, բայց նա նոյնպէս չկարողացաւ ժամանակի կոպիտ սնոտիապաշտութիւնից անմասն մնալ: Իւր պատմական աշխատութիւնների մէջ նա անպայման հաւատով է վերաբերում դէպի այն յերիւրանքները, որոնք միշտ ընդունուել են հոգեորականութիւնից: Նա բոլորովին չի կասկածում ճնագոյն պատմական դէպքերի ծառութեան և մինչև անգամ աշխատում է արձանագրել այդ դէպքերը խիստ ժամանակական կարգով: Նա շատ է զբաղւում երպական ժողովրդով, որը նա համարում է ընտրած, շատ քիչ է խօսում այդ ժողովրդի նախորդների՝ պարսիկների և եղիպատացիների—մասին և բոլորովին չի յիշում ինդուի և Գանգէսի մէջտեղ բնակուող մեծ ցեղի մասին, որը ստեղծեց Ալէքսանդրեան շկոլայի հիմք դարձած փիլիսոփայութիւնը: Նա ոչինչ չի ասում ափրիկական ձեի պլատօնական փիլիսոփայութեան քրիստո-

նէութեան վրայ ունեցած ազդեցութեան մասին, արհամարհանքով է վերաբերում մահմեդականութեան, ինչպէս անտանելի աղանդի և աւելորդ է համարում Մահմէդի մասին երկար խօսել: մինչդեռ նա առանձին ուշագրութեամբ և յարգանքով է կանգ առնում Տուրի հայիսկոպոս Մարտէնի վրայ, որին համարում է մեծ մարդ և որի ամենամեծ ծառայութիւնը նրանումն էր կայանում, որ նա մի ինչ որ վանք հիմնեց: Միւս կողմից նա խիստ շլացած էր իւր հոգետորական արուեստի մեծ յաջողութեամբ և իւր վսեմութեան գիտուկցութեամբ: Այս պատճառով նա խորը արհամարհանքով էր վերաբերում դէպի այն ամենը, ինչ որ արտայայտում էր ինքնուրոյնութիւն և մտքի վստահութիւն: Նա արհամարհում էր մարդկային խելքը և գերբնական միջամտութեան մեծ նշանակութիւն էր տալիս: Նա պատերազմական ընդունակութիւնները գերադասում էր մտաւոր ընդունակութիւններին և ստրկահոգութիւն էր անում արքայի առաջ, որը հովանաւորում էր նրա դասակարգ՝ հոգեորականութեան:—Թէ որչափ Օդիժը էի և Բոսիւէտի աշխատութիւնները համապատասխանում էին նրանց ժամանակի ոգուն կամ որպիսի յաջողութեամբ էին օգտագում, իհարկէ դժուար է ձիշտ որոշել: Բայց դժուար թէ կարելի լինի կասկածել, որ նրանց հրապուրիչ պատմուածքները և վարդապետութիւնները շոյում էին ժողովրդի ազգային ինքնասիրութեանը, մասնաւանդ որ ժողովրդի հայեացքների մէջ ըէակցիայի առաջին նշանները սկսեցին արտայայտուել միմիայն այս պատմաբաններից յետոյ:

Լիւրովիկոս XIV-րդի իշխանութեան վերջը հասունացած շարժման գլխաւոր մօմենտները նկատելու համար մենք կանգ կառնենք ամենաբնորոշ և աչքի ընկնող փաստերի վրայ: Նախ և առաջ համեմատենք Վոլ-

տէրի և Բօսսիւէտի աշխատութիւնները։ Մինչդեռ Բօսսիւէտը ամբողջովին յափշտակուած էր հեկեղեցական հեղինակաւորութիւնների ուսումնասիրութեամբ և ատելութեամբ էր վերաբերում դէպի մտքի ինքնուրոյնութիւնը, Վօլտէրը, ընդհակառակը, արհամարհում էր այն ամենը, ինչոր հետաքրքրում էր Բօսսիւէտին, իւր միտքը զարգացնում էր բազմակողմանի դրական գիտութիւններով և յարգանքով էր վերաբերում մարդկային մտքին և սիրով—մարդկութեան։ Այս Վօլտէրի գրական գործունէութեան գլխաւոր հետևող վայրեանները, Կարլոս XII-րդի մասին (1728 թ.) իւր առաջին աշխատութեան մէջ նա անկեղծ և անսահման հճուանքով է խօսում հոչակաւոր բոնակալի մասին և շատ քիչ կարեկցութիւն է արտայայտում դէպի նրա գըժբաղդ հպատակները և դէպի այն ժողովուրդները, որոնց նա ճնշում էր Շվեյցիայից մինչև Տաճկաստան ընդարձակ տարածութեան վրայ։ Փոխարէնը այս աշխատութեան մէջ նա ոչ մի փորձ չի անում գերբնական միջամտութիւն գործ դնելու, որով հրաժարում է հին եղանակներից և սկիզբ է դնում XVIII-րդ դարու պատմական շկոլայի նոր ուղղութեան։ 1752 թուին լոյս տեսաւ նրա նոր աշխատութիւնը «Լիւլովիկոս XII-րդի դարը» վերնագրով։ Վերնագիրն արդէն ցոյց է տալիս, որ նա ըմբռնել է հին մեթոդի անձտութիւնը, որը գործ էր կրել «Կարլոս XII» պատմութեան մէջ, այն է թէ պէտք է գրել ժողովուրդների և ոչ իշխողների պատմութիւնը։ Վօլտէրը ինքը իւր զործի ներածութեան մէջ յայտնում է, որ նա մտադիր է նկարագրել «ոչ թէ առանձին մարդու գործունէութիւնը, այլ մարդկանց ընդհանուր ընթացքը»։ Որ նա կատարեց այս մտադրութիւնը, երեւմ է այն բանից, որ այս գործը բովանդակում է իւր մէջ՝ մի գլուխ վաճա-

ռականութեան և ներքին կառավարութեան մասին, մի գլուխ դրամների, մի գլուխ—գիտութիւնների պատմութեան և երեք գլուխ գեղեցիկ արուեստների դարձացման մասին։ Վերջապէս, այս աշխատութեան լոյս տեսնելուց չորս տարի յետոյ լոյս տեսաւ նրա նշանաւոր գործը՝ ցեղերի իրաւոնքների, սովորոյթների և բնոյթի մասին։ Այս աշխատութեան մէջ նա վերջնականապէս հրաժարուեց բարձրագոյն քաղաքական հեղինակաւորութեան առաջ խոնարհուելուց, որը բնորոշում էր նրա երիտասարդական երկերը։ Այսպիսով խորտակելով պատմագրութեան հին ձեւերը, Վօլտէրը իւր նոր ուղղութիւնը ազդեց ինչպէս իւր նշանաւոր ժամանակակից՝ Մօնտեսքիօին և Տիւրգօին, նոյնպէս և երկրորդական պատմաբաններին, օրինակ՝ Մալէ, Մարլի Վէլլի և Վիլլարէ, Դիւլլո և Էնօին։ Այս բոլոր հեղինակները քիչ էին զբաղւում վարչէններին և նրանց տան բնորոշելով ու պատերազմների նկարագրութեամբ, իսկ իրենց գործերը նուիրում էին գլխաւորապէս մարդկութեան և քաղաքակրթութեան ընդհանուր զարգացման։ Ինքն լստինքեան պարզ է, որ այս ուամլապետական ուղղութիւնը պատմութեան մէջ այն ընդհանուր շարժման արտացօլումն էր, որը պատրաստեց մեծ յեղափոխութիւնը։ Բայց Վօլտէրի ամբողջական բարակտերիստիկայի համար, մենք պէտք է աւելացնենք, որ նա չէր սիրում առանձին փաստեր ուսումնասիրել, երբ նրանք ընդհանուր սկզբունքի չէին հասցնում։ իրու օրինակ ծառայում են նրա թատերագրական հեղինակութիւնները, որոնց մէջնա ոչ այնքան անձնական կրքերն է բնորոշում, որքան ամբողջ շըրջանի ոգին, որ նա առաջինը սկիզբ դրեց ընդհանուր պատճառների փիլիսոփայական գնահատութեան և աւատական համակարգութեանը, որ նա առաջինը առա-

ջարկեց համաշխարհային առևտուրի ազատութիւնը, և առաջինը մատնանշեց ազգաբնակութեան աճելու և ապրուստի միջոցների կարեոր տարբերութիւնը, որ նա առաջինը ոչնչացրեց այն տղայական դարմանքը, որով իրանից առաջ նայում էին միջին դարերի վրայ, որ Լոկի հետ միասին նա ձգտում էր ոչնչացնել դէպի հին հեղինակները ակնածող հակումը և այս նըպատակի համար գործ էր ածումամենից ուժեղ և յարմար դէնք, որպիսին միայն հնարաւոր է անմիտ հայեցքների հետ կոռւելու—խայթիչ ծաղրը. և վերջապէս, որ նա աւելի քան որեէ մէկը աշխատում էր թուլացնել հոգերականութեան և գասականութեան հեղինակաւորութիւնը: Մենք վերը արդէն ասինք, որ Վօլտէրի ուղղութիւնը իւրացը էին նրա ժամանակակիցները. 1734 թուին Մօնտեսքիօն հրատարակեց իւր առաջին աշխատութիւնը, ուր Հոռմի պատմութիւնը վերջապէս հանդէս է գալիս վայելուչ ձեռվ, փաստերի խելացի և գըրական ընդհանրացմամբ: Տամն և չորս տարի յետոյ նա հրատարակեց ուրիշ հոչակաւոր գործը՝ «Օրէնքների ողին», որի մէջ իւր ընդհանրացման եղանակը հասցրեց ընդարձակ չափի: Առհասարակ Մօնտէսքիօի ծառայութիւնը պարունակում է նրա մէջ, որ նա նախ պատմութիւնից գուրս ձգեց բազմաթիւ անհիմն պատմուածքներ և մանր կենսագրական մանրամասնութիւններ, որոնցով լցրած էր պատմութիւնը և երկրորդ՝ մարդկային պատմութեան և այն գիտութիւնների, որոնք զբաղւում են արտաքին աշխարհի երկոյթներով, սերտ կապակցութիւն ցոյց տուեց: Ճիշտ է, Մօնտեսքիօի «օրէնքների ողու» մէջ ժողովրդների աշխարհիկ և քաղաքական օրէնսդրութեան և կլիմայի, հողի և մնունդի բնական կապը պարզելու փորձը կատարեալ յաջողութիւն չունեցաւ. բայց այդ բացատրւում է նրանով, որ նրա

ժամանակ արտաքին աշխարհի մասին մի քանի գիտութիւններ գտնւում էին անզարդացած վիճակի մէջ, իսկ մի քանիսը, ինչպէս օրինակ՝ քաղաքական տնտեսութիւնը և վիճակագրութիւնը բոլորովին գոյութիւն չունէին:— Ինչ վերաբերում է Տիւրգոխն, որի մասին վերը նոյնապէս յիշուած էր, նա իւր նշանաւոր ճառերի մէջ նոյնապէս հետեւում է Վօլտէրի և Մօնտեսքիօի եղանակին, խուսափում էր կենսագրական, մանրամասնութիւնները և կենդրոնանում էր մարդկութեան ընդհանուր զարգացման վրայ: Առհասարակ այս երեք մեծ հեղինակները ուամկավարական սկզբունքի անզիտակցական շարժողն էին հանդիսանում և իրենց հրապուրիչ իդէալներով նպաստում էին այն ըէակցիային, որը ֆրանսիական ժողովուրդը հասցրեց մեծ յեղափոխութեան:

ԺԴ.

Ֆրանսիական յեղափոխութեան անմիջական պատճառները XVIII-րդ դարու կիսից:—Ֆրանսիայի մտաւոր շարժումը ուղղում է գէպի կառավարութիւն մօտ 1700 թուականը:—Քաղաքական տնտեսութեան սկզբնաւորումը:—Հոգեորսականութեան իրաւոնքների սահմանափակումը:—Կողութաների ուխտի ոչնչացումը:—Կալվինականութիւն, յանսենականութիւն և արմինիականութիւն:—անաստածականութեան առաջորդութիւնը:—Հերլեցիոսի և Կոնդիլեակի աշխատութիւնները:—Բնական գիտութիւնների արագ զարգացումը:—ուսմկավարական շարժում:—Ամերիկական ապստամութեան ազգեցութիւնը:

Նախընթաց հատուածի մէջ մենք եկանք այն եղակացութեան, որ XVIII-րդ դարու առաջին կիսում մտաւոր շարժումը ֆրանսիայում ուղղած էր գէպի հոգեորսականութիւնը և բոլորովին անտես էր թողնում քաղաքական զեղծումները:—իսկ նոյն դարու երկրորդ կիսից սկսում է այդ շարժման յեղափոխութեան նախընթաց երկրորդ շրջանը: Մի կողմից՝ կառավարութիւնը լրացնում է եկեղեցու գէմ մտաւոր կոփուը, իսկ գրականութիւնը դադարում է վերջինով զբաղուելուց, միւս կողմից՝ ժամանակի ոգին և մտածողները իրենց թշնամական գործունէութիւնը ուղղում են քաղաքական անկանոնութեան դէմ: Անկարելի է ճիշտ որոշել այդ շարժման սկսուելու ժամանակը, ինչպէս, առհասարակ, անկարելի է և ժամանակագրական ճշտութիւնը ամբողջ պատմական շրջանի ծագման խնդրի մէջ: Բայց ենթադրութեամբ կարելի է իրեն ծագման ժամանակը ընդունել 1750 թուականը, որի շուրջը խմբում են ամենից աչքի ընկնող փաստերը: Այս ժամանակի մօտերքը սկսում է քաղաքա-անտեսա-

կան ուսուցումների անտառելի զարգացումը ֆրանսիայում, որոնք հասարակութեան մէջ մտցնում են վարչական միջամտութեան, օրինակ վաճառականութեան հովանաւորելու ձեռվ—ինսակարութեան գիտակցութիւնը, իսկ 1755 թուից առաջ են բերում ժողովրդի և կառավարութեան մէջ վճռական գժուութիւն: Թէ ինչ ժողովրդականութիւն ունէին այն ժամանակ տնտեսական և գրամական խնդիրները, երկում է այն բանից, որ 1781 թուին Նէկկերի հրատարակած ֆրանսիական գրամների գրութեան մասին տեղեկագիրը առաջին իսկ օրը տարածուեց 6,000 օրինակ, իսկ հետեւեալ օրերը տպագրուում էր շարունակ երկու մեքենայի մէջ: Նոյն ժամանակները լոյս տեսան և Ռուսոի նշանաւոր գրուածքները, որոնք հասարակական կարծիքի վրայ շատ մեծ ազդեցութիւն ունէին: Վերջապէս այն ժամանակներն սկսուեց և կառավարութեան թըշնամական գործունէութիւնը հոգեորսականութեան դէմ: 1749 թուին ժիներալ-քնչի Մաշօն յայտարարեց մի նշանաւոր հրովարտակ, որով առանց կառավարութեան թոյլտութեան արգելուած էր ամեն տեսակ կրօնական ընկերութիւնների կազմակերպութիւնը և եկեղեցական կալուածների անձման վերջ էր գրուած: Մրանից յետոյ նոյն Մաշօն կաթոլիկ հոգեորսականութեան կողմից հալածուող բողոքականների պաշտպանը հանդիսացաւ և եերետիկոսների դէմ օրէնքները սկսուեցին գործ գրուել չեղած մեղմութեամբ: Միենոյն ժամանակ եկեղեցական կառավարութեան մէջ անջատում առաջ եկաւ և կուսակցութիւններից մինը միացաւ կառավարութեան հետ: 1787 թուին Տուլուզի արքեպիսկոպոս Բրիեննը պարլամենտին սերկայացրեց թագաւորական հրաման, որով բողոքականներին բաշխուած էին բոլոր քաղաքացիական իրաւունքները: Վերջապէս

Ֆրանսիայում XVIII-րդ դարու վերջերը զարգացած յանս-սենականութիւնը կառավարութեան միջոցով վճռական հարուած տուեց եղութիւների միաբանութեան։ Այս բանը մի փոքր բացատրութիւն է պահանջում։ Յանսենականութիւնը իւր էութեամբ համապատասխանում է կալվի-նականութեան, իսկ կալվինականութիւնը յանսենականութեան հակադրութիւնն է, կալվինական վարդապետութիւնը չունեւորների համար է և այդ պատճառով նա միշտ չատ հետևողներ ունի ազատ ժողովրդների և դասակարգերի մէջ, որոնք դեմոկրատ ոգով են տոգորուած։ Հարմինականութիւնը, ընդհակառակը—հարուստների համար է և այս պատճառով կենդրոնանում է հոգեուրականութեան և արիստօկրատիայի մէջ։ Առաջին ուսուցումը հաշտում էր աղքատ շրջապատի հետ, ինչու և օգտաէտ էր ժողովրդի համար։ Երկրորդը՝ կապուած էր շքեղութեան և փայլի հետ, ինչու և աւելի շահաւէտ էր հոգեորականութեան և համապատասխան արիստօկրատիայի ոգու և ճաշակի, որը բացի այդ իւր բաղդը միացնում էր հոգեորականութեան վիճակի հետ։ Կալվինականութիւնը աւելի է նրանց առաջարկութիւններին, իսկ հարմինեանականութիւնը—արուեստներին։ Սա գլխաւորապէս բացատրւում է նրանով, որ կալվինականութիւնը կրօնական խընդիրներում մարդուն սովորցնում է ինքնուրոյն մըտածելակերպի և ազատում է նրան հեղինակաւորութիւններին երկրպագելուց։ Իսկ, ինչպէս ասինք, կալվինականութիւնն համապատասխան յանսենիզմը Ֆրանսիական եկեղեցում վերածնուեց XVIII-րդ դարում և սրա հետ սկսեց զարգանալ Ֆրանսիայում դեմոկրատական ազատ ոգին։ XVIII-րդ դարու կիսին յանսենականները պարլամենտում կազմեցին բաւական ուժեղ կուսակցութիւն։ մօտաւորապէս այս ժամանակ-

ները այս կուսակցութեան յարեցին կառավարչական բարձր ներկայացուցիչները, ինչպէս օրինակ՝ Մաշօ, Շուպէլ, Լավերդի, Տէրրէ, Ժիլբեր, Դը-Վուազիէն, Շօվելէն, Պելէտը, Դը-Սէն-Ֆարֆօ և Կա Միւտ։ Նեկերը խիստ կալվինական էր, Ռուսոն ծնուել էր ժընկում և իւր զաղափարները վերցրեց կալվինական աստուածաբանութեան այդ մեծ որբանից։ Վերջապէս, ինչպէս ասում են, Տիւրգօն նոյնպէս յանսենականների կողմիակից էր։—Հոգեորականութիւնը անկարող էր ինըը դիմագրելու հակառակ վարդապետութեան շատ արագ զարգացման և հզութիւնների գոյութեան վերջին ըովէնները հաշուած էին։ 1761 թուականին եղուիթիւններին արգելուած էր նոր անդամներ ընդունել իրենց միաբանութիւնը, նրանց ժողովները փակուած էին, իսկ նրանց նշանաւոր գրուածքներից շատերը այրուած էին դահճի ձեռքով։ 1762 թուին հրովարտակ էր հրատարակուած, որով եզուիթիւնները գատապարտուած էին բացակայութեամբ, նրանց գոյքերը նշանակուած էր վաճառել, նրանց միաբանութիւնը գրաւուած էր և յայտարարուած էր, որ նրանք ոչ մի բարեկարգ պետութեան մէջ տանելի չեն կարող լինել։ Եզուիթիւնների անկումը աստուածաբանական ոգուն վերջնական հարուածը տուեց և հոգեորականութեան նշանակութիւնը արագ կիրպով թուլացաւ։ Բաւական է ասել, որ Մասիլիօնից յետոյ, որը մեռաւ 1772 թուին, Ֆրանսիական հոգեորականութիւնը իւր մէջ չունէր ոչ մի աչքի ընկնող մտածող, հոետոր կամ հեղինակ։ Նրանք զըրկուեցին իրենց բոլոր գործունեայ զեկավարներից, կառավարութեան վատահութիւնից և ժողովրդի յարգանքից։ Հոգեուլականութեան բաղդից Փրանսիական մտածողները նրանց հանգիստ էին թողնում XVIII-րդ դարու երկրորդ կիսին, որովհետեւ նրանք իրենց հակառակ

գործունէութիւնը ուղղում էին դէպի կառավարութիւնը, որը լրացրեց նրանց հին սպայքարը եկեղեցու դէմ:

Առասարակ պէտք է ի նկատի ունենալ, որ XVIII դարու երկրորդ կիսին ֆրանսիական մտածողները համարեա բացառապէս կենտրոնացան արտաքին երկոյթների ուսումնասիրութեան վրայ և այս եղանակով անսատուածականութիւն ստեղծեցին, որ ծայրահեղութեան հասաւ և բաւական ուժեղացրին քաղաքական շարժումը: Անսատուածականութիւնը ամբողջական արտայացութիւն գտաւ նշանաւոր «հանրագիտարանի» մէջ, որը լոյս տիսաւ 1751 թուին, «Բնութեան համակարգութեան» մէջ, 1780 թուին հրատարակած և բացի գրանից այդ վարդապետութիւնը ունէր բազմաթիւ տարածողներ երկրորդական գրողների թւում, ինչպէս օրինակ՝ Դամիլավիլլ, Դէլէյր, Մարշալ, Նըժոն, Տուսեն և բացարձակ կերպով պաշտպանում էր Կոնդորսը, Դ'ալամբեր, Դիգրօ, Հելվեցիոս, Լալանդ, Լապլաս, Միրաբ և Սէն-Լամբերի կողմից: Անսատուածականութեան ամենաաչքի ընկնող ստեղծագործութիւնը Հելվեցիոսի նշանաւոր գործն էր հրատարակած 1758 թուին «De l'Esprit» վերնագրի տակ: Այս աշխատութեան մէջ Հելվեցիոսը բոլորովին նոր գիտական սկզբունքներ է արծարծում՝ որ մարդու և ուրիշ կենդանիների մէջ եղած տարբերութիւնը նրանց արտաքին ձեի տարբերութեան արգիւնք է, որ մարդը երկու ընդունակութիւն ունի՝ տպաւրութիւնը իւրացնելու և յիշողութեան, որոնց արդիւնքն է նրա մտքերը, դատողութիւնը և բոլոր բարոյական սկզբունքները, որ տուաքինութիւնները, արատները, փառասիրութիւնը և բարեկամութիւնը չափում են միմիայն մարդու դէպի բաւականութիւնը ձգտումով, որ բարին սիրել միմիայն նրա համար, որ նա բարի է, նոյնպէս անկարելի է,

ինչպէս և չարը սիրելն է անկարելի իբրև չար և այլն: Այս հայեացքները այնքան ներդաշնակում էին տիրող մտաւոր ուղղութեան հետ, որ Հելվեցիոսին շուտով երոպական մեծ հոչակ տուին, և այս հայեացքների հեղինակաւորութիւնը մանաւանդ Ֆրանսիայում շարունակ ուժեղանում էր: Բայց նոր ժամանակի ողին բնորոշելու համար անհրաժեշտ է մատնանշել և կօնդիլեակի «Traité des Sensations» հեղինակութեան վրայ, որը լոյս տեսաւ Հելվեցիոսի գրքից չորս տարի առաջ: Թէպէտ և այս հեղինակութիւնը ստեղծուած է Լօկկի փիլիսոփայութեան հիմնական սկզբունքի վրայ, բայց և այնպէս կօնդիլեակը, Լօկկի հակառակ, բոլորովին մերժում է բանականութեան ոյժի, ինչպէս մեր մտքերի աղբիւրի, առանձին գոյութիւնը և մեր բոլոր մտածութիւնը և գիտութիւնները առաջ է բերում զգացողութիւնից: բնութիւնը, ասում է կօնդիլեակը, մեր մէջ ամեն ինչի սկիզբն է: Նրան ենք մենք պարտական մեր բոլոր գիտութիւնների համար, միմիայն նրա դասերից ենք մենք սովորում, իսկ մտածողութեան արուեստը պարունակում է այն գործի շարունակելու մէջ, որ մեզնախափել է բնութիւնը:

Արտաքին աշխարհի երկոյթները ուսումնասիրելու մտածողների նոր ձգտման գլխաւոր նշաններն այս էին: XVIII-րդ դարու երկրորդ կիսի գերակուղ գաղափարը սովանդակում էր արտաքին աշխարհի առաւելութիւնները — ներքինի հանդէպ ընդունելում և այս գաղափարի շնորհիւ Ֆրանսիայում այս շըրջանին ընագիտական բոլոր ձիւղերը հարստացան նոր ձշմարտութիւնների աւելի մեծ քանակութեամբ, քան նախընթաց շըրջաններում: Օրինակի համար մենք այսեղ կյիշենք տաքութեան, լոյսի և էլեքտրականութեան թիօրիաների զարգացումն և ու-

սումնասիրութիւնը, որ մեծ յաջողութեամբ կատարեցին Պրեզ, Ֆուրբե, գ'Ալիքար, Կուօմը, Եպինուս, Մալիւս, և Թրէնէլ գիտնականները։ Հանճարեղ գիւտերը՝ քիմիայի շրջանում—Լաւուազըն և ուրիշ շատ գիտնականներ, Երկրագիտութեան մէջ՝ Բիւֆֆոն, Ռուէլ, Դըմարէ, Դոլոմըն և Մօնլոզըն, Դօրենտօն և Կիւվըն։ կենդանաբանութեան մէջ—Կիւվըն և Բիշին, բուսաբանութեան մէջ—Ադանսօն, Դիւգամէլ-դը-Մօնսօ, Դըֆօնտէն և Ժիւսուէ. հանքաբանութեան մէջ—Դը-Լիլ և Դաիւ *):

Այս մեծ մտածողների ընդհանուր ջանքերի շնորհիւ բնական գիտութիւնները հասան զարգացման չեղած բարձրութեան և վառ լոյս սփուեցին մարդու արտաքին կեանքի հետ ունեցած կապի և այս կապից առաջ եկող՝ հասարակական և քաղաքական կենսական երկոյթների վրայ։ Մեծաքանակ և հետաքրքիր գիւտերը հետաքրքրութիւն առաջ բերին, ապա հետամտութիւն և վերջապէս հանրամատչելի ընթերցանութեան պահանջ։ Այն դասախոսութիւնները, որ կարգացւում էին Փարիզի գիտական ժողովներում, սկիզբ դրին այն դասակարգային համերաշխութեան, որը ապա արտայայտուեց ընդհանուր յեղափոխական շարժման մէջ։ Զանազան դասակարգերի մարդիկ, որոնք առաջ արհամարհանքով էին վերաբերում իրար, այժմ՝ ժողովւում էին մի լսարան, ուր նրանց միաւորում էր մի ընդհանուր համակրանք և մի ընդհանուր ձգտում դէ-

*.) Այս հեղինակների մտախն Բօլլը իւր աշխատութեան մէջ տալիս է մանրամասն քննադատութիւն, որ ուռա համառօտողը աւելորդ է համարել առաջ բերել որովհետե հայերէնը պարզ թարգմանութիւն է, մենք ոչ մի փոփոխութիւն չենք մտցնում։

պի գիտութիւն։ Այստեղ տպիտութիւնը գիտութեան առաջ նսեմանում էր, մարդիկ գիտակցում էին դասակարգային նախապաշարումների անմտութիւնը, և արտաքին փայլի ոչնչութիւնը և դէմօկրատական ոգին տիրապետում էր գասակարգային նախապաշարումների վրայ։ Լսարանից այս ուղղութիւնը առաջ էր գնում և արտացոլում էր հասարակական բոլոր խաւերում, բոլոր սովորոյթների, պայմանական քաղաքավարութեան և մարդկանց սովորութիւնների վրայ։ Իրոք ապացոյց վերջինի կարելի է առաջ բերել զգեստների մէջ առաջ նկած փոփոխութիւնը. նախկին շքեղութիւնն ու բազմագանութիւնը համարեա բոլորովին անհետացան, մարդիկ ոկսեցին հագնուել պարզ և համեստ, աւելորդ զարդերը անկրթութեան նշան դարձան. մինչև անգամ շքանշաններն ու աստղերը առանձին խնամքով թագցնւում էին ժողովների ժամանակ։ Ռամկավարական ուղղութեան կատարեալ արտայայտութիւնն էր իհարկէ ակումբների հաստատութիւնը, որոնք մատչելի էին անխափը բոլոր դասակարգերին, բայց որոշ զարգացումով։ Այսպիսով հաւասարութեան ընդհանուր պայման դարձաւ զարգացումը, իսկ անհաւասարութեան բոլոր հին պայմանները արհամարհնում էին։ Փարիզի առաջին ակումբները բացուած էին 1782 թուի մօտերքը, երկու տարի անց նրանք ստացան քաղաքական բնոյթ և այն աստիճան հաստատուեցին, որ կառավարութեան նրանց դէմ գործ դրած միջոցները, ինչպէս օրինակ 1787 թուին գլխաւոր ակումբի փակումը, անզօր դարձան։

Այստեղ վերջանում է այն երկար, դժուար ձանապահնը, որով Փրանսիացիք հասան ամբողջ քաղաքական կարգերի խորակման սոսկալի վայրկեանին, որ ստեղծուած էր բազմագարեան պատմութեամբ և սոսկալի ոճրագործութիւնների երկար շարքին։ Ցեղափո-

խական տարրերը բոլորովին հասունացան: Բազմազան քոնկուող նիւթը սպասում էր միմիայն կայծի, որպէս զի բռնկուէր և այդ կայծը, բոլորովին անսպասելի կերպով ձգած էր հեռաւոր երկրից: Ամերիկացիք տպըստամբեցան անգլիական իշխանութեան դէմ և փայլուն կերպով պահպանեցին իրենց անկախութիւնը: 1776 թուին ամբողջ Եւրոպան կարդաց անմահ ամերիկական հրովարտակը, ուր յայտարարւում էր, որ կառավարութեան նպատակն է՝ ժողովրդի իրաւունքները ապահովել: Նոր հասարակապետութեան յաջողութիւնը Փրանսիացիք ընդունեցին մեծ էնտուզիազմով: Շատերն ովկիանուն անցան, որ մարտնչեն ամերիկական ազատութեան համար և վերադարձան տուն տոգորուած ազատութեան և հաւասարութեան գեմոկրատ գաղափարներով: Այսբոլորից յետոյ Փրանսիացիներին մնում էր հետևել ամերիկացիների օրինակին իրենց սեպհական հայրենիքի մէջ:

ՀԱՏՈՐ ||

Պատմական ակնարկ Խսպանիայի մտաւոր զարդացման VI
դարից մինչև XIX դարի կէսը:—Սուաջին մասում որոշած չոքս
հիմնական սկզբունքները:—Նախապաշտումների զարդացման պատ-
ճառները Խսպանիայում:—Ֆէրգինանդի և Խղարէլլայի, Կարլ V-ի
և Փիլիպպոս II-ի քաղաքականութիւնը:—Խսպանիայի անկումը
XVII դարում և նրա պատճառները:—Օտարացիների կառավարու-
թիւնը և նրանց գործունէութիւնը 1700-ից մինչև 1788 թիւը:—
Կարլ VI-ի ըէակցիան Կարլ III-ի քաղաքականութեան դէմ:—Նոր
փորձեր XIX դարում Խսպանիայի կարգերը բարեկունելու:—Յեղա-
փառութեան ջանքերի ապարդիւնութիւնը, չնայելով ենթադրեալ
բարեյաջող պայմաններին:

Այս աշխատութեան առաջին մասում յայտնի ե-
ղան ամեն մի քաղաքակրթութեան պատմութեան չորս
հիմնական սկզբունքները՝ 1) որ մարդկութեան յառա-
ջաղիմութիւնը կախումն ունի երեսյթների օրէնքների
հետախուզութեան յաջողութիւններից և այս օրէնքնե-
րի տարածման աստիճանից, 2) որ հետախուզութեան
պէտք է կարապետէ յոռետեսութիւնը, որը սկզբում
օգնում է նրան, իսկ յետոյ նրանով իսկ զարգանում.
3) որ այսպիսով կատարուած գիւտերը զօրեղացնում
են մտաւոր ճշմարտութիւնների ազդեցութիւնը և հա-
մեմատարար թուլացնում բարոյական սկզբունքների
ազդեցութիւնը, որոնք աւելի պահպանողական են և
աւելի թոյլ կերպով են զարգանում, քան մտաւորները.
4) որ այս շարժման, հետեաբար և քաղաքակրթութեան
գլխաւոր թշնամին՝ խնամակալութեան սիստէմն է: Երկ-
րորդ հատորը նուիրուած կլինի Խսպանիայի, Շօտլան-

դիայի, Գերմանիայի և Ամերիկայի Միացեալ Նահանգներին, այն սկզբունքները պարզելու նպատակով, ուրոնք բաւականաչափ չզարգացան Անգլիայի պատմութեան մէջ:—Իսպանիան միշտ ունեցել է շատ մօտ նըմանութիւն արևադարձային երկրների հետ, և վերջինների նման բնութիւնից սահմանուած է եղել նախապաշարմունքի բուն լինել, որը ամենից առաջ ներկայանում է որպէս հետևանք բնական անյաջող պատճառների սովի, երկրաշարժների, համաճարակների և ուրիշ վնասակար կլիմայական երևոյթների, որոնք կը բատում են մարդու կեանքի տևողութիւնը և դրդում նրան յաճախ դիմել գերբնական օգնութեան: Այս բոլոր պատճառները ներգործեցին իսպանիայում աւելի մեծ ուժով, քան երոպական ուրիշ որևէ երկրում: Բացի իսպանիայի հիւսիսային ծայրից, գրեթէ ամբողջ թերակղզին զարհուրելի երաշտութեան ենթարկուեց չնորհիւ տար կլիմայի և ուսումնան պակասութեան, որը առաջ էր գալիս այն բանից, որ իսպանիայի գետերի մեծ մասը հոսում են խիստ խորը հովիտներում, իսկ անձրկներ շատ հազուագիւտ են այնտեղ: Երաշտին հետեւում էր սով, իսկ մշտատես սովորն—աւերիչ համաճարակ հիւսնդութիւններ: Վերջապէս, յաճախ քայլայիչ երկրաշարժները անմիջական կերպով էին ազդում բնակչութեան երևակայութեան վրայ և ծնում էին նրա մէջ կոպիտ նախապաշարում: Այս պամանները մահմեդական տիրապետողների դէմ մզուած անդադար պատերազմների հետ միասին ջլատում էին եռանդն ու աշխատանքի տեսականութիւնը, ժողովրդին սովորեցնում էին հովուական կեանքին և ներշնչում էին նրան սէր դէպի արկածները և այն ըոմանական տրամադրութիւնը, որ արտացոլուեց նրա գրականութեան վրայ:—Բայց մարդկանց մի դասի յաջողեց օգուտ քա-

ղել անյաջող հանգամանքների և նրա նախապաշարուած տրամադրութիւնից, որպէս զի տիրապետութիւն ձեռք բերի նրա վրայ: Դա՝ հոգեորականութիւնն էր, որ իւր իշխանութիւնը շատ վաղ ամրապնդեց իսպանիայում, և արդէն առաջին քաղաքական դիպուտածների չնորհիւ, յաջողեցաւ համել այնտեղ անօրինակ հզօրութեան: Հոռվմէական կայսրութեան անկումից յետոյ իսպանիայում մօտ 150 տարի իշխեց վէստգոտների ազգային հաւատը—արիոսեան նշանաւոր հերետիկոսութիւնը: V դարի վերջին ֆրանկները ընդունեցին ուղղահաւատ գաւանութիւն, որ ընդհարում առաջ բերեց նրանց և վեստգոտների մէջ վառուեց կրօնական պատերազմ որը տեսեց համարեա ամբողջ հարիւր տարի: Այս կը որւը, մի կողմից, չափազանց թուլացրեց վէստգոտներին, իսկ միւս կողմից—ամբապնդեց արիական հոգիւորականութեան ոյժը, որը միացաւ արիական արքաների հետ: Այս ժամանակից իսպանիայի հոգեորականութեան ոյժը հետզհետէ մեծացաւ: VI դարի վերջին արիական հոգեորականութեան իշխանութիւնը անցաւ լատիններին, որոնց յաջողեց վէստգոտ արքաներին քրիստոնէութեան գարձնել: Թէ որ աստիճանի աճեց այս դասակարգի հեղինակաւորութիւնը, կարելի է տեսնել այն բանից, որ VII դարի ընթացքում թագաւորները խոնարհում էին եպիսկոպոսների առաջ, որ վերջիններին պատկանում էր արդարադասութեան գործներին միջամտելու իրաւունքը: Որ հերետիկոսները իսպանիայում հալածում էին աւելի մեծ խստութեամբ, քան ուրիշ երկրներում, և որ թագաւորները պարտաւորում էին հանդիսաւոր խոստումով պահպանել կրօնի մաքրութիւնը:—711 թուականին ամբողջ իսպանիան, բացի նրա մի քանի մասերից, գրաւեցին արաբները և իրանց հայրենիքից հալածուած իսպանա-

ցիք յուսահատ կոխւ սկսեցին մղել նրանց դէմ, որ մօտ եօթը դար տեսց. բայց այս պատմական սոսկալի շըջանը, որ ժողովրդի ամբողջ նիւթական և բարոյական ոյժերը սպառեց, այնքան չվնասեց, որքան նպաստեց հոգեորականութեան շահերին: Մահմեդական տիրապետութիւնը ժողովրդին յետին աղքատութեան հասցըեց, աղքատութիւնը տգիտութիւնը առաջ բերեց, իսկ տգիտութիւնը զօրացըեց նախապաշարումը, որով միշտ օգտառում էր հոգեորականութիւնը ինչպէս մի հզօր զէնքով՝ իւր իշխանութիւնը տարածելու համար: Բացի դրանից, պետութեան և եկեղեցու անկախութեան համար մղած տևական պատերազմը պէտք է խիստ մօտեցնէր իրար նրանց շահերի ներկայացուցիչներին: Իսկ երբ, 1492 թուին, քրիստոնեայ տիրապետութիւնը նորից ամրապնդուեց իսպանիայում, այն ժամանակ աստուածաբանական ոգին, այսպէս ասած, արդէն կազմում էր բաղադրիչ տարրը իսպանացիների բնաւորութեան և իշխողների քաղաքականութեան մէջ: Գրենադայի հետ պատերազմը XV դարի վերջը արդիւնք էր իզարէլլայի՝ քրիստոնէական հաւատը տարածելու ձգտման: Ֆէրդինանդն ու իզարէլլան հրէաներին աքսորելու հրովարտակ հրատարակեցին, և իւրանց թագաւորութեան մէջ անհաւատացողներին արձատախիլ անելու համար հաստատուած էր հաւատաշքնութիւն: Կարլոս V-ը, որ յաջորդեց ֆէրդինանդին, նոյն քաղաքականութիւնը պահպանեց: Նրա վարած երեք գլխաւոր պատերազմներից՝ ֆրանսիայի, գերմանական իշխանների և Տաճկաստանի հետ, վերջին երկուսը իսկապէս կրօնական պատերազմներ էին: Բայց թէ մինչև որ աստիճան էր հասնում նրա խստութիւնը, երեսում է այն միջոցներից, որ նա գործ էր դնում հերետիկոսների դէմ նիդերլանդում: Ասում են, որ

նիդերլանդում նրա թագաւորութեան ժամանակ ոչընչացրած էր 50-ից մինչև 100 հազար մարդ: Հաստատ է, որ նա մի շարք օրէնքներ հրատարակեց, որոնցով հերետիկոսութեան նշան կրող ամեն մի գործողութիւն պատժում էր մահուան պատժով, կառավինարանի խարոյկի վրայ կամ կենդանի թաղելով: Այն ինչ կարլոս V-ը այնքան անբարոյացած չէր, ինչպէս այդ կարելի է ենթադրել նրա գործունէութիւնից: Ընդհակառակը, նա աւելի մեղմ էր, քան խիստ, և շատերը նոյն իսկ սիրում էին նրան: Բայց նա իւր դարու գործիքն էր, որի ձգտման դէմ նա անզօր էր կոռուկ:—Փիլիպպոս II-ը, որ նոյն ուղղութեամբ էր գործում, իր նախորդներին գերազանցեց: Նրա ժամանակ՝ բողոքականութիւնը 10 տարուայ ընթացքում վերջնականապէս ջնջուած էր իսպանիայում: Այնուհետև նա արինահեղ պատերազմ սկսեց հոլլանդացիների դէմ, որ 30 տարի տեսց և նըշանաւոր եղաւ: բարբարոսութիւններով և անթիւ ժողովրդի կորստով: Միմիայն Ալբան 5—6 տարուայ ընթացքում նիդերլանդում մահուան պատժի ենթարկեց 18,000-ից աւելի մարդ: Վերջապէս, իր մոլեսանդութեամբ և անսահման իշխանասիրութեամբ կուրացած, Փիլիպպոսը նաւատորմիդ կառուցեց, որի միջոցով նա յոյս ունէր ստորացնել Անգլիան, որը ծառայում էր իբրև ապաստանարան բողոքականութեան, և այսպիսով խորը հարուած տալ այս հերետիկոսութեան: Բայց սովոր հարուած տալ այս հերետիկոսութեան: Իսկ այս հսկայական սիստեմից աւելի զարմանալի պիտի յայն կապը, որ, ըստ երևութիւն, գոյութիւն ունէր նրա և ժամանակի ոգու մէջ: Ժողովուրդը չապըստամբեց բռնակալի դէմ, որ անխիղմ կերպով ծծում էր նրա արիւնն ու հարստութիւնը: Ընդհակառակ, չը նայելով նրա խիստ, կոպիտ և հպարտ բնաւորութեան և նրա խայտառակ վերաբերմունքին նոյն իսկ ազնուա-

կանութեան հետ, որ նրա հետ ուրիշ կերպ կարող չէր խօսել, քան եթէ ծնկան վերայ, ժողովուրդը ուղղակի աստուածացնում էր նրան: Այս նշանաւոր փառաթիվ մէջ նկատում է այն սերտ կապը, որ միշտ և ամեն տեղ գոյութիւն ունի ստրկահոգութեան և նախապաշարման մէջ, որոնք պահպանում են հոգեորականութեան ազգեցութիւնը: Այս օրէնքի հաստատութիւնը երևում է նրա մէջ, որ այնտեղ, ուր ըստակալ պետութիւնը դադարում է համերաշխ լինել հոգեորականութեան հետ, ժողովրդական համակրութիւնը տատանւում է երկու հեղինակաւորութիւնների՝ աշխարհական կամ հոգեորական իշխանութեան մէջ ընտրութիւն անելում: Նման, զուցէ միակ օրինակը պատմութեան մէջ ներկայացնում է Շոտլանդիան: Խսպանական ժողովրդի զարմանալի ստրկահոգութիւնը արտայայտում էր բազմաթիւ բալլուգաների, կրօնական ժողովների որոշումների մէջ, աշխարհական օրէնսդրութեան և արքայական այնպիսի արտօնութիւնների մէջ, ինչպէս օրինակ, հանգուցեալ արքայի սիրուհու և ձիերի անձեռնմխելիութիւնը կամ հանգուցեալի ամուսնու մշտական այրի մնալու որոշումը եւն: — Ստրկահոգութեան ու նախապաշարման միացեալ ազգեցութեան հետեւնքները ժողովրդի գիտակցութեան վրայ էին աշխարհական և հոգեորական հրամանատարներին կոյլ հնազանդութիւնը և նրանում զինուրական ոգու արագ զարգացումը, որի շնորհիւ XV դարի վերջը խսպանիան գերիշեց մահմեդականների վրայ, լիակատար անկախութիւն ձեռք բերեց և գեռ կարողացաւ իր տիրապետութիւնը ընդարձակել զարմանալի չափերի: Դեռ 1478 թուին խսպանիան կազմուած էր մի քանի անկախ և միմեանց հետ թշնամի տէրութիւններից — Գրենադայից, Կաստիլիայից և Արագոնիայից. իսկ մինչև 1590 թուականը

Նա ոչ միայն ամփոփուեց մի բարձրագոյն իշխանութեան տակ, այլ նոյն իսկ, մասամբ դիւնքագիտութեան ճանապարհով և մասամբ զէնքի օգնութեամբ հետզետէ ձեռք բերեց շատ յայտնի երկիրներ Եւրոպայում, Ամերիկայում և Ասիայում: Միևնույն ժամանակ նա իսկա կարևոր ազգեցութիւն ունեցաւ երապական գործերի վրայ: Նրա արքաներից մէկը գերմանական կայսր էր, իսկ նրա որդին ամուսնացաւ անգլիական թագուհու հետ և ազգում էր անգլիական քաղաքականութեան վրայ: Տաճկաստանն ու Ֆրանսիան ընկած էին և Փրանսիական արքան գերի տարուեց Մադերիդ: Վերջապէս, թէ որ աստիճան աճեց զինուորական ոգին Իսպանիայում, երեսում է նրանից, որ զինուորական դասակարգերը կլանում էին երկրի բոլոր մտաւոր ոյժերը և նրանց թւում բոլոր լաւագոյն գրողներին, ինչպէս օրինակ, Կալդէրօն, Սերվանտէս, Լոակ-դը-Վէդա ևն:— Բայց այս բոլոր փայլուն պայմանները վեցանիայի դրութիւնը հաստատուն չէր: Սա տաղանդաւոր անհատների արհեստական ստեղծագործութիւն էր, և ոչ թէ ժողովրդական ինքնուրոյն կամքի ու ժողովրդական ձգտումների արդիւնք, և այս պատճառով պէտք է խորտակուէր, քանի որ կառավարութեան գլուխ անցած էին անընդունակ մարդիկ: Որպէս զի աւելի պարզ հասկանալի լինի այս, անհրաժեշտ է մի քանի համեմատութիւններ անել Իսպանիայի և Անգլիայի մէջ: Անգլիայում ժողովուրդը միշտ հնկում էր իր անկախութեան և ինքնուրոյնութեամբ էր կատարում քաղաքական և հասարակական այն մեծ խնդիրները, որոնք նպաստում էին հանգիստ ու անընդհատ յառաջադիմութեան: Այս պատճառով, Անգլիային չկարողացան վնասել մինչև անգամ այնպիսի թուլամիտ, արատաւոր և տիկտի վարիչներ,

ինչպէս են՝ Հենրիխ Ալլ, Կարլոս I, Աննան, երկու Գէորգ-ները և վերջապէս Գէորգ Ալլ-ը, որ կառավարութեան սարսափելի եղանակ ստեղծեց: Իսպանիայում, ընդհակառակը, մի քանի նշանաւոր արքաների, այն է՝ Ֆէրդինանդի, Իզաբէլլայի, Կարլոս V-ի և Փիլիպպոս II-ի խելքի ու եռանդի բոլոր արդիւնքը, որոնց մէջ ժողովուրդը միայն անդիտակից կրաւորական մասնակցութիւն ունէր, ամենակարճ ժամանակում ջախջախուեցին և ոչնչացան յաջորդ անընդունակ վարիչների ձեռքով, այն է՝ Փիլիպպոս III-ի, Ֆիլիպպոս V և Կարլոս II: Այս արքաների թագաւորութեան համեմատաբար աւելի փոքր ժամանակամիջոցում, 1598 և 1700 թուերի միջև, Իսպանիան հասաւ յետին ստորութեան, զըրկուեց իւր լաւագոյն կալուածներից և ծաղրի առարկայ եղաւ դպրոցականների և բարոյագէտների կողմից: Իրեւ լըումն Իսպանիայի անկման նրա հողեռականութեան իշխանութիւնը համաշափութեամբ պարբերաբար աճում էր երբ բարձրագոյն իշխանութիւնը հասնում էր անկման: Կառավարութեան կորցրած ժողովրդական համակրութիւնը ընականաբար անցաւ եկեղեցու կողմը, և վերջնիս քաղաքական ազգեցութեան հետեանք-ները զարհուրելի էին: Ծոյլ և բթամիտ Փիլիպպոս III-ի թագաւորութեան ժամանակ կառավարութեան գլուխ անցաւ էրման, որ վախենալով թէ մի գուցէ ժողովրդի մէջ հաւատարմութեան զգացմունքները թուլանան, սերտ կապ հաստատեց հոգևորականութեան հետ, և այսպիսով ժողովուրդը զգաց իրան նորից բռնակալութեան ճիրաններում: Հոգևորականութեան հզօրութեան աճումը XVII դարում արտայայտուեց բազմաթիւ փաստերով, Վանքերի ու եկեղեցիների թիւն ու նրանց հարստութիւնը աւելացաւ զարհուրելի արագութեամբ: Մաղրիդում հաւաքուած կորտեսները յայտնեցին, թէ

ժողովուրը կողոպտում էր եկեղեցու օգտին և թէ Իսպանիայում հաշւում էր մօտ 9,000 արական վանքեր, բացի կանանց վանքերից: 1623 թուին գոմինիկեանների և ֆրանցիսկանների՝ երկու միաբանութիւններ մօտ 32,000 անդամ ունէին. միմիայն սէվիլիական տաճարում 100 քահանայ կար. Սէվիլիայի թեմում հաշւում էր 14,000 կապէլլան, իսկ կանագօրում՝ 18,000: Այսուհետև, Իսպանիան աշխարհական գրականութեան նմանութիւն բերող ոչ մի բան չունէր, որպիսին ծաղկում էր ուրիշ տէրութիւնների մէջ, և սրանով էլ նանոյնպէս նկեղեցուն էր պարտական, որ իւր ազգեցութիւնը ապահովում էր նրա բոլոր մտաւոր շրջանի վրայ: Հեղինակները պատիւ էին համարում հոգեորդականութիւնը կարիլլո, Սէրվանտէսը մահուանից երեք տագավին պատկանել: Սէրվանտէսը մահուանից երեք տագավին պատկանել: Լոպէ-դը-Վէզան ոի առաջ աբեղայութիւն ընդունեց, Լոպէ-դը-Վէզան հաւատաքննութեան ծառայողներից էր. Մօրէտօ, Մօնտալվան, Տարլիգա, Միրա-դը-Մէսկուա և Տիրսո-դը-Մօլինաս թատերագիրները, Սոլիս, Սանդօվալ, Դավիլա, Մինիանա, Կարիլլո, Անտոնիօ և Գրացիան պատմաբանները, Պարավիչնո, Զամօրա, Արգէնզօլա, Գօնզագորա, Ռիօիա, Բալդէրօն և Վիլավիցիօլա բանաստեղծները—այս բոլոր նշանաւոր գրողները աբեղայ, քահանայ, եղուիտ կամ հաւատաքննութեան ծառայողներ էին: Բացի սրանից, վանքերը, կրօնական ուխտերը և տաճարները իրանց յատուկ պատմաբաններն ունէին, և անթիւ աշխատութիւնների մէջ կրօնական հալածանք էին քարոզում: Վերջապէս հոգեորդականութեան հզօր ազգեցութեան պսակը Փիլիպպոս III-ի թագաւորութեան ժամանակ մաւրերին արտաքսեն էր, անլակի բարբարոսութիւններով:—Այս անբաղաներին հալածելը սկըսուեց նրանց վերջնականապէս նուտաճելուց յետոյ XV դարի վերջում իսպանացիների ձեռքով, որոնք հերե

տիկոսութեան արմատախիլ անելու անհրաժեշտութիւնը կապում էին ամբողջ ժողովրդի բարեկեցութեան խնդրի հետ։ Մասամբ բարբարոսական տանջանքներով և առտօդափեով և մասամբ իսպանացիների սպառնալիքների օգնութեամբ յաջողեց հասնել այն բանի, որ իսպանիայում, ինչպէս ասում են, մի հատիկ անդարձ մահմեղական չմնաց։ Բայց նրանք չբաւականացան ձեւական հաւատափոխութեամբ, և 1566-ին Փիլիպպոս Ա-ը մի էդիկտ հրատարակեց, որ պարտաւորեցնում էր մաւրերին հրաժարուել այն ամենից, ինչ ոչ փոքրիշատէ կարող էր յիշեցնել նրանց նախկին կրօնը—մայրենի լեզուից, ազգային հագուստից, սովորական խաղերից, բաղնիքից ևն։ Զարմանալի չէ, որ այդ գժբաղդ ցեղը վճռեց յուսահատ ապստամբութիւն կատարել, որ սկսուեց 1568-ին և ճնշուեց միմիայն 1571-ին։ Դրագագարար, իսպանական կառավարութիւնը, այս դասից խրատուած, այնուամենայնիւ չկարողացաւ հրաժարուել իր մոլեռանդ ձգտումներից, չնայելով այն բանին անգամ, որ մօրիսքների ոյժերի կատարեալ անկումը երաշխաւորում էր խաղաղութիւնը և հին թշնամութեան վերջնական դադարումը։ Գոնէ հոգեորականութիւնը իր բոլոր միջոցներով շարունակում էր կառավարութեան մոլեռանդութիւնը բորբոքել, և այն, ինչին նա չկարողացաւ հասնել զգոյշ Փիլիպպոս Ա-ից, լիովին իրագործուեց Փիլիպպոս Ա-ի ժամանակ։ 1602 թուին Վալէնտի արքեպիսկոպոսը Փիլիպպոս Ա-ին մի յիշատակագիր ներկայացրեց, որի մէջ յայտնում էր նրան փաստերի հիման վրայ, թէ երկինքը ոչ մի բանի մէջ չէր ցանկանում նպաստել իսպանիայի յաջողութեանը, քանի որ նրա մէջ զցութիւն ունէին անհաւատներ։ Այս յայտարարութիւնը խիստ պաշտպանութիւն գտաւ և հոգեորականութեան ուրիշ ազգեցիկ ան-

դամների կողմից։ Տօլէդի արքեպիսկոպոսը յայտնեց թէ, աւելի լաւ է ամբողջ պիղծ ազգը կոտորել, քան թոյլ տալ, որ թէկուզ մի անհաւատ պետութիւնը թունաւորի իւր ներկայութեամբ։ Դօմենիկեան Բէդան ուղղակի պահանջում էր բոլորովին բնաջինջ անել բոլոր դարձած և անդարձ մաւրեներին այն հիման վրայ, որ զժուար է որոշել թէ նրանցից որն է ճշմարիտ բրիտանիան։ Լէրմա նախարարի համար իւր իշխանութիւնը խիստ թանգ էր, որ երեան հանէր որևէ բողոք հոգեորականութեան դէմ, և 1609 թուին նա զեկուցեց արքային, որ անհրաժեշտ է մաւրերին արտաքսել։ «Այդ վճիռը մեծ է, պատասխանեց Փիլիպպոս Ա-ը։ Թո՛ղ ուրեմն կատարուի»։ Եւ իսպանիայի մի միլիօնի չափ աշխատասէր ժողովուրդ միանգամից ենթարկուեց հալածանքի, թալանի, բարբարոսական տանջանքների, կոտորածի ու սովամահի։ Հաստատ յայտնի չէ, որ միմիայն արտածութեան ժամանակ ամենատանջալի կերպով կորաւ մօտ 100,000 մարդ։ Աւելորդ է հոգեորականութեան հրճուանքը նկարագրել։ Սա, վերջապէս, հասաւ այն բանի, որ պիտութեան ամբողջ տարածութեան վրայ մի հատիկ հերետիկոս չմնաց, և այժմ մոլեռանդ յափշտակութեամբ սկսեց ուղղափառ ազգաբնակութեանը նկարագրել արքայութեան բարիքների տեսարանը, որ երկինքը տալու է սրբազն երկրին։ Բայց աշխատասէր ժողովրդին արտաքսելու սարսափելի հետեւանքները երկար սպասել չտուին։ Արուեստներն ու արհեստները սկսեցին ընկնել կամ բոլորովին անհետանալ, ընդարձակ դաշտերը անմշակ մնացին և ամայի երկիրը դառաւ կազմակերպուած աւազակային խմբերի ապաստան։ Հոգեորական իշխանութեան չափազանց զօրանալու շնորհիւ, աշխարհական շահերը կատարեալ արհամարհանքի ենթարկուեցին։ Ազգաբնա-

կութիւնը աստիճանաբար նուազում էր, գործարանային արտադրութիւններն այնպէս ընկան, որ 16,000 մանարան—տօքքերից, որոնք Սիվիլիայում 130,000 մարդու աշխատանք էին տալիս, Փիլիպպոս V-ի թագաւորութեան ժամանակ ընդամենը 300 հատ մնաց, և այսպիսի օրինակներ շատ կային, Կաստիլիան, Աէգովիան և Բուրգոսը վերջնականապէս կորցրին իրանց մանուֆակտուրային և առևտրական նշանակութիւնը. վերջապէս, աճող ադրատութիւնը սպառնում էր ազգաբնակութեան սովամահ լինել: Իսպանական զօրքերը՝ 1643-ին յաղթուելով Ռոկուտայի մօտ, վայր դրին իրանց դրօշները, իսկ այն զինուորները, որոնք հաւտարիմ մնացին, ոսճիկ չստացան և սովից մեռան: Բնակիչները սովամահ եղան նոյն իսկ մայրաքաղաքում և մեծ ճանապարհների վերայ կամ թէ սպանւում էին օրը ցերեկով՝ կազմակերպուած աւազակախմբերի ձեռքով: Ամբողջ գիւղեր դատարկուեցին, իսկ շատ քաղաքներում տները երկու երրորդ մասից տեղին աւերտացին. մինչև անգամ ինքը արքան էլ փողի պակասութիւն ունէր օրուայ անձնական ծախսերի համար: —Իսպանիայի այս խիստ անիշխանութեան ժամանակ փրկութեան մի ելք կար միայն—օտար տիրապետութեան տակ ընկնել: Եւ հէնց այս էլ տեղի ունեցաւ թուլամիտ կարլոս II-ի մահից յետոյ 1700 թուին: Ի դէմ Լիւդովիկ XIX-ի թոռը Փիլիպպոս V-ի, Իսպանիայում իշխեց բուրբոնների հարստութիւնը, աւստրիականի փոխարէն: Իսկ Փրանսիացի լինելով ծնունդով, դաստիարակութեամբ և սովորոյթներով, Փիլիպպոս V-ը տէրութեան կառավարութեան բոլոր բաժինները յանձնեց իր հայրենակիցներին և ուրիշ օտարացիներին: Զօրքը փոխէփոխ ղեկավարում էին.—Բէրվիկ հէրցօգը—անգլիացի, Մարշալ Տէսսէն և հէր-

ցօդ Վանդոմը—Փրանսիացիներ, իսկ դրամական և զինուորական տեսչութեանց կառավարութեան գլուխ կանզնած էին տաղանդաւոր Օրբին, որի ժամանակ անունով զինուորական նախարար էր Կանալէցը. իսկ Փիլիպպոս V-ի ամուսնութիւնից և լիւդովիկոս XIX-ի մահից —երկու դէպքերից յետոյ, որոնք փոքր ինչ թուլացրին Փրանսիացիների ազդեցութիւնը,— իսպանիայում, 1714 և 1726 թուերի միջոցում, պետական մարդիկն էին Ալբէրօնի—իտալացին և Միպպէրդ—հոլանդացին: Եթէ աւելացնենք սրան, որ իսպանական ազգը չկարողացաւ այս միջոցին ոչ մի նշանաւոր մարդ տալ պետութեան, այն ժամանակ բոլորովին հասկանալի կէինի, թէ ինչ ահազին ազդեցութիւն պէտք է ունենային օտարականները իսպանիայում: Անուշադիր թողնելով երկրի ամբողջ նախընթաց պատմութիւնը և սովորոյթները, նրանք առաջինը փորձ արին եկեղեցու իշխանութիւնը թուլացնելու և հոգեորականութիւնից իշխեց իշխելու նրա ժողոված հարստութեան մի մասը: Օրբին աշխատում էր պակասեցնել հոգեորականութեան իրաւունքներն ու արտօնութիւնները և մինչև իսկ գրեթէ յաջողեց Փիլիպպոսին համզել հաւատաքննութիւնը վերացնել: Բայց այս միտքը իրագործած չէր յիղափոխութիւն առաջ բերելու եղկիւղից, թէպէտ և, փոխաւութեան ձեկ տակ, հոգեորականութիւնը 1707 թուին տէրութեանը զիջաւ իր հարստութեան մի փոքր մասը: Ալբէրօնին աւելի առաջ գնաց: Նրա նախաձեռնութեամբ ուղղակի հարկ սահմանուեց հոգեորականութեան վրայ և վերջինիս շատ անդամներ, որոնք անհնաղանդութիւն էին ցոյց տուել նոր օրէնքին՝ աքսորուեցին կամ բանտարկութեան ենթարկուեցին: Աւելի համարձակ էր վարւում Ալբէրօնին արտաքին քաղաքականութեան մէջ: Արհամարհելով իսպանացիների աւանդական ա-

տելութիւնը դէպի անհաւատները և մանաւանդ դէպի հանմեղականները, ի նկատի չունենալով նրյն իսկ, որ դեռ ոչ շատ առաջ, 1698 թուին, իսպանացիները նեղ բուփէին հրաժարուեցին հոլլանդացի հերետիկուներից իրանց առաջարկած օգնութիւնից,—նա, պարզ քաղաքական մտածութիւնների դրդմամբ, բացարձակ դաշն կապեց մահմեղականների հետ և մինչև անգամ փող ու դէնք տուեց նրանց: Այսպէս էին իսպանիայում այն հակակրօնական շարժման արտայայտութիւնները, որ XVII դարում գրաւեց ամբողջ Եւրոպան: Նա արտայայտուեց յատկապէս օտարերկրեայ քաղաքականութեան մէջ, բայց բոլորովին չդիպաւ իսպանական ժողովրդին, որ շարունակում էր մնալ խորը տգիտութեան մէջ: Այն ժամանակուայ մատենագիրները վկայում են, որ իսպանական երիտասարդութիւնը մինչև իսկ ամենաբարձր դասակարգերում ոչ մի գիտական կրթութիւն չէր ստանում և որ մինչև XVIII դարը Մադրիդում ոչ մի հասարակական մատենատարան չկար: Սէն-Ծիմոն հէրցօգով, Մադրիդի ֆրանսիական նախակին դեսպանը 1721 և 1722 թուերին, ասում է, թէ Իսպանիայում գիտութիւնը յանցանք է համարւում, իսկ ոգիտութիւնը առաքինութիւն: Վերջապէս, մի անգլիացի գիտող, յիսուն տարի անց, նկատեց, որ «անգլիացի ջէնտլմէնի սովորական կրթութիւնը իսպանիայում կզարձնէր գիտնական մարդ»: Թէ որ աստիճան իսպանացիները տգէտ թշնամութեամբ էին վերաբերում դէպի այն ամենը, ինչ պարունակում էր իւր մէջ նորամուծութեաննշոյլ, երևում է այն փաստից, որ երբ մի համարձակ վարչական մարդ առաջարկեց Մադրիդի փողոցները մաքրել կուտակուած աղբից, ընդհանուր զայլոյթ առաջ բերեց, իսկ բժիշկները մինչև անգամ կարեոր համարեցին հաստատել,

որ գարշահոտութիւնը անհրաժեշտ է, իրեւ մանրաճիները ոչնչացնելու մի միջոց: Ինչպէս չարագուշակ նորամուծութեան, իսպանացիները նոյնպէս վերաբերուեցին Մադրիդում քիմիական լաբօրատորիա հիմնելու ծրագրին, որի պահանջն զգացւում էր լաւ դեղագործների բացակայութեան պատճառով: Վերջապէս, XVII դարի կիսին իսպանիայում իրաւագիտութեան, գիղիքայի, մարդակաղմութեան և բուսաբանութեան ոչ մի ամբիօն չկար: գեղեցիկ արուեստները վերածնուեցին և գիտութեան, արդիւնաբերութեան և վարչութեան բոլոր ճիւղերում ոչ մի ոյժ չէր մնացել: Այսպիսով, օտարերկրացիների առաջ դրուած էր ընկած երկրի վերածնութեան ծանր խնդիրը և նրանք իսկապէս արին այն ամենը, ինչ որ կարող էին, յետամնաց ժողովրդի մէջ նախաձեռնութեան բացակայութեան ժամանակ: Նրանց ջանքերով Մադրիդում և Սէվիլյում հաստատուեցին բժշկական ընկերութիւններ, իսկ Վիրժիին հիմնեց Կաղիքաում: Վիրաբուժական ընկերութիւն հիմնեց Կաղմակերպեցին զինուորական և ծովային գործը, նրանք փորձուած հանագործներ ապսպարեցին՝ հարուստ, բայց բարձիթողի արած հանքերը մշակելու, նրանք հիմնեցին մանուֆակտուրային գործարաններ և նրանց համար բանուորներ հրաւիրեցին Հօլանդիայից և Անգլիայից, վերջապէս, կարլոս III-ի կառավարութիւնը հրաւիրեց իսպանիա բնակուելու մի քանի հազար արհեստաւորների: Օտարերկրացիների նոյն նախաձեռնութիւնը երևեցաւ կառավարութեան բոլոր մասներում: Մինչև անգամ դիւնադիտական ասպարիզում գործում էին ֆրանսիացիք, իտալացիք և իրլանդացիք: Փիլիպ-առաջ V-ի մահից յետոյ 30 տարուայ ընթացքում իսպանիայի պետական մարդկանց մէջ ամենից աւելի աչքի էին ընկնում՝ իրլանդացիքի Ուոլլ, գենուացի Գրիմալդին

և սիցիլիացի կոկիլաչէն։ Ֆրանսիացի նախարար Շուազէլի աղդեցութեան շնորհիւ վերջապէս 1767-ին տեղի ունեցաւ եղուիտների վաղուց ցանկացած արտաքսումը իսպանիայից։ Կաստիլիայի նախագահ Արանդան, որ կրթութիւնը ֆրանսիայում ստացած մի իսպանացի էր, վճռական միջոցներ գործ գրեց հաւատաքննութեան կամայականութիւնները սահմանափակելու, մինչև իսկ նախագիծ կազմեց հաւատաքննութիւնը բոլորովին ոչնչացնելու և հասաւ այն գրութեան, որ 1781 թուից յետոյ էլ հերետիկոս այրելու ոչ մի փորձ տեղի չունեցաւ։ Ֆլորիդա Բլանկան, Փրիմալդաի գործիքը, վերջինի քաղաքականութեան հետեւեց և նրա վստահ գործունէութեան պատկը իսպանիայի կոած խաղաղութեան դաշն էր Տաճկաստանի, Տրիպոլիի և Տունիսի հետ, — այն ազգերի հետ, որոնց ջնջելը իսպանացիք սրբազն պարտք էին համարում ամեն մի քրիստոնեայ տէրութեան համար։ — Բայց չպէտք է մոռանալ, որ այս երկար շարք բարենորոգութիւնների մէջ, որոնք ապահովում էին երկրի ներքին և արտաքին անվտանգութիւնը, որոնք վերածնում էին նրա արդիւնաբերութեամբ և ժողովրդական եռանդը, խիստ կարեւոր դեր էր խաղում Կարլոս III-ի եռանդուն և համեմատաբար լուսամիտ անձնաւորութիւնը, որ անձնուրացութեամբ կուում էր հոգևորականութեան դէմ, որ բոլոր ոյժով պնդում էր իւր իրաւունքների և արտօնութիւնների վրայ։ Բայց, ինչպէս մենք արդէն ասացինք, այս բոլոր հակասուածաբանական քաղաքականութիւնը ոչինչ ընդհանուր բան չունէր ժողովրդի մտաւոր տրամադրութեան հետ, այս պատճառով էլ նրա փայլուն հետևանքները այնքան հաստատուն չէին, որ կարող լինէին թոյլ կառավարութեան ժամանակ դիմադրել հակաշարժման ժողովրդական տգէտ ոգու կող-

մից։ Եւ այս հակաշարժումը, ինչպէս մենք կը տեսնենք, իսկապէս յաղթանակից։ Կարլոս III-ի գահը ժառանգելիս, իսպանիան հաղիւ երրորդական տէրութիւն էր կազմում։ Իսկ նրա մահից յետոյ արդէն առաջնակարգ տէրութիւնների շարքումն էր Կարլոս III-ը կազմակերպեց այնտեղ զինուորական, ցամաքային և ծովային ոյժեր։ Կանոնաւոր հարկային եղանակ մտցրեց։ առևտուրի ազատութեան սկիզբ դրեց։ հովանաւորում էր գրականութեան, բարձրացրեց և կարգաւորեց ժողովրդական կրթութեան գործը։ մայրաքաղաքը գարդարեց գեղեցիկ շէնքերով։ հաղորդակցութեան լաւագոյն ճանապարհներ շինեց։ աշխատեց գետային նաւագնացութիւնը մեծացնել ջրանցքների միջոցով։ նպաստեց ոռոգման կարգաւորութեան ևն ևն։ Այս բոլորին դեռ պէտք է աւելացնել, որ նրա բոլոր ձեռնարկութիւնները իբրև ծանր բեռ չէին ընկնում ժողովրդի վրայ։ տուրքերով և արդիւնաբերութեան շահագործութեամբ չէին իրականանում։ Ընդհակասակը, Կարլոս III-ը աշխատում էր հարկերի ծանրութիւնը պակասեցնել և ժողովրդական միջոցները խնայելու համար չէր մտածում, օրինակ, իսպանացիներին արգելել նպաստներ ուղարկելու Հռովմեկեղեցու պետի օգտեն։ Եւ այսպէս համարեա 90 տարուայ շրջանում (1700 և 1788 թուերի միջև) իսպանիան ներկայացնում էր բազմակողմանի յառաջադիմութեան տեսարան։ Բայց հակաշարժումը, որ ծածկուած էր ժողովրդի տգիտութեան և այն ընդհանուր պատճառների մէջ, որոնց վրայ չաղղեց կառավարութեան հակասուածաբանական թեթև շարժումը, միայն յարմար բոպէին էր սպասում, որ կործանէր այն ամենը, ինչ ստեղծուած էր արհեստապէս։ Եւ այս բոլէն վրայ հասաւ 1788 թուին Կարլոս VI-ի իսպանական գահը բարձրանալով, որ իսկական իսպանացի էր, նուիրուած

նախապաշտուած տգէտ հոգեորականութեան։ Աւելիք քան 5 տարուց պակաս ժամանակամիջոցում այս թագաւորը ոչնչացրեց իր նախորդների ազատամիտ քաղաքականութիւնը։ Հոգեորականութիւնն ու հաւատաքննութիւնը նորից ձեռք բերին իրանց նախկինոյժը, գրականութիւնն ու հեղինակները հայածանքի ենթարկուեցին, Կարլոս III-ի նախարարները հեռացուեցան։ Արանդ և Ֆլորիդա Բլանկան բանտը դրուեցին։ Խօվէլեանոսը հանուեց պալատականների թուից, իսկ Կարարին բանտարկուեց։ Իւր հօր լաւագոյն խորհրդականներին հեռացնելով՝ նա նրանց պաշտօնները տուեց այնպիսի մարդկանց, որոնք իրանից պակաս տգէտ չէին և տէրութիւնը կորստի անդունդը հասցրին։ Նրա անսանձ բռնակալ կառավարութիւնը բնորոշելու համար աւելորդ չէ յիշատակել մի շըջաբերական, որի մէջ նրա նախարարը յայտնում էր համալսարաններին, թէ «Թագաւորը ոչ թէ փիլիսոփաների պէտք ունի, այլ լաւ հպատակների»։ XVIII դարի վերջում իրերի գրութիւնը իսպանիայում արդէն այնպէս ցաւալի էր, որ ֆրանսիացիների յարձակումը ամբողջ երկիրը ենթարկեց սոսկալի թշուառութեան և ստորութեան ու իսպանական չարաբաղտ ժողովուրդը չը կարողացաւ իր ուժերով կարգի ընկնել, որովհետեւ մի քանի սերունդ շարունակ անկարեկից վկայ լինելով քաղաքական շարժման, նա չընտելացաւ ինքնավարութեան։ — 1812, 1820 և 1836 թուերին նորից երկան հանուեցին բարենորոգման փորձերը և իսպանացիներին մինչև անգամ ազատամիտ սահմանադրութիւն շնորհուեց։ բայց վերջինս պատրաստ հող չգտաւ իր համար ժողովրդական աւանդութիւնների և սովորութիւնների մէջ։ Հէնց այս բանի պատճառով իսպանական սահմանադրութիւնները քայլայում էին ա-

մենաշնչին պատճառից և ասպարէզը թողնում բռնակալութեան տիրապետութեան։ Մատնանիշ անենք նաև այն նշանաւոր փաստի վրայ, որ քաղաքային իրաւունքները և արտօնութիւնները գոյութիւն ունէին իսպանիայում մինչև անգամ աւելի վաղ, քան Անգլիայում, բայց այս իրաւունքներն ու արտօնութիւնները միայն ազատութեան ձևեր էին ներկայացնում և ոչ իսկապէս ազատութիւն էին բովանդակում իրենց մէջ։ ձևեր, որոնք ժամանակառութէս սահմանում էին կառավարութեան նպատակների համար։ Օրինակ, սահմանային քաղաքները ապահով դարձնելու համար, սրանց տրում էին որպատճեան հրովարտակներ այն նպատակով, որ բնակիչները թշնամին յետ մղէին են։ Իսկ երբ կառավարութեան ձևերը փոխուեցին, այն ժամանակ արտօնութիւններն էլ սկսեցին ոչնչանալ, իսկ XVI դարի վերջը բոլորովին չքացան։ — թէ մինչև որ աստիճան ստրկահոգութիւնը և նախապաշտօնմը արմատացել էին ժողովրդի մէջ, երկում է հետեւել փաստերից։ Երբ, եղուիտներին աքսորելուց յետոյ, ու Կարլոսի տօնին, Կարլոս III արքան պատշգամբ դուրս եկաւ, ըստ սովորութեան, որ ժողովրդին շնորհի այն՝ ինչ նա կ'ինդը իրանից, պալատը զարմացաւ և զարհուրեց, տեսնելով որ ամենքը միաբան ինդրեցին վերադարձնել սուրբ եղուիտաներին... Ֆլորիդա Բլանկան պընդում էր, որ եկեղեցական արդիւնքները 50 տարուայ ընթացքում շատ տեղերում կրկնապատկուեցին։ Հաւատաքննութիւնը յայտնի կերպով պաշտապանում էր հասարակական կարծիքի կողմից։ օրինակ 1778 թուին մի երեսիկոսի վրայ վճիռը կատարելու ժամանակ, ամենաշանաւոր ազնուականները հասարակ ծառաների դեր էին կատարում են։ Այսպիսով

Իսպանիան հին ժամանակից ունէր ամեն ինչ, բացի գիտութիւնից, հասարակական զարգացման գլխաւոր ոյժից: Նա գտնւում էր աշխարհագրական այնպիսի պայմաններում, որ կարող էր իւր ձեռքին պահել երկու կիսագնդերի վաճառականութիւնը, նա քաղաքային ընդարձակ արտօնութիւններ ունէր, անկախ պարզամէնստներ, հարուստ քաղաքներ, գեղեցիկ արուեստներ, բնական ընդարձակ հարստութիւն, թանկագին մետաղներ և, մի խօսքով այն ամենը, ինչ որ կարող է բաւականութիւն տալ մարդու բազմազան պահանջներին և հետաքրքրութեանը: Այս ամենի հետ միասին նա ունէր պետական մեծ մարդիկ, արքաներ, դատաւորներ և օրէնսդիրներ, իսկ նրա ազգաբնակութիւնը աչքի էր ընկնուած շատ բանի մէջ իր առաքինութեամբ, քաջութեամբ, չափաւորութեամբ և անկեղծութեամբ: Բայց այս ամենը միասին չտուին և չեն տալի երկրին ոչ մի օգուտ, մինչև որ իսպանացիք տղիտութեան մէջ կիսարիսափեն: 'Ի դժբախտութիւն իսպանիայի, նրա ժողովուրդը միշտ մնաց քաղաքական այն շարժման ետեւը, որ ստեղծեցին պետական մարդիկ: Հաւատաքննութիւնը վերջնականապէս ոչնչացաւ 1820 թուին, բայց ճիշտն ասելով, ոչնչացուեց միայն նրա ձևը, և ոչ ողին: 1809 թուին վանական կարգերը վերացուեցին և նրանց գոյքը դրաւուեց. բայց ժողովուրդը վանական ասպետութիւնների կողմն էր և նրանք քիչ ժամանակից յետոյ նորից վերականգնեցին: 1836 թուին Մէնդիզարալը գրաւեց եկեղեցական կազուածները և հոգեորականութիւնից խլեց նրանց ահազին հարստութիւնները, իսկ 1845 թուին կայացաւ այսպէս կոչուած իրաւունքի փոխուելու օրէնքը, որի զօրութեամբ գրաւուած կալուածները դարձաւ հոգեորականութիւնն էին վերադարձնելու:

Իսկ երբ ազատամիտները չորս տարուց յետոյ մտածեցին հոգեորականութիւն արած զիջողութիւնները փոխել, այն ժամանակ ապստամբութիւն ծագեց, որ վերջացաւ 1856 թուինը պարտութեամբ, իսկ 1857-ին ժողովրդական ներկայացուցիչ՝ կօրտէսները, հաստատեցին 1851 թուի կոնկօրդատի որոշումներից ամենավատը, արգելեցին եկեղեցական կալուածքների վաճառումը և փոխեցին այն բոլոր որոշումները, որոնք սահմանափակում էին եպիսկոպոսների իշխանութիւնը:

Մինչև այժմ առաջ բերած բոլոր փաստերն ու դատողութիւնները բոլորովին բաւական են զնահատելու իսպանական քաղաքակրթութեան իսկական էութիւնը, որ ծնուել էր ժողովրդի ստրկացած զիտակցութեան և նախապաշարման ազգեցութեան տակ: Իսպանիան սուզուած է խոր քնի մէջ և հաղիւ թէ շուտով թողնի իւր նախատական մեծութեան հպարտ գիտակցութիւնը, որ հիմոււած է աւանդութիւնների, մնօտիապաշտութիւնների և նախապաշարման անսահման պատկառանքի վրայ:

Բ

Շատլանդիայի դրութիւնը մինչև XIV դարի վերջը—Շոտարանդիայի և Խսպանդիայի մէջ եղած նմանութիւնը նախապաշարման վերաբերմամբ և նրանց միջի զանազանութիւնը հնագանդութեան ողբւ վերաբերմամբ—Շոտլանդացինները քաղաքական աղատութիւնը միացնում են կրօնական ստրկութեան հետ:—Ֆիդիքա-աշխարհագրական պայմանների և հռովմայեցոց, իրլանդացոց, նորվէգացոց ու անգլիացինների յարձակման աղեցութիւնը—Արլստոկրատիայի իշխանութեան զօրանալը—Քաղաքական կեանքի և արդիւնաբերութեան թոյլ զարգացումը:—Թագաւորի և եկեղեցու դաշը արիստօկրատիայի դէմ:—Հոգևորականութեան մէծ աղեցութեան պատճառները:

Այսպէս ուրիմն, Խսպանդիայի պատմութեան մէջ մենք տեսանք երկու հզօր գործօնների-նախապաշարման և ստրկահոգութեան կորստաբեր աղեցութիւնը—Երկրի մտաւոր և քաղաքական զարգաման վրայ: Շոտլանդիայի պատմութիւնը կոպիտ նախապաշարմունքի նոյն զարգացումն է ներկայացնում, ինչպիսին մենք տեսանք Խսպանդիայում: Երկու երկրունն էլ նախապաշարումը առաջ բերեց հոգևորականութեան չափազանց աղեցութիւնը, անհամբերողութիւն և կեղծ բարեպաշտութիւն: Բայց միւս կողմից Շոտլանդիան ապշեցնող հակասութիւն է ներկայացնում, որի պարզաբանութեան նուիրումն է այս հատորի մնացեալ մասը: Բանը նրանումն է, որ շոտլանդացինները, նախապաշարուած և պահպանողական լինելով կրօնի մէջ, չարտայայտեցին իսպանական ստրկահոգութիւնը քաղաքականութեան մէջ,

այլ ընդհակառակը, աւելի քան ուրիշ որևէ ժողովուրդ հակուած էին դէպի ապստամբութիւն և չէին խնայում իրանց արքաներին: Նրանք սպանեցին Յակովը I-ին և Յակովը II-ին. Նրանք ապստամբեցին Յակովը II-ի և Յակովը VIII-ի դէմ: Յակովը V-ին բանտը ձգեցին. Մարիամին փակեցին ամրոցում և յետոյ զահընկեց արին. Յակովը VI-ին իրու գերի շրջեցրին բոլոր երկրով. վերջապէս նրանք վերկացան Կարլոս I-ի դէմ, ձերբակալեցին նրան և ծախեցին անգլիացիններին մեծ գումարով:

Ֆիդիքա—աշխարհագրական պայմաններինախնական աղեցութիւնը իրերի ընթիւ որի վրայ Շոտլանդիայում սաստիկ անբարեյածող էր: Միմեանց կտրտող լեռները արգելք էին լինում նրանում ներքին հաղորդակցութեան ճանապարհներ շինելուն: Միակ պտղաբեր մասը, հարաւային երկիրը, ամայացել էր հարևան անգլիացինների ձեռքով: Քաղաքային կեանքն ու ոգին չկարողացան զարգանալ երկիրով աղեցութեան տակ: Հարստութեան կուտակումը կանգ էր առել: Վերջապէս Օրկնէյեան և Շոտլանդեան կղզինների հարևանութիւնը նպաստում էր սկանդինավեան ծովահէնների ամայացնող արշաւանքներին:—Այնուհետև, Շոտլանդիայի պատմութիւնը 14 դար շարունակ ներկայացնում է օտարացինների փորձերի մի շարք՝ իր իշխանութեան ենթարկելու այս երկիրը, փորձեր, որոնց վախճանը զարհուրելի աւերումներ էր և շօտլանդացինների բարեկեցութեան ամենաչնչին իսկ ձեռնարկութիւնների ճնշումը: Առաջինից մինչև V դարի կէսը Շոտլանդիան հոռվմայեցիններով էր գրաւուած: Բայց աշխարհի այս պատիժներն ու բռնակալները չկարողացան իր հարազատ հայրենիքում բարեկեցութիւնը անխախտ դարձնել, ևս առաւել չկարողացան բարեկեցութիւն ստեղծել օտար

երկրում: Յայտնի է, որ տիրապետութիւնը նրանց համար հարստութիւն ստեղծեց իսկ հարստութիւնը ոչնչացրեց նրանց տիրապետութիւնը: Մեր մատնանշած պատմական շրջանում Հռովմէական իշխանութիւնը արագ կերպավ հասնում էր անկման և նրա մարդկութեան վրայ ունեցած ազդեցութիւնը զգալի կերպով թուլանում էր:

Ն-րդ դարու կիսին Հռովմայեցիք իրանց դօրքերը հանեցին Բրիտանիայից: Արանից անմիջապէս յետոյ իրլանդացիներն ու սկոտտերը ամրապնդուեցին Շոտլանդիայի արեմտեան մասում և կոիւ սկսեցին արեւելեան պիկտերի հետ, որ տեղը 400 տարի: 1X-րդ դարու կիսին սկոտտները կատարեալ յաղթութիւն տարան պիկտերի վրայ և Խ-րդ դարում նուաճած երկիրը կոչուած էր յաղթողների անունով՝ Շոտլանդիա: Իսկ 1X-րդ դարում հիւսիսային նորվէգիայի ծովահէնները սկսեցին ամրանալ Շոտլանդիայի մի քանի մասերում և համարեա 300 տարուայ ընթացքում երկրի մեծ մասը երկիւղի մէջ էին պահում, մինչև որ 1263 թուին, նորվէգիական մեծ արշաւանքը, որը ամենաբարբարոս ձևով աւերեց երկիրը, ոչնչացաւ ծովային փոթորիկից: Բայց ազատուելով հիւսիսային բարբարոսներից, Շոտլանդիան դեռ չկարողացաւ հանգստանալ: Շուտով 1290 թուից սկսուեցին անգլիացիների փորձերը բռնանալ Շոտլանդիայի վրայ: Անգլիացիները մտադրուեցին նուաճել այդ երկիրը և այս մտադրութիւնը սկսեցին իրագործել ամեն տեսակ բարբարոս միջոցներով երեք եղուարդները և Ռիչարդ Ա-րդը: Սրանք աւելում էին քաղաքներ սպանում բոլոր բնակիչներին, թալանում և հրկիզում վանքեր ու աւելածութիւններ, ազբատութիւն և սով առաջ բերում:—Այս թշուառութիւնների ազդեցութեան տակ

հողագործութիւնը կատարեալ անկման հասաւ. հողագործները մասամբ պատսպարուեցին պաշտպանուած տեղեր և մասամբ կոտորած էին: Մարդկի ստիպուած էին աղատուել կատաղած գաղաններից և որ աւելի զարհուրելի է՝ մարդակերներից: Միմիայն 1400 թուից արինահեղ յարձակումները բոլորովին դադարեցին և Շոտլանդիան կարող էր ուշքի գալ և իւր ոյժերը վերականգնել: Բայց այս վայրկեանից երեսան եկան ներքին քաղաքական հանգամանքները, որոնք յետ էին պահում ժողովրդի բարեկեցութեան դարգացումը: Դա արիստոկրատիայի անասելի ոյժն էր և հոգևորականութեան ընդարձակ իշխանութիւնը քաղաքային բնակիչների կատարեալ անզօրութեան և քաղաքավարական ոգու բացակայութեան միջոցին: Անյաղի արգելքներ ներկայացնող երկրի բնական պայմանները հնարաւորութիւն տուին Շոտլանդիան գեկավարներին ամրապնդուել անմերձենալի վայրերում և դիմադրութիւն ցոյց տալ արքայական զօրքերին, որոնք աւելուած երկրներում անկարող էին անհրաժեշտ պիտոյքներն անգամ գտնել: Իսկ արիստոկրատիայի ուժեղանալուն առանձին կերպով նպաստում էր Դաւիթ Ա-րդի գերումը, որ տեղի ունեցաւ 1436 թուին և շարունակուեց տասնեմէկ տարի: Արիստոկրատիայի հզօրութեան և անսաստութեան պատճառով արքաները բնականաբար պէտք է յենուէին քաղաքային դասակարգերի վրայ: Մեծ քաղաքները բոլորովին չկային, իսկ քաղաքավարական ոգին, ինչպէս վերը ասինք, բոլորովին գոյութիւն չունէր և արքաները թողնուած էին իրենց կամքի: Մատնանշած վաճանգների շարքը արգելում էր վաճառականութեան դարգացման Շոտլանդիայում: Այս պատճառով այնտեղ մի քանի դարու ընթացքում ոչ մի

առևտութեական ձեռնարկութիւն չկար և տնտեսական մբողջ շրջադարձութիւնը սահմանափակուում էր նախանական առևտութիւն եղանակով։ Շօդլանդացիք հասկացողութիւն չունէին մինչև անգամ ամենահասարակ արհեստաների մասին և հասարակ իրերը ապսպառում էին ուրիշ երկրներից։ Ամենամեծ և ծաղկող քաղաքները՝ Գլասգոն, Դոն Ֆէրմլայնը, Գրինոկը, Կիլմարնոկը, Պայսլին, Էբէրդինը, Պէտու և վերջապէս Էդինբուրգը շատ փոքրաթիւ բնակչութիւն ունեին—1,000-ից մինչև 19,000. տները գլխաւորապէս խըրճիթներ էին, ծածկուած ցախով և այս քաղաքներից շատերը գիւղի տեսք ունեին։ Հետեաբար զարմանալի չէ, որ աղքատ, ընկճուած և տգէտ քաղաքացիները արիստոկրատիայի հովանաւորութեան էին դիմում, որը մինչև անգամ մէրի պաշտօնն էր սեպհականացնում և որը զեկավարում էր այսպէս կոչուած ժողովրդի ներկայացուցիչների ձայներով։ —Բայց արիստոկրատիայի հետ միասին գոյութիւն ունէր ուրիշ ուժեղ գասակարգ՝ հոգեւորականութիւնը, որի ուժեղանալուն, ինչպէս յայտնի է, նպաստում է ազիտութիւնից և երկիւղից առաջ եկող ժողովրդի սնուտիապաշտութիւնը։ Շօտլանդիայի բնութիւնը միշտ տրամադրում էր գէպի երկիւղն ու սնուտիապաշտութիւնը։ Փոթորիկները, մարախուղները, մոայլ երկինքը, որոտն ու հաճախ կայծակը, մըրիկներն ու ողողները և ուրիշ ֆիզիքական երեսոյթները գրգռում էին մարդու երեակայութիւնը և ներշնչում էին նրան հաւատ գէպի գերբնականը։ Ֆիզիքական վտանգները ուժեղանում էին արիստունակաղ պատերազմներով, երբ հոգեւորականութիւնը աստուածային կամքի գուշակողն էր հանգիստանում։ Այս պատճառով ժողովուրդը իւր փրկութիւնն ու հոգեկան անդուրութիւնը վիճարում էր եկեղեցում,

իսկ մեծ մասը հոգեւոր կոչում էր ընդունում: Միևնույն ժամանակ ժողովրդի տղիտութիւնը աւելի և աւելի արմատանում էր: XIX դարու պատմաբանների վկայութեամբ Շօտլանդիայում դժուար էր գտնել մի բարօն, որ զիտենար ստորագրել իւր անունը, իսկ XV-րդ դարու մի հեղինակի ասելով այն ժամանակ Շօտլանդիայում աւելի շատ վայրենի մարդ կար քան անասուն: Իսկ եկեղեցուն այս ամենը շատ էր նպաստում: Նա շուտով աճեցրեց իւր հարստութիւնը և այնպիսի աղջեցութեան հասաւ, որ արքան օգնութեան դիմեց նրանց անհնարինութեան գանդ արիստոկրատիայի դէմ: Այսպիսով կառավարութիւնն ու հոգեւորականութիւնը սերտ դաշն կապեցին, որը շարունակում էր XV-րդ և մասմբ XVI-րդ դարու ընթացքում:

9.

Շոտլանդիայի պրութիւնը XV և XVI-րդ դարում: -Թագի և հոգի կրականութեան կույզը արխատոկրատիայի ղէմ: -Հոգեռականութեան և ժաղավրդի դաշը և ղեմոկրատ շարժումը:

Կառավարութեան և հոգեորականութեան ձգտումը միացեալ ոյժերով թուլացնել արխատոկրատիայի զօրութիւնը՝ առաջին անգամ բացարձակ կերպով յայտնուեց Ալբանիի քաղաքականութեան մէջ, որը 1406-ից մինչև 1419 թիւը ոչքենատի պաշտօն էր վարում: Երբ բարօններից հզօրագոյն՝ Դօնալդը Ռոսս կոմսութիւնը գրաւեց, Ալբանին հոգեորականութեան աջակցութեամբ

ստիպեց նրան հրաժարութել և կառավարութեան հնազանդութիւն խոստանալ: Սա այն ժամանակ չլսուած մի փաստ էր, որը կառավարութեան ծառայեց իբրև նախապատճառ նոր վճռական քայլերի համար, որ վերջացաւ Ռոսս կոմսութեան և արևմտեան կղզիների տրաւումով: Ալրանիի քաղաքականութիւնը աւելի մեծ եռանդով շարունակում էր Յակովը լ-ի կողմից: Իւր կողմը տրամադրելու համար հոգևորականութեանը զիջումներ առնելով, նա նոյն ժամանակ բացարձակ և դաւադրական կերպով ձերբակալեց բարօններին: Մահուան պատժի էր ենթարկում նրանց, աքսորում էր և գրաւում նրանց կալուածները: Բայց այս քաղաքականութիւնը, որ իւր ամբողջ ոյժը ուղղում էր անհատների և առանձին ոյժերի դէմ, չէր կարող ոչնչացնել ընդհանուր չարիքը, որը թագնուած էր երկրի ընդհանուր պատմական պատճառների տակ: Այս պատճառով Յակովը լ-ը ամոքիչ միջոցներ ձեռք առնելով ընդհանուր չարիքի դէմ, պէտք է տուժէր իւր վստահութեան համար, եւ այդ տեղի ունեցաւ 1436 թուին, երբ արիստոկրատիան ապստամբեց նրա դէմ և սպանեց նրան: Իսկ արիստոկրատիան սկսեց նորից վերածնուել: — Հաւատային Շօտլանդիայում տիրապետում էին հզօր Դուքլաները, իսկ հիւսիսային Շօտլանդիայում կրավֆօրտ և Ռոսս կոմսները: Բայց չնայելով մօտակայ տիսուր դասը, Յակովը լ-ի կառավարութիւնը որոշեց յամառ կերպով շարունակել նախկին քաղաքականութիւնը արիստոկրատիայի վերաբերմամբ: 1440 թուին դաւաճան կերպով բռնուած և մահուան պատժի էին ենթարկած փոքրահասակ կոմս Դուքլաները: 1452 թուին Դուքլաների տոհմի ներկայացուցիչը նոյնպէս դաւաճանութեամբ սպանուած էր արքայի ձեռքով: Մասամբ հոգևորականութեան աղդեցութեան տակ այսպէս համար-

ձակ կերպով էր գործում կառավարութիւնը: Յակովը լլ-ի ամենամօտ խորհրդատուն կենսեղի եպիսկոպոսն էր, որը ասում էր թէ՝ եթէ չի կարելի միանգամից ոչնչացնել ամբողջ արիստոկրատիան, կարելի էնրանց ջլատել և նրանց անդամներին մէկը միւսի ետևից ոչնչացնել: Բայց արիստոկրատիան, ինչպէս ասինք, կանգնած էր ամուր հողի վրայ և դիւրութեամբ յետ էր մղում կառավարութեան յարձակումները: 1482 թուին արիստոկրատիան ձերբակալեց Յակովը լլ-ին և բանտ ձգեց, իսկ 1488 թուին սպանեց նրան: Յակովը լՎ-րդը շարունակեց իր նախորդների քաղաքականութիւնը, պահպանելով հոգևորականութեան հետ դաշը և արիստոկրատիայի թուլացման ձգտելով: Իսկ վերջինը ոչ թէ չէր թուլանում, այլ մինչև անդամ Յակովը Վ-րդի մանկութեան ժամանակ այնպիսի հզօրութեան հասաւ, որ այն ժամանակ ըէզենտ Ալրանին ստիպուած էր վերջնականապէս հրաժարուել իւր իշխանութիւնից ու հեռանալ Շօտլանդիայի սահմաններից: Արքան գերուած էր Դուքլաների կողմից, իսկ Բիտօն արքեպիսկոպոսը ստիպուած էր հրաժարուել կանցլէրի կոչումից: Հոգևորականութիւնը այս հարուածից յետոյ զուտով ոտքի կանգնեց: Բիտօնը դաւադրութիւն սարքեց, որի շնորհիւ 15 տարեկան Յակովը 1528 թուին փախաւ Դուքլաներից, շրջապատեց իրան հոգևորական խորհրդատուներով և սկսեց ձնշել արիստոկրատիան գորական ոյժի յարձակումներով, ձերբակալութիւններով, գրաւումներով և աւատական իրաւունքների իրաւասութեան կրծատումով: Կատաղած և ձնշուած արիստոկրատիան, իբրև վրէժ հոգևորականութեան, սկսեց զաղանի յարաբերութիւն Անգլիայի հետ և արիստոկրատների մեծ բազմութիւն միացաւ բողոքականութեան: Միւս կողմից արքան միացաւ հոգևո-

ըականութեան հետ աւելի սերտ կերպով: Նա անձամբ ներկայ էր հերետիկոսներին մահապատճի ենթարկելիս. 1535 թուին նա «կրօնի պաշտպանի» տիտղոսն ընդունեց, իսկ 1538 թուին երկրորդ անգամ ամռունացաւ կաթոլիկ Մարիա Հիզի հետ: Սոսկալի հալածանքները ստիպում էին բողոքականներին փրկութիւն փնտրել Անգլիայում և ամբողջ յոյսը Դուգլասների վրայ դնել, որոնք ապաստան էին գտել Հենրիկոս Vll-րդի մօտ և շատ հետևողներ ունեին Շոտլանդիայուն: Արանց համար վերջապէս գործելու ժամանակը հասաւ, 1542 թուին արիստոկրատները Յակովի պահանջով բացէիրաց մերժեցին Անգլիայի դէմ պատերազմի ենել: Իսկ հոգեռականութեանը, որ յոյս ունէր այս պատերազմով հերետիկոսներին վերջնական հարուածը տալ, յաջողեց արքայի կողմը դրաւել մի քանի պէրերին և քիչ զօրք հաւաքել: Բայց անգլիացիք անակնկալ կերպով յարձակուեցին շոտլանդացիների վրայ, ցիրցան արին և մեծ թուով գերի տարան: Այս անսպասելի պարտութիւնը ուժեղ կերպով ազդեց Յակովի առողջութեան վրայ ևնանոյն տարի մեռաւ, թողնելով թագը փոքրահասակ դուստը Մարիային: Արքայի մահից յետոյ արիստոկրատիան նորից վերականգնեց: 1543 թուի սկզբին Անգուս, Դուգլաս և ուրիշ արիստոկրատներ վերադարձան Շոտլանդիա և յետ ստացան իրենց կալուածներն ու իրաւունքները: Ուկինտ Բիտոնը ձերբակալուած էր և տեղը նշանակուած կոմս Արքանը: Վերջապէս, պարլամենտը ընդունեց և կառավարութիւնը հաստատեց լորդ Մաքսվէլի առաջարկութիւնը՝ տալ ժողովրդին Աստուածաշունչ շոտլանդական և անգլիական թարգմանութեամբ կարդալու իրաւունքը. սա վերանորոգման հիմնական սկզբունքին արած զիջողութիւն էր:

1545 թուին բողոքական արիստոկրատները դաւաճանութեամբ սպանեցին Բիտոն արքեպիսկոպոսին և գրաւեցին Աէն-Անդրիւսի ամրոցը և այս ստոր գործում նրանց պաշտպանում էր նշանաւոր Զօն Նոկսը, որ յայտնի էր իւր անխոնջ, վստահ, վճռական և մինչև անգամ կատաղի բնաւորութեամբ. 1547 թուին ս. Անդրիւսի ամրոցը վերցրին Փրանսիացիք և Նոկսը տաժանակիր աշխատանքի էր դատապարտուած, որից ազատուեց 1549 թուին: Ապա մինչև 1559 թուականը նա գտնուում էր Անգլիայում և արտասահմանում, իսկ մինչև այդ ժամանակ արիստոկրատիային յաջողեց նախապատրաստելամեն ինչ տերող եկեղեցին խորտակելու համար: 1559 թուի մայիսի 11-ին Շոտլանդիա վերադառնալուց 9 օր յետոյ — Նոկսը Պէտում ճառ արտասահմաց, որից յետոյ յեղափոխութիւն սկըսուեց, — ժողովուրդը թալանում էր եկեղեցիներ և աւերում վանքեր, պետական զօրքերը ցիրուցան էին արուած, թագուհին մայրաքաղաքը թողեց և բողոքականները յուլիսի 29-ին տօնախմբութեամբ մտան էդինբուրգ: Վերջապէս 1560 թուին հրաւիրուած միաբանական լորդերը թագուհի Եղիսաբէթի հետ պայման կապեցին, որով Անգլիացի զօրքը պէտք է մտնէր Շոտլանդիա, իսկ Փրանսիական զօրքերը — հեռանալին: Այսպիսով 150 տարուայ կոիւը արիստոկրատիայի և հոգեռականութեան միջն վերջացաւ բարենորոգութեան հաստատուելով և արիստոկրատիայի յաղթանական մէջ, աւելի վտանգաւոր էր արիստոկրատիայի թեան մէջ, աւելի վտանգաւոր էր արիստոկրատիայի համար: Իսկ ընդհարումի պատճառը շատ շուտ զգալի եղաւ: Արիստոկրատները, զրաւելով կոխական

կալուածները, մտադիր չէին վերադարձնել այդպիսիներընոր հոգևորականութեան: 1560 թուականի օգոստոսին Նոկսը և Նրա համախորհները պարլամենտին խնդիր ներկայացրին եկեղեցական կալուածքները վերադարձնելու մասին, իսկ արիստոկրատները ոչ մի պատասխան չտուին: Ապա, երբ այս պահանջը կրկնուածէր, արիստոկրատները 1561 թուին պատասխանեցին, որ նորադանդ հոգևորականութեան պէտք է տալ եկեղեցական կալուածների միմիայն վեցերորդ մասը: Այս բանը սոսկալի փոթորիկ առաջ բերեց և ամեն տեղ արիստոկրատիային եկեղեցու թշնամի և սատանայի բարեկամ յայտարարող քարոզներ էին խօսուած: Արիստոկրատները իրենց կողմից քարոզիչներին պատասխանուած էին վիրաւորանքներով և ծաղրով, իսկ 1572 թուին ոէքէնտի պաշտօն ստացած կոմս Մօրդոնը աւելի խիստ կերպով վարուեց նրանց հետ: Նա անխիղճ կերպով մահապատժի ենթարկեց երկու քարոզիչ և գրաւեց կալուածների ազատ մնացած եկամոււած: Իրերի այս գրութեամբ եկեղեցու և պետութեան մէջ առաջ եկաւ կատարեալ ջլատում, հոգևորականութիւնը միացաւ ժողովրդի հետ և խրախուսում էր ոէմոկրատշարժութումը: 1575 թուին հոգևորականութիւնը, նշանաւոր Մէլվիլի ազգեցութեան տակ, սկսեց պայքար մղել եպիսկոպոսութեան կոչման գոյութեան դէմ և եկեղեցական բոլոր աստիճանների իրաւունքների հաւասարութեան օգտին, իսկ 1580 թուին եպիսկոպոսութիւնը յայտարարուած էր ոչնչացրած: Կառավարութիւնը համաձայն չէր հոգևորականութեան կարծիքների հետ և 1581 թուին Ռօբերտ Մօնհոմերին նշանակուած էր Գլազգօթ արքեպիսկոպոս: Հոգևորականութիւնը չէր զիջանում և իւր ընդհանուր ժողովի մէջ յայտնեց Մօնհոմերիին, որ նա կարգագուրկ կլինի և

հեռացրած եկեղեցուց: Վախեցած այս բանից Մօնհոմերին հանդիսաւոր կերպով հրաժարուեց արքեպիսկոպոսութիւնը պահանջից: Կառավարութիւնը յօդուտ նրա ոչինչ չէր կարող անել և բաւականացաւ գործունեայ մի քահանայի, — Դօրի—աքսորումով: Միաժամանակ նոյն 1582 թուին, բացուեց Ռօտվէնի դաւադրութիւնը, ինչ պատճառով Յակովը VI-րդը տասը ամիս գտնուում էր բանտում և հոգևորականութիւնը ամենուրէր համակրանք էր ցոյց տալի արքայի բանտարգելութեան վերաբերմամբ: Իսկ երբ արքան ազատուած էր, հոգևորականութիւնը իւր քաղաքականութիւնից չէր շեղուում: Դօրին քարոզում էր Ռօտվէնի դաւաճան յայտարարուած դաւադրութեան օգտին: Մէլվիլը, Սիմպոնը և Հիբսոնը բացարձակ կերպով նզովում էին արքային և երկնային պատիժ էին խնդրում: 1586 թուին համարեա ամբողջ հոգևորականութիւնը հրաժարուեց աղօթել արքայի խնդրով նրա մայր Մարիամ համար, որին մահ էր սպանուում: 1594 թուին Զօն Ռօսը Յակովին և նրա խորհրդականներին յայտարարեց դաւաճաններ և ապստամբներ: 1596 թուին Դաւիթ Բէկը իւր մի քարոզի մէջ արքային սատանայ անուանեց, իսկ պարլամենտական լորդերին և ամբողջ արիստոկրատիան եկեղեցու թշնամիներ և դաւաճաններ: Նոյն թուականի դեկտեմբերին հոգևորականութիւնը պաս սահմանեց և Վէլշը ամբիոնից գըրգուում էր ժողովուրդը կառավարութեան դէմ: Նոյն թուին Մէլվիլը վիրաւորեց արքային անձամբ: Վերջապէս, Ճիշտ յայտնի է, թէ կոմս Հօվրին, որը 1600 թուականին արքայի կեանքի սպանութեան փորձ արեց, երիցական հոգևորականութեան գլխաւոր համախոնն էր:

Բոլոր փաստերը իհարկէ ցոյց են տալիս, որ

երիցական հոգևորականութեան զայրանալը շատ հեռու էր գնացել և նրա գործունէութեան մէջ կար շատ այնապիսի բան, ինչ այժմեան մարդու մէջ զղուանք է առաջ բերում: Բայց մոռանալ պէտք չէ, որ, մի կողմից, այս հոգևորականութիւնը գործում էր ժամանակակից կոպիտ և փշացած բարքերի աղղեցութեան տակ, իսկ միւս կողմից, անհրաժեշտ է ըստ արժանոյն գնահատել այն մեծ ծառայութիւնները, որ նա մատոյց Շօտլանդիային: Երիցական հոգևորականութիւնը միշտ շօտլանդական աղատութեան պահապանն էր, միշտ վտանգի առաջն էր կանգնում, զարգացնում էր դէմոկրատ ողին, սովորցնում էր ժողովուրդը քաղաքական փաստելը գնահատել և ատելութեամբ ծաղրում էր արխստոկրատիայի ձգտումները ու պահանջները: Այսպիսով նա ստեղծեց ժողովրդի մէջ լայն անկախ ողին, որը խորտակեց Յակովի և Կարլոս 1-ի բռնակալ քաղաքակրթութիւնը. և վերջնին հասցրեց կառավիճականին:

Դ.

Շօտլանդիայի դրութիւնը XVII-րդ և XVIII-րդ դարում

—

Անգլիայի արքայ դառնալով, Յակովը օգտուեց նրա ոյժով Շօտլանդիայի հոգևորականութիւնը իսպառ ջնջելու համար, որը արգելում էր նրան իրագործել իւր բռնակալ ձգտումները: Դեռ 1584 թուին նրան ժամանակաւորապէս յաջողեց վերականգնել եպիսկոպոսութիւնը: Իսկ 1592 թուին նա ստիպուած էր նորից զիջանել հոգևորականութեան և պարզամենալը մի

ակտ յայտարարեց, որով նորից ոչնչացրած էր այդ հակադէմոկրատ հաստատութիւնը: Այս յաղթութիւնը թանկ արժեցաւ ժողովրդին և հոգևորականութեան, որովհետեւ զայրացած արքան իւր նպատակներին հասնելու համար ոչ մի միջոց չէր արհամարհում: 1597 թուի յունուարի 1-ին մայրաքաղաքի փողոցներում արքայի կոչով երեաց հիւսիսային լեռնականների և հարաւային բարօնների կատաղի աւաղակային խումբը, որը ստիպեց հոգևորականութեան համաձայնել արքայի բոլոր պահանջների հետ: Ապա, ցանկանալով վերականգնենել եպիսկոպոսութիւնը, նա աշխատեց քայլայի և հպատակներ հոգևոր Ընդհանուր ժողովները: Այս նպատակի համար նա հասաւ այն բանի, որ այդ ժողովներին սկսեց մասնակցել հիւսիսային հոգևորականութիւնը, որը զուրկ էր ուամկավար ձգտումներից: Բայց և այնպէս եպիսկոպոսութեան վերականգնելը նրան չէր յաջողում և նա վճռեց սպասել բարեյածող հանգամանքների: Անգլիական գահ բարձրանալուց մի տարի յետոյ, այն է 1604 թուին, նա իւր իշխանութեամբ յետաձգեց Ընդհանուր ժողովը, իսկ հետեւալ տարին նա կրկնեց նոյն բանը: Իսկ երբ հոգևորականութեան անդամները, Ալբրեյի անօրէն արգելքի հակոնակ, նիստ բացին Ընդհանուր ժողովի դահլիճում, նրանց հրամայուած էր հեռանալ և բացի դրանից նըրանցից 14 հոգի բանտարգելութեան էին ենթարկած, իսկ 6 հոգի դատապարտուած էին մշտատև արտաքսման: Այս բանից անմիջապէս յետոյ համարեա ամբողջ Շօտլանդիայում հոգևոր անձեր բանտարկութեան էին ենթարկուում, իսկ նրանցից շատերը փախան. Մէլվիլը բանտարկուած էր և ապա արտաքսուած ընդմիշտ, իսկ նրա աղքականին արգելուած էր Նիւկաստլից երկու մղոնից հեռու գնալ: Վերջապէս 1610 թուին Ընդ-

Հանուլը ժողովը, որի անդամները կառավարութիւնից էին նշանակուած, վերականգնեց եպիսկոպոսութիւնը և ի լրումն Շօտլանդիայի ստորացման երեք նոր նշանակուած արքեպիսկոպոսներ ձեռնադրուեցին անգլիական եպիսկոպոսից Լօնդոնում և, վերադառնալով հայրենիք, ձեռնադրեցին իրենց ընկեր եպիսկոպոսներին: Այս ժամանակուանից հոգեորականութիւնն ու ժողովուրդը ենթարկուեցին նոր սոսկալի բռնութեան: Ընդարձակ իշխանութիւն ստանալով, եպիսկոպոսները հեռացնում էին հոգեորականութեան անդամներին, գրաւում էին եկեղեցապատկան կալուածների եկամուտները, խլում քաղաքներից նրանց արտօնութիւններն ու զօռով նշանակում էին պետական պաշտօնեաներ, տիրեցին լորդերին պարլամենտում նշանակելու իրաւունքի և մանաւանդ խիստ էին գործում մայրաքաղաքի ապստամբողների դէմ: Բայց բնական հետևողութեան շնորհիւ անսահման բռնակալութիւնը առաջ պէտք է բերէր հակաշարժում, որը և վերջացաւ ապըստամբութեամբ: Ապստամբութիւնը սկսուեց 1637 թուին և վերջացաւ արքայի կորստով: 1638 թուին Ընդհանուր ժողովը ոչնչացրեց եպիսկոպոսութիւնը, հեռացրեց եպիսկոպոսներին և վերականգնեց նախկին երիցական դէմոկրատ կարգերը: Սրանից յետոյ 1639 թուին պատերազմ սկսուեց Կարլոս I-ի հետ: 1641 թուին Շօտլանդացիք միացան անգլիացիների հետ և մի շարք յաղթութիւններ տարան: Վերջապէս Շօտլանդացիք գերի տարան արքային և վաճառեցին անգլիացիներին իրենց պատերազմական ծախքերի համար վարձատրելու նպատակով:—Որչափ մեծ էր մահուան պատժի ենթարկած բռնակալի ժողովրդին նելչնչած ատելութիւնը, երեւմ է արդէն այն բանից, որ նրա յաջորդ Կարլոս II-ը ստիպուած էր հրապարակով դատապարտութիւն

արտայայտել իւր ծնողի քաղաքականութեան դէմ և իւր
իսկ սեպհական մոլորութիւնների վրայ զղջալ: —Բայց
յեղափոխութեան յաջողութիւնը հաստատ չէր: Կարուս
լ-ի և Յակովը լլ-ի թագաւորութիւնները միմիայն նա-
խընթացի կրկնութիւն էին: Քանակութ տարուայ ըն-
թացքում, 1660-ից մինչև 1688-ը, շօտլանդացիք իւր
վրայ կրեցին անսանձ բռնակալութեան բոլոր սարսափ-
ները. արիստոկրատիան թուլացրած էր և ոչնչացրած,
ժողովուրդը ենթարկուում էր թալանի և սպանութիւն-
ների, 1633 թուին յայտարարած բոլոր օրէնքները ո-
չնչացրած էին, իսկ վերականգնած եպիսկոպոսութեան
գլուխ էր անցել և մոլեգնութեան էր տրուած անգութ
և ագահ արքեպիսկոպոս Շարպը, որը հալածում էր ժո-
ղովուրդը՝ տներում և դաշտերում, ուր կատարում էր գո-
գաղտնի ժամերգութիւն: Բայց բռնակաների անդթու-
թեան սահման չկար: Նրանք ժողովրդի վրայ յարձա-
կում էին անսանձ զինուորներին և դիմազրութեան
չնչին փորձերի համար ենթարկում էին ծեծի, թալանի
և անպատճեան, ինչպէս օրինակ 1667 թուին արև-
մտեան Շօտլանդիայում: 1674 թուին մայրաքաղաքից
արտաքսուած էին շատ փաստաբաններ, որինք պաշտ-
արտաքսուած էին անմեղ մարդկանց: 1678 թուին լեռնա-
պանում էին անմեղ մարդկանց: 1678 թուին լեռնա-
կանները կառավարութեան կոչով երեք ամսուայ ըն-
թացքում կոտորում, աւերում և այլում էին Շօտլան-
դիայի լաւագոյն մասի բնակիչներին, չին խնայում ոչ
սեռ, ոչ հասակ, մարդկանց ենթարկում էին ամենասու-
կալի տանջանքի և մինչև անգամ նշաւակում էին մա-
նուկների վրայ: Առհասարակ կառավարութիւնը կանգ
չէր առնում ամենասոսկալի միջոցների առաջ՝ ինչպէս
բարբարոս տանջանքի կօշիկով ու մատնոցով: —Յակովը
լլ-ի թագաւորութիւնը սկզբից արդէն նշանաւոր դար-
ձաւ անասելի անգիտութեամբ՝ Աննանդալում և Նիտո-

դալում զինւորները ծնողներից խլեցին բոլոր 6—10
տարեկան հասակի մանուկներին և նրանց սպառնում
էին մահով։ Ժողովրդի մասսան ընակեցրած էր հակա-
ռողջական վայրում։ շատ տղամարդկանց ականջները
կտրեցին, իսկ կանայք դրոշմուած էին։ Վերջապէս
դառը բաժակը լցրած էր և 1688 թուին Շօտլանդացիք-
միացան անգլիացիների հետ ընդհանուր ճնշողի դէմ,
որը ստիպուած էր փախչել և կարլոս Ալի նման օգ-
տուեց իւր միակ բարեկամների՝ լեռնականների ծառա-
յութիւններով։ Ի բարեբաղդութիւն Շօտլանդիայի, այս
կիսավայրենի զօրականների յարձակումը վերջացաւ
նորանով, որ սրանք, վերցնելով առատ և հարուստ ա-
ւար, 1745 թուին հեռացան իրենց լեռները և այլն երեք
չէին անհանգստացնում ոչ Շօտլանդիան, ոչ Ան-
գլիան։ 1745 թուից յետոյ Շօտլանդիայի համար սկսում
է խաղաղ և անընդհատ առաջադիմութեան շրջան։ Երկ-
րի ներսում անց են կացւում ուղիներ, սրանք խաղաղ
բնակիչներին բարեկամացնում են լեռնականների հետ։
Վաճառական դասերն ու քաղաքացիները գրաւում են
առաջին տեղը։ XVIII-րդ դարու վերջը սկսում է ձգ-
տում դէպի վաճառականական ձեռնարկութիւններ։
XVIII-րդ դարու սկզբին այս ձգտումը մուտ է գործում
գրականութեան մէջ։ Շօտլանդացիների կատաղի բնու-
թիւնը հետզհետէ մեղմանում է։ Վաճառական դասի
գերիշխանութեան ամենաշօշափելի ապացոյցը արիս-
տոկրատիայի ժառանգական իրաւասութեան ոչնչացումն-
է։ Անհրաժեշտ է մատնանիշ տնել, որ այս մեծ ակտը
արիստոկրատիայի անկման հետևանք էր։ իսկ արիս-
տոկրատիայի անկումը, բացի ընդհանուր պատճառնե-
րից, որոնք թուլացրին ազնուականութիւնը համարեա-
ամբողջ Եւրոպայում, պայմանաւորում էր էլի երկու
տեղական պատճառներով։ Նախ, Շօտլանդիայի և Ան-

զլիայի միացումը 1707 թուրին միաւորեց երկու պետութիւնների և օրէնսդրական գործունէութիւնը ու 145 շատլանդական պէքերից միայն 16-ն էին մասնակցում լորդերի պալատում։ Փոքրաթիւ և վատ գաստիարակած լինելու պատճառով շատլանդական պէքները պարլամենտում ոչ մի նշանակութիւն չունէին և մինչև անգամ յաճախ ծաղրի առարկայ էին գառնում։ Իսկ սրանց անզօրութիւնն ու անյաջջողութիւնը պարլամենտում բուլացնում էին այն յարգանքը, որ տածում էր ժողովուրդը դէպի արիստոկրատիան Շատլանդիայում։ Բայց և այնպէս վերջինը շարունակում էր ձգտել դէպի Անգլիա, ուր կենդրոնանում էր արիստոկրատիայի ամբողջ իշխանութիւնն ու շուրջը և աստիճանաբար մոռանում էր երկիրը, որը նոյնպէս մոռացութեան էր տալիս գաղթած արիստոկրատիան։ Այսպիսով XIX-րդ դարու կիսին ոչնչացրած էր այն դարաւոր կապը, որ գոյութիւն ունէր ժողովրդի և արիստոկրատիայի միջև։ Ապա, 1745 թուի ապստամբութեան ճնշումից յետոյ լեռնական Շատլանդիայի հսկոյն ցեղերից շատերը, որոնք նկատուած էին ապստամբութեան մէջ, ստիպուած էին փախչել արտասահման։ Իսկ երբ 40 տապուած էին փախչել արտասահման։ Իսկ սրբ անց նրանք սկսեցին վերադառնալ հայրենիք, այստեղ գտան իրերի նոր վիճակ և շատ բան այստեղ գտան իրերի նոր վիճակ և շատ բան փոխուած էր ինչպէս իրանց մտածելակերպի, նոյնպէս և նրանց վասսաների մտածելակերպի մէջ։ Մենք արդէն ասինք, որ Շատլանդիայում յառաջադիմութիւնը սկսուեց արդիւնաբերութեան և վաճառական շրջանառութեան զարգացումով։ Սա նոյնական շրջանառութեան գաղափարը, որ կերպով ապագա արիստոկրատական ծագութիւնը ունենական էր անկման վրայ։ Առաջին տեղը գրաւում էր հարստութիւնը, իսկ հարստութիւնը արդիւնք էր արդիւնաբերական գործունէութեան։ Անգլիայի

հետ միանալը Շօտլանդիայի արդիւնաբերութեան գըլ-խաւոր զարկ տուեց, որը կարող էր անմիջական յարաբերութեան մէջ մտնել ամերիկական զաղութների հետ, առանց անգլիական նաւահանգիստներին դիմելու, ուր առաջ անպայման հաւաքւում էին և մաքսի ենթարկում բոլոր ամերիկական ապրանքները: Մի քանի տարուայ ընթացքում Գլազգօն և Գրինսկը Շօտլանդիայի առաջնակարգ նաւահանգիստներ զարձան և իրենց սեպհական նաւերը ձեռք բերին. իսկ Փայսլի քաղաքը արդիւնաբերութեան մանուռղ արտադրութեան գլխաւոր կենդրոնը դարձաւ: Աստիճանաբար սկիզբ առան զանազան արդիւնաբերութիւններ, որոնց թուում առանձին կերպով զարգանում էր կտաւագործութիւնը: 1749 թուին էբերդինում հիմնած էր առաջին շօտլանդական բանկը և սկսուեց կազմակերպուել ֆինանսական շրջան: Վերջապէս 1768 թուին սկսուած էր արևելեան Շօտլանդիան արևմտեանի հետ ջրանցքով միացնելու հսկայական ձեռնարկութիւնը, որը ուժեղ կերպով պէտք է ազդէր ներքին հաղորդակցութեան և վաճառականական շրջադառութեան զարգացման վրայ:

Այս բոլոր նոր շարժումը առաջ բերեց արդիւնաբերողների և մտաւոր աշխատութեամբ զբաղուղների երկու հզօր դասակարգ: Երկրի հարստութիւնը արագ աճում էր: Գիտութեան բոլոր ձիւղերում մեծ մտածողներ առաջ եկան, մինչդեռ մինչև XVIII-րդ դարու սկիզբը Շօտլանդիան միմիայն երկու նշանաւոր հեղինակունէր՝ Բոհանան և Նէպիր:—Դժբաղդաբար Շօտլանդիան շարունակում էր մնալ աւանդական մնութիւնապաշտութեան խաւարի մէջ և չի կարելի չզարմանալ այն ապշեցնող փաստի վրայ, որ համարեա մինչև XIX-րդ դարու կէսը արդիւնաբերական և մտաւոր զարգացումը և վըս-

տահ մտածողների շարքը առանձին կերպով չթուլացրեց Շօտլանդիայում հոգևորականութեան իշխանութիւնը և ժողովրդի պահպանողականութիւնը կրօնական խնդիրներում: Այս զարմանալի անբնականութեան լուսաբանութեան նուիրուած կլինեն հետեւալ գլուխները:

Ե

Շօտլանդիայի XVII-րդ դարու մտաւոր զարգացման ուսումնասիրութիւնը:—Աստուածաբանական ուղղութեան տիրապետութիւնը և հոգևորականութեան դիւալին սպահնչները:

Այն պատճառների ուսումնասիրութիւնը, որոնք Շօտլանդիայում ստեղծեցին մի կողմից քաղաքական աղատամտութեան զարմանալի միաւորում կրօնական ստրկութեան հետ և միւս կողմից սկեպտիկ դրականութեան անզօրութիւնը արմատացած մնութիւնապաշտութեան դէմ, կդրաւեն այս հատորի վերջին երկու գլուխները: Այս գլխի մէջ մենք մատնանից կանենք միմիայն առաջին անբնականութեան պատճառները: Նախընթաց առաջին միմիայն մանրամասն կերպով արձանագլուխներում բաւական մանրամասն կերպով արձանագլուխների մի շարք քաղաքական անցքեր, որոնք հոգևորականութեան և ժողովրդի մէջ սերտ կապստեղգորականութեան լուղանուր ոյժերը ուղղեցին դէպի ծեցին և նրանց ընդհանուր ոյժերը ուղղեցին դէպի ծեցին և կամ հաւածումնեան: Մենք համարում էր եկեղեցին և կամ հաւածումնեան: Մենք ապարագոյն իշխանութիւնը, որը կամ բոլորովին արարածրագոյն էր նույնականութիւնը տեսանք, որ XVII-րդ դարու վերջը հոգևորականութիւնը ապաստանաբան էր վինտրում ժողովրդի մէջ, իսկ XVII դարու առաջին կիսին նա արդէն կառավարում էր

ժողովուրդը և այն ամենաամօթալի կերպով իրախուռակով տղիտութիւնը և յետ պահելով մտաւոր զարգացումը: Հոգևորականութեան կոիւը բարձր դասակարգերի հետ սկսուեց բարենորոգութիւնից անմիջապէս յետոյ և շարունակում էր մինչև եպիսկոպոսութեան վերջանալը 1638 թուին: Այս երկար ժամանակամիջոցին հոգևորականութիւնը նոյնքան եկեղեցու պաշտպան էր հանդիսանում, որքան և ժողովրդի ազատութեան կողմանակից: Այս բանը բնականաբար հաստատում էր՝ նորա ժողովրդի վրայ ունեցած ազգեցութիւնը, որը սովորել էր հայրենասիրութիւնը միացնել եկեղեցու սիրոյ հետ: 1650 թուին կրօմվէյլը ներս խուժեց Շօտլանդիա և հպատակեցնելով ժողովուրդը, սկսեց ձնշել հոգևորականութիւնը, որը զլխաւոր արգելափիթն էր նրանց նուաճողական ձգտումների: Բայց հոգևորականութիւնը դիմացաւ նրա ձնշումին, որովհետեւ կանգնած էր ամուր հողի վրայ և շարունակում էր գրգռել ժողովրդի եռանդը: Այսպիսով ժողովուրդը սերտ կապուած էր իւր հոգեոր պաշտպանների հետ: Իսկ վերջինները բոլոր քաղաքական դէպքերի և հասարակական ու մասնաւոր երեսյթների վրայ կռապաշտութեան և սնոտիապաշտութեան կնիքն էին դրոշմում: Կարլոս I-ի դէմ պատերազմը աւելի կրօնական էր, քան քաղաքական: Շօտլանդացիք պաշտպանում էին իրենց ազատութիւնը և միենոյն ժամանակ աշխատում էին թուլացնել կռապաշտ արքային և կռապաշտ անզլիական եկեղեցին: Անզլիացիների հետ միանալով ընդհանուր ձնշողի դէմ, նրանք պահանջում էին հիմնել կրօնական դաշնակցութիւն, իսկ անզլիացիք, ղեկավարուելով պարզ աշխարհիկ եղբացութիւններով, սահմանափակում էին քաղաքացիական միաբանութեամբ: Շօտլանդացիք համոզուած էին, որ

պատերազմը աստծու անմիջական հովանաւորութեան տակ է գտնուում և կատարուում է հրաշըներով: Բայց որովհետեւ ժողովուրդների և հոգևորականութիւն միացեալ գործունէութիւնը շարունակում էր XVII-րդ դարու ընթացքում, քարոզիչները կարողացան ձեռք բերել ահագին ազգեցութիւն և յետ պահել մտաւոր զարգացումը համարեա մի ամբողջ դար: Ահա կարձ բնորոշումը այն ժամանակի քարոզչական գործունէութեան: Թարողները կարդացում էին անընդհատ բոլոր եկեղեցիներուում, ամեն մի քարոզիչ աշխատում էր խօսել որքան կարելի է ուժեղ կերպով և որչափ կարելի է շատ—մինչև ոյժերի սպառումը: Մի քանի եկեղեցիներուում հանդիսաւոր օրերը փոխէփոխ խօսում էր մի բանի քարոզիչ, իսկ մի մայրաքաղաքի եկեղեցում քանի քարոզիչ, իսկ մի մայրաքաղաքի եկեղեցում է քարոզիչների դէպի ժողովուրդը ունեցած բերում է քարոզիչների դէպի ժողովուրդը ունեցած պատերազմունքին, այդ պարզում է հետեւալ փասվերերմունքին, այդ պարզում է հոգեորականութիւնը ընտրում էր մի քանի վստահելի անձ, որոնք կազմում էին «եկեղեցական ժողով», որ իսկապէս ծխական դատաստանատուն էր: Այս ժողովները իւրացրել դատաստանատուն էին Ամեն անհապանդ ծխերին սեպականութիւնից էին անհապանդ ծխերին սեպականութիւնից զրկելով ու համայնքից հեռացնելով պատժելու իրավուում էր հոգեոր բռնակալութիւնը մուտ էր գործում ցով հոգեոր բռնակալութիւնը մուտ էր գործում մասնաւոր, ընտանեկան և հասարակական կեանքը: Դատաստանատուն էին, որ բռնակալու կազմունքն ու լրտեսները հսկում էին, որ բռնակալու ծխականները քարոզ լսէին: Քարոզի անունը իրը սուրբ, ոչ պէտք է արտասանուէր և ոչ մամուլի մէջ սուրբ, առանց նիստի թոյլտւութեան: Հոգեորականուներեար, առանց նիստի թոյլտւութեան: Հոգեորականուներեար, առանց նիստի թոյլտւութեան:

կանց ապագայ վիճակը և աստուածային պատիժ էր հայում թերահաւատների և ծուխի անպատկառ անդամների վրայ: Նոյն ժամանակ նրանք տարածում էին աներևակայելի վայրենի առասպելներ պատիժների մասին, որ կրում էին զանազան անօրէններ: Այսպէս օրինակ, մի կաթոլիկ, որ հակածառում էր քարողիչ Զոն Վէլշին, մեռաւ անակնկալ մահով. մի ջէնտլմեն, որ ծաղրել էր Թոմաս Հօնի անմիտ քարողը, հիւանդացաւ և մեռաւ նոյնպէս անակնկալ. մի հարբածի լեզուն պապանձուեց, որովհետև նա լեզուն հանեց քարոզին, որ սովորութիւն ունէր քարողի ժամանակ լեզու հանել. քահանային հայհոյող մի կնոջ լեզուն և լնդերը ուռան, եկեղեցուց դուրս գալով քարող խանգարող երեք ջէնտլմէն մեռան բռնի մահով. քահանային ծաղրող երիտասարդ աղջիկը ջրահեղճ եղաւ: Քահանաների ասելով, մի քանի գէպքերում հոգկորականութեան վրէժը տարածւում էր և անմեղ ժառանգութիւն վրայ: Քահանային մեղադրող կամ նրա դէմ քաղաքացիական դատ սկսողը իւր վրայ էր կանչում երկնքի պատիժը: Այս տարօրինակ պատմուածքներով ամրապնդում էր քահանայական կոչման անսահման սրբութիւնն ու անձեռնմխելիութիւնը և հպարտութիւնը անսահման էր: Նրանք իրանց յայտարարում էին աստծու պատգամաբերներ, հրեշտակներ, մեղսական ճանապարհց հեռացնող յուշկապարիկներ, աստուածային պատենի մէջ ընտրած նիզակներ, աստղեր և այլն: Քարոզչի մահուան ուղեկցում էին հրաշքներ: Որպէս զի ժողովրդի մէջ ամրապնդեն կըօնական սնոտիապաշտ տրամադրութիւնը, որ այնպէս նպաստում էր հոգկորականութեան նպատակներին, քարողիչները շարունակ սարսափեցնում էին ժողովուրդը չար ոգիների և հանդերձեալ կեանքի տանջանքների մասին զարհուրելի պատմուածքնե-

րով: Նրանք սովորցնում էին, որ չար ոգիները սատանային գլուխ առած, խառնւում են երկրի վրայ և օդում, երկում են և թափանցում ամենուրէք, ուր միայն կարելի է մնաս հասցնել և անասելի խորամանկութեամբ աշխատում են տիրել քրիստոնեաների հոգուն: Այս պատմուածները ժողովրդին հասցնում էին մինչև անմտութիւն: Շօտլանդացուն ամեն տեղ հալածում էին ահուելի պատկերներ և չնչին ձայնը հասցնում էր նրանց սարսափի: Սւելի սոսկալի էին դժոխային տանջանքների մասին պատմուածները, որոնք ոգիների մասին պատմուածների հետ միասին զրկում էին մարդուն երկրային կեանքի երջանկութեան և հանգերձեալ կեանքում փրկութիւն գտնելու յոյսից: Բայց հոգեօրականութիւնը չսահմանափակուեց այս սոսկալի պատկերներով և դիտմամբ ժողովրդին ներշնչում էր աստուածութեան մասին այլանդակ հասկացողութիւն, իբրև մի վրիժառու էակի, խորամանկ, արիւնարբու և ամեն միջոց փնտըռող մարդկութեան մնասելու համար:—Այս մոայլ քարողների աղջեցութեան տակ մարդու ամենազնիւ զգացումները խեղդւում էին սնոտիապաշտ երկիւլից և ամեն տեսակ անբարեյաջող բընական երկոյթներ և ֆիդիքական ցաւեր վերագրում էին գերբնական միջամտութեան: Գիսաստղեր, երկրաշարժներ, սով, վարակիչ հիւանդութիւններ, պատեմազներ, կենդանիների մահ, անբերիութիւն, ցուրտ ձմեռներ և այլն ընդունւում էին իբրև արտայայտութիւն սնոտուածային զայրոյթի: Աստիճանաբար հոգկուրականութիւնը ստեղծեց բարոյականութեան օրէնսգիրք, որը տանօրինում էր կեանքի չնչին յարաբերութիւնները: Մարդու բնական հակումները գէպի բաւարարութիւն, զբաղմունք և ուրախութիւն համարւում էին մեղսական: հեղաբարոյ մարդը չպէտք է հրճուէր բնու-

թեան գեղեցիկ տեսարաններով, որոնք, շօտլանդական հոգևորականութեան ուսումով, մարդկային մեղանչականութեան շնորհիւ անընդհատ այլասերւում էր. միւնոյն ժամանակ քարոզում էին, որ մեղանչական տեսականութեան զգացողութիւնը 52 հիւանդութիւնների է ենթարկուած Բանաստեղծութիւնը համարւում էր ծանր մեղք. երաժշտութիւնը արգելուում էր մինչև անգամ պսակի ժամանակ, պարերը արգելուած էին Ընդհանուր ժողովի մի էղիկառով: Չունկորների պսակադրութեան հանդէսներին արգելուած էր ամեն տեսակ ուրախութիւն, իսկ հարուստների պսակադրութեան առհասարակ ներկայ էր մի որեւէ քահանայ, որը որոշում էր ծախսի ամենամեծ քանակը, որպէս զի հանդէսը շատ շքեղ չինէր: Յանցանք էր համարւում շօտլանդացու համար կաթոլիկ երկիր գնալ կամ կաթոլիկ ընդունել շօտլանդացու հիւրանոց, Առհասարակ սահմանուած էին անվերջ շարք յուղիչ արգելքներ, որոնք մասսայի մէջ առաջ էին բերում անընական և կոպիտ ճգնաւորական կեանք, որը մարդու կեանքը դարձրեց խիստ, մոայլ և անմխիթար: Ահա այսպիսի սոսկալի եղանակով էր ձնչած և այլանդակած շօտլանդացիների աղքային բընոյթը XVIII-րդ դարում: Ճգնաւորական կեանքի հին ուսուցումները և ինքնառչացման թէօրիաները չին վնասում մարդկութեան այն պատճառով, որ մի կողմից փիլիսոփանները չկարողացան մարդկանց ինքնաճանաշութեան տիրապետել իսկ միւս կողմից—իշխանութիւն, ոյժ չունէին: Միշտ մի ուղղութեամբ գործող և յաճախ այս երկու արհեստները միացնող գրասենեակացին աստուածաբաններն ու վարդապետողները, ոչ թէ միայն մարդկային երջանկութեան արենարբու թշնամիներն էին, այլ և գործում էին շատ մեծ աջողութեամբ: Այս մարդիկ չին հասկանում, որ մարդկային պահանջների և ցան-

կութիւնների բաւարարումը պայմանաւորում է նրա զարգացումը. որ ինքնաբաւարարութեան օրինական և անհրաժեշտ սահմանը պարունակում է իրեն և ուրիշին վնաս չհասցնելու մէջ:—Բոլոր ասածներին անհրաժեշտ է աւելացնելու որ ոչ մի հոգևորականութիւն քացի իսպանականից, չի կարող համեմատուել շօտլանդականի հետ մարդու ֆիզիքական և մտաւոր բնոյթի սիստեմատիկ ձնշման գործի մէջ: Իսպանական հաւատաքննութիւնը, շօտլանդական հոգևորականութեան նման, աչքի էր ընկնում անհամբերողութեամբ և անգիտութեամբ, սպանում էր մարդու լաւագոյն կողմերը և հալածում էր կրօնական ազատութեան ամեն տեսակ արտայայտութիւնը: Բայց նրանք տարբերում էին մի քանում. շօտլանդական եկեղեցին աղատամիտ էր քաքարական գործունէութեան մէջ, իսկ իսպանականը ամեն բանում պահպանում էր իւր ստրուկ բնոյթը:

9

Շօտլանդիայի XVIII-րդ դարու մտաւոր գարդացման ուսումնակութիւնը.—Արտածական (дедуктивный) եղանակի տիրապետութիւնը.—Հիւտչէսօնի, Աղամ Սմիտի, Իւմի, Խէյփ և Բէէկի վիլսոփայութիւնը:—Բնադիտութեան առաջադիմութիւնը:—Լէսովիլսոփայութիւնը:—Զոնտէրի, Զոնտէրի, Զոնտէրի և ուրիշների գործի, Զոնտէրի, Ուատտի, Կոլլէնի, Զօն Զոնտէրի և ուրիշների գործի:—XVIII-րդ դարու արտածական գրականութիւնը չէր կարող ծերը:—XVIII-րդ դարու արտածական գրականութիւնը և անհամբերազդիկ աղջութեան վրայ:—Սնոտիապաշտութիւնը և անհամբերազդիկ շօտլանդիայում:

XVIII-րդ դարում սկսուած Շօտլանդիայի մտաւոր զգացմումը մի հակաշարժում էր արմատացած ասպարդացման մի հակաշարժում էր արմատացած ասպարդացման ուղղութեան դէմ: Բաղաքական բընտուածաբանական ուղղութեան դէմ:

նակալութեան դէմ կուում վարժուող և XVII-րդ դարում գործնական նպատակների դիմող շօտլանդացիների մտաւոր ընդունակութիւնները XVIII-րդ դարում առաջ բերին յանդուզն գրականութիւն, որը ձգտում էր թուլացնել եկեղեցական բռնակալութեան հիմքերը: Բայց ՚ի դժբաղդութիւն Շօտլանդիայի, այս նոր ուղղութեան շրջանում առանձին խնդիրները վճռում էին շատ անյարմար միջոցներով: Համարեա բոլոր երկրներում մակածական կամ մասնաւոր փաստերից ընդհանուր սկզբունքների դիմող եղանակի աջողութիւնը զլաւուր նեցուկն էր հոգեորականութեան արտածական եղանակով կամ ընդհանուրից մասնաւորի դիմող միջոցների վրայ հիմնուած աւանդական հասկացողութիւնների և վարդապետութիւնների դէմ մտաւոր շարժման: Ֆրանսիայի պատմութեան մէջ հեշտ է նըկատել, թէ ինչպէս XVIII-րդ դարում մակածական եղանակի ուժեղանալով պատրաստուած էր հալլիկան եկեղեցու անկումը: Անգլիայում մակածական եղանակի վրայ հիմնուած թէկոնի փիլիսոփայութիւնը առաջ բերեց այն շարժումը, որի շնորհիւ խորտակուած էր անգլիական եկեղեցին կարլոս I-ի ժամանակ: Իսկ թէ որքան շոշափելի էին այս շարժման մէջ մակածական եղանակի աջողութիւնները, երևում է այն բանից, որ հոգեորականութիւնը Պալի և նրա հետևողների միջոցով մի քանի անաջող փորձեր արեց այս եղանակը գործադրել իւր աստուածաբանական հայեացքների համար: Շօտլանդական գրականութեան անզօրութիւնը արմատացած սնոտիապաշտութեան դէմ կուում բացատրում է հենց նրանով, որ նա իւրացրեց արտածական եղանակը, որը յատուկ էր տիրապետող աստուածաբանական սիստէմին: Մեզ արդէն յայտնի է թէ որքան հզօր էր հոգեոր հեղինակաւորութեան

ազդեցութիւնը մասնաւոր և հասարակական կեանքի բոլոր ճիւղերում: Բացի Նեպիրից, համարեա բոլոր աւելի աչքի ընկնող մտածողները պատկանում էին հոգեոր դասին: Հոգեորականութիւնը կառավարում էր ժողովուրբը և զարդացնում նրան իւր քարոզներով և իւր բանակուային գրուածքներով, որոնք կազմւում էին արտածական եղանակով: Ամբողջ աստուածաբանական համակարգութիւնը հիմնուած էր վերացական սկզբունքների վրայ, որոնք համարւում էին աստուածային յայտնութեան արդինք, որ ոչ ստուգուել կարող էին և ոչ վէճի առարկայ դառնալ: Եթէ սրան աւելացնենք, որ ժողովրդի ցածր և բարձր զարդացումը, համալսարաններն ու դպրոցները—ինչպէս և աւանդման եղանակները գտնում էին հոգեորականութեան անեղանակը պէտք է տիրապետող նշանակութիւն ծական եղանակը պէտք է տիրապետող նշանակութիւն ստանար: Եւ իրօք մինչև անգամ նոր փիլիսոփայութիւնը չկարողացաւ Շօտլանդիայում ազատուել այդ եղանակից: Անկասկած և Անգլիայում և ֆրանսիայում եղանակից: Անկասկած և Անգլիայում և ֆրանսիայում միանալու մեջ նկատում ենք փոքր շեղում դէ-XXI-րդ դարում մենք նկատում ենք գիտութիւնը շատ պի արտածական եղանակը. բայց այդ արտայայտուեց այնտեղ միայն այն ժամանակ, երբ գիտութիւնը շատ անդադար միայն այն ժամանակ, երբ գիտութիւնը շատ եղանակացութիւնների եկաւ, որոնք կարող էին ծառայել եղանակացութիւնների հետ, որոնք կարող էին ծառայել եղանակացութիւնների հետ: Իսկ Շօտլանդիայում արտահերթներութիւններ արտածութեան: Իսկ Շօտլանդիայում արտածական եղանակը երբէք չի դադարել տիրապետելուց: Այս գլխում մենք կը նենք այդ եղանակի արտայայտում գիտութիւնների զանազան ճիւերում, որոնք Շօտլանդիայում գարդացան XVIII-րդ դարու ընթացքում: Լանդիայում գարդացան XVIII-րդ դարու ընթացքում: Աշխարհիկ փիլիսոփայութեան հիմնադիրը Շօտլանդիայում անվիճելի ֆրանսիս Յիւտչեսօնն է: Շօտլանդայում աստուածաբանականութեան ցիներից նա առաջինը յանդկնեց բարոյականութեան համակարգութիւն ստեղծել պարզ աշխարհիկ բնագան-

ցական սկզբունքների վրայ: Հաւատալով աստուածային յայտնութեան, բայց և այնպէս նա սրա հետ դասում էր «բնութեան օրէնքները» կամ կեանքի այնպիսի կանոններ, որոնք կարող են ընդհանրացած լինել մարդկային բանականութեամբ: Աստուածաբարանական վարդապետութիւնների հակառակ նա բանականութեան վերագրում էր այնպիսի խնդիրներ լուծելու ընդունակութիւն, որոնք մարդու համար անլուծելի էին համարւում: Այս սկզբունքով ղեկավարուելով Հիւտչեսօնը անձնական կարծիքի ազատութեան ամենանդուն պաշտպանն է հանդիսանում: Նոյնպէս վստահ կերպով էր բողոքում նա մոայլ զրկողական կեանքի դէմ, որը քարոզում էր հոգևորականութեան կողմից: Նա պնդում էր, որ մարդու բազմակողմանի դարպացման համար անհրաժեշտ է զեղեցկին երկրպագելը և առանձին մանրամասն կերպով հետախուզում էր զեղեցկի մասին մեր ունեցած մտապատճերի ծագումը: Նա ապացուցանում էր, որ անհրաժեշտ է յարգել զեղեցիկ արուեստները ոչ միայն այն պատճառով, որ նրանք դուրեկան են, այլ և նրա համար, որ նրանք օգտակար են: Նա առաջինը պաշտպանեց ձըգտումը դէպի հարստութիւն և ապացուցանում էր, որ մեր պահանջների բաւարարութիւնը կարող է գոյութիւն ունենալ բարձրագոյն առաքինութեան հետ միաժամանակ: Մի խօսքով նա եղանակուն կերպով պաշտպանում էր բնութիւնը և մարդկային իրաւունքները, որոնք հոգևորականութեան կողմից ներկայացւում էին ամենակեղոտ և յանցաւոր ձևով.—Այս ուսումնասիրութեան համար առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում այն եղանակը, որով օգտաւում է Հիւտչեսօնը իւր փիլիսոփայութեան մէջ: Նախ և առաջ անհրաժեշտ է նկատել, որ բարոյական փիլիսոփայութեան մէջ,

ինչպէս և գիտութեան ամբողջ շրջանում, որը կեռ չի հասել գիտութեան աստիճանի, գործածելի են երկու եղանակ, որոնք ուսումնասիրութեան հասցնում են տարբեր եղբակացութիւնների: Օրինակ աստղաբաշխութեան մէջ, որը գիտութիւն է, կարելի է մաթեմատիկական եղանակով հաշուել մարմինների շարժումն ու շեղումը և ապա ստուգել և պնդել ստացած եղբակացութիւնները մակածական միջոցով, այն է հեռադիտակի օգնութեամբ դիտելով: Իսկ քիմիայի մէջ, որը կեռ կի ստուգելով: Իսկ զիմիայի մէջ, որը դիտելու եղանակները նոյն անհամաձայնութիւնը նկատերկու եղանակների նոյն անհամաձայնութիւնը նկատելում է և բարոյական փիլիսոփայութիւնը ուսումնասիրութիւնը: Իւր շկոլայի ուրիշ ներկայացուցիչների նըրելու մէջ: Իւր շկոլայի ուրիշ ներկայացուցիչների նըրելու մէջ:

Ուրիշ մեծ մտածողը, որը փորձեց գիտութեան հիմքի վրայ առանց կրօնի օգնութեան մարդկային գործունէութեան ընդհանուր սկզբունքները ստեղծել, գործունէութեան էր: Սա 1759 և 1776 թուերին հրատապամ Սմիտն էր: Սա գիտութեան համար արդիական կարողութիւնը բարեկայի մարդկային կեանքի վրայ ամբողջ մարդկային կեանքի թէօրիա ստեղծել:

Ջին կըուածքի մէջ նա ուսումնասիրում է մարդկային բնութեան համակրական, իսկ երկրորդում—նրա եսասիրական կողմը: Բայց որովհետեւ այս տարրերի բազմակողմանի ուսումնասիրութիւնը հնարաւոր կլինէր միայն նիւթի առատութեան ժամանակ, որի կուտակումի համար անհրաժեշտ կլինէր մի քանի դար, Աղամ Սմիտը պէտք է հրաժարուէր մակածական եղանակից և ընդունէր արտածականը: Բայց նա յաջողութեամբ օգտուեց և մի այլ ձևով, որ պարունակում էր հետեւալում:—Եթէ ներկայ առարկան մակածութեան չի ենթարկում, անբաժանելի փաստերը կարելի է մտաւոր կերպով բաժանել և դատել մի շարք երկոյթների հիման վրայ, որոնք իրական և անկախ գոյութիւն չունին. Բայց յատուկ են մտածողի մտքին: Այս եղանակը առանձին աջող կերպով գործածւում է երկաշափութեան մէջ: Օրինակ՝ ամեն մի գիծ, խիստ դատելով, ունի երկու չափ՝ երկայնութիւն և լայնութիւն: Իսկ երկաչափը, իւր խնդիրը թեթևացնելու համար, գիտական-արհեստական ձևով բաց է թողնում այս չափերից մինը և պնդում է, որ գիծը ունի միմեայն երկայնութիւն: Մինչդեռ տուած օրինակում ճշմարտութիւնից շեղումը այնքան չնչին է, որ չի ազդում երկաչափական եղրափակութիւնների ճշշտութեան վրայ: Ճիշտ նոյնպէս քաղաքական տնտեսութեան մէջ հետախուզողը բոլոր օրէնքները և կեանքի յարաբերութիւնները հետևեցնում է միմիայն շահախնդրութեան սկզբունքից և իւր խնդիրը թեթեացնելու համար մի կողմն է թողնում մարդկային գործունէութեան բոլոր բարոյական շարժառիթները: Չնայելով այս բանի, քաղաքա-տնտեսական թէօրիխաները հաստատուած են գիտական եղանակով, թէաէտ և կարող են մասնաւոր գէպքերում մերժուած կամ փոփխուած լինել:—Աղամ

Սմիտը օգտուում էր արտածական եղանակի այս առանձին ձևով խիստ հետեղութեամբ: Իւր «բարոյական զգացումների թէօրիխից» մէջ նա ամբողջ մարդկային գործունէութիւնը առաջ էր բերում բացառապէս կարեկցութեան սկզբունքից և բոլորպէին արհամարհում էր մարդու շահախնդիր կողմը: Իսկ «Ճեղերի հարատութեան» մէջ, նա մարդկային ամբողջ գործունէութիւնը առաջ է բերում շահախնդրութեան սկզբունքից, բոլորպէին արհամարհուվ կարեկցութեան սկզբունքը: Առաջին հայեացքով, իհարկէ, այս գրուածքների մէջ նըկատում է ակներև հակասութիւն: բայց այդ հակասութիւնը անհետանում է եթէ քնննենք այդ հեղինակութիւնները ինչպէս մի գործի երկու հատուած, ուրոնց մէջ մեծ մտածողը փորձում է երկու զանազան և ինքնուրոյն ուղիներով հաստատուն հիմք ստեղծել մարդկային բնոյթի մասին ապագայ գիտութեան համար: Առաջին գործը ստեղծած է կարեկցութեան սկզբունքի վրայ, որ Աղամ Սմիտը մարդկանց փոխադարձ շփման արդիւնք էր համարում: Մարդը իւր գիտութիւնը վերցնում է արտաքին աշխարհից, իրեն ուրիշ մարդկանց գրութեան մէջ դնելով և նրանցից օրինակ առնելով այն ամենում, ինչ նրան թւում է գովելի և արդար: Ընդհանուր սկզբունք որոշելով Աղամ Սմիտը առաջ է գնում և բացատրում է մի շարք հասարակական երկոյթներ՝ մարդու կարեկցութիւնը դէպի ուրիշի երջանկութիւն կամ աջողութիւն, համակրութեան զգացումի սկզբնաւորութիւնը, փիլիսոփաների դէպի զանազան գաղափարները, որոնք տարբեր փիլիսոփայական սիստեմներ են առաջ բերում, ունեցած համակրութիւնը, մարդկաների, պատիմների ու պատժող մակրութիւնը, պարզեների գոյութեան պատճառները և վերօրէնքների սիստեմի գոյութեան պատճառները:

Այս և նման բոլոր երեսոյթները նա բացառապէս քըննում էր իբրև մարդու կարեկցական կողմի հետևանքներ. թէպէտ միենոյն ժամանակ նա չէր կարող չընդունել, որ կարեկցութեան բաւարարումը մարդուն գուարծութիւն է պատճառում, իսկ ձգտումը դէպի գուարծութիւն բացատրում է շահախնդրութեամբ: Զնայելով այս միակողմանիութեան, Աղամ Սմիտը իւր գործի սահմաններում կատարեց այն ամէնը, ինչ հնարաւոր էր ճշմարտութեան կարելոյն չափ մօտենալու համար: Իբրև հակալրութիւն առաջին աշխատութեան, երկրորդը, ինչպէս ասինք, բացառապէս հիմնուած է շահախնդրութեան սկզբունքի վրայ, որը նա համարում է ամբողջ մարդկային գործունէութեան գլխաւոր աղբիւրը: Իւր դատողութիւնները նա առաջ է բերում հետևեալ երկու դրութիւններից:—1) որ հարստութիւնը աշխատանքի և ոչ հողի արդիւնք է և 2) որ հարստութեան ընդհանուր գումարը կախումն ունի մասամբ աշխատանքի որակից և մասամբ աշխատող մարդկանց թուական յարաբերութիւնից: Այս դրութիւններից առաջ գալով Աղամ Սմիտը բացատրում է բոլոր հասարակական երեսոյթները միմիայն մարդկային եսասիրութեամբ և վերացնում է որևէ է բարոյական դրդումների աղղեցութիւնը: Մարդիկ ձգտում են իրենց օգտի և այդ բանով ակամայ նպաստում են ուրիշների շահերին: Աղամ Սմիտի կարծիքով այստեղից հետևում է, որ մարդկային եսասիրութիւնը պէտք է զարգանայ և ոչ յետ մղուի: Մասնաւորապէս Աղամ Սմիտը ղեկավարուելով այս սկզբունքով, նախապատրաստեց Մալտուսի նշանաւոր թէօրիան և այնպիսի հետաքրքիր փաստեր բացատրեց, ինչպէս, օրինակ, անօգտակար դասակարգերի մեծ վարձատրութիւնը, կամ հոգևորականութեան հիւրասիրութիւնը միջին դարերում, որը, նրա կար-

ծիքով, այս դասակարգին ծառայում էր իբրև միջոց իւր սրբակրօնութիւնը քարոզելու և իշխանութիւնը գորեղացնելու համար:

Աղամ Սմիտի ամենաաչքի ընկնող ժամանակակիցն էր Դաւիթ Իւմը, որի բաղաքա-տնտեսական գործերը հրատարակուած էին 1752 թուին: Իւմը Սմիտից շատ աւելի ցածր էր հայեացքների վստահութեան, մտքի խորութեան և մանաւանդ երևակայութեան ուժեղութեամբ: Այս պատճառով նրա «Անգլիայի պատմութիւնը» գեղարուեստի գեղեցիկ արտադրութեան նշանաւոր օրինակ է լեզուի գեղեցկութեամբ և ոճի սահունութեամբ: Բայց այս գրուածքը ցոյց չի տալի հնդինակի մէջ այն ջերմ կարեկցութիւնը, որը դէպի իրենք առաջ են ըերում ԽVII-րդ դարում ինքնազոհ կերպով ազատութեան համար մարտնչող համարձակ և ազնիւ գործիչները: Իւմի ուժեղ, բայց սառը ուղեղը ըմբռում էր մեծ շարժման առանձին կողմերն ու վայրկեանները, բայց անկարող էր ամփոփել դարի ամբողջ պատկերը: Մրանից անկապ նա ստեղծեց մի շարք նշանաւոր թէօրիաներ: Առանձին նշանակութիւն ունին նրա պատճառականութեան (որինութեան) և գաղափարների զուգութեան թէօրիաները: Առաջին թէօրիաի հետ նա ստեղծեց հրաշքների թէօրիան, որը մինչև հիմայ ծառայում է իբրև յենակէտ գիտական այս տեսակի ուսումնասիրութիւնների: Բացի դրանից Բէնտումի հետ միհասին նա մշակեց օգուտի թէօրիան, գործադրելով այդ առանձին անհատի, երբ Բէնտումը այդ թէօրիան գործադրում էր ամբողջ հասարակութեան վերաբերմաբ: Վերջապէս անազին օգուտ բերեց նա ապագայ սերնդին իւր առկտուրի ազատութիւնը պաշտպանող ինքնուրոյն քաղաքա-տնտեսական թէօրիաներով: Նա ոչնչացրեց տիրող համոզմունքները,

որով առևտրական պետութիւնները իրար համարում էին մրցակիցներ և ապացուցեց առևտուրի աղաւ շըրշանառութեան անհրաხշտութիւնը։ Առանձնապէս նշանակալից է, որ քաղաքա-տնտեսական գիտութեան այն գրութեան ժամանակ իւմին յաջողեց բանալ Սմիտի սխալը բէնտայի նշանակութեան մասին և ապացուցանել, որ սա արժէքի արդիւնք է և ոչ բաղադրիչ մասը։—Բայց և այնպէս, չնայելրով այս յայտնութիւնների բաւական հաստատութեան, իւմի մէթօղը պարզ արտածական էր։ Նա շատ էր յափշտակուած գաղափարով և փաստերի հետախուզութիւնը վերջին տեղն էր դասում։ Մինչև անդամ նա Բէկոնի փիլիսոփայութեան, որը մակածական եղանակի վրայ է հիմնուած, արհամարհանքով էր վերաբերուում։—Արտածական մէթօղի նշանաւոր օրինակ է ներկայացնում իւմի «կրօնի բնական պատմութիւնը»։ Այս գործի հիմք են դրած այն սկզբունքները, որոնք մշակել է նա իրեն դիտելով և ապա այս դիտողութիւնների հիման վրայ նա արտածութեան օգնութեամբ ամբողջ սիստեմ է սարքել։ Իրեն նպատակ դնելով կրօնական գաղափարների ծագումն ու զարգացումը նկարագրել նա նախապէս ընդունեց բոլորովին վերացական դրութիւն, որ բազմաստուածութիւնը ամեն տեղ նախընթացում է միաստուածութեան, ինչպէս նախնական մարդկանց վայրենի դրութեան արդիւնք։ Այս դրութիւնը ընդունելու համար, որը ապացուցանուում է նոյնպէս և մակածական եղանակով, նա բաւականանում էր այն ապացոյցով, որ բազմաստուածութիւնից միաստուածութեան անցնելը նրա մտքին բնական էր թըռում։ Ճիշտ նոյնպէս դատելով իին յոյների և հոռվամայեցիների կրօնական հայեացքների մասին, նա օգտուում է պարզ վերացական պատճառաբանութեամբ։

Իսկ առհասարակ նա ի նկատի է առնում միմիայն այնպիսի փաստեր, որոնք համապատասխանում են նրա նպատակներին, իսկ միւս փաստերը բոլորովին անտես է թողնում։ Դի դէպ, աւելորդ չէ այստեղ մատնանշել իւմի և կողվորտի նոյն խնդրի մասին եզրափակութիւնների տարրերութիւնը։ Իւմից աւելի գիտնական կողվորտաց 80 տարի առաջ, զեկավալուելով Բէկոնի մէթօղով, որի շկոլայից և ինքը դուրս եկաւ, ընդարձակ գիտութիւն գործ դրեց ապացուցանելու, որ միաստուածութեան հաւատը հին աշխարհում տիրապետող վարդապետութիւն էր։ Իսկ իւմը արտածական եղանակով եկաւ հակառակ բայց հիմնական սկզբունքի, Այս տարրերութիւնը, ինչպէս վերև նկատած էր, բացատրում է երկու գիտնականներից ուսումնասիրուող առարկայի անբաւարար գիտական բնոյթով։

Վերջապէս իւմի և Աղամ Սմիտից յետոյ պէտք է քննել շօտլանդական պարզ վերացական մտածողներից աւելի աչքի ընկող—Ռէյդի փիլիսոփայութիւնը։ Այս փիլիսոփայի բնոյթի մէջ պարունակուում է մի առանձնայատկութիւն, որից անմասն էին հին մտածողները։ —Պա վեհերուտութիւնն է, որ համարեա հասնում էր բարոյական վախկոտութեան և արտացոլուեց նրա փիլիսոփայական ուղղութեան վրայ։ Նա, առհասարակ, վերացական ճշմարտութիւնը քննում էր այն գործնական հետեւանքների տեսակէտից, որ այդ ճշմարտութիւնը առաջ պէտք է բերի և վրդովլում էր ուրիշ փիլիսոփոնների ազատ մտածելակերպի դէմ, որոնք չէին զեկավարում այդ գատանշանով (critérium)։ Նա մերժում էր իւմի պատճառականութեան թէօրիան նրա համար, որ նրա իրագործումը առաջ կրերէր քրէական օրէնքների գործադրութիւնը։ Նա մերժում էր իւմի պայմանագրութիւնների թէօրիայի բնագանցական հիմ-

քերի մասին դատողութիւնները նրա համար, որ այդ դատողութիւնները պէտք է թուլացնէին մարդկանց մէջ պարտաւորութեան զգացումը: Ռէյզը ճշմարիտ էր համարում միայն այն թէօրիաները, որոնք նպաստում էին հայրենասիրութեան, մեծահոգութեան կամ բարեկամասիրութեան զարգացման ներկայ դարում և անհրաժեշտութեան դէպօւմ նա մինչեւ անգամ չէր քաշւում փիլիսոփաների վրայ մեղադրանք բարդել հակակրօնական գաղափարներ տարածելու համար: Ոչ պակաս տարօրինակ և օրիգինալ է հանդիսանում նա երկու մեթօդների ընտրութեան մէջ: Նա աշխատում էր խորտակել Լոկիի, Բերկլիի և Խւմի փիլիսոփայութիւնը, ապացուցանելով արտածական եղանակի անկարողութիւնը, ուրով վերջինները օգտառում էին: Նրա կարծիքով օրինակ Խւմը իրաւունք չունէր եղրակացութիւններ առաջ բերել կանխածանօթ սկզբունքներից, այլ պէտք է օգտուէր մակածականութեան միջոցներով: Մինչեւ իւրիսկ համակարգութեան մէջ Ռէյզը օգտառում է բացառապէս արտածական եղանակով: Պարզ է, որ նա, ըմբռնելով արտածական փիլիսոփայութեան անհիմն լինելը և ձգտելով նրա խորտակման, ինքը չէր կարող հրաժարուել իւր դարու ոգուց:

Վերացական մտածողութեան շրջանից մենք կանցնենք բնագիտութեան շրջանին, ուր, ինչպէս մեղ այժմ կթուայ, արտածական եղանակը պէտք է գերակշռի մակածականի: Յայտնի է, ուր անօրգանական աշխարհի ուսումնասիրութեան մէջ տաքութեան օրէնքները ուսումնասէրների առանձին ուշադրութիւնն էին գրաւում, որովհետև այս օրէնքների հետ սերտ կապուած է ոյժի և նիւթի մշտականութեան կամ չոչնչանալու խնդիրը: ԽVIII-րդ դարու սկզբում շատանդական պրոֆէսոր Քլէկը թագնուած ջերմութեան սկզբի թէօրիան ստեղ-

ծեց, որը և հիմք դրեց ոյժի ու նիւթի մշտականութեան ուսման և լոյսի ու տաքութեան նոյնութեան որոշման: Բայց այս թէօրիան չէր կարող մակածական եղանակով ստեղծուած լինել, որովհետև թագնուած ջերմութեան սկզբը մեր զգայարաններին անմատչելի է կամ, այլ խօսքերով, ներկայացնում է գերզգայական իր և այդ պատճառով մեծ յայտնութիւնը կարող էր ծնուել միմիայն մտքի մէջ և պարզ վերացական արտածութեան պտուղը լինել: Նոյն վերացական եղանակով Բլէկի հետեւող Լէսլին հասաւ լոյսի և տաքութեան նոյնութեան գաղափարի, որը ապագայում հաստատուեց փորձով, և ոյժերի միատարրութեան, որը մերժում է աշխարհի ընդունուած բաժանումը օրգանականի և անօրգանականի: Կամ կենդանի և մեռուած ոյժ ու նիւթի տարբերութեան գաղափարի: Վերջապէս նոյն արտածական եղանակի օգնութեամբ Հօտտոնը ստեղծեց XVIII-րդ դարու վերջը իւր նշանաւոր երկրաբանական թէօրիան: XVIII դարու երկրորդ կէսում անգլիացիները երկրաբանութեան մէջ օգտառում էին մակածական, իսկ շատլանդացիները և գերմանացիները արտածական եղանակով: Անգլիայում մակածական երկրաբանական ամփոփումների վրայ նախ աշխատում էին Վիլիամ Սմիտը և Լօնդօնի մասնագիտական ընկերութիւնը և ապա Լայելը և Մուրչիսոնը: Գերմանիայում Վէրները հիմնեց այլ երկրաբանական շկոլա, որին պատկանում են նշանաւոր Մուլը, Ռապումէրը, Ֆօն-Բուխը և Ալէքսանդր Հումբոլդտը: Յայտնի է, որ ջուրը և կրակը բոլոր երկրաբանական փոփոխութիւնների հիմնական պատճառներն են համարում: Բայց երկրաբանները չէին հաշտուում այս կամ այն գործօնը գերադասելու խնդրում: Վէրները հիմնական երկրաբանական գործօն էր

համարում ջուրը և, նրա թէօրիայի համեմատ, նախական շրջանում ամբողջ տիեզերքը մի ընդարձակ ծովլէր ներկայացնում, որի մէջ սկիզբ առան շարժողութիւնները մրրային լեռները և զանազան շարերը (пласты). ապա ջրերի հասարակ շարժողութիւնը փոխուեց փոթորկալից ալեկոծութեան, որի մէջ սկիզբ առաւ կեանքը և սկսուեց օրդանական կեանք ստեղծուել Հօտառնը, ընդհակառակը, իբրև հիմնական գործօն ընդունում էր կրակը և հիմնում էր Բլէկի ստեղծած թէօրիայի տաքութեան օրէնքների վրայ.—Երկու գիտնականներն էլ—Վէրներն ու Հօտառնը—իրենց սիստեմները հիմնեցին ընդհանուր կանխածանօթ սկզբունքների վրայ և բոլորովին հրաժարում էին բնութեան մակածական ուսումնասիրութիւնից: Առաջինը աւելորդ էր համարում ծանօթանալ շարերի դասաւորութեան հետ զանազան երկրներում, իսկ երկրորդը, խօսելով հրաբուխային երևոյթների մասին, երբէք ինքը չէր տեսել գործող հրաբուխի:—Անօրդանական աշխարհում կատարած յայտնագործութիւնների տեսութիւնը վերջացնելով, մենք պէտք է յիշատակենք շոգեշարժ մեքենայի հանձարաւոր հնարող Ուստափի ջրի բաղադրութեան մասին արած յայտնագործութիւնը: Այս գիւտի պատիւը տալիս են անդիմացի կաւէնդիշին, բայց իւրկապէս այս երկու գիտնականները եկան նոյն եղբակացութեան տարբեր եղանակներով:— առաջինը արտածութեան օգնութեամբ Բլէկի թագնուած ջերմութեան սկզբի օրէնքից առաջ գալով, իսկ երկրորդը աստիճանարար մակածութեան միջոցով:

Օրդանական կեանքը ուսումնասիրելում արտածական եղանակը Շօտլանդիայում նոյն գերն էր կատարում, ինչպիսին որ անօրդանական աշխարհն ուսումնասիրելում: Այս բանին ապացոյց են Կոլէնի և Զօն

Հոնտէրի ախտաբանութեան մասին նշանաւոր գործերը: Այստեղ նախ և առաջ պէտք է նկատել, որ հիւանդութեան օրէնքների հետախուզութիւնը արմատապէս տարբերում է հիւանդութիւններ բժշկելու արուեստից, որ ախտաբան-փիլիսոփան տարբերում է արհեստով պարապող բժշկից նոյնպէս, ինչպէս իրաւաբան—տեսական մարդը արհեստով պարապող իրաւաբանից, ինչպէս քաղաքանակագէտը պետական մարդուց, ինչպէս օրէնքներ ընդգծող ուսեալ հողագործը այդ օրէնքները գործադրող մարդուց և այլն: Այսպիսով ախտաբանութիւնը պարզ թէօրէտիկ բնոյթէ կրում, որա օրէնքները կարելի է ըմբռնել վերացականութեան եղանակով: Իսկապէս Կոլէնը մասմբ օգտագում էր վերը բացատրուած Աղամ Սմիտի եղանակով, որ պարունակում էր խնդիրը թիթեացնելում արամաբանական եղբափակութեան որոշումը խանգարող ապացոյցները վերացնելով: Կոլէնը իրեն նպատակ զբեց ամփոփել հիւանդութեան երևոյթները, ինչպէս նրանք ներկայանում են մարդու օրգանիզմի մէջ: Բնոյւնելով որ մարդու մարմինը բաղկացած է կարծր և հեղուկ նիւթերից, նա այնուամենայնիւ իւր բոլոր գաստողութիւնները հիմնեց բացառապէս կարծր նիւթերի օրէնքների վրայ, իսկ հեղուկ նիւթերը նա հիւանդութեան կողմանակի պատճառների վերջին տեղը դասեց: Բոլորովին Սմիտի եղանակին հետևելով, Կոլէնը պէտք է կարծր նիւթերի թէօրիայի հետ միասին էլի անկապ թէօրիայ ստեղծէր հեղուկ նիւթերի մասին՝ բայց նա այդ չարեց, որովհետև այս աշխատանքը նրա ուժերից բարձր էր: Նրա աշխատութեան մեծ ծառայութիւնը կայանում էր հէնց նրանում, որ նա փոխեց ախտաբանական աշխատութիւնների ուղղութիւնը, ուրոնց մէջ հետազոտողները գերադասութեան նշանակու-

թիւն էին տալիս հեղուկ նիւթերին և գէթ կողմնակի կերպով նպաստեց նեարդային համակարգութեան ապագայ ուսումնասիրութեան:—ինչ վերաբերում է Զօն Հօնտերին, սա ցոյց տուեց մտքի յատուկ կազմուածք, որ զարգացաւ զանազան ուղղութիւնների ազդեցութեան տակ.—Շոտլանդիայի արտածական մտածողութեան, ուր նա ծնուել էր և ապրել մինչև 20 տարեկան հասակը և մակածական մտածողութեան Անգլիայում, ուր նա վերջնականապէս բնակուեց: Այս երկու ազդեցութիւնները առաջ բերին նրա մէջ հակում և սովորութիւն դէպի երկու եղանակները: Նա ամենաեռանդուն կերպով ուսումնասիրում էր ամբողջ կենդանական աշխարհը և բազմաթիւ փորձերի օգնութեամբ մեծ թուով բնախօսական գիւտեր արեց: Նա հետախուզեց արեան գնդիկների պարբերական զարգացումը և գտաւ, որ սրանք գոյանում են արեան բոլոր ուրիշ բաղադրիչ մասերից ուշ: Նա աշխատում էր գտնել կենդանական և բուսական կեանքի բոլոր օրգանական շարժողութիւնը ամփոփելու համար ընդհանուր օրէնք: Վերջապէս նա իւր համրաբովանդակ հանձարի թափով աշխատում էր ամփոփել բնագիտութեան բոլոր ճիւղերը և, չնորհիւ դէպի ամփոփումը ունեցած ձգտման նա իւր ժամանակի ախտաբանների գլուխ անցաւ: Նա ոչ թէ ախտաբանութեան շրջանը չէր սահմանափակում հիւանդութիւնների օրէնքներով կենդանական կամ մինչև անդամ ամբողջ օրգանական աշխարհում, այլ հիւանդութիւնների ամբողջ նիւթական օրգանական և անօրգանական աշխարհի անկանոն գոյացումները նրա ուսումնասիրութեան նիւթը դարձեց: Նրա արտածական մտածողութեան սովորութիւնը ախտաբանութեան մէջ արտայայտուեց աւելի շօշափելի կերպով, քան բնախօսութեան մէջ: Այսպէս որ յանդիա մատնանշում է, որ ոչ մի նիւթի մասերը:

Ապա նա յաճախ մատնանշում է, որ ոչ մի նիւթի միանոյն տեղում չի կարող կատարուել երկու գործութիւններ այսպատճառով երկու զանազան հիւանդութիւններ միաժամանակ չեն կարող լինել մի անհատի մէջ: Ներ միաժամանակ չեն կարող լինել մի անհատի մէջ: Ապա նա յաճախ մատնանշում է, որ ոչ մի նիւթի միանոյն տեղում չի կարող կատարուել երկու գործութիւններ այսպատճառով երկու զանազան հիւանդութիւններ միահամական էր նրա երկուութեան երեսակայունոյնպէս վերացական էր նրա երկուութեան երեսակայունոյնպէս վերացական էր նամակրանքի մասին: Դժբաղթիւնը նա մտքի յատուկ կազմուածքի շնորհիւ, դաբար նա մտքի յատուկ կազմուածքի շնորհիւ, սովորութիւն էր իւր ախտաբանութեան մէջ արտածաշշամասում էր իւր ամփոփել. բայց նրա կան և մակածական եղանակները ամփոփել. բայց նրա փորձը անյաջող էր և նրա թէօրիաների մէջ առաջ բերեց անորոշութիւն, որը թուլացրեց այդ թէօրիաների բերեց անորոշութիւն, որը թուլացրեց այդ թէօրիաների բերեց անորոշութիւնը անզլիական մակածական մտքերի վրայ: ազգեցութիւնը անզլիական մակածական մտքերի վրայ: անորոշութիւնը անզլիական մակածական մտքերի վրայ:

և իրենց հայրենիքին Եւրոպայի քաղաքակրթութեան պատմութեան մէջ տուին բարձր տեղ: Բայց երկու գրականութիւններն էլ մի ընդհանուր յատկութիւն ունէին: Այս յատկութեան մէջ պէտք է փնտրել XVIII-րդ դարու վստահ և հանճարեղ գրականութեան՝ շօտլանդացիների ազգային-աստուածաբանական ոգու վրայ ունեցած թոյլ ազգեցութեան պատճառը: Արտածական եղանակը կամ ընդհանուր սկզբունքներից կամ գաղափարներից առաջ եկած դատողութիւնը գիտութեան եղբակացութիւնները անմատչելի է դարձնում մասսային: Իսկ ընդհակառակը, մակածութեան իրեւ նիւթծառայող շօշափելի փաստերը մատչելի են ամենահսարակ մտքին: Ահա թէ ինչու մակածական փիլիսոփայութեան հրապարակ գալը զուգագիպում է հասարակական ոգու արթնանալուն, սկեպտիկ և դէմոկրատ շարժման: Սրան ապացոյց մենք գտնում ենք և Անգլիայում և Ֆրանսիայում, մինչեռ մինչև յունական, գերմանական և շօտլանդական գրականութիւնները իրենց մեթօդի շնորհիւ սահմանափակում էին փոքր մտածող շրջաններում և անկիրթ մասսային անմատչելի էին: Բաւական է ասել, որ բացի Ադամ Շմիտի «Յեղերի հարստութիւնը» դեմոկրատ ստեղծագործութիւնից, որը կարգացուած էր տասնեակ հազար մարդկանցից, հազիւ թէ որևէ ուրիշ շօտլանդական հեղինակութիւն օգտւում էր մեծ ժողովրդականութեամբ:—Իսկ թէ սնոտիապաշտութեան տիրապետութիւնը որքան կարողացաւ պահպանուել մտաւոր զարգացման դէմ, հեշտ է քննել հասարակական կարծիքով ճնշուած շօտլանդացիների բնոյթի, մտածելակերպի և նախապաշարումների հիման վրայ:

Ահա մի ապշեցնող փաստ, որը ամեն տեսակ պատճառաբանութիւններից աւելի պերճախօս է: 1853 թուին Եւրոպայի զանազան մասերում համաճարակող

հնդախտը յաճախեց և Շօտլանդիան, որը ներկայացնում էր ամեն տեսակ յարմարութիւն համաճարակ հիւանդութեան զարգացման համար, որովհետեւ այստեղ ժողովուրդը վատ էր մննդում, շատ անմաքուր էր պահում իրեն և ապրում էր անմաքուր և խոնաւ բնակարաններում: Թւում էր, որ համաճարակ հիւանդութեան երեալու պատճառով տեղական իշխանութիւնը և ժողովուրդը շուտափոյթ կերպով պէտք է դիմէին առողջապահութեան այն միջոցներին, որոնք յայտնի են ամեն խելամիտ մարդու: Փոխարէնը հոգեւորականութիւնը ենթազրում էր հասարակական պահք սահմանել, որը, ժողովուրդի վատ սննդուելու ժամանակ, միայն կնպաստէր մեծաբանակ մարդկանց վերջնական ուժապառութեան և համաճարակի ազգեցութեան ուժեղանալուն: Բայց նա չկարողացաւ իւր իշխանութեամբ պահք սահմանել և այս խնդիրը մի քաղաքավարի, բայց հոգեոր պիտոյքները չկատարելու համար թագնուած կշտամբանք պարունակող մի նամակով դրուած էր վճռելու կառավարութեան առաջ: Շօտլանդացիք այս նամակին վերաբերութիւն համակրանքով և թւում էր, որ այս անգամ կառավարութիւնը այնքան զգոյշ կգործի, որ չկիրաւորէ նրանց ազգային ինքնասիրութիւնը: Բայց լօրդ Պալմերստոնը վճռեց աւելի շուտով վիրաւորել շօտլանդական ցեղը և հոգեւորականութիւնը, քանի վտանգաւոր միջոց գործ գնել և եղինքուրդի երիցականութեան նամակ ուղարկեց, որով խորհուրդ էր տալիս անմիջապէս քաղաքները ախտահանել: Այս փաստը պերճախօս կերպով բնորոշում է մի կողմից շօտլանդացիների մտաւոր աղքատութիւնը, իսկ միւս կողմից այն վստահութիւնը, որով պետական մարդը մեր ժամանակ կարող է վճռել տիրող սնոտիապաշտութեան լնդդիմադրել:

ԱՆՀՐԱՋԵՇՏ ՈՒՂՂԵԼԻՔՆԵՐ

երես	տող	տպուած է	պէտք է լինի
Ա.	3 վ.	ծնուել է	ծնուել է 1821 թուին
17	11 վ.	անում նեղոս	անում: նեղոսի
18	15 ն.	են	է
33	14 ն.	խտացումը	զգացումը
42	6 ն.	դռւոք	դասը
56	9 ն.	աղաւաղումների	աղաւաղումներ
65	6 ն.	խերօմատների	խերօմանտների
66	2 վ.	երկը	երկի
»	15 ն.	գրակայութիւնը	ջրակայութիւնը
70	14 ն.	առաջիկայ	առաջ եկան
75	3 ն.	զարգացման	զարգացման և
76	6 ն.	միտինդներ	միտինդների դէմ
78	5 ն.	երեք ժամանակակից	ժամանակակից դարի երեք
		դարերի	ժամանակակից դարի երեք
83	1 վ.	հարցի հետ էր մղում	հարցը յետ էլն մղում
90	6 ն.	սլքինցեսուհու	սլքինցեսուհու հետ
92	12 ն.	բաւականացնում	բաւականանում էր
»	1 ն.	այս	որ այս
94	7 ն.	մինչև	մինչդեռ
»	2 ն.	զարգացնում	զարգացւում
96	17 ն.	կայորութեան	կայորութեան անկումից
»	8 ն.	տարրի	տարրի կոփը
103	16 ն.	չը	էր

Արտ. առող.	Տարբերակ	Կայուն է միաց
6.	2 ա.	Անձնական
17.	16 ա.	Վահագան Յանովսկի
18.	19 ա.	Հայոց
20.	14 Տ.	Պատրիարքական
21.	8 ա.	Կայուն
22.	9 ա.	Վահագան Յանովսկի
23.	10 ա.	Խաղաղականի պատրիարքական
24.	2 ա.	Խաչ
25.	15 ա.	Վահագան Յանովսկի
26.	14 ա.	Վահագան
27.	5 ա.	Վարդապետ
28.	9 ա.	Ժամանակակից
29.	3 ա.	Վահագանի պատրիարքական
30.	1 ա.	Վահագան Յանովսկի
31.	11 ա.	Վահագանի պատրիարքական
32.	12 ա.	Վահագան Յանովսկի
33.	2 ա.	Այս
34.	2 Տ.	Ճաշկ
35.	2 ա.	Վահագանի պատրիարքական
36.	12 ա.	Վահագան Յանովսկի
37.	6 ա.	Վարդի
38.	16 Տ.	Հիմ

ՀՀ Ազգային գրադարան



NL0411005

